» բազկացը մէջ հանդչիլ, որ իմ երանութիւնս է. Քնաս բարով
» Աւել, եթէ ողջ վերադառնամ ձեր տեսութեամբը ինքզինքս
» աշխարհի ամենէն երջանիկ անձը պիտի սեպեմ».

Մնամ միշտ
Ձեր հաւատարիմ բարեկամը
ՄԻՀՐԴԱՏ

Նամակը լմնցուց և Սօֆեան պէյի տուաւ. Սօֆեան պէյ կար-դալէ վերջը ժպտելով Միհրդատի դարձաւ ու ըսաւ, « Իրաւ որ քու սիրուհիդ ըլլալը պաշտուիլ ըսել է, կեղծ գրութեանդ մէջ այսչափ աշխոյժ կայ, հապա սրտէդ ելածը կրակ պիտի ըլլայ.

Միհրդատ այս երկդիմութեան կարմրելով, ակռաներուն ծայրովը ծիծաղեցաւ և վերջը նամակը գոցելով տեղը խա-րեց, և Սօֆեան պէյէն բաժնուելով՝ իր սենեակը գնաց, պզտիկ անտուկի մէջ քիչ մը ճերմակեղէն դրաւ, և ճամբոր-դութեան պէտք եղած ուրիշ քանի մը մանր մունր կարասի-ներ պատրաստելէ վերջը Հեղինէի ննջարանը անցաւ.

ՀՐԱԺԵՇՏ

Երկու անգամ դուռը զարկաւ։

— Մտէ՛ք, պատասխանեց Հեղինէ։

Մինդատ դռնէն ներս մտաւ և չհասակ Հեղինէի քովը դնաց նստաւ որ բազմոցին վրայ տարածուեր էր։

Հեղինէ անլսողնէն նոր ելեր և բազմոցին վրայ իւր արմկան կռթնելով՝ միակողմանի նստած լամարթինի Ս.րեւելքի ճամբորդութիւնը կը կարդար. հոս տեսնելու էր նոր Եւրքարիա մը որուն վրայ արեւմտեան պարանոյը փիլիսան անգամ պիտի չըուարեցնէր. կանեվեայ խիստ ճերմակ շապիկ մը հագեր էր որ ուսէն առնելով մինչեւ բազուկներուն վրայ իջած էր, և ոսկեզոյն քաջադանդուր մազերը կարծես նախանձելով ըսպիտակ մարմնոյն երեւելուն՝ ուսերուն վրայէն տարտղնած կըքօղէին բայց ասով իւր գեղեցկութեանը աւելի վայր մը կաւելցնէին որոնց խոպոպակաց ծայրերը մինչեւ գոտը իջած էր, և երբեմն կիսաբաց պատուհանէն ներս տահող քամլրիկ զեփիւռը փափուկ ձեռքերուն քնքուշ մատանոյը դէպի ճակատը հանել կտիպէին որ իւր անուշք մազերուն երեսին տուած ձանձրութիւնը վանէ, իւր կապոյտ աչերը դրքին վրայ յարած անուշադիր կերպով մերթ ընդ մերթ կը թղթատէր, և իւր վոքրիկ ոտքերը հագած կարճ շրջազգեստէն դուրս ճնայեր էին. որոնք մեռաքեայ կոշիկներու մէջ անհոգ կերպով կորսրէր. Այս միջոցիս երբ Մինդատ ներս մտաւ, պատկառելի ամօթխածութեամբ երեսը ծիրանի պոյն մը տարաւ և անմիջապէս շրջազգեստը ոտքը վրայ իջեցնելով, «Բարի լոյս պ. Մինդատ, ըսաւ, ինձ այնպէս կերեւի որ ուրախալի լուր մը պիտի տաս։

— Ո՛չ օրիորդ, լուր չկայ, եկայ իմ վերջին ողջոյնս քեզ տալ։

— կաւրակ կընես պ. Մինդատ, ըսաւ Հեղինէ արձանագեալ ճնալով։

— Ո՞Հ չէ, կատակ չէ, պատասխանեց, Թեպէտեւ տան եւ հինգ օրուան բաժանում մի է բայց հաւատա՝ Հեղինէ այս կացութեանս մէջ ձեզմէ տան և հինգ օր բաժնուելս ինձ համար դրեթէ մահ է, եւ Հեղինէին քնքոյշ Թեւերը իւր ուսին վարելը զգալով Մինրդատին աչքերէն երկու կաթիլ արցունք սահեցան։

— Բայց հանդարտէ սիրելիս, ըսաւ Հեղինէ, նախ գլուխէ Թէ այս ճամբորդութիւնդ խիստ ստիպողական է և ամենեւին կարելի չէ՞ որ ետ ձգես։

— Անկարելի է, և խիստ ստիպողական։

— Ուրեմն եթէ կը հաճիս ես ալ քու հետդ կուգամ։

— Ա՛հ, ո՛չ, ո՛չ, Թեպէտև միայն քու ներկայութեամբդ սիրտս կսփոփի, սակայն հաւատա Հեղինէ զժբաղդ արարած մը եմ ես որ չարութեանց, մոլութեանց և եղեռնագործութեանց մէջ ամեն օր կը թունաւորում և միայն քու սուրբ սրտիդ հաւատացած սպեղանիով սրտիս վէրքերը կըբուժին... և ինչ պահեմ Հեղինէ, կը սիրէի ես Ճաէլը... և ախտս կը սիրեմ մինչեւ ցարդ։

Այս խօսքերը ըսելով, Մինրդատ իւր գլուխը Հեղինէի ծնդացը վրայ իջեցուց և երեսը երկու ձեռաց մէջ առնելով սկսաւ յորդ արտասուք թափել։

Այս խոստովանութենէն քիչ մնաց որ պիտի նուաղէր Հեղինէ և հառկըլտելով «Ո՛Հ Մինրդատ, ըսաւ, Թէպէտեւ քու ամեն մէկ խօսքերդ իմ սիրտս կը վիրաւորէ բայց և այնպէս կզգամ որ դու ալ կարեկցութեան պէտք ունիս և Թերեւս ինձմէ աւելի, քանզի ես առանց սիրուելու սիրելի զգեղ. ուստի իրաւունք չունիմ զգեղ կշտամբել, դուն ինքզինքիդ տէրը չես քանզի կը սիրես. գլուխդ Մինրդատ կըներես որ քոյրդ ըլլամ։

Այս խօսքերը այնպիսի ձայնով մը արտասանեց որ լալու կընմանէր, սիրտը կեղնէր ու կիջնէր, այտերը կարմրեր էին իւր ոսկեգոյն մազերը մերկ ուսին վրայ ցրուեր շոկել տնգամ չէր մտածեր, և իւր կապոյտ աչաց բիբերուն տակ քանի

մը արտասուաց կաթիլ՝ պահուիլ ուզող կոյսերու պէս թաւխառական կը շրջէին, միայնութեան մէջ թշուառ արտի մը համար վաղելով սիտիլու պատրաստ։

Մինդատ խանդաղատանօք Հեղինէի կը նայէր ձեռքերը իր ձեռաց մէջ առած. «Ո՛ իմ արտիս աէրը, ըսաւ, ես կը սիրեմ ըսելով՝ ըսել չուզեցի թէ պիտի սիրեմ, այլ Աստուծոյ հետ ունեցած տարփանքէս ազատելու համար քու օգնութեանդ կը կարօտիմ, կերդնում Հեղինէ որ աշխարհի մէջ բոլոր կոյսեր և բաղձանքս դու ես, խօսէ, միթէ կը զիջանիս որ սիրտս աղջամղպամէ մը խաբուի. կը խոստովանիմ որ ինքնասիրութիւնս վիրաւորեցաւ, բայց մի՛ կարծեր աշխարհային ցոյցերու մէջ, ես ոչ հարստութեան պէտք ունիմ և ոչ անուան, վաղուց չքեղ ծածկոյթին տակ մարմնացեալ ունայնութիւնը գտայ որ իրեն յաջորդ ստուգանքը միայն կը թողու, իմ ուզածս աղատութիւն և սէր է միայն, Հեղինէ ես զքեզ պիտի սիրեմ և եթէ ատեն ատեն իմ արտասուքս տեսնես ոչ ներէ այս կաթիլնե-րուն, քանզի իմ արտիս մէջ ճնացած վերջին կայծը մարելու համար պիտի հոսեն. այո զիս մի՛ մեղադրեր. առաջին անգամ էր որ սիրեցի և ահա կը տեսնես որ խաբուեր եմ։

Հեղինէի համար աստնք որչափ ծանր խօսքեր էին բայց ինքը հեզութեամբ պատասխանեց.

— Մինդատ, ամեն ըսածիդ իրաւունք կուտամ. կըսես թէ առաջին անգամ էր որ սիրեցի, Մինդատ քանի որ գիտցար առաջին սիրոյն զօրութիւնը՝ դու խօսէ կրնայ մարդ իր սիրածը կշտամբել. քու վհհանձն սիրտդ կը ճանչնամ, զիս չվըշտացնելու համար ինքզինքդ կը չարչարես, բայց գիտցիր որ ես իմ սիրոյս զօրութեամբը կը տեսնամ որ մխիթարութեան պէտք ունիս, տես մեռնք հոս երկուքս եմք, ազատ խօսէ. եթէ ուզես միշտ Ստել օրիորդին վրայ կը խօսինք, դու ինձ կը տրվեցնես անոր վարմունքը ես ալ անոր պէս կը վարուիմ հետդ, ի՛նչ բաց առեալ չարութիւններդ որով զիս դէմդ ունենալով նախկին սէրդ մոռցած չպիտի ըլլաս. և անշուշտ պիտի հաւանիս այս առաջարկութեանս.... Ոչ, բացատական շարժումդ

ներ չեմ ուզեր. քեզ կը վստահացնեմ որ քու սիրոյդ ջհնուելը իմ երջանկութիւնս պիտի ըլլայ. Այս խօսքերը հետզհետէ արագ արագ ըլուցեր էր, այտերը կարմրեր էին և իր սիրտը ուժգնակի կերպով կը բաբախէր և երկու ձեռքովը Մինդատի ձեռքերը բռնած իր առաջարկութեանը պատասխանին կսպասէր.

— Ո՛հ հրեշտակդ աննման, պատասխանեց, ներէ որ քու սիրտդ կը վիրաւորեմ, բայց դու իմ ըսածներս չես հասկնար, դարձեալ կըսեմ, դիտնաս որ ես միայն զքեզ պիտի սիրեմ և դու ոչ թէ անոր փառքը այլ անոր խօսքն անդամ մի՛ ըներ ինձ հետ. Հեղինէ՛ հաւատացի որ մեզ երջանիկ պիտի ըլլանք մեր թշնամեաց յուսացածին հակառակ, իսկ հետս գալու մասին, ա՛հ եթէ կարելի ըլլար շատ երջանիկ պիտի ըլլայի.

— Ո՛չ Մինդատ, ըսաւ Սոֆեան պէյ, նոյն միջոցին դրան սեմին վրայ տեսնուելով, Հեղինէն իմ քովս թո՛ղ, և կրնաս ինձ յանձնել զայն.

Երկու ամոլք 'ի միասին ոտքի ելան և պէյը դիմաւորեցին,

— Որդեակ, ըսաւ Սոֆեան պէյ զանոնք երկու կողմը առնելով, կուզեմ համարձակ խօսիլ. ձեր ամեն խօսակցութիւնները մտիկ ըրի, դուք իրարու համար ստեղծուած էք սիրելիս, ձեր ամուսնութիւնը օրհնելով երջանիկ միայն պիտի ըլլամ. և չեմ գիտեր Մինդատ որ այս միմիայն բաղձանացս ժամ առաջ հասնելու կը տեսնեմ. բայց ստիպողական պարագաները կը հարկադրեն այս իմ փափագս պահ մը երկարաձգել, եա մի՛ հնար ճամբորդութենէդ դնա՛ որդեակ, և տան և հինդ օրէն քու հարսիդ քովը պիտի ըլլաս.

Մինդատ պէյին ձեռքը համբուրելով Հեղինէին հրաժեշտը տուաւ և սենեակէն դուրս ելաւ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

Մինդաո աճապարանօք ատենաւաներէն իջնելով ծալեզը հասաւ և որչափ մեծ եղաւ զարմանքը երբ նաւավար կապրատը հոն տեսաւ։

Նաւավարը խոր մտածութեան մէջ կերեւէր, և Մինդաո դատը չճանչնալ ձեւացուց։

— Դու ո՞ր ես մինչեւ հիմայ, և ինչպէս ազատեցար, հարցուց Մինդաո։

— Բարեբաղդ պարոն մը զիս ազատեց, պատասխանեց հպարտ կերպով, նոյն եղելութեան պատահած օրը։ Որ դու բարեհաճեցար զիս ոտիկանութեան մատնել։

— Անշուշտ դու զիս մեռցնել ուզեցիր, հարկաւ ես ալ այնպէս պէտք էի վարուիլ, բայց ինչ որ է ըսել է ամիս մ'է ազատելդ. աղջկանդ ո՞ր ըլլալը և ինչ ըլլալը չես հարցուներ, եկու աղջկանդ քովը տանիմ զքեզ։

— Աղջիկս գիտեմ ուր է, բայց չեմ դար, քանզի կարելի է դարձեալ ծուղակը ինամ, եթէ տակաւին քիչ մը խեղճ մնացած է պտերնուդ մէջ թողուցէք աղջիկս ինձ և ես եթէ կարենամ պիտի օրհնեմ զքեզ։

— Պ. կարապետ դու սխալ կը դատես, ես միշտ քեզի պտանց բարեկամ եղած եմ քանզի առաջուց քենէ թշնամութիւն տեսած չեմ, քեզ ձեռնտու ըլլալու համար ինչ չահ կը յուսաս որ ունենամ, ասկէ ամիս ու կէս առաջ զքեզ չէի ճանչնար, բայց հաւատա ըսածիս, համոզուած եմ և գիտեմ որ քու հօրդ վրայ ունեցած թշնամութիւնդ անտեղի է, հայրդ այս մասին ամենեւին յանցանք չունի, և եթէ յանցանք մ'ալ ունի այն ալ իւր խաբուիլն է։

— Ո.Նա այդ կերպով զքեզ խաբած է, մրմնջեց կարապետ։

— Զքեզ կը հաւատամ պ. կարապետ որ քիչ դժուար խաբուելու տրամադրութիւնն ունիմ և զիս խաբելու համար

օրինաւոր պատճառ պէտք է ցուցնել, քանզի ատելութեան մէջ օրինաւորութիւն անկարելի է։

— կաղաչեմ ինձ քարող մի՛ տար, ըսաւ կարապետ անհամբերութեամբ, եթէ յիրաւի ինձ բարի՛ք մը ընծրլու միտք ունիս ապչիկա ինձ յանձնէ և ես գլխեղ իմ ազատիչս պիտի նկատեմ։

— Բայց դու լաւ չես հասկնար եկու հետս կըսեմ և պատուոյ վրայ կերդնում որ քու մէկ մազիդ անգամ չպիտի դպչուի։

— Շատ աղէկ կուգամ քեզ հետ, բայց մի՛ մոռնար որ ես թշուառ մէկն եմ, կաղաչեմ եթէ տակաւին ատելութիւն մը ունիս ներսէ ինձ, վերջապէս հայր եմ, ան եթէ դէմս ելլուս վտանգ մը պատահի մտածէ որ աղջիկս ինչ պիտի ըլլայ, բայց... ո՛չ, երիտասարդ ես, ատելութիւն չես կրնար պահել, վերջապէս քու ձեռքդ եմ ինչ որ կուզես ըրէ։

— Անտեղի խօսքերը վերջացուր բարեկամ, եթէ աղջկանդ հանդէպ ունիս հարցուց անոր և պիտի իմանաս որ ես քեզի դէմ ամենևին ատելութիւն ունեցած չեմ, ձեռքդ ինձ տուր բարեկամօրսամ թէ չուտով պիտի համոզուիս որ ես քու անձնուէր բարեկամդ եմ։

Նաւավարը ձեռքը երկնցուց և Մինրդատին հետ Սոֆեան պէյին տանը դառնէն ներս մտան։

Մինրդատ գեռնայարկը սենեակ մը բացաւ և կարապետին դառնալով, "Հոս սպասէ քիչ մը, ըսաւ, որ երթամ աղջիկանդ իմացունեմ գալուստդ։

կարապետ չպատասխանեց և Մինրդատ դուրս ելաւ։

— Անշուշտ դիս ձերբակալելու համար մարդ կանչել գնաց, մրմնջեց նաւավարը, որչափ ապուշ եմ որ հաւատացի, ըսաւ ինքնիրեն, ատոնց համար միթէ բարի՛ք գործել կարելի է, դեռ մարդ չը հասած փախչելու ճամբան նայիմ, և դէպի դուռը յառաջացաւ որ բանալով դուրս ելնէ, բայց սրչափ մեծ եղաւ ապրատիը երբ տեսաւ որ դուռը իր վրայէն կղպած էր, լուր կարծիքները իրական կերպ մ'առին, ճգնեցաւ դուռը կոտրել բայց անկարելի էր։

Մինդատ մտածելով որ Հեղինէին մեկենիմեկ իւր հօրը դալուստն իմացնելը կարի ջնասակար ըլլար և դարձուածքը նեղով իմացնելն ալ հարկաւ առեն պիտի անցնէր, ուստի դիտմամբ դուռը կղպած էր, որ չըլլայ թէ կարապետ չկրնալով համբերել, զիս խաբեյ ըսէ ու երթայ կամ թէ ծառաներէն մեկը չճանչնալով զայն, տան մէջ աղմուկ մ'եղլայ.

Վերջապէս տասը վայրկեանի չափ կարապետ դուռը բանալու զբաղելով, չկրնալուն՝ թեւաթոռի մը վրայ ինկաւ և աչքը պատուհաններուն դարձուց, բայց այս յոյսն ալ պարապը ելաւ, քանզի երկաթեայ վանդակներ ունէին. այս միջոցին բանալիի մը կղպաքին մէջ դառնալը լսեց, և տեսնելով որ ալ ազատելու ճար չկայ, թուլութիւն մը պատեց վրան. և այս վայրկեանին որ կապասէր թէ գինքը բռնեն և դարձեալ բանտ տանին, հայր իմ ըսելով Հեղինէ կարապետին գրկացը մէջ նետուեցաւ. Հա քիչ մը առեն լռութիւն տիրեց. Մինդը. դատ մեկ կոլմ կայներ էր.

Կարապետ իւր թմրութենէն արթննալով, «Ո՛ւ իմ սիրելի աղջիկս, ըսաւ, վերջապէս դարձեալ գիրկդ տեսայ. ո՛ւ չես գիտեր թէ որչափ լացի քեզի համար, թէեւ գիտէի քու հոս ըլլալդ բայց անկարելի էր գիրդ ազատել կամ թէ ինձ այնպէս կերեւէր.

— Հայր իմ, հոս գիս մեծ պատուով կը նային, ըսաւ Հեղինէ, ամեն բան կամացս համեմատ, ամենեւին բանի մը կարօտութիւն չունէի, միայն հայր իմ, գրկիդ, գրկիդ տեսնելու փափաքս գիս կը մաշեցնէր և ահա Պ. Մինդատայ չնորհիւը դարձեալ հայրս գտայ.

— Պարոն, ըսաւ կարապետ Մինդատին դառնալով, ներէ որ քիչ մ'առաջ ձեր վեհանձնութեան վրայ տարակուսեցայ, կենացս մինչեւ վերջը չնորհապարտ եմ քեզ.

— Պարոն, պատասխանեց Մինդատ, խիստ ուրախ եմ որ ձեր երջանկութեանը չնչին մէկ պատճառը եղայ. բայց վերջապէս պարտականութիւնս էր, ուստի հիմայ խնդիրք մ'ունիմ, զոր ընդունելիդ կաղաչեմ.

— Հրամայէ Պարոն, և ես պատրաստ եմ կատարել։

— Կը խնդրեմ որ ասկէ վերջը այս տանը մէջ բնակիք և իբրեւ տուն ալ ունիք, քանզի այս տունը ձեր հօրն է։

Կարապետ քիչ մը վարանելէ վերջը մտածեց որ տանը մէջ դանուելով, Սօֆեան պէյին ամեն գործերը մօտէն լրտեսելու դիւրութիւնը պիտի ունենար, Նաճեցաւ այս առաջարկութեան, և խօսք տուաւ Մինրդատին, որ անկէ վերջը նոյն տանը մէջ հաստատէ իւր բնակութիւնը։

Մէկ մ'ալ Սօֆեան պէյ դառնէն ներս մտաւ։

Կարապետին երեսին գոյնը նետուեցաւ և կը պատրաստուէր խօսիլ, բայց Սօֆեան պէյ զայն արդիլելով, "Որդեակ, ըսաւ, հաճէ ըսելիքներս մարդասիրաբար մտիկ ընել։ Դու ինձ դէմ իրաւամբ առելութիւն ունիս, բայց կերդնուիմ որ ես յանցաւոր չեմ, գիս խաբելով այս յանցանքին մէջ ձգեցին, ահ եթէ գիտնայիր թէ որչափ կը սիրէի Մագթաղինէն, և մինչեւ անգամ կեանքս նուիրելու պատրաստ էի անոր մէկ մտացածին հաճոյքը կատարելու համար, լինքն ալ գիս կը սիրէր, բայց ոճրագործ մը չարաչար խաբուելով, այնպէս կարծեցի թէ ուրիշ մը սիրեր և զքեզ աշխարհ բերեր է իմ բացակայութեանս ժամանակ, այն առեն զայն թողուցի, բայց ո՛չ զքեզ, քանզի մայրդ մեռնելէ վերջը դու տասը տարեկան հասդիս կայիր զքեզ Հայոց Ս. Փրկչի վարժարանը ընդունել տալով և քեզ համար տասը հազար ոսկի չահու դրի՝ որ վարժարանէն ելլելէդ վերջը քու պիտոյիդ պիտի յատկացնեմ. բայց ավասս որ քեզ վերջը տրուած ժամանակս դու անկէ անյայտ եղած էիր և որչափոր փնտռելի պարապը ելայ։

— Ուրեմն դո՞ւ էիր գիս անուցանողը, ըսաւ Կարապետ ապշութեամբ։

— Որդեակ ներէ՛ ինձ որ զքեզ հան թողուցի, առջի յանցանաց իրր քաւութիւն պիտի ջանամ զքեզ երջանկացնել, միայն թէ կը խնդրեմ որ իմ քովս կենաս և եթէ ներկայութիւնս զքեզ կը տրտմեցնէ, ես կը ջանամ որչափ որ կարելի է քեզ չերեւիլ։

Կարապետ առանց պատասխանելու մտածմունքի մէջ, ընկղմեցաւ, վասն զի առանց դիտնալու իւր հօրը թշնամութիւն ըրած էր և ընտանեացը մահու չափ թշնամին, Սօֆեան պէյի զոհերուն նկատմամբ այնպիսի զգալունքներ յայտնած էր, որ Մարտիրոս Տէրվէնտ առանց արդելքի մեծ չարիքներ կրնար հասցնել իւր գերդաստանին, ուստի կը մտածէր, որ ինչպէս պարտի այն թշնամի ձեռքը դարձնէ.

— Մարտիրոս ինձ վատահութիւն ունի, ըսաւ ինքնիրեն, պէտ ինչ որ լսանամ կամ կարդալու և կամ հօրս կնամցնեմ. ուստի պէտք է որ միշտ թշնամի երեւիմ հօրս, վասն զի երկնչի որ առնին լսնցայ, Մինրդատայ նեղութած դառը, անոնց մեքենայութիւնները ցրուելու համար հնարակուրնէ այն Զարխաճի վոզոյին տունը երթալու աչքէ անցունելու է և երթէ կատարուելի է այն կնոջ հետ բարեկամանալ պէտք է.

— ի՞նչ կը խորհիս պղեակ, ըսաւ այս միջոցին Սօֆեան պէյ, դարձնալ կըսեմ որ եթէ իմ սեռութենէս կը խորշիս կը չանամ առնելուն քեզ չերեւիլ.

— Ո՛հ, այդ զգուշութիւններուն պէտք չկայ, ըսաւ կարապետ. Հայր իմ յանցաւորը ես եմ և յանցանայս քաւութիւնը թերեւս արեամբս պիտի դնեմ.

— Շնորհակալ եմ պղեակ, բաղկացս մէջ եկու որ ինձ նեղութիւդ մէկ նշանը սեպելով ուրախութիւնս կատարեալ ըլլայ.

կարապետ ինքզինքը իւր հօրը բազկացը մէջ նետեց, հայր և որդի զիրար գրկեցին.

— վերջապէս, գոչեց Մինրդատ, փափաքս կատարեցաւ, ձեր երջանկութիւնը տեսնելով, ինչ սասիճան ուրախութիւն զգալս չեմ կրնար բացատրել, հիմայ հանդարտ սրտով կը գաւտիմ ձենէ, ճնաք բարեաւ սիրելիք.

— ինչպէս պ. կը մեկնիք, ըսաւ կարապետ, գիւղամակերսի այս վերանձն երիտասարդին հետ անալուն վրայ.

— Այ՛ս, բարեկամ, տասն և հինգ օրուան համար ճամբորդութիւն մը պիտի ընեմ, թէպէտ և ինձ ծանր էր առաջ այս բացակայութիւնը, զանգի չեղինէն հոս պիտի ճնար միշտ իւր

հայրը մատծելու, բայց հիմայ նա երջանիկ է յարեց ախոռ-
թեամբ, եւ ալ լնձ պէտք չունի։

— Հնդինէ Մինրդատին մօտենալով, դանէ երախտապետու-
թեան պարտքը հատուցանելու պէտքը մատքերնիդ բերէք,
ըսաւ անոր ձեռքէն բռնելով։

— Մինրդատ հնդինէին ձեռքը մեղմով մը բերնին տարաւ,
ու ճնաս բարով չեմ ըսեր քեզի Հնդինէ, ըսաւ, քանզի երե-
ւակայու թեամբս միշտ քու հետդ պիտի ըլլամ եւ դուք Պարոն-
ներ վստահ եմ որ ձեր սրտին մէջ չը պիտի մոռնաք զիս, ինչպէս
որ ես միշտ ձեզ յիշելով ատենս պիտի անցնեմ, ճնաք բարեաւ,
կրկին սեղմու թիւն, ըսաւ ու աճապարանօք սենեկէն մեկնեցաւ։

— Ազնիւ երիտասարդ, մրմնջեց կարապետ։

— Ափսոս որ ամեն ատեն բարիները կը հալածուին չար-
ըէն, ըսաւ Սօֆեան պէյ եւ ամենուն վրայ տխրու թիւն մը տիրեց։

Այն օրը Մինրդատ չոգենաւը մտնելով դէպ՚ի Բէօսպէնճէ
ճամբայ ելաւ։

ԳԱՐԱՊԵԼԱՅԻՆ ԳԻՆԵՏՈՒՆԸ

Ղալաթիոյ փէմէր Ալթը ըսուած թաղին խորթուբորթ եւ
ղաղիր փողոցները յորեկուան երեկ անձրեւներէն գրեթէ ան-
անցանելի էին, քարոյատակներուն վրայ (եթէ կարելի է քա-
րոյատակ անուանել) չան դիակներ եւ ուրիշ աղտեղութիւններ
այն տեղուանքը գտնուած քիչ մը օդը իրենց տհակալի հոտով
ապականած էին, խալխլած տուներուն տանիքները փողոցնե-
րուն նեղութենէն գրեթէ իրար փարած էին. արեւը քիչ ան-
դամ կը տեսնուի այս կողմերը, նաեւ բնակիչները իրենց տղերը
փողոցը թաւիւնուն ամեն կողմ կոյտ կոյտ ղազրութիւնը կը

թադաւորէր, իրիկուան ժամը տասներկուքն էր՝ լման կանայք տուներնուն առջին կայնած անցորդներուն հրաւէր կը կարդային։

Սա տեղ վաղուց հետէ անառակ մարդոց զբօսատեղի մ'է, հոս կը գործուին անլուր չարութիւններըլ, հոս մայր մը իւր աղջիկը կը ծախէ, եղբայր մը իւր քոյրը կառեւանդէ, հայր մը իւր դուստրը կը պղծէ, մարդասպաններըլ, գողերըլ, քահանհատանելըլ, և ափսոս բոլոր Հայ բեռնակիրներըլ հոս կը յաճախեն. Պոլսոյ մէջ ինչ չարութիւն որ գործուի, ոստիկանութիւնը դրեթէ միշտ այս որջէն կը դանայ չարագործը, և զարմանալին այն է որ Գալաթիոյ վոյվօտա ըսուած ոստիկանութեան կայանն ալ ճիշդ այս թաղին քովն է։

Գալաթիոյ աշտարակին ժամացոյցը ճիշդ տասներկուք զարկաւ, Գուլէ-Գախուսիին զառիվայրէն երկու հոգի կիջնէին։

Մինչեւ վոյվօտային դէմը գալով հոն կեցան, քանզի հոն փողոցները երկուքի կը բաժնուի, ուստի կերեւէր որ իրարմէ պիտի զատուէին։

— Լ՛, Սպիրօ, ըսաւ ատոնցմէ մէկը որ ցնցոտի հագուստներէն և տարօրինակ դէմքէն աղէկ մէկը չըլլալը կերեւէր, հս սա կողմը պիտի երթամ, ըսաւ, մատովը Քէմէր-Ալթը մտնելու փողոցը ցուցնելով։

— Ուրեմն, պատասխանեց երկրորդը, Գարա-Պէլային գնեատունը կը տեսնուինք։

Եւ իրարմէ բաժնուելով, առաջինը ինչպէս որ ըսեր էր Քէմէր-Ալթըյի փողոցը մտաւ, իսկ երկրորդը քիչ մը վարանելէ վերջը Հարաճճը փողոցը տանող ճամբան զարկաւ և փողոցին գլուխը դարձած տեսնը մեր վաղեմի ճանչցած աւազակապետ Թէօխարը դէմը եկնելով, Սպիրօ ձեր կերեսս ըսաւ։

— Իմինիա, դու ձերկէ կուգաս։

— Ճիշդ գլխէդ փնտռելու համար այս կողմը եկայ, եկու սա խանութը մտնանք։

— Ինձ նայէ բոլոր գրպաններս դատարկ են, անարծաթ բժշկին տեսութենէն կուզամ գիտնաս։

— Հոգ չէ, աւելի ազէկ լեցուներլու ճարը կը մտածենք։

— Շատ ազէկ, ուրեմն գալէ Սուլթանային տանը տակի խանութը երթանք։

— Երթանք որ՝ դու գուկինդ պիտի տեռնաս անանկ չէ՞։

Ս.յապխի խօսակցութեամբ այն ըսած խանութին յառաջացան։ Ս.յս խանութը գարաշէն էր և փողոցը նեղ. ըլլալուն աւելին արև չէր տեռնար թէ փողոցը և թէ խանութը։ այս շէնքին յատակը հող էր և խոնաւութենէն պատերէն վար կաթիլ կաթիլ ջուր կը վազէր, ոգելից ըմպելեաց հոտն ու խանութին խոնաւութիւնը ներս մտնողին զգուանք կը պատճառէին, դրանը չէմը փողոցէն բաւական ցած ըլլալուն, դուրսի աղտոտ ջուրերը ներս լցուած և այնպիսի սահուն տիղմը գոյացուցած էին որ, ներս մտնողը երթէ այս խանութին յատկութեանցն անտեղեակ ըլլար, անմիջապէս սահելով կամ երեսի վրայ և կամ կռնկին վրայ պիտի իյնար։

Երկու պարոններ ձեռք ձեռքի տուած զգուշութեամբ մտան այս խանութը, վանդի խիստ շատ կը յաճախէին հոս։ Ըմպելի մատակարարելու տեղին գլուխը խանութին տէրը նստած նայինք կը քաշէր, որուն դէմքէն և նստուածքէն կըրնար ճանչցուիլ թէ՝ այս ալ ներս մտնողներուն հետ կամ ընկեր էր և կամ համախոհ ամեն գործերու մէջ։

— Բարև Տէննիօ, ըսաւ Սպիրօ, խանութին տիրոջը։

— Բարի եկար պ. Սպիրօ ըսաւ։

— Բարև պարոն, ըսաւ Թ.էօխար։

— Բարի եկաք պարոնները, ըսաւ։

Եւ երկու ընկերները խանութին մէկ անկիւնը քաշուելով, սեղանի մ'առջև նստան։

Տէննիօ որ խանութին տէրն էր՝ նայինքին մէկդի դնելով, ծանրութեամբ տեղէն ելաւ և յաճախորդաց քով մօտենալով։

— Ի՞նչպէս էք պ. Սպիրօ նայինք, ըսաւ, և թէպէտ պ. Թէօխարը չճանչնալուն խօսքը միայն Սպիրոյի ուղղած էր, բայց քաղաքավարութեան դէմ՝ մեղանչած չըլլալու համար, որպիսութեան հարցումը յոդնակի ըրաւ։

— Լռէ՛ բարեկամ, պատասխանեց Սպիրօ՝, այս օրերս խիստ դէշ վիճակի մը ենթարկեալ եմ։

— Ի՞նչ դէշ վիճակ է այդ, հարցուց Տէնկօ։

— Անհաւատ բան մը՝ որ ամենուն դէմ է։

— կարծեմ ստակ չունիս, ըսաւ Տէնկօ։

— Աղէկ հասկցար, բարեկամ։

— Եթէ այդ է, բան մը ըսել չէ, վանդէի հիմայ այդ ընդհանրացած նորաձեւութիւն մ'է։

— Բայց հարկաւ օր մը կը հարստանանք։

— Անշուշտ, անշուշտ, ըսաւ Թէօխար, և յարեց նաև ըսելով, թերեւս այսօր։

— Այսօր։

— Այո՛, այսօր, ըսաւ Թէօխար հաստատապէս։

— Է՛հ, ուրեմն օղի բեր մեզի։

— Ընկերնուդ . . .

— Այդ ալ հարցնելու բա՞ն է, այո՛ օղի և միշտ օղի, ընկերս ալ Բագոսեան է։

— Լաւ ուրեմն ըսելով խանութպանը, հրամաննին կատարել ւուեթաց . վանդէի չէր ուզեր Սպիրօյին հաճոյքը դէմ բան մը ընել, վասն զի ամեն մարդ Սպիրօյէն կը վախնար, և անոր ուժին վրայ տակաւին կը խօսակցէին։ Այս մարդը դրեթէ երեսունը հինդ կամ քառասուն տարեկան հազիւ կար, յաղթանդամ և կորովի, կարճ բաճկոն մը կը հագնէր, մէջքը կարմիր գօտւով մը սեղմեալ, հաստ բաղուկներ ունէր՝ սեաւ և խիտ մազերով պատած, ալ ձեռքին ճկոյթ մատը մատանի մ'ունէր, որ պղտի աղջկան մը ապարանջան կրնար ըլլալ, և ձախ ականջն ալ ոսկի օղ մը . պեխերը սոլորականէն աւելի շատ ըլլալուն՝ ոլորած մինչև ականջներուն ետին կը հասնէր . քիթը մեծ դէպի վար դարձած գիշատիչ թռչնոց նման, ոլոն դէմքը արդարև քիչ սոսկում չէր պատճառեր անվարժ մէկուն . այսու ամենայնիւ Պ. Թէօխար ալ՝ որ աւազակապետ մ'էր, թէև ծերացած՝ բայց այս ընկերութեան մէջ քիչ համբաւ ստացած չէր իւր արդի ընկերներէն։

Խանութպանը օղին բերելով դարձեալ գնաց իւր տեղը նստեցաւ։ Երկու ընկերները մէկ մէկ գաւաթ օղի խմեցին։

— Էյ, պ. Թէօխար, ըսաւ Սպիրօ, ըսէ տեսնեմ քա՞ հաւէտ գործդ ինչ է, իմանամք անգամ մը։

— Նախ և առաջ ինձ ըսէ, թէ այս խանութին տէրն ովէ, և ինչպէս մարդ է։

— Օ՛, այդ կողմէն անհոգ եղիր, ծխնելոյզէն ելած մուխի նման ուղիղ մարդ մ՚է։

— Եւ եթէ մէկ կողմէն հովը փչէ։

— Ի՞նչ ընէ խեղճը, առանց ձայն հանելու առջևն կկիտայ։

— Շատ աղէկ, ուրեմն ըսել է մենէ է։

— Եւ անձնուէր, հոգւով մարմնով։

— Մեր գաւաթները լեցո՛ւր, պօռաց Թէօխար,

Տէննէօ անմիջապէս երկու գաւաթ օղի բերաւ, և առջի պարապ գաւաթներն առնելով երբոր տեղը կը դառնար։

— Քիչ մ՚ աղի ձուկ և քիչ մ՚ալ հաց կը բերես, ըսաւ Սպիրօ։

— Անմիջապէս, ըսելով հեռացաւ և շուտով մը հաց ու աղի ձուկը բերաւ. հոս Տէննէօ Սպիրոյին հետ փոխոխակի աչքով նշան մը փոխեցին, խանութպանը իւր տեղը գնաց, և երկու ընկեր իրենց խօսակցութիւնն սկսան շարունակել։

— Առաւօտէն իվեր բան մը կերած չեմ, ըսաւ Սպիրօ, չիտակը ես անօթի քարող չեմ կարող մնիկ ընել, թէպէտև ամեն մարդ անօթի մնիկ ընել դատապարտուած է։

— Ի՞նչ ըսել կուզէք։

— Ըսել կուզեմ թէ կարճ խօսիք։

— Հարկաւ, վանդի արդէն ժամանակ չունինք։

— Ուրեմն սկսէ։

— Ուրեմն լաւ միտ դիր, վազն առաւօտ քէօսթէնճէյին չոգենաւը հոս կը հասնի, կէս օրէն երկու ժամ առաջ։

— Եթէ ալեկոծութիւն մը պատահած չէ։

— Օ՛յ՛, իրաւունք ունիս, մեր խօսքը եթէ գալու ըլլայ։

— Է՛, է՛։

— Շոգենաւին մէջ Միհրդատ Ալունտ անունով երիտասարդ մը պիտի ըլլայ, քսան տարեկան, դեղին մաղերով, բարձրահասակ, դէմքը նիհար և ձեռքին վրայ երածի սպի մ'ունի, և վրայէն լայն սեաւ թիկնոց մ'առած է։

— Եթէ ձեռնոց դրած ըլլայ ձեռքը և վրայէն ուրիշ հագուստ մը հագած ըլլայ։

— Հոգ չէ, առջի նկարագրութիւնս քեզ կը բաւէ։

— Եթէ չը բաւէ։

— Երկրորդ նաւապետէն շոգենաւին մէջ գտնուող անձանց անուններուն ցանկն ուզէ, պատրաստակելով թէ՝ յանձնարարուած եմ՝ ըլլամ՝ երածէ են քեզ բարեկամի մը համար, զոր դու չես ճանչնար։

— Ատոնք աղէկ, բայց այդ երիտասարդն ի՞նչ պիտի ըլլայ։

— Առանց անոր կեանքը դպչելու, պիտի բռնէք և ինձ յանձնէք։

— Եթէ դէմ դնէ։

— Ես զինքը կը ճանչնամ, ձեզի դէմ դնելու մարդ չէ։

— Աղէկ, բայց այդ ըսածդ մինակ ըլլալու բան չէ։

— Ես ալ քեզի հետ եմ։

— Դարձեալ չենք բաւեր։

— Ֆօթին ալ հետ կառնենք։

— Եւ ի՞նչ վարձք պիտի ընդունիմք փոխարէն։

— Հարիւրական ոսկի։

— Քու ստակդ ուսկից է, վասնզի ես աղէկ գիտեմ որ ինձ նման դու ալ անկուտի պարոնին մէկն ես։

— Ես չունիմ թէպէտ, բայց վճարող մ'ունիմ։

— Այդ ուրիշ։ ուրեմն մեզ ճանչցուր այդ վճարող պարոնդ։

— Ինքզինքը չուզեր յայտնել։

— կը հասկնամ, միայն վճարել կուզէ այնպէս չէ՞։

Այս միջոցին թէօխար օղիին գաւաթը առաւ և իմի ումպ խմեց։

— Մխիթա բան մը կուգայ, ըսաւ Սպիրօ։

— Ի՞նչ բան։

— Ստակին կէսը կանխիկ ուզել։

— Աղէկ, բայց թէ որ գործը գլուխ չելլայ։

— Ստակդ ետ առ, ինձ հաւատարմութիւն չունի՛, ուրիշ այսպիսի բարի գործէ մը կը վաստկիմ և կը հատուցանեմ։

— կը հաւանիմ, բայց միայն քու ստակիդ կէսը կուտամ կանխիկ, իսկ Ֆօթինին չեմ տար։

— Ի՞նչ հոգս, ըսաւ Սալիրօ, կուզես անոր տուր կանխիկ, կուզես ամենեւին ստակ մի՛ տար, երկու ձեռք մէկ գլխոյ համար յօրինուած է և ես միայն իմ հաշուոյս կրնամ խառնուիլ, օ՛ն ուրեմն, համրէ տեսնեմ, օ՛ն շուտ ըրէ, մէկ, երկու, ո՛ւր է, չես սկսեր համրել, շիտակը այնչափ կարօտցեր եմ այն անիծեալը որ երեսը տեսնելուս պէս պիտի յափշտակուիմ։

— Դու անկէ՛, թէ նա քենէ, հարցուց Թէօխար խնդալով։

— Օ՛ն սկսէ համրել, այնատեն կրնաս տեսնել, է՛, սկսէ։

— Օ՛, հօ՛, կամաց, առանց որուշելու գործին նախագիծը ինչպէս կրնամ ստակ տալ, տեսնեմ ապահովապէս գլուխ պիտի կարենամ հանել։

— Բայց պարոն, դու չես ուզեր որ այդ մարդուն ուժքը ձեռքը կապուած առանց մէկին իմանալու քե՞զ յանձնեմ։

— Ա՛յո՛։

— Ուրեմն, ծնացածներուն մտածմունքը ինձ ձգէ։

— է՛ ուրեմն, վաղը գիշեր ժամը հինգին նաւակով Սամաթիոյ ծայրը Դաֆգալա ըսուած տեղը եկուր։

— Ամենեւի՛ն ։ . . ։

— Ի՞նչ բանի։

— Անպատճառ պէտք է որ ես ալ մէկտեղ գանուիմ։

— Շատ աղէկ։

— Ըսել է համաձայնեցանք։

— Բայց ես քեզի բան մը ըսեմ, քանի որ Ֆօթին ալ մեզ պիտի ընկերանայ, ուստի պէտք է որ ան ալ միատեղ խորհրդակցինք։

— Շատ աղէկ, երթանք ըսելով ոտքի վրայ ելան դիմեցաւնէն մեկնելու համար։

— Մէկ մէկ օղի ալ ինձմէ խմելու պատիւը կընէ՞ք, պա՛ռնայք, ըսաւ Տէննիօ, նատած տեղէն ոտքի ելնելով։

— Մեր Տէննիօ բարեկամը կոտրել չըլլար, ըսաւ Սպիրօ, և թէօխարին ձեռքէն քաշելով դէպի ըմպելի մատակարարելու տեղն յառաջացան։

— Շնորհակալ եմ, ըսաւ Տէննիօ։

— Ահա քեզի ադամանդի պէս մարդ մ'ըսելով, Սպիրօ թէօխարին դարձաւ և ձեռքովը ալ խանութպանին ուսին զարնելով աչքն ալ հարցական նշան մ'ըրաւ։

— Ի՞նչ ընելու է, պէտք է ժամանակիս յարմարիլ, ըսաւ գինեպանը պարծենալ չուզող մարդկանց պէս, և մտածելով Սպիրոյին ականջին, ցած ձայնով «դէօր եանդօն քեզ կը վնասէ գիտե՞ս» ըսաւ։

Սպիրօ անհոգութեամբ ուսերը թոթուեցով դարձաւ թէօխարին և հարցուց։

— Երթա՞նք, պարոն։

— Այ՛, երթանք, պատասխանեց թէօխար, և երկու ընկեր ձեռք ձեռքի տուած գինետունէն դուրս ելան։

Երկու ընկերը հազիւ գինետունէն բաժնուած էին, բարձրահասակ և միականի մարդ մը, ետեւէն երկու ոստիկանութեան պաշտօնակալ խանութէն ներս մտան։

— Սպիրօն հոս եկա՞ւ, հարցուց միականի մարդը։

— Երկու օր է գինքը տեսած չեմ, պատասխանեց Տէննիօ։

— Ա՛հ, չարաճճի, եթէ հոս ալ ըլլայ, այդ պատասխանը կուտաս դու ինձ, ես քեզ չե՞մ գիտեր։

— Կը սխալի՛ք, պարոն, եթէ ձեռքէս գալու ըլլայ, ես կը մատնեմ գինքը ոստիկանութեան, քանզի միշտ ապառիկ կը խմէ և ամեննեւին չուզեր ստակ վճարել։

— Ա՛հ, երբ պիտի ազատիմ այս մարդուն ձեռքէն։

— Ի՞նչ է ըրեր արդեօք դարձեալ, ըսաւ Տէննիօ։

— Էյլիպ տուն մը մտեր, և տանտիրոջ կինն ու երկու զաւակն սպաննելով, երեք հարիւր ոսկիի մօտ աղտմանդ դոզ-

ցեր է, և ըսյդ մ'օղը ձախեր է Հայ ասկերչ|ին մը, որն որ ա֊
նանցմէ յայտնուեցաւ։

— Հայերը, ըսաւ Տէննիօ ցած ձայնով, քսութեան մէջ յառաջադիմութիւն մ'ընելու մըցում մ'ունին կարծես։

— Ի՞նչ կը մրմռաս, հարցուց։

— Ոչինչ, պ. Եանպօ, պատասխանեց Տէննիօ։

— Ա.հաւասիկ ես կերթամ, եթէ այս կողմերը տեսնելու ըլլաս, անմիջապէս կամ ինձ և կամ ոստիկանութեան իմացուր չմոռնաս, կիմանամ, ետքը քու գլուխդ փորձանքի կը հանդիսակ ըսելով դուրս ելան։

— Աղէկ որ Սալերօն հոս չէր, մրմնջեց Տէննիօ, եթէ ոչ խա֊
նութս տակն ու վրայ պիտի ըլլար։

Երբոր ոստիկանութեան լրտեսները դուրս ելան, աշտարա֊
կին ժամացոյցն երկու՛ք զարկաւ։ այս պիշեր երկինքն ամեն֊
ևին աստղ չերևնալուն կարծես յատկանական մթութեամբ միան֊
գամայն խոր լռութիւն մը տիրած էր, բոլոր տիեզերքս, եթէ
մերթ ընդ մերթ փողոցի շանց ոռնալու ձայնին հետ ահե֊
զաչունչ հոլմին մռնչումն ու երբեմն կամկլտուքը չըլլար,
արարած ք Եգիպտական խաւարն յիշելով սարսափահար պիտի
ըլլային, 'ի բաց առեալ զբազոսեանս, որոնք իրենց տաճար֊
ներուն մէջ խառնած էին։ այս տաճարներուն մէջ ամենը կը
գերազանցէր Փառաւոնէյին անուան նուիրեալը, որ այս միջո֊
ցին ահռելի բազմութիւն մը կար (թէեւ Պայիր Թուրքիոն ան֊
ուան նուիրեալ տաճարնալ բազմութեան մասին, Փառաւոնէա֊
յինէն վար չէր մնար) բայց մենք դառնանք մեր պատմութեան։
Փառաւոնէային գիւղատան դռնէն ներս նրբաշաւղէ մը կը մըտ֊

նաէր. մուխէն սեւցած պատերը ենիչէրիներու ահռելի դէմ-
քերուն նկարներովը զարդարուած, չէնքն ալ քառակուսի
դիրք մը ուներ. ըմպելի մատակարարելու տեղը գրեթէ կէդ-
րոնը հաստատուած, որուն շուրջը հինաւուրց տեսակ տեսակ
հողէ սափորներ և սրուակներ կախուած էր, հոս երկու երիտա-
սարդ կեցած չարունակ օղի ՚ի գինի եւային կը լեցնէին վոքր
դաւաթներու մէջ. այս գինետանը լուսաւորիչը եռանկիւնի
լապտեր մ՚էր գոյնզգոյն թղթերէ զարդարեալ, որն որ հնու-
թենէն կամարաձեւ դուրս ցցուած առաստաղէն կը կախուէր,
ամբողջ գինետան մէջ տասներկու քի չափ սեղաններ դրուած,
որոնք արմկանց չափուն զաղիր վայլունութիւն մը առած էին,
և իւրաքանչիւրին վրայ մէկ քանի չիշեր դրուած շուրջերնին
վոքրիկ դաւաթներ կապասէին, արբեցողաց դիւրութեան հա-
մար և ամեն մէկ սեղաններուն շուրջը, հինգ կամ եօթը և
երեսմն տասնի չափ մարդ կը նստէր, գինետան մէկ անկիւնը
խոշոր պարապ տակառներ դիզուած էին, գետինը հող ըլլա-
լուն փողոցի ջուրերը ներս եկեր, և սահուն տիղմ մը գոյացու-
ցեր էր, եւ եթէ մերթ ընդ մերթ գինետան դուռը բացուե-
լով մէջի օդը փոփոխութիւն մը չկրեր, անկարելի էր որ
մարդ մէկ ժամ նստելու կարող ըլլար, թէեւ վարժուած ալ
ըլլային. վասն զի ծխախոտին մուխը և ըմպելեաց տեսակ տե-
սակ հոտերը իրար խառնուելով, միանգամայն տեղին խոնա-
ւութիւնն ալ, ընթերցողը կրնայ երեւակայել թէ՝ ինչ գարշելի
թթուաձին մը կը գոյացնէր. թո՛ղ խոհատան կրակարանին վրայ
դնուած տեսակ տեսակ ձուկերուն խորովումէն եղած հոտե-
րը, չմոռնանք ըսել, որ վառարանին մէջ փայտ էր վառուածը
որուն ծխնելոյզը գոց ըլլալուն, այս բոլորն ալ գինետան մէջ
կը դիզուէր, նոյն միջոցին խանութին տէրը խոհատան դրանը
առջին կեցած կը ծխէր. տարիքը քառասուն անցած մարդ
մ՚էր որ երուսաղէմ գացած ըլլալուն մահտեսի կը դոչէին.
գինետան մէկ անկիւնը տակառներուն տակ ցնցոտի հագուս-
տով մէկը նստեր էր, առջին թիւթեղեայ ամանի մը մէջ քիչ
մը օղի դրուած, մերթ ընդ մերթ բերնի ծխափայտիկը կը

թողուր օղին խմելու համար և միշտ կը մտածէր, բայց ինչ բանի վրայ ըլլալը մարդ չէր գիտեր. յանկարծ ահագին ձայնով մը.

— Գօստի՛, կրակ մը բեր, պօռաց։

Բայց ղինքը մտիկ ընող չեղաւ, դարձեալ կանչեց, Գօստի չըլսել ձեւացուց։

— կրակ մ'ըսի չը լսեցի՞ք, գոչեց բարկութեամբ, ձեռքը սեղանին զարնելով և միանգամայն քանի մը հայհոյանք բերնէն ժայթքեցնելով։

— Է՛, հոգիդ ելլաւ, ապասէ քիչ մը, պատասխանեց հեգնութեամբ Գօստի։

— Մեր էշութիւնը որ ամեն առեն հոս կուգանք, լիրբ։

— Լեզուդ քեզ քաշէ, նա մանաւանդ առաջ պարտքդ վճարէ և յետոյ . . .

— Ուրեմն այս է իմ բարերարութեանցս փոխարէն, աւ, իրաւ է որ աշխարհ պիտի կործանի։

— Հա, հա, հա, ծառայ եմ տուրբ սրիկայ, ըսելով Գօստի մեկնեցաւ միւս յաճախորդաց ծառայելու։

Այս միջոցին բարկութեամբ ցատկեց տեղէն ծերունին, որ հայր դանիէլ կը կոչուէր, վազեց Գօստիին ետեւէն և բռնելով օձիքը ուժգին ապտակ մը իջեցուց "Ա՛ռ քեզի պարտքս հատուցի, ըսելով։

— Աւելորդը ետ ա՛ռ, ըսաւ Գօստի, փայտեայ աթոռակը անոր գլխուն իջեցնելով։

— կեցցե՛ս, գոչեցին ծոյնք մէկ կողմէն։

— Ցատկեցէ՛ք ամեն քդ ալ ցած չուներ, կը պօռար հայր դանիէլ։

— Քեզ տեսանեմ հայր դանիէլ, պարտքիդ մնացորդը հատուցանելու ես, պօռաց տան և հինգ տարեկան պատանի մը։

Մէկ մ'ալ մէկ կողմէն քանի մը ծոյն ոտքի ելան, որոնց գլուխը բազոսեան տաճարին օրհնեալ ջուրէն տաքցած էր, ինչ ըսել է, կը գոչէին ամենը մէկ բերան, հոս հայ մը ծոյնի մը ապտակ զարնէ, մինչ մեր մեռած ենք, մինչ հայէ մը

ապտակ ուտելու չափ նուաստութիւնը կրնայ յանձն առնուլ ծոյն մը, որ իւր երակներուն մէջ տակաւին Հելլենական կաթիլը արիւն ունենալը կըզգայ։ Հոս ընդհանուր մրցում մը սկսաւ, փայտեայ աթոռակները օդուն մէջ տատանիլ սկսան ոչ օրինաւոր նուագարաններով, այլ խառնաչփոթ ձայներով և տոկալի հայհոյանքներով, հոս տեսնելու էր տաքարիւն երիտասարդաց՝ եռանդեամբ կռւոյ ասպարէզին մէջ շահատակելը և երկչոտաց ահաբեկ վիախուստը, իսկ քաջերը որ այսպիսի կռիւները տղոց խաղալիք կանուանէին գինեհատան մէկ անկիւնը նստած լուռ հանդիսատես ըլլալով գոհ կըլլային։

Անդին քանի մը ձկնորս մէկզմէկու կըսէին. «Ի՛նչ անխելք մարդիկներ կայ աշխարհիս վրայ, ինչերնուդ պէտք է Աստուծոյ ծառայները, մէկ մէկ քիչ օղի կամ գինի պիտի խմէք խմեցէք ու տուներնիդ գացէք։

— Բայց յանցանքը Հայուն էր, պատասխանեց ընկերներէն մէկը։

— Հայ, ծոյն, ինչ ազգէ կըլլայ թող ըլլայ, պէտք չէ չափէն աւելի վիախցուներ, վասնզի հետեւանքը ահա՛ այս է։

Այս միջոցին գառապէլային ձայնը ահագին դղրդմամբ մը, անզգամ շուներ ըսելով, գոռաց, տակաւին չը բաւեց ըսելով գառապան ի ձեռին գիմաց կռւոյն կեդրոնը, որ իր անյաղթելի բազկաւը ցրուեց այն քաջամարտիկ բազոսեան ոգւով զօրացած գիւցազուններըը, ոմանք տակառները իրենց ապաստանարան կընտրէին, ոմանք վիայտեայ սեղաններուն տակը կը մտնէին, ոմանք դառնէն դուրս վիախչել կը ջանային և ոմանք հասարակաց տեղին վիախչելով հանդիստ շունչ մը կառնէին, և անոնք որ չէին տեղ մը ապաստանած կամ վիախչել չէին ուզած, այս վտանգաւոր կռւոյն արդիւնքը վայելած էին. ատոնցմէ որուն գլուխը վիրաւորուած, որուն ձեռքը կոտրած, որ մէկին վրան գլուխը պատռտած և կամ մազերը վիթխտուած, բայց զարմանալին այն է որ քիչ մը վէրքը ամենուն բան մը չպատահածի պէս իւրաքանչիւր ոք իր սեղա-

նին դլուխը նստած սկսեր էին խնդալ, խօսիլ և՛ երգիլ. հոս Ֆօթին որ արդէն ընթերցողք կը ճանչնան ամենուին տեղէն չարժած և այս կուռյն մասնակցած չէր. բայց և այնպէս կըռւոյն ելքը կսպասէր.

— Հայր Դանիէլ մօտենալով Ֆօթիին, ինչ կըսես սա պապ տակառ Գօսթին որ դիմացինը դնացած կարծեց, սակայն աղէկ զղջաց արթնցնելուն, ըսաւ, և ձեռքը սեղանին զարնելով, մինչ մեռանք ճղբայր, պօռաց.

— Ուշադրութիւն ըրէ, օղիս գաւաթը չը կոտրես բարեկամ, ըսաւ Գօսթի, դեպի իւր տեղը հրելով.

— Այսպէս է բարեկամ, շատ աղէկ ձեզ ալ հասկցայ. գոհ եմ որ թշնամիս և բարեկամս նոր կսկսիմ ճանչնալ, հասկըցայ ձեզ ալ հասկցայ.

— է՛, կարճ կապէ գլուխս կը ցաւի.

— Բայց ինչ իրաւամբ, ես քեզի իբր բարեկամ բարեւ տուի և դու...

— է՛... պիտի վերջացնես թէ ոչ, գոչեց Ֆօթի զայրագին.

Այս միջոցին անմիջապէս Գաւապէլա հոն հասաւ և հայր Դանիէլի մօտենալով, տակաւին չը բաւեց, գինեատունս գոցել պիտի տաս, ըսաւ, քանզի Ֆօթիին բարկութենէն ամեն մարդ կը տակար.

Հայր Դանիէլ առանց պատասխանելու գնաց տակառներուն տակը իր առջի տեղը նստաւ, ու սկսաւ այս երգը երգել որ այն տեղն նոր տպլորական էր.

Ես կը սիրեմ սեաւ գինին
Դու ալ յարգէ ճերմակը,
Ոնոնք միայն խելք ունին
Որք տակառին են տակը.
Կեցցէ գինին կեցցէ և միշտ յաւիտեան
Գինին արբել չուզողներն են անպիտան.

— Պարոն երգիչ կենացդ, գոչեց անդիէն երիտասարդ պատանին, կէս հօտանոց թիթեղեայ յառնուլ գինին ի մի ումպ խմելով.

Հայր Դանիէլ դարձեալ շարունակեց իր երգը.

Ամ՛ն խելացի բադոսին
Թելքին լոյն մեզ ալ ցայտեց,
Հէրքիւլէսը կակոսին
Նորա չնորհիւն էր յաղթեց.
Կեցցէ գինին կեցցէ միշտ և յաւիտեան
Գինին արբեալ չուզողներն են անպիտան.

Գինւոյ պարտիմք այն յարդանք
Զոր այլք չըտան Ծնողաց,
Բեզ ովաննա քեզ մաղթանք
Որ կեանք չնորհես արբողաց.
Կեցցէ գինին կեցցէ միշտ և յաւիտեան
Գինին արբեալ չուզողներն են անպիտան.

Հազիւ հայր Դանիէլ երգը լմնցուցած էր կ՛... հէ՛ հէ՛ հէ՛ հէ՛ պօռալով, երկու հոգի մտան գինետան դռնէն թեւ թեւի մտած որոնց ոտքի վրայ կենալու կարողութիւննին անգամ չէր մնացեր։

— Գառապէլա, ա՛ռ քեզի արդիւնաւոր յաճախորդներ, դո՞ չէց, հայր Դանիէլ։

— Ըհաւնեցա՛ր կաւադի տղայ, մռնչեց գինովին մէկը, որ արմուկը ըմպելի մատակարարելու տեղին կռթնած կը պատրաստուէր երգելու։

— Հօրս գէշ մի՛ խօսիր, ինչու որ իմ հայրս քուկդ ալ է։

— կորսուէ դնա բանդ անօթի շատախօս դու ալ, գօսթի մեզի երկու տանող գինի լեցուր։

— կլէ, հայրդ չտեսնայ։

— Նոյն միջոցին Գառապէլայ հայր Դանիէլին մօտենալով, պիտի վերջացնե՞ս թէ ոչ, հիմայ քեզ բռնածիս պէս դուրս նետել կուտամ, քեզ տեսնեմ երեսիդ լրուվը հասկէց դուրս ել, ծն հասակդ տեսնեմ։

— Ես ի՞նչ ըրած ունիմ, հանդարտ տեղս նստեր եմ։

— Ա՛հա քեզի այսչափ կը զրուցեմ, լսելով հեռացաւ քովէն։

Հայր Դանիէլ ալ անկէ ետքը առջեւը դրուած օղին ըմպառելու զբաղեցաւ առանց ծխախոտիկը ձեռքէ ձգելու։

Մէկ մ'ալ գինեւաուն դառնէն ներս ծեր մարդու մը հետ երիտասարդ մը ներս մտան, վրանուն հագուստը թեպետեւ գինեւաուն յաճախողաց հագուստներէն տարբերութիւն չունէր, բայց երիտասարդին նայուածքը ծպտեալ ըլլալնին կը մատնէր հետաքրքիր մարդկանց։

Երիտասարդին դէմքը շնորհալի և դրեթէ կնոջ մը չափ դեղեցիկ էր և այս դեղեցկութիւնը եթէ արատ մը ունէր այն ալ միայն կարճահասակ ըլլալն էր։ բազմականներուն տգեղ ու կոշտ ձեռքերուն քով երիտասարդին ձեռքերը դրեթէ փղոսկրէ չինուած էին։ Այս նորեկները ուղղակի սեղանի մը մօտենալով երկու աթոռներու վրայ նստան, և ամենուն աչքը անոնց վրայ դարձաւ, ուստի անմիջապէս Գառապէտ ինքը վաղեց քովերնին, որ մեծ պատիւ էր, և այս կողմերը աստառուց բան մը լսուած չէր։

— Ի՞նչ կը փափաքիք պարոնայք, ըսաւ շտապորէն ձայնով մը։

— Մեղի քիչ մը գինի բեր, պատասխանեց ծերունին։

Անմիջապէս գինին բերուեցաւ։

— Այս մարդուն հարցուր, ըսաւ երիտասարդը ծերունուն։

— Բարեկամ, ըսաւ ծերունին Գառապէտին, կը հաճի՞ք գառաթ մը գինի խմել ի միասին։

— Ամենայն յօժարութեամբ, պատասխանեց Գառապէտ ու նստաւ քովերնին և սպասաւորին ձայնեց որ գառաթ մը բերէն։ Սպասաւորը անմիջապէս գառաթը բերաւ։

— Առէք տեսնենք, ըսաւ ծերունին, նախ անոր գառաթը լեցնելով։

— Շատ պատուական գինի է, ըսաւ Գառապէտ, մեծ հայրս այս գինին կիպրոսէն բերել տուաւ, որն որ այս կողմերը ամենեւին ուրիշ տեղ մը չը գտնուիր և այս առաջին անգամն է որ տակառ մը բացի, որուն վրայէն երկոտասան ամսոյ բեռ նաւորեալ, յիսուն հատ մեծամեծ տարիներ անցած են։

— Այդ հնութիւնը վրայէն կերթաք, բսաւ ծերունին ժըպտելով։

— Ի՞նչ, չէք հաւատար։

— Չը հաւատալու ի՞նչ կայ։

— Կերդնում քու փոքրիկ ընկերիդ գլխուն վրայ, որ այ մեռնեմ առատ մը չունիմ։

— Ի՞նչ հարկ կայ երդման։

— Վանդի չը հաւատալ ձեւացուցիք։

— Բարեկամ, ես ձեզի չըսի որ սուտ կը խօսիք, բսաւ ծերունին այլայլելով, քանզի Գառապէլային քու փոքրիկ ընկերդ ըսած ատեն, անոր նշանաձի շարժումէն կասկածեցաւ որ գինեպանը իրենց գաղտնեացը թափանցեր էր։

Մէկ մ'ալ գինովցներէն մին, որ ըմպելի մատակարարելու տեղը, իւր ընկերին հետ կեցած օղի կը խմէր կ. հէ. հէ. հէ պօռալը և ձեռքը օդին գաւաթին զարնելը մէկ եղաւ, թէեւ գաւաթը կոտրեցաւ, բայց ձեռքն ալ կարծեմ անգործածելի եղաւ, ինչու որ հեղեղանման արիւն կը վազէր։

Այս ձայնէն ծերունին և երիտասարդը ինչ ըլլալնին չը գիտնալով խելքերնին գլխուննուն դնաց և ալ բան մը չկրնալով խօսիլ ծերունին, քիչ մը ատեն լռութիւն տիրեց։

ԴԱԻԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԴԱՒ

— Ինչու լռեցիր, հարցուց։

— Սա դիմացի ծերունեուն քով նստող երիտասարդին պիրալը բրթաւ Մըկըր, բսաւ հայր դանիէլ իւր քովը նստող երիտասարդին. տե՛ս տե՛ս որչափ դոյնը նետեց խեղճ տղայ։

— Լուսահոգի քրոջս կը նմանի, բսաւ Մըկըր ժպտելով. մաղերը երկայն խելքը կարճ։

— Բայց սատր մաղերը կարճ, խելքը երկայն է։

— Մկրատին ալ կարող է դէմ դնել.

— Ի՞նչ ըսել կուզես, հարցուց Հայր Դանիէլ.

— Ըսել կուզեմ թէ, ըսաւ տատամսելով և վիանդ ածայն անհոգութեամբ, այն երիտասարդը կին է.

— Ի՞նչու շեշտեցիր վերջին բառը.

— Վասն զի խիստ վստահ եմ.

— Ի՞նչ կըսես տղայ, ըսաւ.

— Ինչ որ կը տեսնամ, ըսաւ և յարեց Նաեւ, կեցի՛ կեցի կեցի լուսաւոր խորհուրդ մը միտքս գրաւեց, դոչեց և մօտեցուց բերանը ականջին, միտքս խորհուրդ մը եկաւ. կը խաղա.

— Ա՛հ, այսօր բոլոր ունեցածս կորնցուցի. ուստի երդումը ըրի որ ալ ասկէ վերջը խաղ չխաղամ.

— Ըսել է, ստակ շահիլ չես ուզեր.

— Օ՛. այդ ալ հարցնելու բան է.

— Ուրեմն ինձ մտիկ ըրէ, այդ դիմացի ծերունւոյն հետ նստող երիտասարդը ծպտեալ կինն մըն է, և կերեւի որ հարուստ են.

— Այո՛ իրաւունք ունիս այնպէս կերեւի. բայց կին ըլլալը և խաղ խաղալնին ուսկից գիտես.

—կամ կին է և կամ կուրծքը ուռեցք ունի.

— Այդ գէշ գիւտ չէ, ինչ աղուոր մարդարէութիւն, ինչ այլանդակ խօսք, ուրեմն ես ալ կըսեմ թէ, ըսաւ Հայր Դանիէլ ծաղրական ժպիտով մը, նստած տեղերնիս կամ գինեատուն է և կամ գործատուն.

— Օ՛, աղէկ յարմարութիւն, ըսելով սկսաւ բարձրաձայն խնդալ.

— Բայց ինչու կը խնդաս, ըսաւ Հայր Դանիէլ խոժոռ դէմքով մը, քեզ կը հարցնեմ քու ըրած մարդարէութիւնդ գէշ է.

— Ես իմ կարծիքս ըսի.

— Ուրեմն քանի որ դու քու կարծիքդ ըսիր, ես ալ իմ կարծիքս ըսելու ազատ չեմ.

— Բայց.

— Բայց մայց չկայ ես այդպիսի կարծիքներու ատակ տուող չեմ, սակայն դժբաղդաբար ան ալ չունիմ. ահ եթէ ունենայի, ես պիտէի այս գիշեր ինչ կըլլար այս գիւղատունը։

— Բայց հիմայ աղէկ մտիկ ըրէ ինձ, և այդ խօսքերը մէկդի նետէ։

Ա.յս միջոցին հայր Դանիէլ երեսը անդին դարձնելով՝ ես ալ քու ղռնչարանութիւնդ մտիկ կընեմ, ինչ խելք, դու հիմայ ինձ օղի մը կրնաս խմցնել նայինք։

— կը խմցնեմ եթէ ինձ մտիկ ընես։

— Օն ուրեմն, ճըր է։

— Երկու օղի բեր մեզի, գոչեց Մըկըը։

— Հիմայ ըսէ տեսնեմ, ըսաւ հայր Դանիէլ, Մըկըրի մօտենալով։

— Հիմայ օղինիս կը խմենք ու կելլանք դիմացի սրճարանը կերթանք կը նստինք. և երբոր ատանք դուրս ելնենք, աչքովը ձերունին ու երիտասարդը ցուցնելով, կը մօտենանք քովերնին և կըսեմք եթէ վրայի ունեցածնիդ մեզի չտաք, ստիպկանութեան կիմացնեմք։

— Բայց ի՞նչը, ըսաւ։

— Երիտասարդին ծպտեալ կին ըլլալը։

— կեցցես, գոչեց Հ. Դանիէլ, Մըկըրին ուսին զարնելով, և յաւելցուց եթէ ատակ ունենայի քեզի օղի մը կը խմցնէի, բայց դժբաղդաբար չունիմ, սակայն հարկաւ պիտի ունենամ, հարկաւ գիւտ մը պիտի ընեմ։

— Եւ այս իրիկուն, ըսաւ Մըկըը։

— Օն ուրեմն, այս իրիկուն Աստուծով եթէ յաջողինք վաղը աչքս նայէ։

— Օն երթանք, որ կասկածի տեղի չտանք։

— Բայց հոն ոչ գինի կայ և ոչ օղի։

— Ի՞նչ մարդ ես դու ալ, նախ դործդ լմնցուր ու յետոյ մէջը խղդուէ, ըսաւ Մըկըը Հ. Դանիէլի տատամկէն բռնելով։

— Շատ աղէկ, օն երթանք, բայց երբոր ուշանալու ըլլան, այն ատեն . . .

— Ա՛հ, սիրտս հատցուցիր, զղջայի ասանկ բան մը առաջարկելուս համար, բայց լինչ և իցէ քալէ՛, քալէ՛, թէև դու դէշ յաճախորդ չէս, բայց Գառապէլա քու յարդդ չը ճանչնար, ըսելով յառաջացաւ դէպի գինետան դուռը։

— Հայր Դանիէլ դարձեալ ատակ վճարել մոռցար, պօռաց գօսթի։

— Հիմայ պիտի գանք, պատասխանեց կեղծ բարկութեամբ, և երկուքը միկէն դուրս ելան։

Մինչդեռ հոս այս խօսակցութիւնը կըլլար, անդինծերուն Գառապէլային գաւաթը հինգերորդ անգամն էր որ լեցուցեր և պարպուեր էր, և երբ վեցերորդը կը լցնէր Գառապէլան ծերունուհւոյն ձեռքէն բռնելով, ինչ կընես բարեկամ, ըսաւ, չե՞ս յիշեր որ ես հոս գինեպան մ՚եմ մանաւանդ այնպիսի տեղ մը, որ երբէք պատուաւոր և բարի մարդ մը չդար բաց ՚ի ձենէ, որ առաջին անգամ է տեսնելս և յաւելցուց նաեւ ըսելով՝ ես լինքզինքս երջանիկ պիտի համարիմ այսօրուընէ, որ պատիւ ունեցայ ազնուական անձի մը հետ դինետունիս մէջ նստելով, առանց հայհոյանքի առանց սուտի և առանց խարդախութեան փորը լինչ տեսնուելու։

— Շնորհակալ եմ պարոն, ըսաւ ծերունին կակազելով. կը յուսամ որ ասկէց ետքը չարունակ տեսնուելու բաղդաւորութիւնը կունենանք. ուստի կալաչեմ մէկ մէկ գաւաթ ալ խմենք ըսելով, գաւաթները լեցուց. (կարծեմ մոռցանք ըսելու որ Գառապէլային գաւաթը մինչ ՚ի բերան կը լեցուէր) օն ուրեմն խմենք, ըսաւ, գաւաթը միւս գաւաթներուն դպցնելով, կենացդ, և սկսաւ խմել, և երբոր գաւաթները վարդրին, ներեցէք ձեզի բան մը պիտի հարցունեմ, ըսաւ ծերունին աձելի մօտենալով Գառապէլային։

— կրնաք հարցնել, ըսաւ Գառապէլա։

— Պարոն Թէօխար անուամբ մէկը կը ճանչնա՞ք։

— Պարոն Թէօխարը ըսի՞ք։

— Այ՛ո։

— Խիստ ալէկ։

— Բայց նախ ինձ ըսուցեցէք թէ՝ գառապէլային պ'ինեւտու-նը այս չէ՞։

— Ա՛յ, այս է, և տէրն ալ ձեր մեծապատուութեան հետ գինւոյ ընկեր ըլլալու պատիւն ունեցած է, որուն համար պարծենալով կը խօսիմ։

— Շնորհակալ ենք բարեկամ, այդ ձեր սրտին ազնիւ զգայմունքներն են, որ առաջին անգամ տեսնուելնուս լեզուինդ դուրս կարտադրէ։

— Որչափ ազնիւ և բարեսիրտ էք պարոն։

— Հիմայ ըսել է պ. գառապէլան հրամանքնիդ է՛ք։

— Ընշուշտ։

— Քիչ մը առաջ ըսել կուզէիք թէ պարոն Թէօխար հոս կը յաճախէ այնպէս չէ՞։

— Ա՛յո, ամեն երեկոյ և հիմայ կարելի է ուր որ է կուգայ։ Ճիշդ այս միջոցին էր, պարոն Թէօխար Սպիրոյին հետ գինետունէն ներս մտան, որն որ էլեկտրական կայծի մը պէս ամենուն սիրտը սոսկում տիրեց. քանզի ինչպէս որ ըսինք հոն գտնուողներն ամենն ալ Սպիրոյէն կը վախնային։

— Ահա եկաւ, գոչեց գառապէլա անոնց ներս մտնելը տեսնելով։

Թէօխար գլուխը դարձնելով ծերունին տեսաւ և երբ զարմանօք դէպի անոր կը յառաջանար, ծերունին ակնարկով մը ետ դարձուց զայն, պարոն Մարտիրոս հոս կը գտնուի մրմնջելով։

— Ի՞նչ կըլլաս, հարցուց Սպիր Թէօխարին, այսպէս յառաջանալն, ետ դառնալն և միանգամայն մրմնջելն իմանալով, ահա ձօթին հոս անկիւն մը նստեր է, ևկու երթանք անոր քովը։

— Համ... աղէկ ըսիր երթանք քովը, ըսաւ Թէօխար, և դէպի ձօթիի նստած անկիւնը յառաջացան։

— կուզէ՞ք պարոն, ըսաւ գառապէլա ծերունւոյն, պարոն Թէօխարը հոս կանչեմ։

— Ո՛չ, ևս վերջը կը տեսնուիմ անոր հետ։

Սյս միջոցին, ուրբ տասը չրհանակիր գինով ձեռ-ք ձեռ-քի

ատաձ , գ[ինեւտան դառնէն ներս մուտն որոնց մէկը կերդէր մէկը կը պօռար միւսը կը հայհոյէր , մէկ երկուքն ալ մէջերնին վիճաբանութեամբ կուզէին կռուել . սակայն անոնցմէ մէկը որ տակաւին միւսներուն չափ բազասեան ոգւոյն ազդեցութիւնը չէր զգեցած , կուզէր համոզել :

— Ներեցէք , ըսաւ Գառապետեան Ծերունւոյն , ստիպուեցայ բամնուիլ ձեզմէ , վասն զի կը վախնամ որ հիմայ կռիւ մը կը պատահի և վերջը դժուարաւ կրնամ հանդարտեցնել , մանաւանդ . որ սա սրիկան ալ հոս է , ըսաւ Սպիրօն ցուցընելով և հեռացաւ ատենցմէ :

— Ծերունին՝ Գառապետեան կանչելով , կաղաչեմ մեզի համար բան մը մի՛ խօսիր Պ. Թէօվարին , ըսաւ :

— Ատաձ չընէ բարեկամ , դուք տակաւին իմ բնութիւնս չէք գիտեր , և դիս ալ չէք ճանչնար , ուստի իրաւունք ալ ունիք , բայց սա չափ ըսեմ որ վտքը ինչ տեղեկութիւն ունեցած ըլլաք իմ վրաս , մահուան դատիքն անգամ դիս խօսեցնելու անկարող է ըսելով , հեռացաւ Ծերունւոյն քովէն :

— Ա՛հ , հօրեղբայր , այս ի՞նչ ահռելի տեղ է հոս , ըսաւ երիտասարդը Ծերունւոյն :

— Ատել , աղջիկս , քա՛չ եղիր , մի՛ վախնար , ամենեւին վախնալու բան չկայ :

Ընթերցողք կրնան ենթադրել թէ , փափուկ և մանգամանի իւր ընտանեաց ու սպասուհեաց գերկը մեծցող աղջիկ մը ի՞նչ աստիճան սոսկումով պաշարուած էր այս դէպքին մէջ :

— Ա՛հ , հօրեղբայր , կը դողամ :

— Սիրտ ա՛ռ , և քալեցուէ՛ :

— Ա՛հ , սիրելիս , արդեօք ի՞նչ պիտի ընեն Միհրդատը , խե՛ղճ երիտասարդ :

— Մի՛ վախնար , խստիւ պատուիրած եմ որ Միհրդատայ կեանցը չդպչին :

— Բայց Պ. պէյը պիտի բարկանայ իւր անուամբն եղած խաբէութեանը վրայ :

— Ո՛ւրկից պիտի իմանայ , ըսաւ ուսերը թօթուելով , դուն

ինձ այն ըսե՞թէ, Հեղինէէն՝ որ քու հակառակորդդ է, կուզես վրէժ լուծել։

— Ա՛յ, այո՛, ըսաւ ակռանները դոյելով, և այնպիսի հառաչանքով, ինչպէս որդեկորոյս վագր մը կը մռնչէ, և այս մռնչման ձայնը գինեւտան մէջ դինով չեղողներուն ուշադրութիւնը գրաւեց, և դարձեալ կրկնելով, այո՛ միթէ անոր համար չէ՞ որ մինչև հոս քեզի ընկերացայ՝ որպէսզի եղածներուն լաւ ականատես ըլլալով ուրախանամ, բայց ... չէի կարծեր որ այսչափ տսկալի տեղ մ'է։

— Արդէն ես քեզի ըսի, բայց դու ինձ մտիկ չընելով ուղեցիր հետս գալ, բայց և այնպէս վախնալու բան չկայ։

— Այն անիծեալ և կախարդ կինը խոստացաւ որ ժամը հինգին անպատճառ պիտի գար և տակաւին չեկաւ։

— Գեռ կանուխ է, և կինն ալ անպատճառ պիտի գայ, անհոգ եղիր, վախնալու բան մը չկայ, դու հոս նստէ քիչ մը ես սա պիմայի մարդուն հետ քանի մը խօսք ունիմ, ըսաւ թէօխարը ցոյց տալով։

— Ա՛հ, մինակ... ինչպէս, հօրեղբայր, կաղաչեմ... վրաս մարելիք կուգայ։

— Ատել, ինչ կընես, տղայ մի՛ ըլլար, անհրաժեշտ պէտք է տեսութիւն ընել, քաջալերուէ՛, մի՛ վախնար, ըսելով հեռացաւ։

Երբոր թէօխար տեսաւ որ Ծերունին դէպի իր կողմը կը յառաջանայ, կեղծ ակնածութեամբ մը ետ քաշուեցաւ, ոտքի վրայ ելնելով։

— Նստեցէք, նստեցէք, ինչ կընէք, ըսելով թէօխարին ձեռքը սեղմեց, և երկուքը մէկէն նստան հոն. քառորդի մը չափ տեսութենէ վերջը իրար ողջունելով, Ծերունին դարձեալ Ատելին քովը եկաւ, և ըսաւ։

— Եթէ կուզես, հիմայ երթանք։

— Այո՛, այո՛, պատասխանեց։

Ծերունին գինեվաճառը կանչեց և խմած գինիին տակը վճարելով, գառապէլային ալ իրենց յարգանքը մատուցանելէն ետքը գինետան դռնէն դուրս ելան։

Այս միջոցին այնպիսի սաստիկ անձրեւ մը կուգար, որ նեղ փողոցներուն քարայատակները իրենց տիղմերէն մերկանալով՝ անձրեւին սաստկութենէն՝ աղտեղութեան մեծ մասը տանց որմերուն վրայ կը հանէին, ուստի անձրեւին անընդհատ շարունակութենէն և փողոցին նեղութենէն ահագին մռնչմամբ կարծես դետ մը կանցնէր ամենուն անդ մը չթողլով. ճիշդ այս աւուրն էր որ Գուշլու-Պահճէլին փողոցին բերանը երկու ստուեր կը տեսնուէր, բայց դիշերուան սոսկալի մթութենէն ոչ ոք կրնար որոշել անոնց ինչ ըլլալը, վասնզի կարծես երկինք ալ վերահասու եղած էր այս քաղաքին ոճրագործութեան՝ որ նոյն դիշերը այսպիսի յոդնատխուր մթութեամբ հեղեղման անձրեւ կը տեղար, զէթ սոյն քաղաքին բարբարոսութեան արգելք մ'ըլլալով, անմեղ Մխիրդատն ու հրեշտականման Հեղինէ չզոհուին այս վատասիրութեան։

Հայր Դանիէլ և Մըկըր իրենց համար լաւ տեղ մը որոշեր էին, այս փողոցին բերանը կանգնելով, վասնզի առջի օրուընէ հոս ական բացուած էր, և անձրեւին սաստկութենէն բռաէն եկած հողն ու քարին մէկ մասը գետինը տարածուած և միւս մասը ուղխին հետ խառնուելով, գրեթէ ամենեւին բան մը չէր տեսնուեր։ Երբոր այս տեղն հասան, «կարծեմ ասկէց պիտի երթայինք, ըսաւ Ատէլ, սոյն փողոցը ցուցնելով։

— Եթէ չեմ սխալիր, այն փողոցին մէջ լապտեր կայ, պատասխանեց Տէրպէնտ։

— Այո՛, այո՛, ես ալ կը յիշեմ, բայց կրնայ ըլլալ որ ժամանակն անցած ըլլալուն մարած են։

— Չեմ յուսար, բայց անդամ մը նայինք, եթէ վերի փողոցին մէջ լապտերներ չկայ այն ատեն կը դառնանք հոսկէ երթալու։

— Ո՛րչափ ալ մութ է, արդեօք լապտեր մը չե՞նք կրնար գտնել։

— Այս ատեն բոլոր խանութները գոց են, և հետեւաբար պէտք է այս փողոցներէն առանց լապտերի անցնիլ, որ մէկու մը կասկածի տեղի չտանք։

Երբ այսպէս խօսելով, գուշլու-պահճէին առջեւն հասան։

— Ա՛յ կոյր սատանայ, մրմնջեց Մըկըր, Իսրայէլացի՛ք եգիպտոսէն ազատեցան։

— կեցի՛ տղայ, միտքս նոր լցաւ մը լուսաւորուեցաւ, ըսաւ հայր Դանիէլ։

— Ո՞նչպէս, հարցուց Մըկըր։

— Ետեւնուն վազելով վախ տանք և վրանին յարձակինք և....։

— Զայնդ քաշէ ահա կուգան, ըսաւ Մըկըր հայր Դանիէլի խօսքն ընդմիջելով։

— Ո՞ւր է։

— Ահա. լռէ՛, լռէ՛։

— Ա՛յ՛ կուգան, ըսաւ Մըկըր, և քայլ մ՚ալ յառաջացաւ որ իակոյն վրանին յարձակի։

— Շուտ ետ քաշուէ, ըսելով Մըկըրին, հայր Դանիէլ օձիքէն բռնեց և դէպ իրեն քաշեց։

— Ո՛չ անիծեալ պահնորդ, դէմերնիս ելնելու ատենը գըտաւ, եկո՛ւ սա փողոցին մէջ մնանք, և երէ պահակը ետեւնէն մեզ տեսնելու իւր ճամբան չարունակէ, մենք դարձեալ մեր որսերը ձեռքերնուս չհանել կաշխատինք, իսկ երէ դէպի մեզ յառաջանայ անմիջապէս կաներեւութեանք չըյուսահատելով, նաեւ մեր որսին փախստեանը վրայ, ըսելով փողոցին մէջ մտան. և երբոր փողոցին մէջ քիչ մը յառաջացան, Մըկըր անմիջապէս հայր Դանիէլէն զատուիլն ու փողոցէն անցած ուղխէն բռնեց և դէպ իրեն քաշեց։

— Ո՛չ անիծեալ պահնորդ, դէմերնիս ելնելու ատենը գըտաւ, եկո՛ւ սա փողոցին մէջ մնանք, և երէ պահակը ետեւնէն մեզ տեսնելու իւր ճամբան չարունակէ, մենք դարձեալ մեր որսերը ձեռքերնուս չհանել կաշխատինք, իսկ երէ դէպի մեզ յառաջանայ անմիջապէս կաներեւութեանք չըյուսահատելով, նաեւ մեր որսին փախստեանը վրայ, ըսելով փողոցին մէջ մտան. և երբոր փողոցին մէջ քիչ մը յառաջացան, Մըկըր անմիջապէս հայր Դանիէլէն զատուիլն ու փողոցէն անցած ուղխէն ցատկելը Տէրպէնտի վրայ յարձակելը մէկ ըրաւ, նոյնպէս հայր Դանիէլ առանց ժամանակ կորսնցունելու, անոր հետեւեցաւ։

— Զայն մի՛ հաներ, երէ ոչ կորսուած ես, ըսաւ Մըկըր, Մարտիրոս Տէրպէնտի վիզէն բռնած մերկ դաշոյն մը գլխին վրայ շողացնելով, և այս գործն 'ի գլխել ական այնպիսի զարմանալի արագութեամբ կատարեց որ հայր Դանիէլ, ընկեր ալ ըլլալէն վերջը այսպէս ըլլալու է, մրմնջեց։

Ա.տել սոսկումով ճիչ մը հաներ, բայց Դանիէլ որ կայծակի

արադուխթեամբ վրայ հասեր էր, անմիջապէս ձեռօք օրիորդ Ասէլի բերանը դոցեց։

— Ի՞նչ կուզէք եղբարք, ըսաւ Տէրպէնտ սարսափած։

— Ոչինչ բան մ՚է ուզածնիս, ըսաւ Մըկըր։

— Ի՞նչ է ուրեմն։

— Քանկիտ և ինչ որ ունիք քոլերնիդ։

Հայր Դանիէլ այս միջոցին առանց հարց պատասխանելի, օրիորդին դրպաններըը քննելու ղբաղած էր։

— Ի՞նչ գտաք տեսնեմ, հարցուց Մըկըր։

— Ունայնութիւն ունայնութեանց ամենայն ինչ ընդունայն... ըսաւ Դանիէլ, եղունքովը ակռային զարնելով, և յարեց նաեւ թէ կերեւայ որ վաճառական է, այս փոքր աղջիկ ըսածդ, վանդի դրպանէն քսան քսան և հինգ ի չափ նամակներ գտայ, իսկ ատակ՝ ամենեւին. ան դարձեալ դրժբաղդ, ըսելով Տէրպէնտի դարձաւ, անպիտան ծերուկ ինչ չո՞ւ սիրուհուդ դէթ ժամացոյց մը անգամ չառիր, ըսաւ, և այնպիսի երկու բռնցի հարուած տուաւ դլխուն, որ Տէրպէնտ խելքը՝ դլխէն գնաց։

Ատէլ այս կոպիտ խօսակցութիւնները, և բիրտ ձեռքերուն իր փափուկ մարմնոյն դպչելը զգալով, քիչ ճնաց որ պիտի նուաղէր։

Դանիէլ այսպէս կոշտ ու կոպիտ խօսելով, Մարտիրոսի դրպաններուն մօտեցաւ և սկսաւ խորերը զննել, և երբոր յուսացածին չափ բան չգտաւ, թէեւ լաւ մը կողոպտեց, «անպիտան ընդած ծեր, դուն ալ ես որ այսպիսի գեղեցիկ սիրուհի մը ունիս, ըսաւ։

— Խօսելու ժամանակ չէ, գործդ լմնցուցէր հարցուց Մըկըր. քեզի պէտք եղածը սիրուհի չէ, ինչ կըլլայ ըլլայ այն ալ քեզի և ալ ինծի կը վերաբերի, ժեզի՞ պէտք եղածը ատակ, ժամացոյց, գոհար։

— Գտածս առի, պատասխանեց հայր Դանիէլ։

— Ուրեմն երթանք, ըսաւ Մըկըր, և Մարտիրոս Տէրպէնտի կուրծքին այնպիսի հարուած մը տուաւ, որ չկարենալով ինք-

զինքը բռնել և առանց ճիչ մը հանելու, կռնակի վրայ նոյն օրուան բացուած ականներուն՝ մէկուն մէջ զետրեցաւ։

— Օ՛ն Մըկըը, ըսաւ Դայր Դանիէլ, ժամանակ կորանցուներ լու ատեն չէ, գարշապարներդ օձէ որ կասկածէ տեղի մը չտալով, երեանիս Ջուրը տեղը խոյս տալու կարող ըլլանք։

Օրիորդը ակռեր էր պօռալ կանչուըռտելէ, իսկ Դանիէլ և Մըկըը անտեսանելի կերպով անյայտ եղեր էին։

ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՐԴԻՆ

Գաստը-գիւղ Ջարըքճը ըսուած փողոցը, հին և ցած տուներէն մէկուն մէջ աղօտ կերպով կանթեղի մը լոյսը կը ցոլայ։ գիշերը ժամը վեցն է, խըցիկի մը մէջ կը կենայ այս հողէ կանթեղը, որուն իւղը հատնելով միայն պատրոյգին վրայի գլուխնուածոյը իւր վերջին շունչն արձակելու մօտ է, այս սենեկին մէկ անկիւնը հնոտի հատ կտաւէ բազմոցի մը վրայ հիանալի գեղեցկութեամբ աղջիկ մը նստեր, երկու ձեռքը գլխուն մէջ, մազերը ցիրուցան ուսերէն վար տարածուած շարունակ կուլար, գիշերուան այս ժամուն այնպիսի գեղեցիկ աղջկան մը այն հին և միանգամայն առանձին տանը մէկ անկիւնը, որն որ սարդիոստայնէ զոլարկեալ էր, այս վիճակին մէջ տեսնելն ու զաղափարելը մարդս կը սարսափեցնէ. այս կիսալուսային առանձնութեան մէջ նստող աղջիկը քիչ մը վերջը բազմոցին վրայէն ելնելով, պատուհանին քով նստաւ, և սկսաւ շարունակ փողոցը դիտել, թէպետեւ մթութենէն բան մը տեսնելն անկարելի էր։

— Ա՛հ կըսէր, արդեօք կանանց սիրտն անիծեալ է, ինձ

կըսեն թէ գեղեցիկ եա, չեմ գիտեր, բայց թշուառ ըլլալս լաւ գիտեմ... ա՜հ, այս գիշեր անպատճառ գալու խոստացած էր ինձ, բայց տակաւին չերեւար, կարծեմ այս գիշեր ալ չպիտի գայ, ա՜հ, դարձեալ դիս խաբեց. Աստուածդ իմ, դու ինձ զօրութիւն տուր որ այս ահռելի տան մէջ ապրելու կարողութիւնը ունենամ. ո՛վ Աստուած, ազատէ դիս այս տեղէն... ա՜հ, սէր իմ, սէր իմ Պետրոս, երբ պիտի սիրես դիս, բայց ես կը զառանցեմ, ինչը կատէ դիս... սակայն ինչո՞ւ, մինչդեռ բուռն զօրութեամբ ես զայն կը սիրեմ, իսկ ինչը ընդհակառակը միշտ կատէ դիս, թէեւ պատճառ մ'ալ տուած չեմ... ա՜հ, դարձեալ այն ձայնը կառնեմ, Աստուածդ իմ, Աստուածդ իմ, ինչ պիտի ըլլան այն ուրուականները որ առեն առեն աչքիս կերեւան, զիս կը պաշարեն ու խօսելու խորհրդաւոր հայեցուածքներ կուղղեն ինձ, չեմ գիտեր թէ ի՞նչ ըսել կուզեն, բայց կը սոսկացնեն զիս... մայր իմ, մայր իմ, ինծի ալ քովդ ընդունէ, այն երանութեան մէջ՝ ուր դու բնակելու բաղդը ունեցար.

Եւ արտասուելով սկսաւ հետեւեալ խօսքերն արտասանել. Տարի մըն է որ ամուսնացեր եմ, ճիշդ տարի մ'է, որուն մէջ երջանկութիւն կըլուսայի... բայց դժբաղդութիւն գտայ... հոս երկար հառաչք մը արձակեց. և տան ամիս է որ անտանելի թշուառութեան մէջ կը տառապիմ, այո՛, ամիս մըն է որ ինծի հոս բերին պատճառելով թէ՝ տղայաբերութիւնս մարդ չը լսէ... կին մը մարդկութեան համար մանուկ մը կը ծնի, մինչ մեղք մ'է, մինչ արատ մ'է; մինչ ամօթ է երեն համար... ո՛րչափ սոսկալի են մարդիկ, ամիս մ'է որ հոս բերին զիս, մարդու երես տեսնելէ արգիլուած եմ, առանձին կը նստիմ, առանձին կը խօսիմ, ինչ թշուառ կեանք, եթէ զաւակս ալ ինծի նման թշուառ ըլլալո՞ւ դատապարտուած է և աշխարհիս մէջ թշուառ մ'ալ աւելցնելու պատճառ պիտի ըլլամ, աղէկ է որ աշխարհք չի գայ, ըսելով, արմուկը ծունկին վրայ դրած՝ ծնօտն ալ ձեռքին մէջ առնելով սկսաւ մտածել.

Մէկ մ'ալ ձայն մ'առնելով՝ գլուխը բարձրացուց, կարծե-

լով մուխին մէջ մարդ մը պիտի տեսնէ, ՛թէև փողոցին մէջ մարդ չկար. հանդարտ լուսխիւն մը մխուխեան հետ կը թագաւորէր հոն, յանկարծ պատուհանը բացաւ. և կէս մէջքէն դուրս կախուելով աղէկ մը դիտեց, բայց բան մը չտեսաւ, գլուխը ներս առաւ և պատուհանը գոցեց, խաբուեր եմ՛ըսելով. խաբուե՛ր եմ ըսաւ, և սկսաւ դարձեալ արտասուել. ցաւը վայրկեան խոր լուսխիւն մը տիրեց տանը մէջ. հողէ կանդեղին պատրոյգը մերթ ընդ մերթ կայծ մը կարձակէր, բայց մտիկ ընող և դիտող չկար, քիչ քիչ առարկաները մխուխեան մէջ թաղուիլ սկսան, և կանդեղն ալ իւր վերջին շունչը արձակելով մարեցաւ. Ա՛յս ձայնէն նորատի կինը սաստուկ մը ղգաց. ահռելի ճիչ մ՛արձակեց, ՛ոտքի ելաւ և իւր դողդոջուն ձեռքերովը այս պարապ մխուխեան մէջ նեցուկ մ՛որոնեց, բայց վայրկեան մ՛ետքը դարձեալ ուժասպառ իւր բազմոցին վրայ ինկաւ.

ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

Ա՛յս միջոցին սենեկին դուռը բացուեր և ճերմակ սաւանի մը պլլուած ուրուական մը մեր վստահ քայլով դէպի հոն կը յառաջանար, ուր կանխեղը դրուած էր, Մաքրուհի պիտի ճչէր (այս անունը պիտի տանք աղջկանը) բայց ձայնը կոկորդին մէջ մարեցաւ, ուրուականը ծոցէն իւղով լեցուն շիշ մը հանելով քիչ մը իւղ կանխեղին մէջ լեցուներէն ետքը լուցկի քով մ՛ալ կանխեղը վառեց. սենեակը սկսաւ լուսաորուիլ, և այնպիսի վստահութեամբ կը գործէր որ կարծես իւր տանը մէջ կը շրջէր, այս միջոցին Մաքրուհի կայծակնահարի մը նման շնչասպառ տարածուած էր անկողնոյն մէջ, ուրուականը ձանր քայլերով կը մօտենայ անկողնոյն, նորատի աղջիկը խակոյն կըսթափի, կուզէ կռուիլ, կուզէ օգնութիւն աղաղակել, բայց ՛ի զուր. վասն զի

ամենեւին զօրութիւն չէր ճնացեր վրան, նոյն միջոցին ուրուա-
կանը անմիջապէս վրայի սաւանը մէկդի նետելով, մեքենա-
բար կանթեղին քով ջուրին գաւաթն առաւ և քիչ մը ջուր
ձեռքին մէջ լեցընելէն ետքը, աղջկան երեսին սրսկեց, Մաք-
րուհի այս յանկարծական դէպքէն ցնցուելով, աչքերը բացաւ
և ուրուականին տեղ, մեր վաղեմի ճանչցած նաւավար կարա-
պետն անկողնոյն քովը ծնկան վրայ եկած, գաւաթով ջուրը է-
րեն ներկայացնելը տեսաւ, որ կըսէր. «Կին դու քանի մը կա-
թիլ ջուր առ բերանդ, վախդ փարատէ, ես քեզի ճնասելու
եկած չեմ».

Մաքրուհին ելնելով նստեցաւ անկողնոյն մէջ և ակնապիշ
կարապետը կը դիտէր, վասն զի երեսուն օրուան ուրուակա-
նը իրապէս մարդ մը եղած և ընչաստաւ մահուան դուռը
հասած միջոցին, բարեկամական ձեռք մը երկնցուցեր և կըսէր
իրեն» քանի մը կաթիլ ջուր առ բերանդ, ես քեզի ճնաս մը
չունիմ» երաշխ էր թէ իրողութիւն, վասն զի երեսուն օրուան
մէջ առաջին անգամն էր որ այսպիսի բարեկամ ձայն մը կը լսէր,
չուարած ինչ ընելը և ինչ խօսելիքը չէր գիտեր. այսպէս ժա-
մանակ մը ակնդէտ նայելէն վերջը, դողդոջուն ձեռքը երկն-
ցնելով՝ գաւաթն առաւ, բերնին մօտեցուց և վարանելով մը
կարապետին երեսը կը նայէր.

— Խմէ, խմէ զաւակս, ըսաւ.

— Նորատի կինը զաւակ բառէն քաջալերուելով մէկ քանի
ումպ խմեց ու գաւաթը կարապետին տուաւ.

կարապետ գաւաթը իւր տեղը դնելէն վերջը՝ եկաւ Մաք-
րուհիին քով, բազմոցին վրայ նստաւ.

Մաքրուհի կը դողար.

— Աղջիկս, ըսաւ կարապետ, վանէ՛ սրտէդ վախը, արի-
ացիր և ինծի մոիկ ըրէ.

Մաքրուհի տակաւին չհաւատալով՝ շարունակ աչքերը կը
չփէր.

— Զաւակս, ըսաւ կարապետ, պատասխան տուր, քու
օգնութեանդ կը կարօտիմ, ժամանակս խիստ քիչ է.

— Օգնութիւն . . . ըսաւ ոգի առնելով, և երկիւղը փարատեցէք վերջը, թշուառ մը օգնութիւն . . . աւելի դիւրին է տատասկէ թուզ յուսալ, քան թէ ինձ նման դժբաղդէ մը օգնութիւն։

— Այո՛, քեզմէ հազարապատիկ աւելի թշուառ մը աղաստեղու համար քու օգնութեանդ կը կարօտիմ։

— Բայց ոնց ես դու, որ այս ատեն այս առանձին տանը մէջ մտնելու համարձակեցար, անունդ ի՞նչ է։

— Անունս . . . ոճրագործ, մարդասպան և եղեռնագործ. ահաւասիկ անունս և տիտղոս։

— Չես կը սարսափեցնես, պարոն։

— Խե՛ղճ կին . . . մի՛ վախնար և օդնէ ինծի, վասնզի այս միջոցին միմիայն քու ձեռնտուութեանդ կարօտութիւնը կըզգամ։

— Պարոն, վերջապէս չեմ գիտեր թէ ի՛նչ ձեռնտուութիւն է ինձմէ խնդրածդ, թէ որուն կեանքը վտանգի մէջ է, և թէ ոնց ես դու, ի՞նչ բան ունիս այս ատեն հոս։

— Ուրեմն ամեն բան քեզի տեղն ’ի տեղը պատմեմ. քու ամուսինդ, Պետրոս Նազարօֆ, հարուստ աղջկան մը հետ ամուսնանալու համար կուզէ առաքինի երիտասարդ մը մահացընել։

— Տէր Աստուած, ի՞նչ կըլսեմ։

— Մտիկ ըրէ, վաւակս, այն երիտասարդը այս առաւօտ քէօսթէնճէէն Պոլիս եկաւ, և շոգենաւէն դուրս չելած զինքը խաբեցին ըսելով թէ՝ Նազարօֆ Գաֆղալայի հրուանդանը քեզ կսպասէ մեներամարտելու, և հոն տարին, հոն ուժը գինեալ մարդիկ ձեռքը ոտքը կապելով տան մը մառանը պիտի փոխադրեն։

— Բայց ի՞նչ է անոնց նպատակը, և ինչո՞ւ այդ ընթացքը կը բռնեն այն երիտասարդին։

— Խեղճ կին, ի՞նչ պիտի ուզեն, անօթի պահելով պիտի մեռցնեն զայն։

— Սրդարև ինձմէ աւելի թշուառ վիճակի մը ենթակայ

է այդ երիտասարդը, և ի՞նչպէս կրնամ օգնել անոր, մինչ-
դեռ ես հոս փակեալ եմ.

— Հիմա ըսեմ քեզի թէ ի՞նչ . . . .

— Բայց պարոն, Պետրոս իմ ամուսինս է, և անկարելի է
որ ուրիշի մը հետ ամուսնանայ.

— Կըխաբուիք տիկին, ուրեմն ի՞նչու փակած են քեզ հոս.

— Այդ գիտեմ ես, այր և կնկան մէջ տեղի ունեցած մէկ
գաղտնիք մ' է պատճառը.

— Մէթէ գաղտնիք ըսածդ ծննդաբերութիւն չէ՞ որ այս
տունը փոխադրեցին քեզ, սակայն կը սխալիս զաւակս, պատճա-
ռըն այդ չէ, կուզեն քեզ ալ անհետացնել.

— Ա՛հ Աստուած իմ, Աստուած իմ, ի՞նչ պիտի ընեմ . . . և
դու այս ամենն ո՞ւսկից գիտես.

— Ես ամեն գիշեր այս տանը մէջ ուրուականի կերպարանօք
կը շրջիմ, անոնց ամեն մէկ խորհուրդները կըլսեմ և շարունակ
քեզ կը հակեմ.

— Այ՛ծ, կը տեսնեմ, և ես այն ուրուականը մօրս հոգին
կը կարծէի.

— Թերեւս այն ըլլամ, բայց գիտցած ըլլաս որ զաւակդ
պիտի սպաննեն և կարելի է քեզ ալ.

— Ա՛հ, գոչեց Մաքրուհի, ձեռքերովը կարապետը բռնե-
լով.

— Զայն մի՛ հաներ, եթէ ո՛չ ամեն միջոց կը կորսուի . . . .
խե՛ղճ կին . . . ասոնց գործած դարաններուն խելքդ չը
հասնիր.

— Ա՛հ, հիմա խելքս գլխէս կը թռի ըսելով, Մաքրուհի
կարապետին ոտքն ինկաւ. Աստուծոյ սիրուն ըլլայ, ազատէ
զիս, կաղաչեմ ազատէ, և այս ճիւաղներուն ձեռքը մի՛ թո-
ղուր, աղաղակեց.

— Մի՛ վախնար, պիտի ազատեմ քեզ ալ անոնք ալ, ըսաւ և
Մաքրուհիին ձեռքէն բռնելով վեր առաւ.

— Ա՛հ, ինչպէս պիտի կարենամ ապրիլ այս տանը մէջ.

— Ինծի մտիկ ըրէ, ըսաւ կարապետ, այս տանը մա-

ատանը երկու բանալի ունի, գիտես արդեօք։

— Օ,յո՛, գիտեմ։

— Մէկը ամուսնոյդ քովն է, իսկ միւսին ուր ըլլալը գիտե՞ս։

— Գիտեմ, վարը խոհանոցը ածխատունին քովը գգրոցին երրորդ յարկը ձախակողմեան անկիւնը կախուած է։

Կարապետ առանց ձայն մը հանելու անմիջապէս խոհանոց իջաւ, և բանալին առնելով դարձեալ եկաւ Մաքրուհիին քով և սկսաւ պատուէրներ տալ։

— Տիկին, կէս ժամէն Գեորգ և ուրիշ քանի մը սրիկաներ առաքինի երիտասարդ մը հետերնին հոս պիտի գան, քնանալ կեղծեցէք, չըլլայ որ ձայն հանէք։

— Ա՛ն, Աստուծոյ սիրուն ըլլայ, գիս մինակ մի՛ թողուք, ըսաւ Մաքրուհի աղերսանօք։

— Առէ՛ք այս, ըսաւ կարապետ, ատրճանակ մը ներկայացնելով, և յաւելցուց թէ վեց հոգւոյ համար կը բաւէ, և թէ առաջին հարուածին ես կը հասնիմ, իմացա՞ք. ուրեմն մտէ՛ք անկողիննիդ, ժամը մօտեցաւ, չմոռնաք տիկին, քնանալ կեղծեցէք և մի՛ վախնաք։

— Ջեմ գիտեր թէ ինչպէս պիտի կարենամ չվախնալ, և թէ ինչպէս կեղծ քուն պիտի ըլլամ։

— Դուք անհոգ եղիք, ես վրանիդ կը հսկեմ ըսելով, սանդուկը դարձեալ վրան առաւ, կանթեղը մարեց և դուռը դոցելով տանը բակն իջաւ, հոն չրհորին բերանը բանալով զարմանալի ճարպիկութեամբ մէջը սահեցաւ, և այս եղանակը խոր մթութեան մէջ անհետացաւ։

Քանի մը վայրկեան աքաղաղի մը ուր ձայնը լսուեցաւ, որմէ կարապետ չրհորին մէջ սարսուեցաւ, այս ձայնը սակայն էր այս միջոցին, կարծես յաւիտենական ահեղ կոչումով բոլանդակ տունը արձադանք տուաւ, և կարապետ զգաց թէ արիւնը ա՛լ կը դադրէր իւր երակացը մէջ շրջան առնելէ. ճանկարծ տանը դրան կղպաքին մէջ բանալի մը մտնելուն ձայնը լսեց, և դուռն իր ծխնիներուն վրայ դառնալով բացուեցաւ։

— Ահա եկան, մրմնջեց կարապետ։

Նոյն վիջոյին չորս հոգի Միհրդատն հետերնին դռնէն ներս մտան, և անմիջապէս դուռը դոցելով երկաթեայ պարսպունակները քշեցին։

Միհրդատայ վրան ամենեւին զօրութիւն չէր մնացած, աչքերը կապեր էին, բերանն ալ հատ հատ թաշկինակով մը դոցած, ձեռքերն ու ոտքերը Սպիրոյին կարմիր գօտիովը կապելով, երկու հոգի գլխէն և երկուք ալ ոտքերէն բռնած խոհանոցը տարին, հոն գետինը նստեյնելով՝ մէկը դրպանէն լուցկիւքն և միանգամայն մոմ մը հանեց, և անմիջապէս վառեց։ Սպիրօ և Ֆօթի Միհրդատայ քով կայնած՝ պետրոսն ալ դաշոյնը ձեռքը խոհանոցին դրանը մէջ կապասէր։ Թէպետև Միհրդատ յանկարծակիի գալով այս ծուղակին մէջ ինկեր և ձեռքը ոտքը կապուած՝ օգնութեան համար տեղէ մը ամենեւին յոյս չունէր, բայց և այնպէս անվեհեր կերպիւ նստած իւր քովը կայնող մարդասպանները կը դիտէր առանց պետրոս Նազարօֆը տեսնելու, վասն զի պետրոս՝ առանց Միհրդատայ երեւալու՝ չարունակ դրանը մէջ կապասէր, և միւսն ալ ճրագը վառելէն ետքը գնաց Միհրդատայ քով կայնեցաւ։

— Վերջապէս յաջողեցանք, ըսաւ Թէօխար։

— Այ՛, պատասխանեց Սպիրօ, և մօտենալով Ֆօթիին ու Թէօխարին, պետրոսն ալ գլխով կանչելով ցած ձայնով, ըսաւ. եթէ այս երիտասարդին քով ասեղ մը անգամ գտնուէր չէի կարծեր որ այսպիսի յաջողութեամբ գլուխ հանէինք մեր գործը։

Ծեռայ եկաւ Միհրդատայ քով. «Է՛ տեսնուինք բարեկամ, խելօքցար, ըսաւ ձեռքն անոր ուսին դնելով։

Միհրդատ այնպիսի նայուածք մը յարեց Սպիրօին վրայ, որ ոճրագործը բնազդմամբ երկու քայլ ետ ընկրկեցաւ։

— Տղայ եա՛ինչ ես, ընկեր, չե՞ս յիշեր որ ոտքը ձեռքը կապուած մէկուն դէմը կեցած ես, ինչ է այդ երկիւղդ մարդ ըսուածդ։

— Իրաւունք ունիս, ըսաւ Սպիրօ ամչնալէն գլուխը կախե-

ըսվ, և յաւելցուց թէ այս տանը մէջ մաուան կայ ըսէք, ուր էն, ինչ կեցեր ենք.

— Ահա բանալին, ըսաւ Թէօխար, բակին մէկ անկիւնը երթալով մաուանին ժանգոտած երկաթեայ դրան օղակը բռնեց ու վեր բացաւ զայն.

— Մօտ բեր տեսնեմ սա ճրագը Ֆօթի.

Ֆօթին ճրագը մօտեցնելով, տեսան որ վեց ոտքէ քարէ սանդուխով կիջնուէր այն ստորերկրեայ սպանդանոցը, Թէօխար սկսաւ վար իջնել. այս մաուանին խոնաւ օդը այնպիսի զըզուելի դարշահոտութեամբ դուրս կը բուրէր, որ Թէօխար սանդուխին իւրաքանչիւր ոտքին վրայ քանի մը րոպէ կանգ առնուլ կատիպուէր, ինքզինք վարժեցնելու համար. և երբ վար իջաւ տեսաւ որ ամեն մէկ կամարին վրայ մէկ քանի երկաթեայ օղակներ կային. այս օղակներէն մէկուն վրայ կախուած էր բարակ չուանով մը ներքնամաուանին դրան բանալին, որ տեղին խոնաւութենէն չուանը բոտած և ինքը ժանգոտած էր. Թէօխար հապճեպ ձեռքն երկնցուցած էր որ բանալին առնու, մէկ մ'ալ բանալին ոտքին առջեւ ինկաւ և այնպիսի արձագանք մը ձգեց որ Թէօխար ալ սարսռեցաւ, զգաց Թէ ըրածը վատութիւն մ'էր, պահ մը վարանեցաւ և կը խորհէր ետ դառնալ.

— Ի՞նչ ձայն է, ըսաւ Գօստի վերէն.

— Ոչինչ, բանալին ձեռքէս ինկաւ պատասխանեց, և կարծես Գօստիին ձայնը զինքն ոգեւորեց, բանալին առնելով, դէպ 'ի ներքնադրան յառաջացաւ կղպաքը դարձուց և բեղկը այնպիսի ուժգնութեամբ հրեց, որ դուռը իւր ծխնիներուն վրայ դարձաւ որոտալի ճռնչմամբ, Թէօխար չկարենալով ներս մտնել քանի մը վայրկեան ալ հոս սպասեց վանդի սարսուռը երակներուն մէջ պատած չարունակ կը դողար. Թէօխար որ գրեթէ իւր ամբողջ կեանքն աւազակութեամբ և մարդասպանութեամբ անցուցած էր կարծես երկնային ազդեցութեամբ մը առաքինի երիտասարդին՝ որ միշտ կենացն օրերը բարութեամբ անցուցած էր, մահը չէր ուզեր տեսնել. ինչ պիտի ըլլայ իմ

երկիւղս, կըսէր ինքնիրեն, ես որ այնչափ մարդոց սարսափելի մահուան պատճառ եղած եմ, և աչքիս առջեւ չերեւցած չերամ արիւննին վազած ատենը հաճոյք կզդայի, հոս այսպիսի չնչին բանի մը համար վարանումս... միթէ ես այն թէօխարը չեմ, միթէ մինոյն սիրտը և մինոյն խիղճը կրողը չեմ. օ՜ն, ըսաւ և առանց ինքզինքը մտնելու ճրագը դէպի ներս յուզնելով, տեսաւ որ այս նկուղին մէկ անկիւնը տակառներ կային, հաղարաւոր սարդի ոտայններ այս տակառները քօղարկած էին. յատակը պղտոր ջրոյ կոյտ մը դիզուեր և երկու ծայրերը դէմառ դէմ պատերուն մէջ ազուցուած գերան մը կար, որ խոնաւութենէն փտտած փայտեայ սիւնակի մը վրայ դամերը էին՝ որն որ խաչի մը ձև առած էր. վերջապէս մշտնջենական ցուրտը և գարշ օդ մը հոն կը տիրապետէր. թէօխար հոս աղէկ մը աչքէ անցունելէն ետքը, գօստի, կանչեց, վալտնաւորը վար իջեցուցէք.

— Քալէ, ըսաւ Սպիրօ Միհրդատայ.

Միհրդատ դէպ ’ի նկուղն յառաջացաւ և երբ սանդուղին առաջին քայլը պիտի կոխէր, ներքնամառանին խոնաւ օդն երեսին զարնելով, սարսուռ մը ղդաց և քայլ մը ետ կեցաւ. կոկորդէն խեղդուկ ձայն մը ելաւ և աչքերէն երկու կաթիլ արտասուք այտերուն վրայէն սահելով՝ բերանը կապուած թաշկինակին ծալքերուն մէջ անյայտ եղան. մտքէն ի՞նչ անցաւ չենք գիտեր.

— Իջիր, ըսաւ Սպիրօ, հրամայական կերպով.

Մտիպեալ էր Միհրդատ և սկսաւ ծանրաքայլ իջնել սանդուղէն.

Նոյն միջոցին Նաղարօֆ Մաքրուհիին սենեակը եկեր էր.

վերջապէս թէօխար Սպիրօ և Ֆօլթի Միհրդատը մառանն իջեցուցեր էին.

— Սպիրօ, ըսաւ թէօխար, չղթաները բեր և դուռ ալ Ֆօլթի՝ ճրագը առ՛ին բռնէ որ պատին վրայ գամուած օղակները տեսնեմ.

— Անհատակ, ըսաւ ճրագը մօտեցնելով.

— Ցեանեն՛ք հաստատումն է։

— Հարիւր յիսուն հոգի կը կախէ այս, ըսաւ Ֆօլթի, օղակը լաւ մը քննելով։

— Բռնէ՛ք քաշեն՛ք, ըսաւ Սպիրօ, չղթային ծայրը Ֆօլթիին տանելով. դուն ալ օգնէ՛ թէօխար, և դառնալով Միհրդատին կը տեսնես անպիտան, կըսէր, քեզի համար որչափ արիւն քըրտինք կը թափեն՛ք։

Միհրդատ աչքերը դէպ անոր ուղղելով ժպտեցաւ, բայց այս ժպիտը աւելի սոսկում պատճառեց անոնց, քան թէ ուրախութիւն, ալ անկէ վերջը ամենեւին նախատական բառ մը չխօսեցան։

Միհրդատը չղթայեցին, և յետոյ ձեռքերն ու ոտքերն որ Սպիրոյին գօտուվը կապուած էր, գօտիս առնեմ և դուրս ելլամ, ըսաւ, ուրեմն ես ալ թաշկինակս ըսելով բերնէն քաշեցին, ու երբոր ամենը մէկ դուրս ելնելու կը պատրաստուէին,

— Գոնէ լմացուցէ՛ք լնծի, թէ ի՞նչ պատճառաւ հոս բերի՛ք զիս, ըսէ՛ք համարձակ, ալ երկիւղի մը տեղ չունի՛ք, վասն զի արդէն կը տեսնէ՛ք որ կատարեալ կերպով կաշկանդուած եմ, ըսաւ Միհրդատ։

— Չեն՛ք դիտեր, պատասխանեց թէօխար պաղ արեամբ։

— Ուրիշ գործ մ՚ունի՞ն՛ք, հարցուց Սպիրօ։

— Ո՛չ, պատասխանեց թէօխար։

— Ուրեմն երթա՛նք, ըսաւ Ֆօլթի։

— Սամեն՛քնիս ալ։

— Բայց ի՞նչ է իմ յանցան՛քս թշուառականներ, որ այսպէս կը տանջէ՛ք զիս, դարձեց Միհրդատ այնպիսի ուժգին կերպով որ մատանին կամարները արձագանգ տուին. ի՞նչ է նպատակնիդ, եթէ ստակի համար է, տամ ձեզի պէտք եղածէն աւելի, ի՞նչ է միտքերնիդ բացատրեցէ՛ք։

— Է՛յ, երկար ըրիր, ըսաւ թէօխար ուսը թօթուելով։

— Բայց դիտցած եղի՛ք որ պիտի ղջա՛ք։

— Քարողդ կարճ կապէ, ըսաւ Սպիրօ։

— Այո՛, վրէժս պիտի լուծեմ ձեզմէ։

— Ա՛ռ ասիկայ, ըսաւ Ջօթի, հայ մը նետելով Մինդրատայ, և նայէ որ խնայողութեամբ ապրիս, քանզի այդ երկու օրուան պարէնդ է։

— Երկու օր ըսիք... ուրեմն երկու օր հոս պիտի մնամ։

— Չարկաւ, երկու ամիս, երկու տարի, տասներկու տարի և թերևս մինչև ցմահ։

Սոսկալի մռնչիւն մը հանեց Մինդրատ և սկսաւ չղթաները կրծել։

— Այս երիտասարդին բարկութիւնը դիս կը սոսկացնէ, ըսաւ Ջօթի։

— Երթանք, ըսաւ Սպիրօ։

— Այո՛, երթանք պատասխանեց Թէօխար, և դառնալով Մինդրատայ, նայէ որ խելօք կենաս երիտասարդ, ահաւասիկ մեծ քերթանք բարի դիշեր մաղթելով քեզ։

Մինդրատ կատղած վագրի մը նման ցատկեց տեղէն, բայց չղթաները զետին տապալեցին զինքը. ան... բոլորովին մոռցայ, ըսաւ, կապուած եմ, և սկսաւ արտասուել։ Երբ անոնք դրանը առջին մաքրելով դուրս պիտի երթային, Մինդրատ աղերսարկու ձայնիւ ձեռքերը Թէօխարին երկնցուց և սկսաւ ըսել Թէ դիս մեռցուցէ՛ք, կաղաչեմ, Աստուծոյ սիրուն ըլլայ, կաղաչեմ մեռցուցէ՛ք զիս։

— Խե՛նդ, ինչո՞ւ պիտի մեռնիս, ապրէ հոս որչափ որ կրնաս, ահա քեզ հաց, բայց ջուր չունիս գիտցած եղիր ըսելով, երեքը մէկտեղ դուրս ելան, դուռը գոցեցին և կղպաքին ձայնը Մինդրատայ վերջին յոյսն սպառեց։

Քիչ մ՚ատեն Մինդրատը թողլով երթանք Մաքրուհիի սենեակը։

Նազարօֆ առանց ոտքի ձայն հանելու տանը երկրորդ յարկը ելեր, ձեմբատուով կանթեղը վառեր և սենեակին չորս կողմը լաւ մը դիտելէն վերջը, ամեն բան տեղնիտեղն է ըսելով՝ սենեակին մէկ անկիւնը նստաւ։ Գլուխը ձեռքերուն մէջ դրած քիչ մը մտածելէն ետքը, երես և կանթեղը ձեռքն առ-

նելով, տեսանենք ինչպէս պիտի յաջողինք, քանզի սենեակէն դուրս ելաւ, դնաց Մաքրուհիին սենեկին առջին, կամաց մը դուռը բաղխեց, բայց պատասխան չառաւ. դարձեալ բաղխեց և ձայն մը չընդունեցաւ, սկսաւ բաղխելը շարունակել, Մա՛քրուհի, Մա՛քրուհի ձայնելով։

Մաքրուհի իւր անկողնոյն մէջ կը դողար, բայց ձայնը իրեն ծանօթ ըլլալուն՝ սիրտ առաւ, քաջալերեց ինքզինքը, և

— Ո՞վ է այն, հարցուց ներսէն։

— Ես, քու ամուսինդ, պատասխանեց Պետրոս։

Մաքրուհի լմացաւ որ իւր ամուսինն է դուռը բաղխողը, կարապետին անոր համար ըրած քամնելի պատմութիւնը յիշելով՝ ալ աւելի վախնալ սկսաւ։

— Բայց այս առեն ինչ կայ որ եկար, հարցուց դողդողուն ձայնով մը։

— Կը զառանցե՞ս, ինչ կընես Մաքրուհի, ես եմ, քու ամուսինդ, Պետրոս Նազարօֆը, պատասխանեց դուրսէն։

Քիչ մ'ետքը դուռը բացուեցաւ, և Պետրոս կանթեղը ձեռքը սենեկին մէջ տեսնուեցաւ։

— Ի՞նչ եղեր ես սիրելիս, հարցուց Պետրոս մեղմութիւն, Մաքրուհիին անկողնոյն մօտենալով։

— Ոչինչ, պատասխանեց։

— Դէմքդ խիստ թալկահար կը տեսնեմ այս գիշեր։

— Ա՛յ՛... գէշ երազ մը կը տեսնէի, ըսաւ, որով սարսուռ մը պատեց բոլոր մարմինս։

— Բարին ըլլայ, ըսաւ Պետրոս ժպտելով և յաւելցուց, բայց այդչափ վախնալու ինչ հարկ կայ, տես ինչպէս կը դողաք, երազ մ'այդչափ վախ կրնայ պատճառել մարդուս. հանդարտեցուր սիրտդ և եկուր նստինք քիչ մը խօսակցինք, վանդի այս գիշեր ամենեւին քուն չունիմ։

Մաքրուհի գոհ եղաւ ամուսնոյն դալուստէն, վանդի սարսափելի խորհուրդներ միտքը կը յուզէին և ինքը անհանգիստ էր, ուստի ինքզինքը բռնեց և անկողնէն ելնելով՝ դնաց բազմոցին վրայ Պետրոսին քով նստաւ։

Քիչ մնաց մէկզմէկ դիտելէն վերջը, նազարօֆ լռութեան կապը ընդհատեց Մաքրուհիին.

— Կը զարմանամ քու այս աստիճան համբերատարութեանդ վրայ, որ այսչափ առեն միայնութեամբ և առանց ապաստարանի այս տանը մէջ անտրտունջ կեանք կանցուներս.

— Չը՛ . . . միայնութիւն, առանց ապաստարի՛, անտրտունջ ապրելուս վրայ կը զարմանաս, այնպէս չէ՞, արդարև ձեր այդ զարմանացը վրայ լինձի ալ զարմանք կը պատճառէ . . . շատ բաներու համար աղաչանօք խնդրեցի քեզմէ, բայց և ոչ մէկը ըսելն եղաւ ձեր կողմէն, ուստի ես ալ լռութիւնը նախամեծար համարելով կսպասեմ թէ ու՞ր պիտի երթայ իմ վիճակս իւր սահմանը գտնելու համար.

— Մինչ այդպէս կը խօսիս սիրելի՛ս, մինչև հիմայ ի՞նչ առաջարկեցիր, և ես զայն մերժեցի.

— Ահաւասիկ ձեզի ըսեմ. նախեւառաջ դու լինձի լինչուան հիմայ սիրոյ նշան մը չը ցուցուիր. կը հարցնեմ քեզի, լինչո՞ղիս հոս փակեալ կը պահես, մինչ տղայաբերութիւնս է պատճառը. առիւծայ մեղի պատիւ է, ամեն առեղ պարծենալով կրնանք ըսել դու լինձի համար թէ՝ ահա կինս, և ես ալ քեզի համար թէ՝ ահա իմ ամուսինս, և մեր սիրոյն դրաւականը՝ ահաւասիկ մեր զաւակը.

— Մաքրուհի, լինձի մտիկ ըրէ և իրաւունք ալ պիտի տաս, դիտեմ արդեօք ո՞րչափ դժուարութիւններ կը հարկադրեն քիս քեզի հետ այսպէս վարուելու, մինչ ես չեմ ուզեր որ իմ ամենասիրելի ամուսնոյս հետ ապրիմ, չեմ դիտեր հօրս բնութիւնը, դիս պիտի զրկէ ժառանգութենէ, եթէ իւր կամայը հակառակ վարուելու ըլլամ. և կարող ալ է, վանդիւռուսիոյ հպատակ է. ուստի համբերէ կալաչեմ, զաւակնիս աշխարհք գայ, թերևս այն առեն իւր թոռանը սիրոյն համար պիտի ներէ մեզ.

Մաքրուհի առանց պատասխանելու հառաչք մը հանեց.

— Հիմայ լինձի մտիկ ըրէ, քաւ Նազարօֆ, քեզի ծառայելու համար հաւատարիմ մէկը բերած եմ, որ բոլոր հրա-

մաններդ կատարէ, և հիմայ պիտի ներկայացնեմ զայն քե-
զի և պիտի տեսնաս թէ ինչ անձնուէր մէկն է, և առանց
Մաքրուհիին հաճութեանը սպասելու դուռը բանալով, Սալ-
բօ, ներս եկուր, դոչեց։

Ընդհիջապէս Սալբօ ներս մտաւ, և դէպի Նազարօֆ յառա-
ջանալով, «ի՞նչ հրաման ունիք, տէր իմ, պատասխանեց։

— Ա.հաւասիկ Տիրուհիդ, քեզ տեսնեմ...։

— Ընդոդ եղիք Տէր իմ, կը յուսամ որ ամեն կերպով դո-
պիտի ըլլայ։

Մաքրուհի՝ Սալբոյին ահռելի դէմքը տեսնելուն սարսուռ
մը զգաց և ամուսնոյն դառնալով, «Աւելի աղէկ է առանձ-
նութեամբ ապրիլ, քան թէ այսպիսի դժոխատեսիլ մարդ մը
ինձի ընկեր ունենալ, ըսաւ ցած ձայնով մը, և յաւելուց թէ
այս մարդը իմ քովս չեմ ուզեր։

Նազարօֆ աչք ըրաւ Սալբոյին որ դուրս ելնէ, և երբոր
գնաց, Մաքրուհիին մօտենալով, սիրելի ամուսինս, ըսաւ մեղ-
մովին, այս մարդը համեատ մէկն է, ես չեմ ուզեր որ դու
այս տանը մէջ առանձին մնաս ըսելով, Մաքրուհիին ձեռքը
բռնեց, տեսաւ որ կը դողար և սառի նման պաղեր էր։ Ու-
մի պէտք է որ երթամ վանդի արշալոյսը մօտ է, և առաւօ-
տուն պէտք է որ հօրս տունը գտնուիմ, և առանց պատաս-
խանին սպասելու սենեկէն դուրս ելաւ։

— Ի՞նչ ըրիր, հարցուց Թէօխար, որ դրանն առջին կը-
պասէր։

— Համոզեցի, պատասխանեց։

— Շա՛տ աղէկ, ուրեմն Սալբօ և Ֆօլթի այս տան մէջ կը-
նան մնալ։

— Հիմայ պէտք է որ հեռանանք ասկէ, և դու ինձի հետ
մինչև նաւամատոյցը պիտի գաս, այնպէս չէ՞ զաւակս։

— Բայց հայրը իմ, եթէ մեկը գիս քեզի հետ տեսնելու ըլլայ
վարկս ստակի մը կընայ դիտեմ։

— Այս առեն ոչ կրնայ մեզ հանդիպիլ, ես ատոնք քեզ-
մէ աւելի կը մտածեմ։

Նազարօֆ ականջ հօրը հետեւելով սանդուխէն բակն է-
ջաւ, ուր նստեր էին Ֆօթի և Սպիրօ։

— Սպիրօ, ըսաւ Թէօխար, ահաւասիկ մեռնք կերթանք և
գնեզ հոս կը թողունք, արդէն դուք ընելիքնիդ գիտէք այն-
պէս չէ՞։

— Ընհոդ եղիք սիրելիս, տան և հինդ օրէն դերբրջանիկ
սրբոց դասը կը դասեն ք երկուքն ալ։

— Ուրեմն, ճնաք բարով։

— Երթաք բարով, ըսին միաբերան Ֆօթի և Սպիրօ։

Թէօխար Նազարօֆին հետ այսինքն հայր և տղայ տանը
դունէն դուրս ելան, և դուռը դոցուելու միջոցին՝ դարձեալ
ծխնիները ճռնչեցին, բայց այս անգամ ուրիշ եղանակաւ։

ԱՆԱԿՆՈՒՆԵԼԻ ԴԷՊՔ ՄԸ

Հազիւ արշալոյն իր առաջաստէն դուրս ելնել կը պատ-
րաստուէր, հազիւ թռչունք բոյներէն արթնցած մեկզմեկ կոչ-
ջունէին, և արեգական գալուստը արարածոց կաւետէին,
Զարհաճը փողոցին աղբիւրին քարին վրայ՝ սեւ շրջազգեստ
հագած և սեւ ցխսի մը գլուխն առած կին մը հոն մեկու մը
անհամբեր կսպասէր։ Այս կինը նոյն գիշեր փողոցին երկայ-
նութեանը շարունակ ճեմեր էր՝ գիշերային հաւատարիմ պահ-
նորդի մը նման, և առտուան դէմ հոգնած և յուսահատուր
այս քարին վրայ ինկած իր դժբաղդութիւնը կը մտածէր։

Յանկարծ փողոցին մէջ ոտքի ձայներ լսուեցան, խակոյն
գլուխն այն կողմը դարձուց և տեսաւ՝ որ երկու հոգի դէպի
իրեն կըյառաջանային. այս եկողները Նազարօֆ և իւր հայրը
Թէօխարն էր։ Յանկարծ կինը դվախէն ցխսին մէկ կողմնեռտեց,
և ճիչ մը հանելն ու Նազարօֆը գրկելը մէկ եղաւ։

— Ի՞նչ կուզես կլլեն դու, ըսաւ Նաղարօֆ, ասրսաւիած այս դէպքէն։

— Ա՛հ, զաւակս, իմ սիրելի զաւակս, կը դոչէր։

— Գնա բանդ, խե՞նդ ես լինչ ես, ըսաւ Թէօխար, մենք քու զաւակդ չենք ճանչնար։

— Բայց ես կը ճանչնամ իմ զաւակս, ըսաւ կլլեն աղեկէղ ձայնիւ. ա՛հ, իմ պետրոսիկս, իմ զաւակս, կըսէր հեկեկանօք, և սրտին վրայ կը սեղմէր զայն։

— Մայրս, դոչեց Նաղարօֆ, կնկանը ձեռքէն բռնելով, դու ճշմարիտ իմ մայրս ես։

— Լիուլն է, Սրմինջեց Թէօխար, և Նաղարօֆին մօտենալով քանի մը խօսք ըսաւ։

Նաղարօֆ յօնքը կնճռելով, ակամայ հրաժեշտ տուաւ մօրը դդումանայը։

Թէօխար Լիուլը մէկդի քաշելով, «կերեւայ որ դու ցնորած ես, այն մայր չունի, ըսաւ բրտութեամբ, օ՛ն քեղ տեսնեմ, մէկդի և դու Նաղարօֆ քալէ ուշ կը ծնամք։

— Ա՛հ, այդ անկարելի է, կը դոչէր կլլը Նաղարօֆին ոտից փարելով. ա՛հ, զաւակս, զաւակս չեմ թողուր, կը դո՜չէր։

Ա.յս միջոցին փողոցին մէջ ոտքի ձայներ լսուեցան՝ որ դէպի իրենց կը մօտենային։

— Թո՛ղ կըսեմ, դոչեց Թէօխար, բռնութեամբ զայն մէկդի հրելով։

— Օգնութի՛ւն, պօռաց կլլը, բայց ձայնը կոկորդին մէջ խեղդուեցաւ, վասնզի Թէօխար կնկանը կուշտին դաշոյնի հարուած մը տալով չնչասպառ դետինը թաւալեցուցեր, և իրենք հայր և տղայ անմիջապէս անհետացեր էին։

Ա.յն ոտքի ձայները որ քիչ մ'առաջ լսուեցան՝ խումբ մը դիշերապահ ոստիկաններ էին. առնց առաջնորդը որ երիտասարդ յիսնապետ մ'էր, «Ա՛հ, խեղդուկ ձայն մը լսեցի» ըսաւ, և աճապարանօք դէպի հոն հասան՝ ուր Լիուլ չնչասպառ դետինը տարածուած էր։

— Կին մ՚է , ըսաւ ոստիկաններէն մէկը ։

— Այս առեն հոս ինչ բան ունի , հարցուցէ՛ք ։

— Որո՞ւ հարցունեմք , ըսաւ ուրիշ մը ։

— Օ՛ . . .

— Այս կինը տեղափոխեր է , յաւելցուց ուրիշ մը ։

— Դեռ ողջ է , ըսաւ յիսնապետը , ձեռքը լիուլին սրտին վրայ դնելով ։

— Տղայք , սա աղբիւրէն քիչ մը ջուր բերէք ։

Մնմիջապէս ջուրը բերին , և յիսնապետն ալ լիուլին երեսին սրսկեց ։

Լիուլ աչքերը բացաւ , բայց խօսելու կարողութիւնը կորսընցուցած ըլլալուն՝ և ոչ բառ մը կրցաւ արտասանել ։

— Ո՞վ ես , և ո՞ւր տեղացի ես , հարցուց յիսնապետը ։

— Ջաւակս , պատասխանեց , որ միայն յիսնապետը կարող եղաւ լսել ։

— Ո՞վ է քու զաւակդ ։

— Ջաւակս , զաւակս , ըսաւ կինը և դարձեալ նուաղեցաւ ։

Յիսնապետը հրաման ըրաւ որ վերցունեն և պահականոց տանին , ուրիշներուն ալ ապսպրեց որ շուտով փողոցին վերի կողմը երթան , ինքն ալ ընկերներէն մէկ քանին հետը առնելով՝ փողոցին վարի կողմը յառաջացաւ ։

Եւ դարձեալ լռութիւնը տիրեց ։

ԶՐՀՈՐԻՆ ՄԱՐԴԸ

Երբ հայր ու տղայ տուննէն մեկնեցան, Սպիրօ և Ֆօթի տան դուղքին գլուխը սենեկի մը մէջ նստած կը ձկէին.

Հիմա գանք մեր նաւավար կարապետին, որ չրհորին մէջ կապասէր. երբոր դուռը դոցուեցաւ և ոտքի ձայները դադրեցան բոլորովին, կարապետ ճարպիկութեամբ վեր եկաւ հոգէն, և բակը լաւ մը դիտելէն վերջը, դուրս ցատկեց, մտաւ խոհատունը, հոն զգուշութեամբ առանց ոտքին ձայնն հանելու, մառանին դրանը մօտեցաւ, որ բաց թողուցած էին անվիջապէս սանդուղքէն վար իջաւ, և տեսնելով որ հոն ալ մարդ չկար. ուստի աճապարեց ներքնամառանին դուռը բանալ, այս միջոցին կարապետին եռանդն անկարելի էր նկարագրել, բանալին դրպանէն հանեց, դաշոյնը ակռաներովը բռնած, վեց հարուածեան ատրճանակը միւս ձեռքը՝ դրանը մօտեցաւ և առանց ձայն հանելու, բանալին կղպաքին մէջ անցուց, բայց ճակտէն առատ քրտանց կաթիլներու հոսանք մը գինքը բաւական կը նեղէր. վերջապէս մեղմով մը կղպաքին լեղուն դարձուց, բայց մեծ դժուարութեամբ. երկար կռինճ մը եղաւ, կարապետ սարսռաց հինգ վայրկենի չափ սպասեց դրանը առջին և երբ կասկածը փարատեցաւ, հրեց դուռը ներս մտաւ և դարձեալ գոցեց զայն, և այնպիսի արագութեամբ գործեց որ ծխնիներուն ձայնն ինքն անգամ չհնացաւ.

Միհրդատ, այս եղածներն ամենեւին չէր իմացած, խեղճը դէշ վիճակի մը մէջ ըլլալով, խոր մտածութեան մէջ ընկղմեր դէմքը ժժգոյն, մազերը ցցուած և դլուխը երկու ձեռացը մէջ առնելով դէպ 'ի առջին ծռած էր.

— կարապետ մօտենալով, մեղմովին «պարոն Միհրդատ, ըսաւ.

Միհրդատ աշխուժով դլուխը վեր առաւ և կարապետը տեսնելուն, ուրախութեան ձայն մը հանեց.

— Լռութիւն, եթէ ոչ կորսուած եմք, ըսաւ նաւավարը։
— Բայց ի՞նչպէս եւկար հոս, ըսէ ինձ դու հրեշտակ ես ի՞նչ ես։
— Հիմայ առեղը չէ երկար բարակ պատմութեան։
— Բայց ...։
— Բայց մայց պէտք չէ, առջեւնիս մեծ վտանգներ ու՞ նիմք ըսելով, գրպանէն բանալի մը հանեց և շղթային կղպաքը բանալով քակեց ղմիհրդատ։
— Միհրդատ մէկէն ի մէկ կարապետին ճիտը բաթաուելով կըսէր, ով իմ ազատիչս, փրկիչս, հայրս։
— Տէր իմ, ձայն մի՛ հաներ կաղաչեմ, մեզ կը լսեն և վերջը գէշ կըլլայ մեր վիճակը։
— Ա՛ռ այս ատրճանակը և ինձ ընկերացի, ըսաւ կարապետ։

Միհրդատ առանց խօսելու ատրճանակն առաւ և ներքնամառանին դուռը բանալով, աճապարեցին նկուղին սանդուղքէն վեր ելնել, և երբ բակն ելան հոն Միհրդատի աչքերէն ուրախութեան երկու կաթիլ արտասուք ցայտեցին, երկար հառաչք մը ելաւ սրտէն. հոս տեսնելու էր Միհրդատայ անզուսպ եռանդն, ժամ առաջ իւր թշնամեացն ուր ըլլալը կուզէր իմանալ, և կուզէր յարձակիլ, վերք առնուլ, վիրաւորել, մեռցնել և մեռնիլ փառաւոր յաղթանակաւ։

— Ահաւասիկ ոճրագործներն հոն են, ըսաւ կարապետ, երկրորդ յարկի սանդուղքին գլխի սենեակը ցոյց տալով։

Միհրդատ դէպ ի՛ւր նետուեցաւ և կուզէր յարձակիլ։

— Պէտք է խոհեմութեամբ վարուիլ վասն զի ուրիշ շուառ մը ալ ունինք՝ ազատելիք, ըսաւ կարապետ, Միհրդատին ձեռքէն բռնելով։

— Շատ աղէկ, ուրեմն ի՞նչ ընել պէտք եմք, հարցուց Միհրդատ։

— Իմ կարծիքս այն է թէ, որովհետեւ ոճրագործները զիս չեն ճանչնար հիմայ. անմիջապէս սենեակը կը մտնեմ և անոնք յանկարծակիի գալով, պիտի չփոթին կամ թէ զէնքի պիտի դիմեն, ուստի նոյն միջոցին երկուքնիս մէկ կը յարձակինք, լաւ մը կը կապեն՛ք զանոնք. իսկ եթէ չյաջողինք և պարա-

գաներն արիւն և մահ պահանջեն, կը վիրաւորենք բայց ոչ մահացու կերպիւ։

— Օ՛ն ուրեմն, ըսաւ Միհրդատ։

— Եկուր հետս, յարեց կարապետ և սանդուղքէն վեր բե-
նելով, սեննեկին գրանն առջին հասան։

Միհրդատ ականջը դրան մօտեցուց և երբոր ամենևին ձայն չառաւ, իսկոյն դուռը հրելով ինքզինքը ներսեց սեննեկին մէջ։

Ֆօթի և Սպիրօ դէմ առ դէմ կրակարանին քովը նստած թուղթ կը խաղային. երբոր չղթայեալ երիտասարդն իրենց սեննեկին մէջ տեսան թէեւ սոսկացին, բայց և այնպէս իրենց բնական ճարպիկութեամբ երկուքը մէկէն ոտքի ելնելով յարձակողական դիրքի մը մէջ մնան։

— Եթէ չարժուիմ մ'ընէք կոտսուած է.ք, գոչեց Միհրդատ։

Սպիրօ սեննեկին պատէն կախուած դաշոյնին դիմեց և առաւ անկէ։

Միհրդատ աթոռ մը յափշտակելով, այնպիսի հարուած մը տուաւ Սպիրօյի գլխուն, որ երկու քայլ ետ երթալով բազմոցին վրայ ինկաւ, անմիջապէս յարձակեցաւ Միհրդատ և ձեռքի դաշոյնն ու ատրճանակն առաւ. նոյն միջոցին կարապետ ալ առանց իւր ընկերին տեսնուելու, սեննեակէն ներս մտեր և Ֆօթիի վրայ յարձակելով, դաշոյնը կոկորդին դրած ոչ ձայն մը հանելու միջոց ձգեր էր և ոչ ալ յարձակման ղօրութիւն։

Միհրդատ կուզէր, որ միմիայն ինքն ըլլայ այս չարագործներուն ախոյեանը, ուստի երբ տեսաւ Սպիրօ անզօր և անզէն բազմոցին վրայ ճնացած, ուզեց Ֆօթիին վրայ ալ յարձակիլ, և երբ տեսաւ որ կարապետ զանի իւր ջղապինդ բազուկներովը ճգմեր էր, «Ա.հ բարեկամս, դարձեալ օգնեցիր ինձ, չնորհակալ եմ չնորհակալ եմ» ըսաւ և յարեց։

— Հիմայ, ինչ պիտի ընենք ատոնք։

— Մառանը, գոչեց կարապետ։

— Ո՛ւր է մառանը, հարցուց Միհրդատ։

— Ուր որ դուռ կիր։

— Վայ մեղ, կորսուեցանք, կըսէր Սալրօ։

— Ելէք, ըսաւ Մինրդատ Սալրօյի ձեռքէն քաշելով։

— Բայց մենք յանցանք չունինք թողէք մեզ, կըսէր Սալրօ։

— Թէօխարն էր մեզ թելադրողը, յարեց Ֆօթի։

— Ի սէր Աստուծոյ թողէք մեզ, յաւելցուց Սալրօ աղաչելով։

— Վատ և երկչոտ ոճրագործներ, մռնչեց Մինրդատ, ուրեմն կը վախնաք. օ՛ն, օ՛ն, ելէ՛ք. ձեզ տեսնեմ, ըսաւ և Սալրօյի գօտիէն բռնելով, սենեկին դրանը մէջ նետեց. հոս տեսնելու էր Մինրդատին դէմքին վրայ փայլող յաղթական ժպիտը. կուզէր զանոնք բզկտել, բայց խիղճը կարգելուր թէեւ կարապետ ալ քիչ արգելք չէր այս կամքին։

Ֆօթի տեսնելով Սալրօյին պատուտակի նման սենեկին մէջ դառնալը, առանց ընդդիմութեան կարապետին առջին լինալով, կինջնար սանդուղքէն վար։

— Կաղաչեմ թո՛ղ գիս, կըսէր Սալրօ աղերսանօք, և միանդամայն ձեռքէն աղատելով փախչելու ծակ մը կը փնտռէր։

Երբոր սանդուղքին գլուխը եկան որ վար պիտի իջնային, Մինրդատայ ոտքը սահելով, մնաղ ճնայ որ երեսի վրայ պիտի լինար։

— Վերջապէս կարծեմ դու այդ ոճրագործը պիտի վախցունես, ըսաւ կարապետ։

— Անհոգ եղիր դու բարեկամ, այսպիսի վատերու գլուխը ճղմելու համար բաւական զօրութիւն ունիմ ըսելով, Մինրդատ Սալրօյի թեւեն այնպէս գալարեց, որ ցաւուն չկրնալով դիմանալ սկսաւ պօռալ, և երեսին վրայ ինկաւ։

— Ընկե՛ր, ի՞նչու կընդդիմանաս, ըսաւ Ֆօթի, չե՞ս տեսնար որ անօգուտ է աղաչանքը։

— Ինչպէս կրնայ օգտակար ըլլալ յարեց Մինրդատ, մինչդեռ ես ձեզի աղաչած ատենս, վոխարէն հայհոյութիւն թըշնամանք և երբեմն ալ կռուի կընդունէի, մենք տակաւին ձեզի հետ մարդասիրութեամբ կը վարուե՞ինք, օ՛ն ել։

Սալրօ ոտքի ելնելով, Մինրդատայ հետ սանդուղքէն վար իջան։

կարապետ Ֆօթին ներքնամառանը խօթեր և կապասէր որ Սալիրօն ալ բերելով երկուքը մէկէն շղթայով կապեն ու դուրս հլնեն, վասն զի ուրիշ թշուառ մը ալ ունէր աղատելիք։

Մինդատ Սալիրոյին ձեռքէն բռնած ներքնամառանէն ներս մտցուց, և երկուքը մէկ շղթայով կապեցին, ու դուռը դոցելով դուրս ելան։

Թող այս մարդասպաններըը շղթայակապ մնան, և մենք ընթերցողաց հետ Մաքրուհիին սենեակն երթանք։ կարապետ դրան բանալին առնելով Մինդատին դարձաւ, հիմայ բարեկամ կրսէր, մենք սրբազան պարտաւորութիւն մը ալ ունինք կատարելիք, եկու միասին երթանք վեր։

— Շատ աղէկ, ես պատրաստ եմ ամեն կերպով դիմադրաւել բոլոր այն վտանգներուն՝ որոնք մահ կսպառնան, մնանաւանդ այս մասին որն որ դուք պարտաւորութիւն կանուանէք, ինչպէս պէտք է վարուիմ։

— Ուրեմն հետս եկուր, յարեց կարապետ և սանդուղքէն վեր երթալով, Մաքրուհիին սենեկին դրանը առջին եկան։

կարապետ դուռը բաղխեց։

— Ո՞վ է այն, ըսաւ ձայն մը։

— Ուրուականն է պատասխանեց։

— Ուրեմն սպասէ, ըսաւ ձայնը, և քիչ մը ետքը դուռը բացուեցաւ։

Մաքրուհի զարմացաւ երբ ուրուականին հետ դեղեցիկ երիտասարդ մ'ալ տեսաւ, որոնք իւր սենեակին իրեն այցելութեան եկեր էին։

ՏԻԿԻՆ ԼՈՒՍ–Ա.ՆՆԱ

Նոյեմբեր ամսուն տխրալի և անձրեւոտ գիշեր մը Լանկայի Սէբէթճի փողոցը երթալիք ծուռ ու մուռ ճամբուն գլուխն էր՝ կու մարդ սեւ վերարկուներուս մէջ փաթթուած կանգներ կը խօսակցէին։

Խօսակցութենէն առարկան ինչ նիւթի վրայ ըլլալը չենք գիտեր, սակայն գիրար դառնելու համար ժամադրութենէն տեղին, ընկերներուէն մէկը միւսին մօտենալով՝ ականջին ցած ձայնով մը ըսելէետքն իրարմէ բաժնուեցան։

Ա.ռաջինը դէպ՝ ի Լանկա ուղղեց իւր քայլերը և երկրորդը Սէբէթճի փողոցին մէջ մտնելով անհետացաւ։

Հետզհետէ անձրեւը սաստկացեր էր, փողոցին՝ առձեւ և դէմ առ դէմ իրարու կցուած տանիւնեներէն ջուրը նեղ ճամբուն քայքայած քարայատակին վրայ կը թաւիէր. այս հինաւրեայ կիսաւէր և ցած տուներէն դրեթէ ոչխային գոմ մը առած էին, որոնց այս գոմը կարծես թէ թաղին բնակչաց դժուարաւար աղքատութենէն արտաքին ցոյցն էր. այն գիշերուան տխրագեաս տեսքը մերթ ընդ մերթ վայրկեան մը լոյսէն տեսանուելով կարի ապահովութիւն մը կը թողուր դիտողին.

Ճիշդ գիշերուան ժամը երեքն էր, երբ երկու ծպտեալ անձանց՝ մին յիշեալ փողոցը մտաւ և արագ ընթացք անոնք ալ դէպ՝ ի Եալընըզ-Պաղալի կողմն ուղղեց իւր քայլերն, և հին տան մը դրան առջին կեցնալով դուռը բախեց։ Նախ փողոցին վրայի սենեակէն ճրագի մը լոյսը տեսանուելով, քիչ մը ետքը ապակւոյն ետեւէն կնկան մը դէմքը տեսանուեցաւ, որ առնական դէմքէ զանազանելու համար մարդ պիտի վարանէր. «Ո՞վ է այն, հարցուց հաստ ձայն մը։

— Ըսե՛մ Լուս-Ա.ննա, բաց դուռը, պատասխանեց դուռը բախող ծպտեալ անձը։

— Դուռ մի՛ բա՛ց, այս տեղն ի՞նչ կուզես։

— Ես եմ, Մ. Տէրպէնտը, բայց։

— Հա՛, դո՞ւ ես, ապաստէ, ահա ե՛կայ ըսելով, կինը՝ պատու-հանէն հեռացաւ և քիչ մը ետքը մեզ վաղեմի ծանօթ Մ. Տէրպէնտ տունէն ներս մտեր էր։

Այս տանը ներքին կողմը սքալի տեսարան մը կընծայէր մարդուս աչքին, հողէ նեղ բակէ մ՚անցնելով, փայտեայ խարխուլ սանդուղքէ մը վեր կելլէր, որուն անմիջապէս քովը ըրհորին բերնի մարմարեայ շրջանակը կը բարձրանար. առաստաղէն վար կախուած էր քանիմը շերտ եզան ապուխտ անոր քով օղակներու անցուցած փայտէ մը՝ սոխի չարեր կախուած էին. Մ. Տէրպէնտ վեր ելնելով բարեկամաց մէջ այսչափ ըզգուշութիւն բանեցնելն աւելորդ է սիրելիս, ըսաւ։

— Ներեցէք իմ վաղեմի բարեկամս, պատասխանեց Լուսաննա. այնպիսի ժամանակի մէջ կապրինք որ խոհեմութիւնը ձեռքէ չթողլով՝ զգուշութիւն պէտք է բանեցնել, բայց ինչ և իցէ, այս առեն հոս... արդեօք ինչ հովեր այս կողմերը ձգած են զձեզ։

— Եկուր սենեակը նստինք, ըսելով սենեակը մտան, և դուռը գոցեցին։

Հոս պարտք կը համարինք տիկին Լուսա-Աննային վրայ փոքր ինչ տեղեկութիւն տալ։

Այս կինը տասնեւութ տարեկան հասակին մէջ իր ծնողքը մեռնելով չէր ուզած ամուսնանալ, երկան մը հնապաղխլը դեր-ութիւն կը համարէր. այս պատճառաւ արանց դէմ անհաչտ ատելութիւն մ՚ունէր, թեպէտեւ շատերը իրեն դերած էր աննման գեղեցկութեանը շնորհիւ, այն առեն ունեցած տարիքները և գերեալ սրտերն դէմքին վայելունութիւնը լոյսնամանցնելով, իւր Աննա անունը վրայ լոյսը բարդելով Լուսա-Աննա կը գոչէին, որ մինչեւ վերջը նոյն անուամբ կը յորջորջուէր։

Բայց մեր պատմութեան մէջ, այս կնոջ Լուսա-Աննա կոչիլը, դրեթէ զրպարտութիւն կամ հեգնութիւն մըն է ըսել զի երիտասարդութեանը ժամանակ արհեստական ճերմկութիւնը

բոլորովին կորանցնելով, կարծեմ արեւէն առակալի կերպով սեւ-ցել, և գրեթէ երիկ մարդու մը պէս պեխերը և մօրուքը ա-լեխառն եկեր էին, և որովհետեւ քառասուն տարեկան հա-սակին մէջ, իւր նախնի գեղեցկութիւնը կորանցուցած էր, բը-նականաբար իւր վաղեմի բարեկամները երեսէ ձգելով պիտի թշուառացնէին զինքը. Տիկին Լուս-Ըննա ապրելու համար ու-րիշ միջոց մ'էր գտած, կայսերական բժշկարանի մէջ դահե-կութիւն տրվելը և նոյն արհեստով կղբաղէր. այս միջոցին Լուս-Ըննա դահեկը բաղմաթիւ տաճիկ յաճախորդներ ունէր և շատ առակ կը վաստկէր, մանուկ վիժեցնելու համար տուած դեղե-րէն, որուն անվրէպ ըլլալը շատերը կը պատմէին, մանաւանդ աւելի յաջողակ էր, տղայութեան միջոցին ըստ խնդրանաց ծը-նողաց, ողջ կամ մեռեալ ծնելու մասին.

Պօլսոյ մէջ այսպիսի ոճիրներ յաճախ կը գործուէին. բայց վերջին տարիներս ծնողք իրենց պարտաւորութիւնը սկսան ճանչ-նալ, չնորհիւ բարեխնամ կառավարութեան հայրապետի հո-գածութեանը. և այս ոճրագործութիւնը օրստօրէ նուազիլ սկսաւ, բայց և այնպէս Տիկին Լուս-Ըննայի պէտք ունեցողները տակաւին կը գանուին դժբաղդաբար:

Ինչպէս որ ըսինք, Տիկին Լուս-Ըննա սեւնեկին դուռը գո-ցելէ ետքը Մ. Տէրպէնտի քով նստելով, «Խօսէ բարեկամ, ը-սաւ, պատրաստ եմ քեզ մտիկ ընել:

— Տիկին, բարեկամներէս մին տղայական կրկոցը անսալով, հօրմէն գաղանի ստորին աստիճանէ աղջկան մը հետ ամուսնա-ցեր է, և կարծեմ պատկիչ քահանան ալ Յոյն մըն է Փօքինօ անուամբ, որն որ ձեզ անծանօթ մէկը չէ, ուստի հիմայ տղուն հայրը խնամալով այս ապօրինի ամուսնութիւնը, պատուհասը պրկել ժառանգութենէն եթէ կնոջմէն չզատուի, և կրնայ ալ 'ի դործ դնել, վասն զի օտար տէրութեան հպատակ է. ուստի տղան կուզէ խղել այս ամուսնութեան կապը. բայց դժբաղ-դաբար կինը այս գիշեր և կամ վաղը զատակ մը պիտի ծնի, որով բոլորովին անկարելի պիտի ըլլայ բաժանումին, և ահա այս դործին համար է որ հոս եկայ. մնացեալը ձեռնէ կապատուի:

— Հասկցայ, ըսել է որ տղան մեռած կուզէք ծնանի այնպէս չէ՞, հարցուց Լուս-Աննա։

— Ո՛չ, ընդհակառակը մենք ոչ տղուն և ոչ մօրը ջնաս մը հասնիլը կուզենք, մեր ուզածը միայն մայրը հաւտացնելու է թէ տղան մեռած ծնաւ։

— Սխալկայ բան մը ըսել չէ, միայն թէ ողջ մը մեռած հըրատարակելու համար, հարիւր կամ գոնէ ութսուն ռակուոյ պէտքը անհրաժեշտ է։

— Գործերնիս ատակին մնայ, դու անկասկած դործը լըմընցուր, կարելի է աւելի կը հատուցանեմք։

— Շատ աղէկ, երբոր իմ ներկայութեանս պէտքը ղդաք, մէկ երկու օր առաջ իմացուցէք ինձ։

— Հարկ չկայ մէկ երկու օր առաջ իմացնել, հիմայ այս ժամուս պէտք է երթանք Գատը-գիւղ։

— Հիմա՞, այս ժամուս Գատը-գիւղ... բայց այս օդին գեղջուկները, ըսելով, դէպ՝ի պատուհանէն դուրս նայեցաւ, և անձրեւի քանի մը կաթիլ ուժգնութեամբ երեսին գալով» Անկարելի է, անկարելի, դոչեց։

— կարելի անկարելի պէտք չէ, անպատճառ հետս պիտի ընկերանաս որ երթանք, Տիկին, ըսաւ Տէրպէնտ։

— կերեւայ թէ անձրեւին ձայնը չէ՞ք իմանար, նա մանաւանդ ծուլէն սաստիկ վախնալս...

— Սրդէն հինգզոյգթի մեծ նաւ մը պատրաստ կսպասէ Գում-գաբուի նաւամատոյցը, նաւավարներուն ամենն ալ վարպետ և հուժկու, այդ կողմէն ամենեւին վախնալու տեղի չունի. նիա. իսկ անձրեւին գալով, իմ մեծ հոլանոցս և վերարկուս քեզ կուտամ, կարծեմ ալ պատճառ մը չմնայ զքեզ երթալէ արգիլելու։

— Ըսել է որ անհրաժեշտ պէտք է այս գիշեր հետդ երթալ... է՛, ուրեմն երթանք, ըսելով, Լուս-Աննա ոտքի ելաւ և յարեց, լապտեր մը առնենք։

— Լապտերին պէտք չունինք, ըսաւ դրպանէն լապտեր մը հանելով, վառեց և աճապարեց դուրս ելլալ։

— Կեցի մի՛ չտապեր, կըսէր դայեակը վերարկուով գինքը ծածկելով, յետոյ սանդուղքէն իջան, բայց դժբաղդաբար Տէրպէնտ փոխանակ ոտքով իջնելու կռնակի վրայ ամբողջ մարմնովը նետուիլ, ինքգինքը բակը գետաւ. մէկ տեղը ցաւերցաւ հարցուց Լուս-Ըննա,

— Ո՛չ, ո՛չ, բան մը չեղայ, միայնջեց Տէրպէնտ, օ՛ն աճապարէք երթանք ըսելով, դռնէն դուրս ելան.

Դեռ կը չարունակէր անձրեւը. դայեակը և Տէրպէնտ Մէքբէթի փողոցէն դուրս ելնելով, դէպ՝ ի Գամ-գաբու յառաջացան. Մայր Եկեղեցիին փողոցին բերանը վերարկուդ բաժուած մէկը կապասէր, Մարտիրոս այս ատուերը տեսնելուն անմիջապէս նշանացի եղանակաւ մը տուաց, որ նոյն եղանակաւ պատասխան ընդունեց և սկսաւ ատուերը դէպ՝ ի Տէրպէնտ յառաջանալ.

Ո՞վ էր այս ատուերը.

Քիչ մը առաջ Տէրպէնտին հետ ժամադիր եղող Պ. Նազարօֆն էր որ հիմայ ճանչցանք, որ աճապարանօք մօտենալով Տէրպէնտի.

— Ի՞նչ ըրիր, հարցուց.

— Ամեն բան կարգին է, պատասխանեց Մարտիրոս.

— Դու ինչպէս, պատրաստած ես.

— Այո՛, ամեն բան պատրաստ է, և անհամբեր ձեզի կըսպասէր.

— Եա ահաւասիկ մենք ալ եկանք, ըսաւ Տէրպէնտ, այս միջոցին Գամ-գաբուի դրան առջեւ հասած էին, Նազարօֆ դռնապանը ձայնեց որ անմիջապէս դուռը բանալով անցան և դռնապանը երբոր սենեակը դարձաւ, ճրագին մօտենալով տեսաւ որ ոսկի մըն էր Նազարօֆէն ընդունածը.

ԱՆՁԿՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ

Մինչդեռ Տէրպէնա դայեակն համոզելով գատը-գիւղ կը տանէր, անդին Զարըխճլի փողոյն տան մէջ հետեւեալ դէպքը կանցնէր։

Արդէն դիտեմք թէ կարապետ Մխիրդատն առաջ Մաքրուհուոյն սենեակն եղեր էր, զայն ալ ազատելու մտօք. և այս բանը քիչ զարմանք չէր պատճառած թշուառուհուոյն, ուստի կարապետ յառաջանալով, Տիկին, ըսաւ, ահաւասիկ վտանգն մէջ դտնուող երիտասարդն ոմն որ ձեր շնորհիւը ազատեցաւ մահուանէն, և հիմայ իւր թշնամիները չղթայուած և փակուած են հոն, այժմ կը մնայ ձեզ տուած խոստումնքս կատարել այն է ձեզ ալ վրկել այս մարդակուլ տեղէն։

Մաքրուհի չփոթեցաւ այս առաջարկութենէն և կը վարանէր։

— Տիկին, շարունակեց, կարապետ տեսնելով անոր վարանելը, գիտնաս որ ամուսինդ երեք ամիսէն ուրիշ աղջկան մը հետ պիտի պսակուի, պէտք է որ դատ շանաս ամուսնոյդ դէմ։

— Բայց այն ատեն գիս բոլորովին պիտի թողուն, պատասխանեց։

— Այո՛, պիտի թողու սակայն ամեն մարդ պիտի լսէ, թէ դուն անոր օրինաւոր ամուսինն էիր և ոչ թէ հարճը, քանզի ինքն ամենուն այնպէս հաւատացնել կուզէ։

— Այ թշուառ, գոչեց կինը բարկութեամբ, և քիչ մը խորհելէն վերջը, բարեկամք, ըսաւ, ձեր իմ վրայ ցըցուցած անձնուիրութեանը մեծապէս չնորհակալ եմ. բայց պէտք է ես հոս մնամ, քանզի կուզեմ այն ոճրագործէն վրէժս լուծել, դուք անհոգ եղէք այդ մասին։ Եւ տեսնալով որ գինքը պիտի լսեն, աւելցուց չեմ ուզեր երկար խօսելով ձեզ վշտացնել. սակայն պարտականութիւն մ'է որ 'ի դործ դնել հարկ է։

Կարապետ տեսնելով որ զայն համոզելն անկարելի է, Միհրդատայ դառնալով, «Բարեկամ, ըսաւ, օ՛ն երթանք, կը տեսնես որ անկարելի է զայն համոզելն, և Մաքրուհիին դառնալով, դու անհոգ եղիր, ըսաւ։

—Քանի որ դուք այնպէս որոշած էք, ուստի մնաք բարով ըսին և դուրս ելան։

Երբոր Կարապետ և Միհրդատ տանը դուռը գոցելով դուրս ելան, սարսռացի Միանձնուհին դրան ձայնէն և սկսաւ դողալ. և կուզէր նազարօֆէն վրէժ լուծել և սկսեր էր խորհիլ, թէ ինչ կերպով կրնար. սակայն երկիւղը աւելի տիրելով վրան ատքի վրայ կենալու կարողութիւնը կորանցուցեր, դէմքը գունատ, շնչառութիւնն անկանոն, աչերը գոց, անկողնոյն մէջ տարածուած էր. թշուառ կինը դարձեալ անտանելի տառապանաց ենթարկուելով, սկսեր էր մտածել իւր վիճակին վրայ։

Ցանկարծ անկողնէն ելաւ և դնաց բազմոցին վրայ նստաւ, նոյն միջոցին հազիւ կէս գիշեր եղած էր, ինքնիրենը սկսաւ խօսիլ. «Ա՛հ ինչ անխոհեմութիւն էր ըրածս, ինչու ուրուականին հետ չդացի... բայց ո՛չ, ըսաւ, առանց վրէժ լուծելու այս տունէն երթալ, ո՛չ ո՛չ, պէտք է մեռնիլ և կամ մեռցնել... քիչ մը ատեն այսպէս խոհուն մտածութեան մէջ ծնալէն ետքը, ձունկի վրայ դալով ո՛հ Աստուած իմ, Աստուած իմ, մի՛ թողուր զիս, ահա դարձեալ ուրուականները կը տեսնամ, որ ինձ կը նային և խորհրդական նշաններ կընեն ըսելով, աչքերը գոցեց և գլուխը երկու ձեռաց մէջ առնելով՝ սկսաւ լալ և անտանելի ցաւօք տառապիլ, ցաւեր որոնք միմիայն մայր ըլլողները կրնան զգալ. այս միջոցին խեղճին արեան բորբոքումէն երեւակայութիւնը խանգարուեր էր ու կը զառանցէր. ո՞ կըսէր, միթէ այս անգթութիւն չէ՞, որ գիս այս վիճակիս մէջ առանձին և անօգնական թողլով մեռցնել կուզեն... բայց ո՛չ, չեմ յուսար, որ կարապետին ըսած խօսքերը ճշմարիտ ըլլան վասն զի ամուսինս այն աստիճան երդմնազանց չկրնար ըլլալ, արդեօք գինքը վշտացուցած եմ, որ ինձի հետ այսպէս կը

վարուի. բայց պէտք է զգուշանիլ... ահ, դարձեալ ցաւերս կը կրկնապատկեն. Տէր Աստուած ողորմէ ինձ, բայց ի՞նչ դըժընդակ ցաւ է, ո՜հ սոսկումն. ահա դարձեալ ուրուականները կը տեսնամ, երկայն ձեռքեր՝ունին, որչափ ալ մեծ բերաններ. ահա ինձ կը մօտենան, հեռու, հեռու. Այսպէս խօսելով բազմոցին վրայէն ետ կը քաշուէր, խեղճին ճակտէն պաղ քրտինք մը կը հոսէր, աչքերը բաց չարունակ սենեկին մէկ անկիւնը յարած կը պահէր.

«Այս ուրուականը պիտի ճանչնամ. այո՛ կը՛ճանչնամ, իմ ամուսինս է, բայց ինչո՞ւ աչքերը այդչափ մեծ են և մէջի սեւեռը կորսուած է. ա՜հ, ձեռքերն արիւն թաթախ՝ի՞նչ պիտի ըլլայ այս. ա՜հ, սոսկում կազդեն ինձ. բայց այս ամուսինս չէ, կը սկսի մեծնալ... մեծնա՛լ... և միշտ մեծնալ. ա՜հ, սոսկալի՛մաքիլներ ունեցող ձեռքեր գիս կը չրջապատեն, գիս բռնել կուզեն, թողէք գիս... թողէք... օգնութիւն... օգնութիւն... ահ... պոռալով անկողնոյն մէջ նուաղեալ մնաց.

Ցանկարծ սենեկին դուռը բացուեր և Նաղարօֆն ու դայեակը և Տէրպէնտներս մտեր էին.

— Նաղարօֆ անկողնոյն մօտենալով, քնացեր է, ըսաւ.

— Պէտք է արթնցնենք, յարեց Լուս-Ըննա և մօտենալով Մաքրուհիին մեղմով մը՝ ի՞նչպէս ես, ըսաւ. բայց պատասխան չընդունեց.

— Մեռեր է, գոչեց Տէրպէնտ աղէկ մը դիտելով, և երեքը մէկէն երակները ջննել սկսան.

— Մեռած չէ, նուաղեալ է, ըսաւ դայեակը, և յաւելցուց որ քիչ մը ջուր բերեն.

Նաղարօֆ անմիջապէս սեղանին վրայի գաւաթին մէջէն քիչ մը ջուր սրսկեց հիւանդին երեսին, և Մաքրուհի շարժում մը ըրաւ.

— Ես ձեզի չըսի՞ որ նուաղեալ է, ըսաւ Լուս-Ըննա, հոգ չէ հիմայ կանցնի.

Մաքրուհի աչքերը բացաւ և բոլորտիքը եղողները ուրուական կարծելով՝ դարձեալ սկսաւ ղաւանցել.

— Ահա դարձեալ եկան, ինչ ընեմ, ու՛ր վախչիմ կը դողէր։

— Ի՞նչպէս ես սիրելիս, ըսաւ Նազարօփ, ձեռներն իւր ձեռաց մէջ առնելով։

— Հիմայ աղէկ եմ, բայց քիչ մը առաջ տոսկալի վայրկեան՝ ներ անցուցի. կաղաչեմ՝ ի սէր Աստուծոյ հոս զիս առանձին մի թողուք, կը վախնամ, ըսաւ Մաքրուհի ինքզինքին գալով։

— Սիրելիս, արդէն գիտես որ իմ բացակայութիւնս թէեւ ակամայ բայց անհրաժեշտ է, ըսաւ, և յաւելցուց թէ ինչ կայ վախնալու։

— Վախնալու ինչ կայ կըսես... այս տունը ուրուականներով լի է, որոնք քիչ մը առաջ զիս պիտի խեղդէին։

— Տղայ մի՛ ըլլար սիրելիս, երեւակայութիւնդ զքեզ խաբեր է, ուրուական չկայ ատոնք տղայական բաներ են. իսկ եթէ կը վախնաս ալ զքեզ մինակ չեմ թողուր։

— Ա՛հ, ատեն ատեն տոսկալի ցաւ մը կզգամ։

— Տիկին, նայէ տակաւին շատ ցաւ պիտի կրէ, կարծեմ երկունքը գինքը տանջելուն համար է, ըսաւ Նազարօփ։

— Լուս-Աննա թշուառը զննելէն վերջ, հինգ վայրկեանէն կը ծնի ըսելով Տէրպէնտի դարձաւ՝ պէտք է որ դուրս ելնէք և դրանը առջին կեցնաք, ըսաւ ցած ձայնով։ Մարտիրոս դուրս ելաւ։

— Խմէ այս, աղջիկս, ըսաւ Լուս-Աննա, գաւաթին մէջ պզտիկ սրուակէ քանի մը կաթիլ հեղուկ լեցնելով. Մաքրուհի առանց կասկածելու առաւ գաւաթը ու խմեց, և իսկոյն թըմրութիւն մը գալով վրան, մէկ երկու վայրկեանէն Նազարօփ եան թշուառ մը աչխարհք եկաւ, բայց Մարտիրոս զայս մեկ տեղ առնելով անյայտ եղան։

Հիւանդը դէշ վիճակի մէջ էր. երկրորդ օրը երբ քիչ մը ինքզինքն զգալով աչքերը բացաւ, առջի արտասանած խօսքը ջաւաին էր։

— Ո՞ւր է ջաւախս, հարցուց։

— Աղջիկս, հիմայ ինքզինքդ մտածէ, վասն զի ծանր վիճակ մը ունիս, ըսաւ դայեակը։

— Աւրո՞ւ է թէ էգ, հարցուց աղերսանօք։

— Վերջապէս չեմ ուզեր գլխով խաբել յարեց Նազարօֆ, մեռած էր գաւակիս Մաքրուհի։

Մաքրուհի թէպէտ ձայն չհանեց, բայց երկու կաթիլ արտասուք երեսն՝ի վար սահեցան։

ՊԱՂԼԱՐ-ՊԱՇԻՒ ՍՐՃԱՐԱՆԸ

Ուսկիւտար Պաղլար-պաշիի կեդրոնը քարաշէն գեօղարան մը կայ, որ շրջահայեաց պատշգամի մը հիանալի տեսքն ունի, Սրեւելեան կողմն Հայոց գերեզմանատան տխրատեսիլ ծառերուն քով առաւօտեան քաղցր զեփիւռէն կը յուզուին և մեղմ ահաւնով կենաց և մահուան ներդաշնակաւոր դիրկընդխառնութեամբ իրենց կը դրաւեն մելամաղձային աչերու նայուածքը։

Հարաւային կողմէն արեւուն ծագման առնին մինչեւ կէս օր տրամօրէն կը թաւալի, և կը ճառնչէ Պալեան գիրքատպանի այգիին պօսթան տօղապին. արեւմտեան կողմը դեղնորակ դուռնով ներկուած տուն մը կը բարձրանայ, անձայր պարտէզներու մօտ, որուն կանաչազեղ վանդակներն հեռուէն դիտողը կը կարծէ թէ՝ պատուհանները ծառերու ոստերով շրջափակեալ են։

Իսկ հիւսիսէն՝ անմշակ երկրի մը ընդարձակութիւնը կը տեսնուի, որու մէկ մասին վրայ այս տարիներս Ազիզիյէ թաղրոնն և մէկ քանի մեծափարթամ անձերու ապարանքներ շինուած են։

Ժամն առաւօտեան չորս է, և մենք ընթերցողին հետ կը մտնենք Պաղլար-պաշիի գեօղարանն, որ ինչպէս ըսինք, չորս կողմէն զուարճալի ընդարձակ տարածութեան մը կեդրոնն

ըլլալէ զատ, ինքը դարձեալ աքսայէն հոլանտացւոց ծառերով չրջապատեալ զմայլելի պատշգամի մը տեսքն ունի։

Երկու երիտասարդ գնդապետի զբաղած էին. ուրիշ մարդ չկար, բայց եթէ երկու սպասաւորներ որոնք մէկ մէկ անկիւն գրաւած, անվտանգօրէն կը ննջէին։

— Է՛հ, գոչեց երիտասարդներէն մին, դրդափայտիդ գըլխու կաշին ինկաւ։

— Հոգ չէ, պատասխանեց երկրորդը. ես կարող եմ վայրը ասկորին զարնել... ա՛հ, դժբաղդութիւն մեծ խօսեցայ։

— Համ համ համ համ, խոստովանէ որ տգէտ ես, ութնուվաթան եւ մէկ ահա մէկ ալ տասն երկու։

— Է՛, Պարոն մ'աճապարեր, չեղաւ չեղաւ։

— Ինչպէս չեղաւ՝ աչքերդ զո՞վ կը դիտէր, որ չտեսաւ երկրորդ գնահին խաղալը։

— Ինքզինքդ կարդացու, տեսիլէ սեռածդ։

— Կերդնում՝ որ եղաւ։

— Ես ալ կերդնում որ չեղաւ, հիմայ փակցու մեր երդումները իրար, տեսնենք որը առաջ պիտի բրդէ։

— Պարոն զրաբանութիւն պէտք չէ, ես խաղը վաստկեցայ։

— Օ՛, Պարոն Գառնիկ անուանդ հեզութիւնը ինչ չուտ կը թօթափես, ինչ, կուզես որ քմացդ համաձայն վարուիմ։

— Ջէ՛թէ քմացս համար, այլ իրաւանցս։

— Օ՛ Պարոն, այդպէս հրամայական, ըսել է կռիւ կուզես, չատ աղէկ պատրաստ եմ պատուհանէն վար նետել զքեզ։

— Ռուբէն, համբերութիւնս պիտի հատցունես, գոչեց Գառնիկ։

Այս ձայներէն սպասաւորներն արթննալով, Պարոնայք ամօթ է կարծեմ, ըսին։

— Տեսար տխմար, քու ձայնովդ այս մեծ ապառիւ Պարոնները անհանգիստ ըրիր ըսելով բարձրաձայն սկսաւ խնդալ։

— Անդամ բերնիդ խօսքերն ականջիդ մօտեցու, ապա թէ ոչ։

— Եթէ ոչ,

— Բայց պարոններ ձեզ չվայլեր այդպէս երար թշնամանել, պարոն Ռուբէն կատաչեմ վերջացուր։

— Ի՞նչ, կարծէք որ կը կռուիմ, ամենեւին, դիւահարը ըսածը չդիտեր, ասկէ զատ ժամանակ ալ չունիմ, վաղը կը տեսնուինք ըսելով բարկութեամբ ոտնդուղքէն վար իջաւ։

— Սրիկայ, մրմռաց ետեւէն գոռնիկ, բայց Ռուբէն չը լսեց։

Եւ Ռուբէն ոտնդուղքներէն իջնալով, երբ պարտիզէն ալիս ոտ անցնէր, Մարտիրոս Տէրպէնտ գինքը դիմաւորելով, «Ներեցէք ձեզ ոպասել տուի, բայց հիմայ ո՞ր կերթաք բարեկամ, ըսաւ։

— Ո՛չ բարեկամ արդէն ժամը չորան է և մեր ժամադրութիւնը հինգին էր։

— Այո՛, թէեւ իրաւունք ունիք, բայց ես ուզեցի աւելի կանուխ գալով, ձեր ապագայ ամուսնոյն վրայ մէկ քանի տեղեկութիւններ տալ, որն որ անհատաւոտալի պիտի թուի ձեզ, բայց տակաւ առ տակաւ պիտի ստուգէք։

Ռուբէն առանց պատասխանելու ուշադրութեամբ Տէրպէնտը կը դիտէր։

— Թէպէտեւ, շարունակեց Մարտիրոս, առաջին տեսակցութիւնդ ձեզ պիտի զարմացնէ, քանզի արդէն բնական է որ նախորդ ամուսինը պիտի յիշէ ձեզ և ըսէ, թէ կենդանի է և կարելի է որ եթէ խեղդուիլը ստոտկանայ, դուցէ ըզ ձեզ վռնտէ։

— Ա՛... ըսել է որ խեղդ է։

— Է՛հ, բարեկամ ինչպէս կուզես որ դեղեցիկ կին մը, խելքը գլուխն ըլլալով հինգ հազար ոսկւոյ հետ բերուն քեզ յանձնեն, բայց և այնպէս խեղդուիլն անցաւոր ախտ մ'է եթէ դարման տարուի, չուտով կ'առողջանայ և դուք երջանիկ կրնաք ըլլալ։

Մտածել սկսեր էր Ռուբէն, ինքնիրեն՝ կըսէր «Ընդհակառակ ծեր, թէեւ ես քու վարմունքիդ ամենեւին չեմ հաւնիր, բայց տեսանենք ինչ պիտի ըլլայ։

— Ներեցէք պարոն, շարունակեց Տէրպէնտ, որ մտերմաբար խօսիմ ձեզի հետ։

— Բայց նախ և առաջ բան մը կայ որ պարտականքս գրաւած է։

— Ի՞նչ բան պարոն։

— Սաակին խօսքը ամենևին չէք ըներ։

— Իրաւունք ունիք, բարեկամ։

— Աւատ պատիւ ունիմ ձեզ իմացնելու՝ որ դրպաններս չլեցածտեղէս չեմ եղներ, ըսաւ Ռուբէն։

— Ի՞նչ ըսել կուզէք պարոն, ըսաւ Տէրպէնտ։

Այս բացատրական պատասխանը թէպէտև մեկնութեան կարօտ չէր, բայց չհասկնալ ձեւացուց։

— կըսեմ թէ, ինծի ամուսին առաջարկած կինդ ոչ թէ այրի է, այլ իրեն ամուսինն ըլլալու խոստացող հարուստի մը հարճն է, և հետեւաբար ես այնպէս կենթադրեմ թէ՝ նոյն հարուստը ամուսնանալ ուզելով, հինգ հազար ոսկի կընեառէ, ինքիրմէ միլիոն քայլ հեռւ. ոսկեսէր պարոնին մէկն ալ ստակին տէրոյն հարճն առած ոսկիներուն քով կը վազէ, և ահաւասիկ լաւ մը հասկնալու համար կը կրկնեմ, թէ մինչև որ ասկինները երեսը չտեսնեմ քայլ մ'առաջ չեմ առներ։

— Բաւական է, տաք գլուխ պարոն, երեւակայութիւնդ պրդռեցիր, հարկաւ պարտապ տեղ մարդու հինգ հազար ոսկի չեն տար, և որովհետև բնական ալ է որ մարդս իրեն քով հինգ հազար ոսկի չդտնուի և . . .

— Պարոն, ես ստակի խօսքն ընելովս ըսել չուզեցի թէ՝ հինգ հազար ոսկի հիմայ այս վայրկեանիս ամբողջ կուզեմ, ըսաւ Ռուբէն, Տէրպէնտի խօսքն ընդմիջելով։

— Այդ ուրիշ, հիմայ առ հաշիւ քովս գտնուած հարիւր ոսկին տամ, և երկու ժամէն որչափ որ կարելի՞է կը վճարեմ։

— Հիմայ կրնամ երթալ, ըսաւ Ռուբէն, քանի որ սկիզբէն հարիւր ոսկի կուտաք։

— Այո՛, երթանք, ըսաւ, և կարմիր քսակով լեցուն ոսկինները Ռուբէնի յանձնելով յաւելցուց թէ պէտք է որ մէկը երբ վկայ ներկայ գտնուի ամուսնութեան։

— Շատ ալէկ։

— Ուրեմն հիմայ Գառոր գլուղ կերթանք, դուն հոն նաւա-

մատոյեին առջեւ դտնուած սրճարաններէն մէկը կը նատիս, և ես կերթամ վկայ ըլլող անձը կը բերեմ, բայց և այնպէս երկու ժամու չափ սիտի սպասէք։

— *Հոգ չէ՛*, պատասխանեց Ռուբէն, և բոլորովին դոհ կերեւէր։

Ընդմիջապէս տաճկաց դերեզմանատան մօտ կառք մը վարձելով նատան, և կառքը սրարշաւ կը յառաջանար դէպի Գատը դիւղ։ Ճամբան սկսան խօսիլ, բայց չէ թէ ամուսնութեան այլ Սարը-եարի Ֆըլըտաք պահճէսի կոչուած տեղը, դարձեալ երեւցող ճգնաւորի մը վրայ, որ դրեթէ Պօլսոյ թերեհաւատները ամեն օր խուռն բազմութեամբ հոն կը դիմէին, անոր հրաշքները տեսնելու համար, որոնց մեծագոյն մասը հաւատացեալներուն կարդը դասուեցան, 'ի շնորհս սոյն ճգնաւորին հրաշալեացը։

Վերջապէս կառքը Գատը դիւղ հասաւ, և երկուքը մէկէն կառքէն իջան. Մարտիրոս վերջին ողջոյնը տալով զատուեցաւ դնաց։

Եթէ ընթերցողք հարցունեն թէ ասանք ո՞ր գացին, պիտի ըսեմ, թէ Մարտիրոս վոխանակ վկայ դտնել երթալու, ուղղակի Մաքրուհիին տունը գնաց. իսկ Ռուբէն, նաւամատոյցին մօտ դտնուած սրճարաններուն ամենքն ալ պտըտելէն վերջն, անկիւնի սրճարանը գնաց, և հոն տեսաւ որ բռէֆայի երեք ընկերը պատրաստելով, չորրորդի մը կարօտութիւն ունենալնին կը յայտնեն, ահաւասիկ ես, ըսելով սկսաւ թուղթ խաղալ։

ՃԳՆԱԻՈՐ

Պատմիչին իրաւունքն է մերթ ընդ մերթ անցեալին վրայ աչք մը նետել. ուստի մենք ալ ընթերցողներէն ներողամտութիւն խնդրելով դիրքնիք կը հրաւիրեմք Զիֆթ-սույխի ճգնաւորին վրայօք տեղեկութիւն տալ.

1834 տարւոյն վերջերը յորդառատ անձրեւներէն Զիֆթ-սույխէն Ռումելի դաշտ երթալու ճամբան, դրեթէ անանցանելի եղած էր. նոյն ճամբուն վրայ պարտեզի նմանութիւն ունեցող դեռևին մը կար որ Ֆըրըլտաք պահճէսի կը կոչուէր, այս տեղը ճիշդ անուանը յարմար դիրք մ'ունէր. որ որ վերջերը սիրահարայ ժամադրութեան տեղի եղաւ և որուն նման քիչ տեղ կը գտնուի. տեսքը վիսպային տեսարան մը կընծայէր անցորդին.

Սէր ատենները այս պարտիզանման տեղը ծերունի ճգնաւոր մը կը դտնուէր, որուն համար ժողովրդեան մէջ այլ և այլ պրոյցներ կը պատմուէին, թէ դիշերները անոր խրճիթին մէջ երաժշտութեան ձայներ կը լսուէր քաղցր ներդաշնակութեամբ, թէ հրեշտակները ամեն դիշեր կըսպասաւորէին. նաև կը պնդէին թէ ծովուն վրայէն քալելով, Սիւտլիճէն անցնելը տեսեր են. կը հաստատէին թէ մարդու հետ չխօսիր և եթէ ողորմութիւն որուէր ամենևին ձեռք չէր մօտեցներ և մերթ ընդ մերթ կանհետանայ, թերևս կը հալածի, թերևս կը համբառնայ.

Բաւական ժամանակ կար այս ճգնաւորը հալածեր համբարձեր և կամ անհետացեր էր ոչ ոք տեղեկութիւն ունէր անոր այսչափ երկար չերեւնալուն համար. ոմանք կըսէին թէ ուրիշ տեղ մը գացած ըլլալու է և ոմանք ալ իւր տեղը արքայութեան մէջ հաստատած է, և կուզէին որ բունի համոզեն ամենը, բայց ասոնց կարծեացը հակառակ հազար ութն հարիւր յիսուն և իննին սկիզբները մեր ծերունի ճգնաւորը դարձեալ տեսնուեցաւ իր նախկին դժուժ զգեստիւքը և կը շարունակէր հըրաշագործութիւնները,

Սեպտ. ամսոյն մէջ գիշեր մը ցուրտը նուազ պղալի և լուսինը պայծառ ըլլալուն օդափոխութեան համար գիւղացիներն այս վերջին առիթը չսպրելով ձեռքէ վախցունել, դրեթէ ամենքն ալ գոմաւայրերը կը ճէմէին, Զինթի-ասլի բաւական բազմութիւն կար, սիրահարք 4 ամսուան մէջ իրարու բոլորովին մտերմացած ըլլալնուն առանց արգելք մը ունենալու և դիտողութեան մը հանդիպելու՝ կրնային զոյգ զոյգ շրջել. քանիմը զոյգ ալ ֆըրըլտաքի պարտիզին մէջ կը շրջագայէին, հոն անկիւն մը ծառի մը տակ մէկը նստեր էր, որ իւր առանձնութեամբը չհամաձայնելով ճեմողներուն, ստուերաւոր ծառի մը տակ քաշուելով նստած էր։

Ան առեն նոյն ծառին մօտէն երկու հոգի անցան, ընթերցո՛ղ, զոյգ մ'ըսել կուզեմ այսինքն սիրահար և սիրուհի, որոնք ամառուան այսպէս շուտ անցնելուն վրայ ունեցած դժգոհութիւննին իրարու կը յայտնէին, խեղճերը չգիտնալով սիրոյ ժամերուն վաղանցկութիւնը։

— Յուլեխէ, կըսէր աղջիկը, դրաւ կը դնեմ որ սա առանձին նստողը ժամադիր է, մէկու մը կըսպասէ։

— Ա՛, ես անոր դէմքը տեսայ, ծերունի մ'էր։

— Ճղնաւորը չըլլայ, ըսաւ աղջիկը։

— Ա՛յսպիսի հագուստներ ո՞ւմկից պիտի գտնայ, ասկէ զատ՝ անոր համար կըսեն թէ դիշերները մարդու չերեւար։

— Միտքս խորհուրդ մը յղացաւ։

— Ի՞նչպէս։

— Ա՛յդ ճղնաւորին համար կըսեն թէ հրաշագործ է, օր մը դնա տես գինքը, աղաչէ, պաղատէ և ըսէ որ հրաշք մը ընէ, որ հայրերնիս հրաման տայ մեր ամուսնութեանը։

— Ա՛ղէկ մտածեցիր, ըսաւ Յուլեխէ, վաղը առտու գամ գըտնեմ գինքը և ըսածիդ պէս աղաչեմ. ո՜հ, վերջապէս մեր վիճակը կատարուեցաւ, ա՜հ, որչափ բարի ես, հրեշտակի պէս սիրտ մ'ունիս։

— Միթէ վատա՞հ ես այդ ճղնաւորին վրայ որ անմիջապէս առաջարկութիւնդ ընդունի և հրաշքով մեզ ամուսնացնէ, ըսդ-

նաւարը այնպիսի մէկն է որ մարդոց սրտին գաղանիքները գիտէ նման կը կարծէր ։

Մինչդեռ այս երկուքն իրարու հետ խօսելով կը յառաջանային քիչ մը հեռուէն վերարկուով փաթաթած մէկը առնոց խօսակցութիւնը առանց բառ մը կորանցնելու մտիկ ըրած էր . երբոր առնք խօսքերնին ընդհատեցին ,

— Ընտիաներ , մրմնջեց , ես ձեր վերտուրները փետտելով սիտի ղբօսնում , ձեր տառապանքը ինձի հրճուանք կը պատճառէ . այո՛ , ես ճղնաւոր մ'եմ , հրաշադործ , միայնակեաց մը որ բոլոր մարդկութիւնը խաղալիկ մ'է ինձի համար . և քիչ մ'ատեն լռելէն ետքը դարձեալ շարունակեց . Ամիս մը կայ որ Ռուբէնը տեսած չեմ , կուզեմ վազը Իսկիւտար երթալ , բայց այս արդելքը . . . արդեօք Տէրպէնտ ինչ բանի համար վազը ինձմէ ժամադրութիւն կը խնդրէ . այս մարդը թեպէտև շատերը կը զարհուրեցնէ , բայց ինձի վախ չպատճառեր . ահ , խեղճ քոյրս , որչափ վիշտ և տառապանք կրեց անոնց ձեռքէն , ալ թող հանդարտին աճիւնդ , քոյր իմ , եղբայրդ քու վրէժդ կրնայ լուծել , արդէն բաւական տուժած է Տէրպէնտ , ահ , եթէ գիտնայ Ռուբէնին իր զաւակն ըլլալը ։

Բայց երբէք այս բարերաղդութիւնը չպիտի ունենայ , թշուառ երիտասարդ , դու որ քրոջդ և Մարտիրոսին ամուսնական սիրոյն առաջին և վերջին գաւալի պտուղն եղար , ահ , վազը Տէրպէնտի հետ խօսակցելէս անմիջապէս ետքը Ռուբէնին պիտի յայտնեմ , առանց իւր հօրն ով ըլլալն իմացնելու . գանդի ալ ատենն եկաւ յայտնելու որ կարապետ իւր հայրը չէ , արդեօք ինչ աստիճան դժբաղդութեամբ կանցուննէ իւր օրերը , և անշուշտ եմ որ ատակի կարօտութիւն ունի խեղճ զաւակս . Մարտիրոսէն դարձեալ սաակ քաշելու է , առանց կը չգիտեր որ տուած ատակներն իւր որդւոյն համար է , այն երկու ամոլք՝ որ հիմայ հրաշքներուս վրայ կը խօսէին , արդեօք ալ էին . . . վազը Օթուզ-պիր տուին եթէ գան գիտնենք , ծրչափ մեծ պիտի ըլլայ զարմանքնին , երբ իրենց այս դիշերուան խորհածը բացատրելու ըլլամ . տխմար սիրահարք ։

Ա.յսպէս խորհելով սկսաւ յառաջանալ դէպի մայրաւները, և գրեթէ բոլորովին անհետացաւ, համաձայն ժողովրդեան կարծեաց և ոչ հետք մ'անդամ թողլով։

Զիֆթ սուլի բազմութիւնը ցրուեր և գիշերուան ցուրտը տակաւ առ տակաւ սաստկացեր էր։ Լայն վերարկուով վաթսունամեայ անծանօթ մէկը Ֆըրըլտաքի ճամբայէն իջնելով, առագաստայլ սրճարանին պարտէզը մտաւ և դնաց աթոռակի մը վրայ նստաւ։

— Ի՞նչ հրաման ունիք տէր իմ, հարցուց սրճարանին սպասաւորներէն մէկը մօտենալով։

— Տաք բօնճ մը բեր, պատասխանեց անծանօթը։

— Շատ աղէկ ըսելով սպասաւորն հեռացաւ։

Անծանօթն աթոռակ մ'ալ քաշեց և իւր թեւերն տակ առնելով, սկսաւ ըսել ինքնիրեն։ Ամեն տեղն ճգնել չըլլար, քիչ մ'ալ հարուստ աղնուական ըլլանք և միանգամայն քաղաքացի, վանդի այս դիշեր սիրուհիս զիս կսպասէ, չեմ ուզեր ուշ մնալ, և այն թադէոս անուն միմոսը թող կարծէ թէ Շապիկ օրիորդը զինքն ինձմէ վեր կը նախադասէ։

Սպասաւորը բօնճը բերաւ, և ճգնաւորն առնելով մինչեւ կէսը խմեց և յետոյ ոտքի ելնելով, ահ, վերջապէս պէտք է, այո՛ պէտք է դաս մը տալ այն Մարտիրոսին, ալ չեմ կարող հանդուրժել, որ ինձի հակառակորդ կանգնելու պատուոյն արժանանայ, ըսաւ և մնացած բօնճը խմելով՝ ոտակը վճարեց Զիֆթ սուլէն մեկնեցաւ։

ԿԵՂԾ ՀԱՅՐ ՄԸ

Հետեւեալ առաւօտն Ջըրըլսաքի պարտիզին ծայրն ամայի տեղ մը ճգնաւորին հետ Մարտիրոս Տէրպէնտ նստած տաքութեամբ կը խօսակցէին։

— Ա՛ղբարեւ, կ'ըսէր Տէրպէնտ, կը խոստովանիմ որ քոյդ ինձմէ շատ վիշտ կրեց, բայց և այնպէս ես ալ քրոջմէդ նուաղ թշուառութիւն չեմ քաշեր, մտածէ անգամ մը թէ պահակ մ' ունենալ և թէ զայն ամէնեւին չտեսնելու դատապարտուիլ։ ա՛ն և.... բայց ես շատ աղէկ գիտեմ որ միմիայն դու ես պատճառ որդւոյս քաղցր տեսութենէն և հայրական գրկոցիդ զրկուելուս, գիտեմ, դու ղիս չարչարել կուզես քըրոջդ վրէժը լուծելու համար, սակայն՝ ի սէր Աստուծոյ խըղճայ ինձ. տե՛ս արտասուքս, ահաւասիկ երեսանկեալ կը պաղատիմ, մի՛ պահեր ինձմէ իմ զաւակս. լա՛ւ գիտեմ՝ որ եթէ ուղղամած հոգի Սրբուհիս ողջ ըլլար, տեսնելով քաշած տառապանքներս պիտի ներէր ինձ, կաղաչեմ անողոքելի մ' ըլլար, տե՛ս հայր մ' է որ որդւոյն համար կաղերսէ, և որչափ ալ որ ատակ պահանջես, պատրաստ եմ տալու, ուզէ՛, ուզէ՛ որչափ կուզես զաւակս ինձ դարձնելու համար։

— Տուր տուր, ըսաւ ճգնաւորը, բաւական տեղն է ատակ տուած չ'ես. ա՛լ գիտէ թէ խեղճը ի՞նչ վիճակի մէջ է, բայց աղէկ մտքս եկաւ, դուք ինձմէ ժամադրութիւն խնդրեր էիք տեսութիւն ընելու համար, միթէ որդւոյդ համար էր։

— Այո՛, միեպէտև տեսութիւն ընել կուզէի ձեզի հետ, բայց ո՛չ թէ որդւոյս համար, այլ երախայի մը համար՝ որն որ ձեզի պիտի յանձնեմ որ պահէք և ամսական ալ տանեկան ոսկի պիտի ընդունի՛ք որչափ որ տղան ապրի։

— Ո՞վ պիտի երաշխաւորէ ինձ։

— Ես։

— Դո՛ւ, շատ աղէկ ուրեմն ա՛ր է երախան։

— Այս գիշեր իսկիւտար քեղ կը յանձնեմ, ուրիշ գործ մ՚ալ կայ որ ձեր ներկայութիւնը կը պահանջէ։

— Ի՞նչ գործ է այդ։

— Երիտասարդի մը հայր պիտի ըլլաք երկու ժամու չափ։

— Շատ խորագէտ ես Մարտիրոս, վերջը ի՞նչ պիտի ըլլայ։

— Ոչինչ։

— Ի՞նչպէս պէտք է վարուիլ ուրեմն։

— Պետրոս Նաղարօֆ անունով զաւակ մը պիտի ունենաս։

— Զաւկի՜ս... անունը՜... Պետրոսի՜կ... արդեօք ի՞նչ բարի ծաղիկ զաւակ մ՚ունիմ։

— Այո՛, Պետրոսիկ, բարի և առաքինի զաւակ մը որ ա֊ռանց ձեզմէ հրաման առնելու ամուսնացեր է. և այս բանը ձեզի անհաւատալի թուելուն համար անձամբ ստուգել կու֊զէք, և դուք պիտի համոզուիք վերջը ինչը նշանաւորին ներկայ գտնուելովնիդ։

— Այ՛, այ, այ, հիմայ հասկցայ, ամուսնական հաստա֊տուն և անքակտելի կապ մը խզուա՞ծ է։

— Այո՛, կը տեսնեմ որ դուք ալ ինձմէ վար չէք մնար խո֊րագիտութեան մասին, ըսաւ Տէրպէնտ ժպտելով, և ճգնաւո֊րին երեսը նայելով։

— Չեմ յուսար, ըսաւ ճգնաւորը առանց դիրքն ու դէմքը փոխելու, որ ատոր երկու հարիւր ոսկի բաւէ, վասն զի շատ ստուգի կը նատի այդ կապը քակող ո և իցէ մէկու մը։

— Աւելի կուտամ։

— Երբ և ո՞ւր տեղ։

— Այսօր ժամը իննին գատը գիւղ նաւամատոյցին դէմ գտնուող սրճարաններէն մէկուն մէջ։

— Այսօ՞ր։

— Այո՛, այսօր հոն սրճարաններէն մէկուն մէջ Պետրոսիկ զաւակդ ձեզ պիտի տեսնէ և մէկզմէկ ճանչնալու համար առ քե֊զի կարմիր թաշկինակ մը՝ որն որ իրեն ըլլալովը, շուտով պիտի ճանչնաք զիրար ըսելով, կարմիր գոյնով թաշկինակ մը տուաւ ճգնաւորին ձեռքը։

— Ուրեմն, ըսաւ ճգնաւորը թաչկինակն առնելով, այս ե՞ր ե՞կոյ ժամը ուղնուկէսին գաղը դիւղ նաւամատոյին դէմ սրճարանը...

— Այ՛, այ՛, գաղը դիւղ ժամը ուղնուկէսին, ըսելով Մարտիրոս կուզէր մեկնիլ.

— Է՛, այդչափ մ՚աճապարեր, ու՞ր է որդւոյդ համար ըտակ պիտի տայիր։

— Ա՛հ, իրաւունք ունիք, ա՛ռ քսան և ութ հազարնոց կայսերական դրամատան վրայ քաշուած վոխանակագիր մը՝ի տես վճարելու։

— Լաւ, հիմայ կրնաս երթալ, ըսաւ ճգնաւորը։

Երբոր Մարտիրոս հեռացաւ, ճգնաւորն լինքնիրեն խոր֊հելով, հոս բան կայ, ըսաւ, ուրեմն լաւ մը հասկնամ. ուստի նախ պէտք է որ Իւսկիւտար երթամ Ռուբէնը գտնեմ ու վերջը գաղը դիւղ ուղեմ իմ քայլերս, ըսելով ճամբայ ելաւ։

Նոյն օրը ժամը վեց ու կէսն էր. Իւսկիւտար Օէլամըզի սրճարաններուն առջեւ չքեղ հագուած մարդ մը կերթեւեկէր. վերջապէս մէջ տեղը գտնուածներէն մէկուն դառնէն ներս մտաւ ու սրճարանին սպասաւորներէն մէկուն մօտենալով, „Պարոն Ռուբէնը հոս եկա՞ւ, հարցուց։

— Պարտէզը նարտ կը խաղայ, պատասխանեց։

— Իմացուցէ՛ք իրեն որ մէկն եկեր և գինքը տեսնել կուզէ։

— Շատ աղեկ տէր իմ, ըսելով անմիջապէս հեռացաւ. քիչ մ՚ետքը Ռուբէն տեսնուեցաւ ու չորս կողմը դիտելէ վերջն երբ տեսաւ որ իր բարերար ճգնաւորը, (թէ և չէր գիտեր ճգնաւոր ըլլալը) անկիւն մը նստեր էր, բարի եկեր էք իմ սիրելի բարերարս և հայրս, գոչեց, ո՛հ Աստուած ուղղեց քու քայլերդ հոս վասն զի այս օրերը շատ նեղութիւն կը կրեմ ատակի համար և կարծես սատանայները ատակ ժողովել ելեր են, և ոչ մէկուն քով ատակ կը գտնուի։

— Ինծի եղիր սիրելի որդեակ, չարեքաղաքար սատանայները ինձմէ չուզեցին և ես ունեցածս աճապարեցի քեզ բերել, ա՛ռ այս, տասը հազար ղուրուշ է։

— Կեցցես սիրելի և ազնիւ բարեբարս, ըսաւ Ռուբէն այնպիսի գգացմամբ որ սրճարանին մէջ եղողներն սկսան ճըշ-նաւորին և երիտասարդին մէջ եղած խօսակցութեանը ականջ դնել, թէ ի՛նչ նիւթի վրայ է։

Աըդէն յայտնի է ընթերցողաց թէ անարժանի մարդ մը ի՛նչ աստիճան փափաքաւ և ի՛նչ ազդու զգացմամբ տասը հազար ղուրուշի գումար մը կընդունի և այս բանը այս տարիներուս մէջ բնական եղած ըլլալուն՝ կը համարձակիմ ըսել թէ ընթերցողաց մէջ ամենն ալ գգային Ռուբէնին զգացած ուրախութիւնը։

— Սիրելի որդեակ, այդչափ բարձր չխօսիք աղէկ կընէք, ըսաւ ճգնաւորը, տես ամեն մարդ մեզ կը դիտէ։

— Փոյթ չէ լինի, մանաւանդ հիմայ որ տասը հազար ղուրուշ ունիմ, որն որ դրեթէ իմ անկուտիութեանս հետ բաղդատելով այս վայրկենիս պանքէր մ'եմ։

— Ինչ և իցէ սիրելի որդեակ, կուզեմ քեզ քանի մը դաղտնիք յայտնել, բայց հիմայ ժամանակ չունիմ, ուստի կուզեմ իմանալ թէ վաղն առաւօտ քեզ ո՞ր կրնամ գտնել։

— Շէտակն ըսելով այդ իմացնել ուզած դաղտնիքը վաղուան ձգելնիդ շատ սղէկ ըրիք, վասնզի ես ալ գործ ունիմ և այնպիսի ստիպողական, որ եթէ բարեբաղդար նարտ խաղալու բռնուած չըլլայի չպիտի կարենայի ձեզ տեսնալ։

— Լաւ ուրեմն դարձեալ կը հարցունեմ թէ վաղն ո՞ր կըրնամ գտնել ձեզ։

Ներեցէք ուշադրութիւն չընելուս համար ազնիւ բարեբարս. վաղն առաւօտ Բերայ Գայլօնճու գուլլուքի մեծ գինետունը կրնաք գտնել։

— Օրուան քանի՞ երորդ ժամուն։

— Հարկ չէ ժամ որոշել, վասն զի դրեթէ առաւոտընէ մինչև երեկոյ հոն եմ։

— Շատ աղէկ, պատասխանեց ժպտելով ճգնաւորը և ըրճարանէն մեկնեցաւ։

Երբ Ռուբէն մինակ մնաց, էհ, մրմնջեց, եթէ այսօր ալ ե-

ւրկուան պէս Պարան Մարտիրոսի հետ չկարենամ ներկայանալ
իմ ապառնի հարսիս, դարձեալ հոգս չէ, վանդ զի տասը հա-
զար ղուրուշ ստացայ. Թէ և երեկ ալ ստացայ քսակով ոսկին
և միանգամայն սրբեւայրիս կենդանագիրը. այսու ամենայնիւ
այսօրուան տասը հազարը աւելի սղէկ է լինձ քան Թէ երեկ-
ուանը, վանդ զի անոր չեմ կրնար խառնուիլ, բայց այսօր-
ուանը իմ ստակս է ուզածիս պէս կրնամ մսխել, ըսաւ, և
դարձաւ ապառաւորներէն մէկը ձայնեց.

— Է՛ մի կայ հոն.

— Ի՞նչ կը լանդրէք ձեր իմ, պոչեց անմիջապէս ապառա-
ւորներէն մէկը.

— Գնա կառք մը վարձէ և հոս բեր, կևսանաձև գաւազ դնուղ
ալիսի երթամ, շո՛ւտ.

Ապառաւորն անմիջապէս հրամանը կատարել վազեցաւ.

Քիչ մ՚ետքը գեղեցիկ կառք մը եկաւ սրճարանին առջև.
Ռուբէն Թեթեւ ոտամբ մը կառքը ցատկեց, կառավարին
գաւազը գնուղ ըսելով. կառապանն ալ աջը նաւաս մտրակեց ձին
ու կառքը ճամբայ ելաւ.

Ընթերցո՛ղ, տուր ձեռքդ մենք ալ կառքով կամ ձիով և կամ
աւելի սղէկ է կամաց կամաց ցաճկաց դերեզմանատան մէջ-
ջէն քալելով և երբեմն ալ նստելով գաւազ գնուղ Մէօհիւրտարի
գեօղավայրը երթանք.

ԽԱՌԿԱՆԿ

Օրուան տասնեւմէկերորդ ժամն է. Մէօհիւրտարի գեօղա-
տեղին քանի մը եւրոպացի ընտանիք կը ճէմէին. ասոնց ե-
տեւէն Հայ կին մը իրեն երեք տղոցը հետ օդ առնելու համար
դուրս ելած էր, որոնց տուներնին հեռու չէր այն գեօղատե-
ղին. այս տղոցը երկուքը մանչ և մէկն ալ աղջիկ էր.

— Վերոնիկ, ըսաւ ատոնց մէջ ամենէն կայտառ պատանիկը որ Ս.րամ կը՛կոչէին, ևկո՛ւ սա թիթեռնիկը բռնենք և ջաղրեհին տանք, որ ամենէն պղտիկն էր։

— Ա.յո՛ սիրելի եղբայրս Ս.րամ, ըսաւ. ես ալ կը փափաքիմ մեր սիրելի եղբօր Զարեհիկին այդպիսի նուէր մ՚ընել։

— Ուրեմն, վազենք, երթանք, բռնենք։

— Վազենք։

— Տեսնեմ ինձ կրնաս բռնել, ըսաւ Ս.րամ և սկսաւ վազել։

— Բայց կեցի՛ր, ըսաւ Վերոնիկ, չեմ չեմ։

— Բայց ի՞նչու։

— Վանդի ես դեռ չեմ պատրաստուած վազելու։

— Ուրեմն ահաւասիկ կը սպասեմ։

— Ա.յո՛, սպասէ. մինչև որ քեզի մօտենամ։

— Վազենք։

— Վազենք։

— Ես քեզի անցայ։

— Բայց ես դուն նոյնիսկ սիրելիս։

— Հա՛, ահաւասիկ թիթեռնիկ մը, բռնենք, բռնենք։

— Ա.՛հ չարաճճի։

— Ի՞նչ եղար։

— Բռնեցի և փախցուցի։

— Քու փախցուցածդ ես բռնեցի, կեցի՛, հարցնենք թէ ի՞նչու քու ձեռքէդ փախաւ։

— Ա.յն կրնա՞յ խօսիլ։

— Խօսի՛ չխօսի ես պիտի հարցնեմ։

— Ս.րամ Ս.րամ, Զարեհը կուլայ կարծեմ մեզ հեռացանք անոր համար է։

— Ուրեմն երթանք։

— Ա.յո՛ երթանք, արդեօք ո՞րչափ պիտի ուրախանայ երբ իրեն ներկայացնենք այս գեղեցիկ թիթեռնիկը։

Երբ քոյր և եղբայր ցատկռտելով կուգային, հոն ահագին շուն մը գլուխը բարձրացուցած քծնելով դէպի տղոցը յառաջացաւ. տղայք որ բնականաբար շուները կը հեռացը-

նեն, Ս.րամ քար մ՚ առնելով չունին նետեց, բայց չկրնալով քարը կշռել, վանդի մեծ էր, վոխանակ չունին նետելու քիչ մ՚անդին ծառին տակը երկու հոգի նստած էին, որոնց մէկը քահանայ իակ միւսը մեր ճանչցած պ. Տէրպէնան էր, քարը քահանային գլուխն վրայէն անցնելով գնաց Տէրպէնային կուրծքին զարկաւ. և ինքն ալ որնոյն միջոցին սիկառ չունելու զբաղած էր ծունկին վրայ, ձեռուըներուն զարնելով ծխախոտն ու սիկարի թուղթը առաւ մինչև ծուխերը իջեցուց. Տէրպէնտ յանկարծակի եկած ի՞նչ ըլլալն ու ուսկից գալը չտեսնելով երկինք կրնայէր և չունչը դժուարաւ կրնար առնուլ, արդեօք երկինքէ՞ն եկաւ, կըսէր ինքնիրեն, երած չարութեանցս վոխարէն, մէկ մ՚ալ գլուխը մէկդի առնելով տեսաւ որ երկու տղայ կը պատրաստուէին ուրիշ մ՚ալ նետել, վանդի տըղաքն ալ տեսած էին քարին ուր երթալը:

— Շատ աղէկ եղաւ, ըսաւ անդիէն ձայն մը՝ որ արճատան սպասաւորներէն էր:

— Ինչո՞ւ, հարցուց ուրիշ մը:

— Վանդի քսան փարայ տուաւ սուրճին:

— Հիմայ կարծեմ տղուն պիտի զարնէ, յարեց ուրիշ մը:

— Ինչու թէ զարնէր:

— Ի՞նչ կընես, ըսին երկու սպասաւոր մէկ բերան:

— Ի՞նչ կընեմ, կը հարցնէ՞ք, ես ալ կը բռնեմ գինքը ծուխը կը գլտորեմ, ըսաւ արճարանը վարձողը:

— Հա՛, հա՛, կարծեմ պիտի զարնէ, ըսաւ:

— Էյ, ի՞նչ կուզես տղոյմէն, հարցուց արճարանը բռնող մարդը:

— Ի՞նչ պիտի ընեմ, ըսաւ Տէրպէնտ, չտեսա՞ք կուրծքիս քար նետելը:

— Էյ ի՞նչ կըլլայ, պատասխանեց սպասաւորը:

— Ի՞նչ կըլլայ:

— Ա՛յ ի՞նչ կըլլայ, տղայ է ըրաւ:

— Էյ իրաւունք ունիք, տղայ է, ուրեմն ամեն բան նե՛րելի է:

— Այո՛, այո՛, յարեց ուրիշը։

Տէրպէնտ հասկնալով որ տղոց բան մը չպիտի կրնայ ընել, առանց խօսելու եկաւ դարձեալ տեղը նստաւ. արդէն տըղայք ալ իրենց մօրը քով հասեր էին։

— Համբերելու է, ըսաւ քահանան, աներեւոյթ վորձուելիւն կըսեն ատոր։

— Այո՛, պէտք է համբերել, ըսաւ Տէրպէնտ, և սկսաւ մտածել։

Այս միջոցին քահանան շարունակ ծոլը կը դիտէր մտածմունքով զբաղեալ, քահանան կը մտածէր որ իւր խաբէութեամբը հարիւր ոսկի պիտի չահէր, իսկ Մարտիրոսի մտածմունքը այն էր որ վերջապէս կարող եղած էր յաջողիլ իւր հըպատակութեան մէջ։ Բաւական ժամանակ անցաւ այսպէս առանց խօսակցութեան։

— Պետրոս դեռ չեկաւ, ըսաւ Տէրպէնտ լռութեան կապը խզելով, արդեօք կրցա՞ւ համոզել։

Քահանայն որ հարիւր ոսկւոյ մտածութեամբ համակեալ էր, չլսելով Մարտիրոսի խօսակցութիւնը, ինձ կը ծնայ ըսաւ, երկուքին հաւանութիւնը առնելով պատրիարքարան տանիլ և հրամանին բերել։

— Ես հարիւր ոսկին։

— Ատուած պահէ զքեզ որդեակ, դիտեմ ըսաւ, մէկ մ'ալ հեռուէն նազարօճ երեւցաւ, մէկէն Տէրպէնտ դիմաւորելով, ի՞նչ ըրիր, հարցուց։

— Համոզեցի, պատասխանեց։

— Գոհութիւն Ատուծոյ, դոչեց քահանան, և Մարտիրոսի դէմքին վրայ յաղթութեան ժպիտ մ'երեւցաւ։

— Հիմայ գնա՛ նաւամատոյցին վրայի սրճարանը նստէ և քու կարմիր թաշկինակդ որու ձեռք որ տեսնաս, նա քու հայրդ է, մէկտեղ տուն գայէք, մեզ ալ հիմայ կուգամք։

— Շատ աղէկ, ըսելով մեկնեցաւ Պետրոս։

Այս առեն էր որ կառք մը գալով կայնեցաւ. Տէրպէնտ եկաւ տեսնել թէ ո՞վ է մէջինը, և տեսաւ որ Ռուբէն կառքէն

վար ցատկեց, «Ահաւասիկ վեհան այս է, ըսաւ Մարտիրոս զանի քահանային ներկայացնելով։

Ռուբէն քաղաքավարութեամբ քահանային ձեռքը համբուրելով և Տէրպէնտի ալ խոնարհութիւն մը ընելէն վերջը՝ աթոռակի մը վրայ նստաւ. (չմոռնանք ըսել նաեւ ուրախ ժպիտով մը քահանային՝ Աստուած օրհնէ, սրբեակս, ըսելով աթոռին վրայէն շարժում մը ընելը). և սկսան զանազան նիւթերու վրայ խօսակցիլ. և որովհետեւ այն օրերը Պօլսոյ գլխաւոր խօսակցութեան նիւթ եղած էր ոսկւոյն բարձրանալը, հոս ալ սկսան նոյն նիւթին վրայ ճառել։

— Իմ կարծիքս այս է որ՝ ոսկին այս ընթացքը չկրնար շարունակել, ըսաւ Ռուբէն։

— Իրաւունք ունիք, յարեց Քահանան, վասն զի եթէ ատանկ երթալու ըլլայ, դրամագլուխները մէկ տարի չեն բներ։

— Այդպէս կը կարծէք, պատասխանեց Ռուբէն այլայլելով. վասն զի տասը հազարի դրամագլուխ ունէր և սկսաւ մըտածել։

Քիչ մ'ատեն լռութիւնը տիրեց։

— Հօ... ըսաւ Տէրպէնտ ժամացոյցը նայելով. ինչ քաղաքավարի կ'անցնի տէր հայր, եթէ կը հաճիք՝ կամաց կամաց քայլերնիս ուղղենք դէպ 'ի տուն։

— Շատ աղէկ, օրհնեալ զաւակս, ըսաւ Քահանան։ Ոտքի ելան և ըմպելեաց տուակը վճարելով սկսան երթալ։

Ճամբան Քահանան և Մարտիրոս Տէրպէնտ քով քովի կերթային. իսկ Ռուբէն խոր մտածութեանց մէջ ընկղմեալ սկսաւ նոյ անոնց կը հետեւէր, թէև երբեմն կանգ կառնուր և կուզէր հեռանալ, բայց հինգ հազար ոսկին միտքը գալուն պէս՝ քայլերը խոչընդոտել կը հաններ անոնց։

ՆՇԱՆՏՈՒՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՍ

Նազլուօֆ, ժամն ուղն ու կէսին ճգնաւորը դառը և ա-
նոր ինչ ընթացքով վարուելը պատուիրելէ վերջը խոյն ինքը
տուն դառնալով, Մաքրուհին համոզեր էր խաբելով անոր՝ թէ
հայրը իրենց ամուսնութիւնն իմացած ըլլալով, ժառանգութենէ
զրկելու սպառնալիքներ ըրեր է, ուստի ինքն ալ ժառանգու-
թեան մասնակից ըլլալու համար, հայրը խաբեր է. ըսելով թէ
Մաքրուհի այսօր երիտասարդի մը հետ պիտի նշանուի և եթէ
չհաւատար, ինքն անձամբ կրնայ ներկայ գտնուիլ հանդէսին.
այսպիսի վարպետութեամբ հայրս խաբելու համար կըսէր խոս-
տովանահայրս համոզելի և մտերիմ բարեկամներէս մին ալ յանձն
առաւ կեղծեօք քեզի հետ նշանուիլ, քեզ տեսնելէ սիրելիս
զգուշացիր որ այս խաղը դու ալ քու կողմէդ անթերի կատա-
րես, վասն զի մեր երջանկութիւնն այսօրուընէ կախեալ է, եթէ
այսօր հօրս ներկայութեանը աղէկ վարուելու ըլլամք. խեղճ
Մաքրուհին ատոնց ամենուն ալ հաւատալով խոստացեր էր նա-
զարօֆին ըսածներուն համեմատ վարուիլ։

Պետրոս Նազարօֆ իր խոստմանը համեմատ, օրուան ու-
թերորդ ժամը հազիւ քանի մը վայրկեան անցած, ճգնաւորին
հետ Մաքրուհիի բնակած տունն եկան, որն որ թշուառը առանց
գլխուն գալիքը գիտնալու սիրով ընդունելութիւն մ՚ըրաւ։

— Ներեցէք օրիորդ, ձեզ կը ներկայացնեմ ո. Գէորգ իմ
աղնիւ և մտերիմ բարեկամներէս մին, որ ձեր նշանտութեան
հանդէսին ներկայ գտնուիլ կը փափաքի, ըսաւ բարձրաձայն
Նազարօֆ, և կամաց մը հայրն ըլլալն իմացուց, տանը բակը
կայնած։

— Շնորհակալ եմ պարոն, ըսաւ Մաքրուհի, որ աղջիկ-
նի տեղ բարեկամ մ՚աւելցընելու շնորհքն ըրիք ինձ, ակնար-
կով մը արդէն հասկցած ըլլալն յայտնելէն վերջը, բայց ինչո՞ւ
հոս կեցած ենք, հրամայեցէք վեր ելլենք, ըսելով առաջնորդեց
զանոնք ընդունելութեան սրահը։

— կարծեմ տակաւին ո՛չ ոք է եկած, ըսաւ ճգնաւորը։

— Այո՛, պատասխանեց Մաքրուհի, նախ և առաջ ձեզ ընդունելու պատիւն ունեցայ։

Մէկ մ՚ալ տանը դրան բաղխման ձայնը լսուեցաւ, որ անմիջապէս բացուելով, Մարտիրոս, Բահանան և Ռուբէն տանդուղքին վրայ տեսանուեցան, իսկոյն Մաքրուհի քովի սենեակը քաշուեցաւ, և երբ հիւրերը ընդունելութեան սրահին դրան առջին եկան, Մարտիրոս ակնածութեամբ դրանն առջեւ կենալով Բահանան ներս հրամցուց, ետեւէն Ռուբէնն և վերջէն ինքը ներս մտաւ։ Հոս երբոր ճգնաւորը Ռուբէնին աչքին հանդիպեցաւ, ա՛ պ. Ամբակումը հոս, դոչեց և ճգնաւորը նոյնպէս ա՛ պ. Ռուբէն դուք հոս, բայց բաղմականներէն անտեսանելի ճգնաւորին և Ռուբէնին մէկմէկ տեսնելնուն զարմացումը, և սկսան ծանրութեամբ նստիլ իւրաքանչիւր ոք իր կարգին, քիչ մ՚ետքը Պետրոս դուրս ելնելով Մաքրուհին ընդունելութեան սրահը բերաւ, որն որ սկսաւ Բահանան տուրբական հարցումներն ընել։

— Քանի՞ տարեկան ես աղջիկս։

— Քսան և հինգ, պատասխանեց Մաքրուհի, դած ձայնով։

— Իսկ փեսան, քանի՞ տարեկան է։

— Նոյնպէս քսան և հինգ, պատասխանեց ձայն մը, որ աւելի տէրպէնտինը կը նմանէր։

— Մէջերնին լանամութիւն կայ թէ ո՛չ։

— Ո՛չ, ո՛չ, ամենը մէկ բերան։

— Երաշխաւոր կըլա՞ք։

— Այո՛, այո՛, միաբերան։

— Աստուած կատարեալ երջանկութիւն տայ։

Եւ վան խաչի քո. . . . . .

Պահպանիչ Քրիստոս Աստուած մեր . . . . . .

. . . . . .

Այս միջոցին Մաքրուհի դուրս ելած էր և ամենն իւր տեղը դարձեալ նստելով սկսան խօսիլ, բայց ՚ի Ռուբէնէն և այնպէս քիչ մը առեն խօսքերնին չարունակելէն վերջը, Մարտի-

րոս ատքի եղնելով կարծեմ ալ դարձ մը չունինք հոս, ըսաւ։

— Այո՛ դարձերնիս լմնցաւ, բայց ինչու կաճապարես։

— Ո՛չ, երթանք։

— Ին՛չ, ուրեմն երթանք, ըսին, և Քահանան Ռուբէնը հետն առնելով, ուխտատան տարնէն։

Ճկնաւորը կուզէր այս պատանւոյ թախանձել, վասն զի իւր քեռորդւոյն խոխոջուն մը մէջ տպիլը կը տեսնէր, կուզէր ժամառաջ Ռուբէնը տեսնել, ուստի Նազարօֆին դառնալով, վտահ եղիք իմ վրաս այն դարձին նկատմամբ, ինչպէս որ ես ձեր վրայ կատարեալ վստահութիւն ունիմ։

— Հիմակս հոգիս ձեռքս առած կը նետէք, ըսելով ուխտեցաւ։

— Ո՛չ օրհնեալ ե Ըստուած, դարձը Նազարօֆ, վերջապէս եղաւ, հոգիդ հանգստանիք մ՚ալ տեսնելուն պէս՝ ալ բոլոր ստացուածքն իմն ալ քեզ եղայ և այն ատեն հարկ կ՚ըլլայ վախնալ։

— Ես ալ պէտք չ՚ունիմ իմ թերս, հարցուց Մաքրուհի, իսկ բարեկամիդ որ ինձ հետ նշանուեցաւ, պէտք գոպիոյ ծխծաղը, եթէ հարանիքն ալ այսպէս վարպետութեամբ լմնցուննենք, այն ատեն բոլորովին երջանիկ պիտի ըլլանք. այնպէս չ՚։

— Եւ դու հաւատ չէիր ընծայեր իմ խօսքերուս, մանաւանդ թէ կը կասկածէիր որ օր մը գլուխ պիտի ապականեմ։

— Ներէ սիրելիս, այն ուրուականը գիս խաբեց, ըսաւ Մաքրուհի։

— Սակայն դու ամենեւին չէիր մտածեր թէ ինչպէս կրնայ ըլլալ որ ես հոս մառանին մէջ մտրդ մը բանեցնեմ, արդէն դու անձամբ ներկայ էիր այն երկու խեղճերուն պատմութեանը որ կըսէին թէ այն ուրուական կոչուած մտրդն ու երիտասարդ մը գերեզման բանտարկեր էին. ես այն ատեն ալ ըսի որ այն անծանօթ ուրուականը գեղ սերտահարելով երեն գործակից առեր այն երիտասարդն որ համոզելով այս տունէն հանեն գլուխը ինչպէս որ այն ատեն դու ալ պատմեցիր ըսելով թէ շատ տախտերը են գեղ որ հեռուէնին երթան, բայց տեսնելով գու չը համոզուիր ձեզ ծառայելու համար բերած ապացոյցս և անոր ընկերը

ճառանը բանտարկելուվ առեր գալեր են այնպէս չէ՞։

— Այ՛։

— Բայց ես այ պատճառ պիտի չգնեմ և իմանամ, սակայն քիչ մ՚առեն պէտք է համբերել որ լաւ մը վերահասու ըլլամ, կը սեմանամ որ ես այնչափ դիւրահաւատ չեմ, որչափ որ դու։

— Ո՛հ, ծէր Ստուած այս ինչ տոկտուի բան է։

— Այ՛, ոչ միայն տոկտուի այլ և քաղաքական ոճիր մ՚է։

— Ա՛հ, կաղաչեմ Պետրոսիկ ալ դիս մինակ մի թողուր, բսաւ Մարքուհի աղերսանօք։

— Բայց ալ վախնալու բան մը չեկայ սիրելիս, մանաւանդ թէ ամեն բան խնայած, դու անհոգ ըլլալ երկիւղներդ մաքէդ հանէ, քիչ օրէն բոլորովին երջանիկ կըլլանք, բայց պէտք է մեր այս խաղը լրտպէս հաւտայնելու համար, հօրս քովը երթամ, համբերութիւն սիրելիս, համբերութիւն, անով է թթենւոյն տերեւները մէտաքսէ կերպասներ կըլլայ, համբերութիւնը ամեն բանի կը յաղթէ, սիրտդ մի հատցներ, ամիս մ՚ալ, ամեն բան կը լմննայ, ատոր հիմակու հիմայ մնաս բարեաւ, ամիս մը շատ չէ շուտով կը լմննայ։

— Բայց կաղաչեմ՝ի՛ սէր Ստուածոյ . . .

— Ինչ ընեմ սիրելիս, բսաւ Պետրոս կեղծ ցաւ մը ցուցնելով։

— Ա՛հ, քիչ մ՚առաջ ինքզինքս երջանկութեան գագաթը հասած կը կարծէի, իսկ այժմ ան թշուառութեան խոր անդունդը գլտորել, ան ծէր իմ Ստուածդ, ինչ անտանելի ցաւ ըսելով. երեսն վրայ լնկաւ։

— Մնաս բարեաւ, բսաւ Պետրոս գոյն վերցնելով, Մարքուհի պէտք է այսպէս վարուիլ, սպասելու ատեն չունիմ, քիչ մ՚ետքը դրան գոցուելուն ձայնը լսուեցաւ որ Մարքուհին արտասուքն ու տոկտումը առ առաւելն կրկնապատկեց, քանի՛ անգամ որ կը յիշէր միայնութիւնը, կը սարսռէր և կարծես զգայում մը շարունակ կըսէր սրտէն, թէ նաղարօֆ գլխէդ կը խաբէ, թէ անոր բոլոր խօսքերը կեղծ ու պատիր են, թէ աւելի ուրուականը բարեկամ է քեզ քան թէ նա, բայց Մարքուհի այն օր-

ուան նշանաւոր արարողութենէն և պետրոսի խօսքերէն կար-
ծես հմայեալ բոլոր այս խորհուրդները վանել կուզէր մտքէն,
ինքզինքն մխիթարելու միակ միջոց, իւրովի կըսէր, թէ ինչ
որ ըլլայ և ինչ որ հանդիպի պէտք է տանիլ, ճակատագիրն
անուանելով։

ԽԱՐԴԱԽԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԽԱՐԴԱԽՈՒԹԻԻՆ

Հմայ դանք մեր Պ. Տէրպէնտին, որ քիչ մ'առաջ Ռոբէ-
նը հետ առած տունէն մեկներ էր։ Անկէց վերջը ճգնաւորն
ալ իւր հրաժեշտի ողջոյնը տուեր և առանց նշմարուելու Պ.
Տէրպէնտի կը հետեւէր. և երբ նաւահանգիստը մօտեցան,
Ռոբէն քահանային և Տէրպէնտէն զատուելով, աղբիւրին առ-
ջև կեցաւ ջուր խմելու պատրուակաւ։ Քահանան և Տէրպէնտ նա-
ւակ մը վարձելով դէպի Գումգափու կերթային. երբոր նաւը
բաւական հեռացաւ, Ռոբէն հոն գտնուած արճարաններէն
մէկը մտնելով սկսաւ խորհիլ, ճիշդ այս միջոցին էր որ ճգնա-
ւորը դրանը մէջ տեսնուեցաւ, Ռոբէն զարմանօք զայն կը դի-
տէր և չէր համարձակեր բառ մ'արտասանել։

— Ինչո՞ւ այդպէս ապշած կեցեր ես, ըսաւ ճգնաւորը,
Ռոբէնին մօտենալով։

— Ա՛, պարոն բարերարս, դո՞ւք էք, ներեցէք, չիտակն
ապշութեանս դլխաւոր պատճառը դուք էք։

— Ե՛ս, զարմանալի էք պարոն։

— Ա՛յո՛, դուք։

— Ինչո՞ւ, ինչ բանի։

— Ձեզ այն տանը մէջ տեսնելուս համար։

— Դուն որ ինձմէ ապագայ ամուսնութիւնդ կը պահէիր, ուղեցի անձամբ ներկայ գտնուիլ դէթ նշանտուութեանդ հանդիսին, բաւ ճգնաւորը, ժպտելով։

— Ներեցէք, աղնիւ հայրս, ըսելով շարունակեց, թէ կուզէի ամեն բան կարգի դնելէ վերջը ձեզ իմացնել։

— Շատ աղէկ, հիմայ որ ամեն բան կարգին է, կրնաս ինձի իմացնել, օն, պատմէ տեսանենք։

— Սհատասիկ երկու խօսքով ամեն բան իմացնեմ, այս կինը որբեւայրի է, պ. Մարտիրոս առաջարկեց որ եթէ այն կընոջ հետ ամուսնանալ ուզեմ, հինգ հազար ոսկի օժիտ պիտի ընդունիմ, կը տեսնէ՛ք տէր իմ որ չկրնար մերժուիլ այսպիսի առաջարկութիւն մը, թէև երբեմն յիմարական նշաններ կը տեսնուէ եղեր վրան, բայց այն ալ դարմանուելով կարծեմ կրնայ անցնիլ, այնպէս չէ՞։

— Ե՛րբ պիտի առնես առաւնները, հարցուց ճգնաւորը՝ քիչ մը մտածելէետքը։

— Կէսն այսօր կամ վաղը, իսկ միւսգեալը հարսանեաց շաբաթ երեկոյ, այսինքն ամիսէ մը, պատասխանեց Ռուբէն, ուսերը վեր առնելով։

— Հիմայ ինծի նայէ, բաւ ճգնաւորը, բաւական խորհելէ վերջը, այս կինը որբեւայրի չէ, անոր ամուսինը ես կը ճանչնամ որ դեռ կենդանի է։

— Ի՞նչ կըսես, բաւ Ռուբէն զարմանքով։

— Այ՛, կենդանի է, յարեց ճգնաւորը, ասոնք քեզ խաղ մ՚ընել կուզեն, ուստի հիմայ որ ես այսչափ լմացայ կարող եմ այս խաղը զաւեշտ մ՚ընել, ու իրենց ներկայացնել տալ և ինքզինքին այս խաղէն արտադրած որոգայթին մէջ ձգել. նախ դուն ամենեւին բան մը չդիտնալ ձեւացնելով՝ հինգ հազար ոսկին ձեռք անցուր, վերջը տեսնեմք ինչ կընեմք։

— Բայց ատիկայ ինծի անհաւատալի կը թուի։

— Հաւատա ինձ, վերջը չես պղջար, թէպէտ ես վաղը կուզէի գաղանիք մը յայտնել քեզ, բայց կը տեսնեմ որ դեռ ատենը չէ, պէտք է որ մեկնիմ, ուստի կը խնդրեմ

որ այս ամուսնութեան խնդիրը մարդու չըսես։

— կը խոստանամ։

— Եւ ան չի խակ մտերիմ բարեկամդ։

— կը խոստանամ։

— Մանաւանդ թէ այնպէս վարուէ, որ ամիսէ մը պիտի ա֊մուսնանաս դու այն կնոջ հետ և բոլոր բարեկամդ հրաւա֊րակէ։

— Շատ աղէկ, բայց այս ի՞նչ գաղտնիք պիտի ըլլայ։

— Վերջը պիտի իմանաք, եթէ պատուէրներս մի առ մի կատարել չդժկամակիս։

— Այո՛, պիտի պահեմ և ո՛չ բարեկամի մը անգամ պիտի իմացնեմ ձեր ինձ յայտնած գաղտնիքը, և ահա պատուոյս վը֊րայ կերդնում։

— Ուրեմն ճնաք բարեաւ, կրկին տեսութիւն։

— Այո՛, կրկին տեսութիւն, երթայք բարեաւ, ըսելով զատ֊ուեցան իրարմէ։

— Ջմուռնաք բաժնս, բաւ ճգնաւորը քիչ մը հեռուէն։

— Ո՛չ, ո՛չ, պօռայ։

Ալեքսէյ է հոս բացատրել Ռուբէնին զարմանքն այս գաղտ֊նեաց վրայ, որ ճգնաւորը մէկը յայտնեց և մեւսը չէր ուզեր յայտնել։

ՐՈՒՄԷԼԻԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Բարեկենդանի վերջին գիշերը, Ռերայի մեծ փողոցը դի֊մակաւորներով լցուեր էր։ Ընդզիայի լորտեր, անարծաթ բըր֊ժիշկներ, գիւղացի աղջիկներ, որոնց պեխերը դիմակնուն տա֊կեն կերեւէր, հնաւաճառ Հրեայներ և տաճն և հինգերորդ

պարէն վինչեւ տան և ուխերտդ դարուն վերջերը, Ս.րեւելք դրծածուած տձեւ հագուստները, անճառնի վակեղները և անտանելի բաթատոյաւորներով զարդարուած անձինք խումբ խումբ եղած, իրարու կերպ կերպ մխիթարութիւններ կընէին. ատոնց կը հետեւէր տղոց խառն բազմութիւն մը, իրաքանչիւրին ձեռքը տասը քսան և երբեմն երեսուն լիմոնի կեղեւներ բռնած, որոնք մերթ ընդ մերթ դիմակաւորներուն վրայ կը տեղացընէին, եօ՜հա՛, եօ՜հա՛ մասիւրա գոչելով ահագին աղաղակներով օդը կը թնդացնէին.

Հոն լման կանայք իրենց պչրանքներուին երիտասարդաց կը մօտենային, և քանի մը հրապուրիչ խօսքեր գլտորցնելով՝ ղոյղ ղոյղ կանհետանային. աւր ծիծաղներ, անլուր հայհոյութիւններ, գոռում գոչում, վերջապէս ճշմարիտ Բաբելոն մըն էր, հոն մեր ամենէն խելացի պարոնիկներն անխելք և ամենէն հառուտաններն աղքատ ըլլալու կը դատապարտուէին:

Ս.ղա-ճամի մօտ ախուռ մը վրայ կը բարձրանայ Րումէլիի պարապարահը, որուն դուռը դաբնիներով զարդարուած և քանի մը տղաք յաճախորդաց կոշիկները մաքրելու համար պատրաստ կսպասէին, դրան ներսի կողմը պզտիկ սենեկի մը մէջ, պատերէն վարձու պարալօդիկներ կախուած և անկիւնը սեղանի մը վրայ ծախու ծաղկէ փունջեր կը կենար. բազմութիւնը հետզհետէ այս սենեակը կը դիմէր, որոնք տոմսակին առնելով պտուտակաւոր սանդուղք մը վեր կելնէին որ անմիջապէս պարարտը կը տանէր, ալ հոն այս երեւոյթները բոլորովին կերպարանափոխ կըլլար:

Կիները իրարու եռեւէ կը վազէին, մէկզմէկու խօսք կը նետէին, աղաչանք, սպառնալիք, հեգնութիւն, լայ, խնդում վերջապէս ալեկոծեալ ծովու կը նմանէր, ոմանք կը ցաւակրէին, ոմանք բոլոր ունեցածը խաղի տուեր խամճ գինւոյն ստակին վրայ կը կռուէին, որը իւր տարփածուն ուրիշի մը հետ պարելը կը դիտէ և կատաղութիւնը զսպելով անտարբեր կենալ կը ջանար. մէկ մ'ալ ժամը հինգ զարկաւ, արշաւասպարը պիտի ակի գոչեցին, ամենքն ալ ոտքի ելան և սկսան իրենց համար

ընկեր գտնել. մէկ մ'ալ դիմացի անկիւնէն երիտասարդ մը բարձր ձայնով կը պօռայ, Ընթերքա՛ կերդնուամ որ քեզի հետ պիտի խաղամ և ուրիշի հետ չը պիտի թողուամ որ պարես։

— Այդ անկարելի է ուրիշի խոստացած եմ, պատասխանեց։

Այս միջոցին սրահին դրան մէջ բարձր ծիծաղներու ձայներ լսուեցան, բազմութիւնը հոն մտեննալով տեսնուեցաւ որ Սատանայի կերպարանք մտնող մէկը Հրեշտակի հագուստ զգեցողի մը հետ կը վիճէր, ներքնի մեղքեր ունեցող յանցաւորի մը վրայ այս ծպտեալ մեղաւորը, տակաւին մերթ Սատանային կողջէր և մերթ Հրեշտակին, դիտաւթիւն, դիտաւթիւն ըսելով, ձեռքերը կը համբուրէր, որուն կեղծ սպիտակ մօրուսը մինչև կուրծքը կը ծածկէր, գարձած բոլոր մեղքերը հագուստին վրայ գրուած, ամենքն ալ կարդալու կարող էին։

— Թէպէտ և ներքնի են այս մեղքերը, բայց շատ ըլլալուն համար պէտք է որ անմիջապէս դժոխք տանիմ, կըսէր պնդելով Սատանան և կը յաւելլնէր թէ այս չարաճճին դիտմամբ գործած ներքնի մեղքեր որ քաւարան երթալով թողութիւն գտնէ, ուստի, քանի որ ատոնք գիտնալով կը գործէ, ըսել է դժոխքի արժանի մեղաւոր մ'է։

— Թշուառական, գոչեց Գաբրիէլ Հրեշտակ որոտընդոստ ձայնիւ մը, Սատանան երեք կանգուն յետս ընկրկելով կռնկին վրայ բռուեցաւ, և յետոյ խօսքը շարունակելով, մեր դասուն կանոնագիրքը այսպէս գրուած է որ ներքնի մեղք գործող ո՛և իցէ անձ ըլլայ, այր և կին, պատանի, երիտասարդ, ծեր և մանուկ ամենքն ալ քաւարան պիտի երթան, ուստի մենք քեզի համար կանոնագրքին մէջ յօդուած մ'ալ չենք կրնար աւելցնել։

— Եղբայր, ըսաւ Սատանան, տեսնելով որ անկարելի է համոզել Հրեշտակը, մեղմ ձայնով վիճաբանային ակնածութեամբ, այս մարդուն մեղքերը մէկ մ'ալ աչքէ անցունեմք վասն զի ես լաւ մը չկրցի կարդալ։

— Այդ ուրիշ, պատասխանեց Հրեշտակ, իրաւունք ունիք

մէկ մ'ալ տան ալ աչքէ անցուներ, ըսաւ, և հրամայեց որ մեղաւորը պատուհասեն, իսկոյն մեղաւորը գետինը տարածեցին և սկսան մեղքերը վերատին կարդալ։

ՄԵՂՔ ԱՌԱՋԻՆ

«Հազար ուղիը հարիւր քառասուն, մայիս տասն և չորս հինգշաբթի լուսնալու չորեքշաբթի դիշեր, ժամը վեցին տասնեներն անկողնոյն մէջ մտքէն անցեր է այս խորհրդածութիւնները, թէպէտ և ինքը մտքէն վաներ ուզեր էր, աշխարհիս վերակիչը, մի հօտ և մի հովիւ հրամայած է, ինչպէս որ աւետարանչէք ալ մի և նոյնը կաւանդեն մեզ. բայց Պապերը, կաթողիկոսները, Պատրիարքները, Եպիսկոպոսները, վարդապետները և քահանաներն Աւետարանին դիւրըմբռնելի և վեմ օրէնքները ուզածնուն պէս մեկնելով՝ քրիստոնէութիւնն այսչափ ճիւղերու պատռակտեր և օտար կրօնքներու միջեւ անդամ կռապաշտից որոնք քարէ, փայտէ, և զանազան նիւթերէ շինուած կենդանիներէ աստուածներ են, որ մեր տուրբ հաւատքը զանոնք տեսնելն անդամ կարդիլէ», անոնց առջեւ երկրպագութիւն ընող անմիտ ժողովրդոցն իսկ խնդալու առիթ տուած են»։

— Հիմայ սիրելի եղբայր, հարցուց Սատանան, այս մտածութիւնները ներելի՞ են, միթէ ասանք մեծ մեղքեր չե՞ն. ասոնք մեր երանելի և տուրբ հայրապետաց մեկնութիւնները ջրել չէ՞։

— Այդ այնպիսի խնդիր մ'է որ տակաւին մենք ալ չեմք դիտեր և այսպիսի մտածութիւն մ'ալ, մանաւանդ թէ ակամայ, այս մարդուն համար ներելի է, ամեն մարդ շատ բաներ կը մտածէ, ըսաւ Գաբրիէլ Հրեշտակ Սատանան ծաղրելով, և ամենքն ալ սկսան բարձրաձայն խնդալ։

— Շատ աղէկ, պատասխանեց Սատանան։

ՄԵՂՔ ԵՐԿՐՈՐԴ

« Հազար ութը հարիւր քառասուն երկուք սեպտեմբեր չորս շաբաթ գիշեր որ կիրակի պիտի լուանայ, ժամը մինչեւ տասնեւմէկ թուղթ կը խաղան, հետեւեալ առտու քաղնիք երթալու համար, այս մեղքին ես ալ քեզի հետ նիրելի է կըսեմ, բայց առաւօտուն քաղնիքէն վերջը ինչ կերթան, ժամանակ անցնելու համար, ժամը ութին ատեններըը պարտատէրին մէկուն հանդիպելով անպատիւ տուն մը կը մտնէ վախուն, և այն գիշեր մինչեւ լոյս զբօսնելով, առանց բան մը վճարելու փախեր է։

— Ա՛սոր ի՞նչ պիտի ըսես բարի հրեշտակ եղբայր, հարցուց սատանան։

— Ա՛յդ մեղքն ատակ տուողին կը վերաբերի, պատասխանեց հրեշտակ. վասնզի մեծ մեղք գործած պիտի ըլլար եթէ պարտատէրին չունիմ ըսեր, ըստ որում՝ նոյն օրը բաւական ալ ատակ ունէր քովը, բայց իրենը չընելուն համար այս ընթացքը բռներ է և եթէ հատուցանելու ըլլար անհաւատարիմ պիտի գըտնուէր ասանդ մը, որ աշխարհիս վրայ անները լի մեղքերուն առաջինն է։

— Շատ աղէկ, ասոր ալ համզուեցայ, ըսաւ սատանան և շարունակեց։

ՄԵՂՔ ԵՐՐՈՐԴ

« Հազար ութը հարիւր վաթսունը եօթնին կին մը համոզեր է, քեզ կառնեմ ըսելով, և վոխանակ կնկանը, խեղճին երկու հարիւր ոսկին առեւանգեր է։

— Ի՞նչ պիտի պատասխանես, Պարոն Հրեշտակ, ըսաւ Սատանան։

— Թեպէտև այն ատեններն ըսուեցաւ թէ այդ մեղքը պ. լին կը վերաբերի, յարեց հրեշտակ, սակայն եթէ այս ալ գործած ըլլար ներելի էր, վասնզի աշխարհիս տէրտղը ոսկին է, և ա-

րոլհետեւ բնական եղած է ամեն մեծերու ներկայանալու և անոնց համարումը դրաւելու համար միջնորդի մը պէտք է դի-մել, ուստի այս մարդն ալ ոսկին իրեն դրաւելու համար որ աշխարհիս մէկ մասին տէրտէրն է եղեր, այն կենդանը միջնոր-դութեանը դիմեր և ոսկին իրեն դրաւեր է . . .

— Դադրեցուր վատաբանութիւններդ, ասոր ալ համոզուեցայ, բայց Սատանան և ատր ծիծաղ մը արձակեց ըսելով, ծն տեսանենք, եթէ ասոր ալ ներելի է ըսես։

— Սպասաւոր, մեզի գինի բեր, գոչեց։

— Անգլիի աշխարհի գաւառն երեք գինի բեր, պօռաց սպա-սաւորը իր օգնականին։

— Ի՞նչ է այն, տեսանենք աններելի մեղք ըսածդ, հարցուց հրեշտակ անհամբերութեամբ։

— Լաւ մի՛ դրէք ըսելով, սատանան սկսաւ կարդալ այս-պէս։

ՄԵՂՔ ՁՈՐՐՈՐԴ

«Անցած ամառ գլխուն տան և վերց տարեկան մատաղ օ-րիորդի մը հետ պատկուիլ ուզեր է, առանց իւր տարիքին ան-համեմատութիւնը նայելով՝ որ ութսուն և հինգն անցած է»։

— Ես հազիւ յիսուն տարեկան եմ, դուք իմ մօրուքիս ճերմկութեանը մի՛ նայիք, թշուառութենէս ծերացած եմ, գո-չեց մեղաւորը, Սատանային խօսքն ընդհատելով։

Ա.յս միջոցին սպասաւորը գինիները բերած էր։

— Կեցցէ Աբքայութիւն, գոչեց Հրեշտակ, գինին գաւա-թին մէկն առաւ և՝ ի մի ումպ խմեց։

— Կեցցէ դժոխք, գոչեց սատանան, և գինին միւսն ալ այն կլլեց։

— Ուրեմն, կեցցէ Բաւարան գոչելով մեղաւորը, գինին երրորդ գաւաթն ալ այն պարպեց։

— Կեցցէ սանդարամետ, պօռացին երեք Անիրիկեցուհի մօտենալով անոնց, որոնք անմիջապէս մէկզմէկ ճանչնալով՝ ըս-

կըսան բարձրաձայն լանգալ և կերպ կերպ միմոսութիւններով զիրար բարեւեցին. այս առեն արշաւասարն սկսեր էր, ուստի այս խումբն ալ զոյգ զոյգ պարոզայ յորձանքին մէջ խառնուեր լուսնաւեր։

ՀԱՆԵԼՈՒԿ ՄԸ ՈՐ ՄԱՐԴՈՒՍ ՅԻՇԱՂԸ ԿԸ ՇԱՐԺԷ

Դիւականպար մըն էր այս, վասն զի ուրաքանչիւր ոք իւր ընկերը կորանցուցած արիւն քրտինք թափելով միմիայն ոսոխուն մը կը տեսնուէր խառն բազմութեան մէջ, մանաւանդ արանց ոսկալի ձայներուն հետ, պինալ կանանց խառնիճաղանճ երգերուն անճոռնի ձայները մէկզմէկ խառնուելով, սանդարամետական դոչումնալ մը սրահը կը լնդացնէին. վողոյին մէջ անհամար անձինք դիզուած կուզէին այս դժոխքէն լուր մ'առնել, շատ պատուաւոր և երեւելի ընտանիք չէին համարձակեր անցնիլ անկէ, իսկ շատերն ալ ընդհակառակը տեսակ տեսակ դիմակներ դրած և դոյնզդոյն պարալօդիկներ հագած հոս կը յաճախէին. կարելի է պարելու համար..... մանաւանդ աղնուական կարծեցեալ պարոնիկները, որոնք քովերնին մանկամարդ կինմը և ձեռքերնին մէկ մէկ նարինջբռնած, պարապարահը և անոր շուրջը դտնուած սենեակները պըտտելէ վերջը կերթային, բայց ուր։

Չենք գիտեր։

Չմոռնանք ըսել որ այս մեր աղնուականիկներն կամ իրենց տանը մատակարարին հետ կուգան և կամ... հետ կուգան։

Սրահին շուրջը օթեակներ կայ ըսինք, որուն մէջ հոգնու-

թիւն կառնեն պարոնները, այս օթեակներուն աւելի աղէկ կըլայ երթէ ըսենք խոյտառակութեան անամօթութեան կըտուրթեան կայաններ՝ քան թէ հանգստատեղի, որոնց մէջ գիւղում կ՚ուզեն երիտասարդներուն ձեռքէն բռնած այս աննեակները կը տանէին և վայ անոր գլխուն որ հոն կը մնար, վանը պիտի անմիջապէս դուռը կը դոցուէր և անկէ վերջը.....

Թիւ վեց օթեակին դուռը բացի, և մէջը կին մը ու երիկ մարդ մը նստեր էին, որոնք սեւ անդուռ պարալօդիկներ հագած՝ անլսելի ձայնով կը խօսէին շարունակ. մէկ մ՚ալ յանկարծ մեր ճանչցած սատանայական փոքրիկ խումբը, այս խուցէն ներս մտաւ և ամենքն ալ մէկ մէկ աթոռ առնելով՝ բոլորակ սեղանի մը շուրջը նստան.

— Էյ, ովկայ հոն ապասաւոր, անուշը, մամնչ, դուչեց մեզ ղաւորը փիչ մը յոգնութիւն առնելէ վերջը:

— Ի՞նչ կը հրամայէք տեր իմ, ըսելով թանկիմը ապասաւորը անմիջապէս գրան մէջ տեղացաւ:

— Օհօ. այս որչափ ծառայ ունիմ եղեր ըսելով մեղաւորը, սկսաւ խնդալ:

— Վերջապէս ի՞նչ պիտի առնէք, հարցուց ապասաւորները ըէն մին:

— Գարեջուր:

— Այ՛ն, այ՛ն գարեջուր, կրկնեցին միաբերան:

— Գարեջուր խմելով քար կտրեցայ, ըսաւ Սատանան և յաւելցուց թէ ինձ օղի մը բեր:

— Պարոն, ստամոքսդ լեցուն պահէ, որովհետև վազը պիտի ախտախտ ծամ և պահք բռնել ըսաւ Ափրիկեցուհիներէն մէկը:

— Սմենեւին ոխկին, պատասխանեց որն որ այս կինկանը տարվածուն էր, երթ ներկը ճնայ պահքը աւրելով վիս ուտել կըսկսի:

— Կեցցե՛ս, շատակը այս երկդիմաբանութեանդ շատ հաւնեցայ վասն զի կարծեմ դու ալ պահքդ նոր աւրեցիր և վիս ուտել սկսար, ըսաւ բարձր ձայնով Սատանան:

Այս խօսքին վրան ամենքն ալ բարձրաձայն և խառնաշփոթ ձայներով խնդալ սկսան:

— Տիկին Սօֆի քուկինդ չեկաւ այս դիշեր։
— Դեռ չիմացար։
— Ի՞նչ։
— Երկու ամիս է որ զաւուաժ եմ քրարմէ։
— Ջէլի դիտեր, բայց ի՞նչ պատճառաւ։
— Այ՛, ի՞նչ պատճառաւ հարցուցին միաբերան։
— Հա՛, հա՛, հա՛, պատճառը եթէ պատմեմ խնդալէն պիտի ճաթիք։
— Ուրեմն շուտ խօսէ եթէ ոչ, նեղութենէս պիտի ճաթիմ հիմայ։
— Մանկ ըրէք, ասկէ երկու ամիս առաջ դիշեր մը Գարա պէլային գինետունը նստած ատեն, դռնէն ներս երկու հոգի կը մտնան, մեր Պարոն Մըկըր հասկնալով ատոնց մէկը ծպտեալ կին մ'ըլլալը, կուզէ բարեկամանալ, կը հասկնաք, այնպէս չէ։
— Այ՛, այ՛, ի՞նչ ըսել է։
— Եւ հայր Դանիէլին հետ այս երկու անծանօթ անձանց եաեւէն կերթան, բայց և այնպէս արժանաւոր վարձատրութիւն մ' ալ կ'ընդունին։
— Ի՞նչպէս։
— Հայր Դանիէլ ծերուկ մ'ըլլալուն աւելի աղէկն ընտրեր է ատակ առնել, քան թէ կինը, ուստի պարզապէս կնկանը վրայ դանուածը կողոպտեր և առեր քալեր է։
— Ապրի տեսար մարդը, և հիմայ ո՞ր է Մըկըր, հարցուց Սատանան հետաքրքրութեամբ։
— Ան ալ բռնուելով բանտարկուեր է։
— Հա, հա, հա արդարեւ խնդալու միանգամայն ճաթելու բան է այս դէպքը։

Այս խօսքը հազիւ լմնցած էր մէկ մ' ալ խմբեակին մէջէն անդուսէ պարալօթիկ հագնողներէն մին, առանց նշմարուելու ակնարկ մ'ըրաւ սատանային, որն որ անմիջապէս երկուքը մէկէն դուրս ելան. և երբոր տեսան թէ գիրեն ք դեռ ոտով չկայ, ընկերը սատանային դառնալով «Լինէկէօղ, ըսաւ կը ճանչնաս այն Հայր Դանիէլ կոչուած մարդը։

— Օ,յո՛ տէր, իմ պատասխաննդ։

— Ուրեմն, պայն ինձ բերելը քեզ կը յանձնեմ։

— Շնորհակալ եմ տէր իմ, վստահ եղէք այդ մասին՝ որ ժամանակ որ կուզէք։

— Լաւ, հիմայ ընկերներուդ քով դարձէր, չըլլայ որ կասկած տեղի տաս։

Ինքնակէօղ խորին յարգանք մ'ընելով պատուհոյաւ, և հազիւ իր ընկերներուն մօտեցեր էր, միաբերան աղէկ որ եկար, ոսկի մը տուր ըսին։

— Շատ աղէկ, ի՛նչ պիտի ընէք։

— Առաւօտեան կերակուրին բաժանուդ պիտի դրեմ ըզքեզ։

— Ուրեմն տամ, ըսելով գրպանէն լեցուն քսակ մը հանեց ու մէջէն ոսկի մը առնելով անոնց տուաւ։

— Պարոն Սատանայ, քսակիդ գերութիւնը սրտիս մէջ սիրոյ կայծ մը արծարծեց ըսաւ Ալիրիկեցուհիներէն մէկը, և դաւաթ մը գարեջուր բերնին մէջ պարպեց։

— Վախնամ այդ դեռարծարծ սէրդ քսակս նիհարցնէ, պատասխանեց Սատանան։

Ա,յս միջոցին սեւ վերարկուով դիմակաւոր կին մը սենեակէն ներս մտաւ, և հետաքրքրութեամբ սենեակին չորս կողմը լաւ մը դիտելէ վերջը՝ ամուռ մ'առնելով սենեակին մէկ անկիւնը քաշուեցաւ. բայց նորեկ կնկանը մարդ ուշադրութիւն չըրաւ։

— Իմ սիրելի Ռուբէնիկիս կենացը, գոչեց Զիչիլ, դաւաթ մը գարեջուր յափշտակած և ոտիւնով մը սեղանին վրայ եւ նելով։

— Կեցցէ՛ Ռուբէնդ, կեցցէ՛ Ռուբէնդ, գոչեցին միաբերան։

— Շիտակն ըսելով շատ աղէկ տղայ է, ըսաւ Ալիրիկեցին և յարեց թէ աղէկ ատակ կը վատնէ, թէև սատանան առնէ մեղքը. բայց կըսեն թէ այս բարի Ռուբէնը՝ հօրը քնացած միջոցին գրպանէն կլորիկ կլորիկ ոսկիներ կը գողնէ և այս պատճառաւ տանը մէջ գանուած դժբաղդ ստացուածները երկու

օրն անգամմը դուլթեան տիտղոս մ'ընդունելով առնէն կը վռնտուին։

— Նկրնցէք պարոն, դուք որ ամեն առեն անոր կը քծնիք հիմայ ելեր անոր շուքը կանպատուէք, ըսաւ Զինչիլ բարկութեամբ։

— Շատ աղէկ, այդչափ սուակը ճակէն կը գտնէ, միթէ Գըշտե՞լ թագաւորին որդին է որ թիւգայեալ մատանի մը ունենայ։

— Անիկայ ասկերչութիւն կընէ, ասկերչութիւնը ինչ ըսել է դիտէք, անգամ մը մտածեցէք, ամեն օր ադամանդի հետ խաղալ է այս։

— Այ՛, գիտեմ և շատ աղէկ գիտեմ, եթէ ադամանդ մը ծախելու ըլլաս, Պ. Ռուբէնէն ուրիշի դիմելը մահայու մեղք է, վանդի նա աղէկ գին կուտայ, բայց ստակ ոչ։

— Գիտեմ, Ռուբէննիդ այնչափ պախարակելուն պատճառը ինչ է։

— Չեմ գիտեր։

— Ուրեմն գիտցիր որ քեզ շատ կը սիրէ, ըսաւ Հրեշտակ։

— Ա՛հ, ինչ մեծ ոճիր... պարոն, Ադաճն ու Եւան առոր համար դրախտէն արտաքսուեցան կարծեմ, հարցուց Զինչիլ։

— Այ՛, իրաւունք ունիս, Եւային խնդումը վորը ճնաց, և եթէ դուք ալ ձեր սէրը շարունակէք՝ պարտք կը համարիմ ըսել որ դու ալ այնպէս պիտի ըլլաս։

— Աղէկ միտքս եկաւ, գոչեց մեղաւորը, ձեզի հանելուկ մ'ըսեմ, գտնողը պիս յաղթած թող ըլլայ։

— Ջրուցէ՛, պրուցէ՛, գոչեցին միաբերան։

— Ի՞նչ մեծ դրաւ, մրճնչեց անդիէն կին մը՝ որ Ննիկ կը կոչուէր։

— Դրախտին մէջ Ադաճն ու Եւային կերած պտուղն ինչ էր։

— Ա՛հ, այդ մեծ բան մ'է, թուզ կերան, ըսաւ Ննիկ։

— Ո՛չ, թուզ չէր կերածնին, ըսաւ մեղաւորը։

— Ես ալ կը պնդեմ թէ կերածնին թուզ չէր, բայց անշուշտ թուզին նման բան մ'էր, ըսաւ Զինչիլ վիճասոփայօրէն։

— Նեցցե՛ս, պատ, պատ, պոչեցին ամենքը միաբերան, և յաղթուած ես ըսելով, սկսան բարձրաձայն խնդալ։

— Ո՛չ, ո՛չ, հաղար անգամ ո՛չ, վասնզի անոնց կերածը ո՛չ թուղ էր և ո՛չ ալ թուղի նմանութիւն ունէր, ահա ձեզի պրուցեմ... բայց լինչո՞ւ ըսեմ, վնասուեցէք դուէք։

— Ես այդպիսի խնդիրները միշտ գինիով կը լուծեմ, ըսաւ Ալերիկեցին և դառնալով, սպասաւորին ըսաւ թե պատրաստէ պիտի՛ կարծէինք, ըսաւ Ալբիկեցուհիներէն մէկը։

— Կը սխալիս տիկին, Նոյ Նահապետ խաղողի գինի կը խըմէր, իսկ մեր խմածին մէջ խաղողին կուտան անգամ չես գըտներ. թէ որ ինձի հաւատարմութիւն չես ըներ, հարցուր Պ. Մ.քէլի այս օրճարանին տիրոջը՝ որ ամենեւին չիտակ խօսիլ չախորժիր։

— Ա՜յո, անցած գիշեր երդում ըրաւ որ նոյն գիշերուան համար եփուած կերակուրը, երկրորդ գիշերը չ'ծախեր, թէպէտ և կերած հնդկահաւնիս հոտած էր։

— Մի՛ս բամբ տաքուն չը գիտնար, ժխտութեանը նայինք։

— Ատոր խօսք չունիմ, չորս հոգուոյ համար, քիչ մ'ոսպէ, մէկ մէկ ապուր և քիչ մ'ալ աղանդերի համար տատ ոսկին կը բաւէ։

— Մեղի այս կը բաւէ. բայց դուրսէն մարդու համար անկարելի է որ այդ աստիճան ժխտութեամբ կերակուր դանայ հոս։

— Պարոնայք, դեռ իմ հանելուկս չըսած։

— Էյ... հանելուկովդ հերիք գլուխնիս ճաթեցուցիր, ըսաւ Ջէյմըլ ձեռքովը վեղարովն ուսին զարնելով։

— Եթէ գիտես դու ինչ պատուղ ըլլալը պրուցէ, ըսաւ Հըբրեշաակը։

— Մեղք որ դրախտին մէջ մեծցեր ես, ըսաւ Ստատնան և յարեց թէ ինչպէս չես գիտեր ինչ պատուղ ըլլալը. ուրեմն քանի որ և ո՛չ մէկէրնիդ գիտցաք, մոխիկ ըրէք որ ըսեմ, այն պատուղն երկու սեռ է և միայն Ադեմէլք կը գտնուի, և այն

պտուղին անունը կռայթ, պռայթ է ըսաւ Սատանան։

— Ադամ եւան Անդղիարէն կը խօսէին, հարցուց Սփրկիչ-ցուհիներէն մին միամտաբար, և կռայթ, պռայթ ինչ կը նշանակէ յաւելցուց։

— Չէ, հէ... անոնց նշանակութիւնը մեծ և շատ մեծ խորհուրդներ կը պարունակեն իրենց մէջ՝ որոնք ըմբռնելու համար միտք չունաց ձեր գլուխը պարոններ, կրայթ կը նշանակէ Սէր... Պրայթ, գերկընդխառնութիւն, և այս երկու բառերը կը նշանակեն մարդոյ ծնունդը, անունդը, ամուսնութիւնը, մահը և անմահութիւնը վերջապէս ամբողջ բնական և գերբնական օրէնքները։

— Օհօ... պարոն ճարտասան զմեզ ալիւր թուցնես հիմայ, այդ ինչ հանճար։

— Ուրեմն, կեցցէ կռայթ գոչեց Սատանան, գաւաթը ձեռքը առնելով օն, պարոնայք, տիկնայք, խմեն ք։

— Եւ կեցցէ Պռայթ աղաղակեցին կանայք, միաբերան ու ական խմել, մէկ մ'ալ կարծես մոգական զօրութեամբ այս խառնաշփոթ աղաղակները մէկէն ի մէկ դադարեցան, երաժշտութիւնն ակաեր էր, ի պար ի պար ընկերք գոչեցին և իրաքանչիւր ոք իւր ընկերն առած պարապարահը դիմեցին աճապարանօք և ական պարել։

ՅԱՑՏՆՈՒՄՆ ԳԱՂՏՆԵԱՑ

Թիւ վեց սենեկին մէջ երկու անգուսէ պարալօթիկ հագուողներն և սոյն կինը որ անկիւն մը քաշուած նստեր էր մինակ մնացին, նոյն միջոցին երկու մարդոց մին ոտքի ելաւ և երբ կուզեր երթալ, անծանօթ կինն անմիջապէս տեղէն յառակեցաւ,

կաղաչեմ տէր իմ զիս մոխիկ ըրէ՝ և սէր Աստուծոյ կը խնդրեմ, ըսելով ստքերուն ինկաւ։

— Ի՞նչ կուզես տիկին, հարցուց մարդը մեկէն ետ քաշուելով։

— Որդւոյս ազատութիւնը, ոհ կը պաղատիմ տե՛ս մայր մ՚է քեզ աղերսողը, ներեցէք Հայր Դանիէլը անոր վիճակը պղտորեր է որ այնպիսի գործի մը կը համարձակի։

— Բայց Տիկին չեմ գիտեր, թէ ի՞նչ ներում է ինձմէ խընդրածդ և զաւակդ ալ է, մանաւանդ թէ զիս այսպէս դիմակաւորեալ ալ կը կարծէք։

— Ո՛հ կաղաչեմ ինձմէ մի ծածկէք ձեր ով ըլլալը, դուք ձեր նամակները կտրանցուցած էք, անոնք ալ ձեզի կը դարձնեմ քովս է, քանզի Հայր Դանիէլ կարդալ չգիտնալուն որդւոյս յանձներ էր զանոնք։

— Տիկին, խօքերնէդ և ոչ բան մը կրցի հասկնալ, գարձեալ կըսեմ թէ դուք ալ կը կարծեք զիս։

— Ո՛չ, կը ճանչնամ ես զձեզ, այո լաւ կը ճանչնամ. դուք այն խումբին մեծաւորն էք որոնք հիմայ հոս կը զուարճանային, վան զի քիչ մ՚առաջ դուրսը տեսայ, որ Սատանայի կերպարանք մտնող մարդուն բան մը հրամայեցիք. վերջապէս ի՞նչ պէտք է խօսքս երկարելով զձեզ ձանձրացնեմ, դուք Մեծապատիւ Մարտիրոս Տէրպէնտն էք։

— Մարտիրոս Տէրէնտ ըսիր, կը սխալիս Տիկին.

— Ի՞նչպէս կը սխալիմ։

— Ո՛հաւասիկ գիմակս հանեմ տես, ըսելով դիմակն հանեց, և Մինրդատն ըլլալը տեսնուեցաւ։

— Պարոն, թէպէտ Մարտիրոս Տէրպէտ կոչուած անձը չ՚եմ ճանչնար, բայց լմացած եմ որ ձեր է, իսկ դուք երիտասարդ, այսու ամենայնիւ հարկաւ դուք ալ յարաբերութիւն ունիք այն երեւելի մարդուն հետ, ուստի եթէ կարելի է կաղաչեմ որ միջնորդէք որդւոյս ազատութեանը համար։

— Տիկին, ամենեւին չեմ ընդունիր որ այնպիսի եղեռնագործի մը հետ յարաբերութիւն ունենամ, սակայն տուր այն նա-

մակները ինձ պատմէ եղածն և ես պատրաստ կերդնում որ վաղը կէս օրէն առաջ քու որդիդ ալ ըլլայ և ուր ալ ըլլայ պիտի աղաւնւի Աստուծոյ. օն պատմէ տեսանենք, բայց կեցի. կարծեմ մեր խմբեակը դարձեալ հոս կուգայ, պէտք չէ որ զմեզ տեսնան, ըսելով երթքը մէկ տեղ այն աեննեակէն դուրս ելան։

— Էհէ՛... լաւ սերունդէ յառաջ եկած հաստ գլուխ, օ՛ն յառաջ, յառաջ տեսանենք պօռալով Հրեշտակը, իւր առջեւի կնկանը այնպիսի կռուի մը զարկաւ, որ խեղճը այն զօրաւոր մղման չկրնալով դիմագրել, գնաց սենեակին մէջ գտնուած սեղանին տակն ինկաւ, այս միջոցին ամբողջ խմբեակը ներս մտեր էր։

— Այս ըրածդ կատակ է Պուչաքճի, բոլոր ոսկորներս կոտրտեցաւ, պօռաց կինը։

— Է՛հ, ինչ ընեմ, այդ ալ հնգաս է, մեր Սպիրօ բարեկամն ինչ ընէ որ բոլոր ջիղերը բզքտեր է։

— Ո՛հ, դուշեց Սպիրօ՝ որ Ամերիկացիի կերպարանք մտնող ներէն մէկն էր. եթէ հիմայ հանդիպիմ այն կատաղի երիտասարդին, ճշմարիտ կերդնում պատրաստ վրայ որ պիտի բզքտեմ։

— Բայց ես սա կը զարմանամ որ, յարեց Ֆօթի, այն մարդը ուսկից լմացեր էր որ այն երիտասարդը մառանը բանտարկեր ենք։

— Այդ բան մը չէ, պօռաց Սպիրօ որ խմած գինւոյն զօրութենէն երեսը կապոյտ գոյն մը առեր էր, մառանն ինչպէս բացին՝, ասոր ամենեւին խելքս չհասնիր։

— Այդ ալ զարմանալու բան է, ըսաւ Զինչիլ կարելի է պօղոս Առաքելոյն բանտին ալէս Հրեշտակ մ՚իջած է, թէպէտեւ ձեր խօսակցութեան նիւթն ինչ ըլլալը չեմ գիտեր, սուտ չը նատելու համար այս խօսքս ըրի, յաւելցուց։

— կատակը մէկդի, ըսաւ Սպիրօ ծանրութեամբ։ Ճշմարիտ կըսեմ որ այն պատահարները ինձ պիտի խենդեցնէին։

— Ձեղի բան մ՚ըսեմ, լինձ այնպէս կուգայ որ Թէօխար, այն Ս... Օղլու կոչուած հինօրեայ աղուէսը ձեզի լաւ խաղ

մը խաղայած ըլլալու է, թէեւ այս ըսածս ճնշիտքութիւն մ՚ է, բաւ կ՚ենէկէօղ։

— Ճիշդ է, պոչեց Սալիրօ ձեռքը սեղանին զարնելով։

— Գաւաթներուն ուշադրութիւն ըրէք Պարոնայք, պոչեց սպասաւորը։

— Այ՛, ես ալ ձեր կարծիքէն եմ որ թէօխար դիտմամբ զմեզ այսպիսի ծուղակի մը մէջ նետեց, բայց վերջապէս մեր ընկերական միութեանը չնորհիւ ազատեցանք։

— Բարեկամ, ատոնք անցած գայած խօսքեր են գինի խըմենք, գինի և ուրիշ նիւթի մը վրայ խօսինք, վասն զի տիկնայք ձանձրանալ սկսան, պոչեց Ս.փրիկեցիներէն մին։

— Վերջապէս, կուզէք որ մենք ալ չձանձրանանք, և ձեզի հետ հաճոյք պդանք եղած խօսակցութենէն, ըսաւ Ս.փրիկեցուհիներէն մին։

— Պարահանդէսի մէջ գործի վերաբերեալ խօսքեր ինչ այլանդակ սովորութիւն, յարեց Ս.ննիկ։

— Աւելի աղէկ է մարդ գինւոյ մէջ խեղդուի քան թէ այսպէս տխուր ապրի, յաւելցուց Զինչիլ։

— Օ՛ն, ուրեմն լոլալ գիացողը թող ետեւէս նետուի, ահաւասիկ ես պիտի նետեմ ինքզինքս գինւոյ ովկիանոսին մէջ, ըսելով Սալիրօ գաւաթ մը գինի լեցուց բերնին մէջ։

— Կեցցես, և ահա մենք ալ քեզ կը հետեւինք պոչեցին միաբերան։

— Բայց և այնպէս, ես այն Ս... Օղլուէն վրէժս պիտի լուծեմ, ըսաւ Ֆօթի։

— Է՛հ... այդ բանը ես ուղեղիս մէջ դրեցի, բայց հիմայ մենք մեր գործին և մեր զուարճութեանը զբաղինք. Զինչիլ, դառնանք քու Ռուբէնիդ, որ այս գիշեր պիտի գայ կըսէիր, ըսաւ Սալիրօ։

— Կեցցես, ես այդպիսի բան մը չըսի։

— Թէպէտեւ չըսիր, բայց քանի որ ամեն գիշեր կուգայ, հարկաւ այս գիշեր ալ պիտի գայ։

— Բայց մինչեւ հիմայ չերեւցաւ։

— Ո՞վ գիտէ որ քարին տակն է, ըսաւ Յինէկէօղլ, խլուրտի պէս ծակ ծուկ կը փնտռէ։

— Այդ մասին իրաւունք կուտամ քեզի և ամենեւին չը յուսացած վայրկենիդ դէմդ կ'ելլէ։

— Եւ եթէ մարդ փնտռելու ալըլայ՝ անկարելի կ'ըլլայ գըտնալը, յարեց Պըչաքճը։

— Ա՜հ, հիմայ ինձն հոս ըլլալու էր, ծրչաւ կը ղուարճայնէր զմեզ, ուր ես արդեօք սրիկայ, ըսաւ Զիչիլ։

— Հոս եմ իմ սիրուն Թիթեռնիկս, ըսաւ դռնէն ներս շուրջ քսան և հինգ տարեկան երիտասարդ մը մտնելով, ուղղակի Զիչիլին մօտեցաւ և ծնկան վրայ դալով համբուրեց զանի։

Ամենքը միաբան զարմացման ձայն մը հանեցին։

— Մինչեւ որ իւր անուամբը չկանչեցինք չեկաւ, ըսաւ մեղաւորը, որ բաւական ժամանակէ 'ի վեր լուռ կեցած ընկերները մտիկ կընէր։

— Բարեկամք, ձեզի մեծամեծ լուրեր ունիմ բայց նախ ինձ գաւաթ մը բերէք, վասն զի տակաւին կաթիլ մ' անգամ տեսած չէ բերանս, ըսաւ Ռուբէն ձեռքերը շփելով։

— Ահաւասիկ, ըսաւ Զիչիլ գաւաթ մը լեցուն գինի անմիջապէս ներկայացնելով։

— Կեցցես, ըսաւ և 'ի մի ումպ պարպեց գաւաթը մինչ ցմրուրն. ո՜հ, հաւատք, յոյս, սէր և մկրտութիւն, այս գինին մկրտեալ է։

— Այս ատեն ուստի՞ կուգաս, ըսաւ Պըչաքճը։

— Շիտակն ըսելով աղէկ ծպտեր էք, հեռեւաբար գոնէ այս աշխարհիս մէջ Հրեշտակաց գասը՝ Սանդամեոտականներուն հետ միացեր է. այս մասին շատ գոհ եմ առ այժմ, ուշադրութեան արժանի ձեզի խօսելիք շատ պատմութիւններ ունիմ ըսելով, գինի մ'ալ նեռեց առանց Պըչաքճիին խօսքին ականջ կախելու։

— Օն ուրեմն պատմէ տեսանենք։

— Նախ և առաջ բան մը պիտի ցոյց տամ ձեզ, ըսաւ Ռուբէն ձեռքը դրպանը խօթելով։

— Տեսանենք, տեսանենք, դոչեցին ամենքը միաբերան։

— Ա՛հա, տեսէք, ըսելով վոքրիկ ոսկի շղթանակի մը մէջ կնոջ պատկեր մը հանեց, որն որ ձեռքէ ձեռք պտըտեցաւ։

— Շատ գեղեցիկ կին մ'է, ըսաւ Ամերիկեցուհիներէն մին։

— Ինձ այնպէս կը թուի որ այս կինը տեղ մը տեսած եմ, ըսաւ Սպիրօ։

— Կը սխալիս պարոն, դոչեց Ռուբէն։

— Հազուադիւտը չէ վայելեցուցեր, կապիտ կին մ' ըլլալու է, ըսաւ Զիչիլ։

— Ես ալ տեսնեմ անգամ մ' ըսաւ մեղաւորն՝ որ ամենէւին դիմակը հանած չէր. պատկերն առաւ և անմիջապէս լոյսին քով դիմեց, և մէկէն զարմացման ձայնով մը Մաքրուհին մրմընջեց։

— Է՜հ, բարեկամ, ի՞նչպէս է գեղեցկութիւնը, հարցուց Ռուբէն։

— Ա՛յո, շատ գեղեցիկ է, ըսաւ մեղաւորն առանց իւր զարմացումը յայտնելու։

— Հէ՛, հէ՛, հէ՛, դոչեց Ռուբէն, այս գեղեցիկ որբեւայրին հինգ հազար հատիկ շլացուցիչ ոսկիներով ինձ տալ առաջարկեցին, կը տեսնա՞ք որ կմկմալու չէր գար, խօսքս տուի լմնցուցի և գալ շաբթու հարանիք ունիմ։

— Կեցցես, դոչեցին ամենքը միաբերան, ուրեմն ապառնի կնոջդ կենացը համար գինի խմենք։

— Ա՛յո՛ խմենք որ, Զիչիլին սիրտը չցաւի։

— Քանդի այն ատակները միասին պիտի մխանենք։

— Օ՛, ատոր ըսելիք չկայ, ըսաւ մեղաւորը, որ նաւավար կարապետն էր, բայց ոչ պիտի տայ այդ ոսկիները քեզի։

— Շիտակը չեմ յիշեր Մուրօճ է, Նարօճ է ինչ է, սակայն դիտցած եղիք որ ատակները չառած չեմ պսակուիր։

— Ա՛յս միջոցին սպասաւոր մը գալով ճաշին պատրաստ ըլլալը իմացուց և ամենքն ալ ճաշին սրահն անցան։

ՆԱՄԱԿՆԵՐՆ

Բարեկենդանի վերջին գիշերը առաւօտեան մօտ Մխիթարեան Տիկին Լիսաբէթ հետ բերայի մեծ փողոցին վրայի գոնուած առնը գնայ և Լիսաբին պատրուակելով թէ ինքը քնհատ է, անմիջապէս իւր սենեակը քաշուելու և դրան պտրզունակը լաւ մը պնդելէն վերջը, դրասեղանին առջին անցնելով դերպանէն նամականերու ծրար մը հանեց ու դրասեղանին վրայ դընելով, սկսաւ մի առ մի աչքէ անցնել հետաքրքրութեամբ. առաջինն որ գծուծ թուղթի մը վրայ գրուած էր՝ որուն աղաւաղելագրերը մեզանին դէշութենէ խառնելով՝ խանձած թուղթի պոյն մ'առեր էր, և արդէն կինէն ալ քակուած ըլլալուն Մխիթարին սկսաւ կարդալ:

Ս. ընիւ Օրիորդ.

Յուլիս 11 թուականով ինձ գրած էիք թէ այն խրկած երեք գրեալ թուղթերս տուած հրահանգիս համեմատ այրելով Մխիթարին խմած ջուրին մէջ խառներ էք, և հետեւութիւն մը չէ ունեցեր, այս լուրն ինձ մեծ զարմանք պատճառեց, ուստի երեկ գիշեր ձեզ ալէկոծը հրաւիրելով պատճառը հարցուցի, և ինձ պատասխանեցին թէ «դուք նոյն օրը սեւ կատու մը ծեծեր էք, որնոր իրենց խիստ սիրելի ազատաւորներէն մին է եղեր... հոս Մխիթարի ընթերցուածն ընհատելով ծէր Ա.ատուած, մրմնջեց, այս աստիճան ստորնանալ... ափսո՜ս, ափսո՜ս. և դարձեալ սկսաւ շարունակել այսպէս. ուստի՝ սակաւ միկ բարկանալով՝ իրենց ունեցած զօրութիւնը այն թուղթերուն վրայեն ցրուէր են որով Մխիթարի անվնաս ապառեր է. սակայն դուք անհոգ եղէք ես քաղցրութեամբ անոնց բարկութիւնն իջեցուցի և միայնդամայն խոստացան թէ ձեր բաղձանքը պիտի կատարեն, միայն թէ դրաբերիս անպատճառ երեք հատ սեւ վառեակ յանձնես առանց ճերմակ բիծ մ'ունենալու վրանին, ուր իրենց գլխաւորնուն պիտի նուիրեմ և վատահ եղէք որ այն սեգ Մխիթարը քու գիրկդ պիտի դնէ աղերսանօք:

ՀԱՆՐՄԱ.

— Ա.Յ, անպիտաններ, գոչեց Մինրդատ բարկութեամբ և երկրորդ նամակ մը բացաւ ու ան մէջ գրուած էր.

Ակնուսուհի Օրիորդ.

Ձեր հրամանին համեմատ, վերջապէս օրիորդ Հեղինէին ըսպասուհին համոզեցի, ան մէջ պատահած ամէն անձքերը մանրամասն մի գրի առնելով՝ ինձ պիտի յանձնէ և եթէ հարկ ըլլայ, ինչպէս որ նամակնուդ մէջ ինձ հրահանգ տուած էիր, խօսացաւ թէ ո՛ւ և իցէ թոյն մը հասցնէք իրեն, կրնայ թունաւորել պՀեղինէ... բայց այս աղջիկը հրէշ մ'է գոչեց Մինրդատ կատաղութեամբ, և աճապարանօք նորէն սկսաւ շարունակել... միայն թէ՝ ինչպէս ձեզ ալ յայտնի է, անկէ վերջը պօղոս մէջ ճնաղն իրեն անկարելի պիտի ըլլայ, ուստի իր հայրենիքը դառնալով դոնէ վաթսուն կալուածի մը տէր ըլլայ այս բանական համարելով՝ վոխարինութիւն մը կը պահանջէ, որով իւր ապրուստը ճարելով ալ անդամ մ'ալ Պօղոս դալու կարօտութիւնը չունենայ, և ասով միայն գոհ պիտի ըլլայ. չի մոռնանք ըսել որ վերջնական կերպով պատասխանեց ինձ՝ թէ մինչեւ որ այս բաներս չի կատարուին՝ անկարելի է գործի սկսել, երկուշաբթի անպատճառ պատասխանի կըսպասէ.

Ձեր անձնուէր ծառան.

ԳԱՍՊԱՐ

Յ. Գ.

Նամակիս ներփակեալ հետեւեալ յանօթագրերն ըսպասուհին ինձ յանձնեց, ես ալ, փութայի ձեզ խաւրել...

ՊԱՏՃԷՆ ՅԱՆՕԹԱԳՐՈՅՆ

Անցած առաւօտ Մինրդատ օրիորդ Հեղինէին սենեակը մտաւ և շարունակ երկու ժամ խօսակցեցան, բայց ինչ նիւթի վրայ ըլլալն անկարելի եղաւ ինձ.

Հիմակու հիմայ մեծ փութով՝ ամէնքն ալ տիկին Լիւլին զաւակը դաննելու զբաղած են. բայց մարդ չգիտեր անոր ու՞ր ըլլալն և տակաւին լուր մ'ալ չառնուեցաւ անոր վրայօք.

Այս առաւօտ օրիորդ Հեղինէին հայրը դաննուեցաւ և տան մէջ ամէնքն ալ ուրախութեան մէջ են.

կերեւի թէ Մինդատ ճամբորդութիւն մը պիտի ընէ, բայց լմնցած իանայելովերկար ատեն չը պիտի ըլլայ բացակայութիւնը։

Ընդհալ գիշեր Սոֆեան պէյին ներքնատեղակը պէյին և Լիւլին մէջ սա խօսքերը կանցնէին։

— Պէյ, Մինդատ իւր ճամբորդութիւնը լրացնելէ ետքը օրիորդ Հեղինէի հետ ամուսնութիւնը պիտի կատարէ՞ք այնպէս չէ՞, կըսէր Տիկին Լիւլ։

— Իմ ալ միտքս բաղձանքս այն է, բայց դեռ արգելքներ պակաս չեն. սակայն տեսնենք թէ պարոն Մինդատ պիտի հաճի այդ միութեան, վասն զի ինձ այնպէս կը թուի թէ՝ տակաւին Տէրպէնտի աղջիկը կը սիրէ, պատասխանեց պէյ։

— Սխալ է ենթադրութիւննիդ տէր իմ, Մինդատ անոնց ինչ ատիճան ցած և զզուելի ընտանիք մ'ըլլալին լաւ տեղեկացած է. և ես ձեզի խօստովանաբար կըսեմ որ օրիորդ Հեղինէն մեծ ազդեցութիւն ունի Մինդատայ վրայ, ինչու որ առանց անոր հարցունելու ամենեւին գործ մը չընէր, և անոր խօսքէն դուրս չելլար։

— Ա՛հ, ափսո էր թէ ճշմարիտ ըլլար այդ ըսածդ. որովհետեւ իմ երջանկութիւնս կատարեալ ըլլալու համար անոնց միութիւնը ժամ յառաջ կուզեմ տեսնել։

— Երէկ պետրոս պէյը եկաւ և Սոֆեան պէյին հետ երկայն խօսակցութիւն ըրին, բայց ի՞նչ նիւթի վրայ ըլլալը չհասկըցայ։ Սոֆեան պէյ կը յանդիմաներ զՊետրոս պէյ, քանի մ'անգամ ձեր հօրեղբօրը խօսքն անցաւ, բայց բան մը չը կրցայ հասկնալ. հիմակու հիմայ այսչափ տեղեկութիւն կրցայ առնել, հետզհետէ տէ սան մէջ անցած դարձածները դրի առնելով ձեզ կը ղրկեմ, միայն թէ դուք ալ ձեր խօստմունքը չը մոռնաք։

Մինդատ ընթերցումը վերջացնելէն անմիջապէս ետքը զանգակին չուանը քաշեց, իսկոյն մաքուր հագուած սպասաւոր մը ներս մտնելով,

— ի՞նչ կը հրամայէք տէր իմ, ըսաւ։

— Ստեփան, օրիորդ Հեղինէին պատուհին Ս.րուսը անմիջապէս հոս կանչէ։

— Շատ աղէկ տէր իմ, ըսելով դուրս ելաւ։

— Չլի՞ս էք ուզեր տէր իմ, ըսելով Աբուս սենեակը մտաւ քանի մը վայրկեան էն։

— Հիմայ ծրարդ ժոզվէ և հեռացիր այս տունէն, դոչեց Մինրդատ հրայտայտ աչքերով։

— Բայց տէր իմ, յանցանքս ի՞նչ է։

— Ասելի խօսք չեմ ուզեր, դուրս գլ։

— Ա՛հաւասիկ կերթամ, ըսելով ապաստին սենեակէն դուրս ելաւ։

Քիչ մ' ետքը օրիորդ Հեղինէ սենեակէն ներս մտաւ. Մինրդատ ոտքի ելնելով բարեւեց զան և աթոռի մը վրայ նըստաւելով,

— Ներեցէք, պ. Մինրդատ, ձեզի աղաչանք մ'ունիմ։

— Ի՞նչ է աղաչանքնիդ ալնիւ օրիորդ, հարցուց Մինրդատ ապաստհոյն համար ըլլալը դուշակելով։

— Ինձ սիրելի Աբուս ապաստհոյս ճամբայ տուեր էք, կը խնդրեմ որ իմ սիրոյս համար ներէք անոր յանցանքը։

— Սիրելի օրիորդ, կարդացէք սա նամակը և պիտի տեսնէք որ իրաւայն պատճառներ ունիմ այս աստիճան խստութեամբ վարուելու։

Օրիորդ Հեղինէ, Մինրդատայ իրեն տուած նամակը առնելով սկսաւ կարդալ խեղճ աղջիկը սոսկմամբ կը շուարէր, վերջապէս ընթերցումը վերջացնելով,

— Տէր իմ Աստուած, ես ի՞նչ ըրած ունիմ որ զիս թունաւորել կուզեն, բարեբաղդաբար ժամ յառաջ այս նամակը ձեռք անցուցեր ես, ա՜հ, մայր իմ, ո՛վ տէր իմ Յիսուս, ի՞նչ մեծ վտանգ կապառնայ եղեր մեզ։

— Այ՛, սիրելիդ իմ, մեծ և սոսկալի վտանգներ կապառնայ եղեր մեզ և տակաւին այդ ապառնալիքներէն զերծ չեմք, վասն զի եթէ երկու նամակայ մէջէն այսչափ բան իմացանք, հապա որչափ բան պիտի իմանամք եթէ այս նամակներուն պարունակութեանցն ալ տեղեկանամք ըսելով, սեղանին վրայ դանուած նամակները ցուցուց և մէջէն երրորդ նամակ մ'ալ

առնելով վերնագիրը կարդայ՝ որ այս նամակը Պետրոս Նաղաշօֆ՝ Մարսիլիոս Տէրպէնտին գրած էր.

«Սիրելի բարեկամ.

«Այսօր ժամը ութին Մինրդատ Գաֆքալայի հրատանգանն եկաւ Սպիրօյին հետ, և անմիջապէս մեր բարեկամները վրան յարձակելով՝ ինքը բռնեցին, թեպետեւ շատ դժուարութեամբ. քիչ մնաց որ նոյն պահուն պիտի մատնուէինք հոնկէ անցորդի մը կասկածը մեր վրայ դառնալով, և այս ալ Փոթինին անզգուշութեան արդիւնքն էր, բայց բարեբաղդաբար բան մը չէր նշմարուեր.

«Նաւավար կարապետը մինչեւ հիմայ չերեւցաւ, ինչ պատճառ ունենալը չեմ գիտեր. հիմայ պիշերուան մութին կապասեմ. Այս գործերուն գլուխ եղնելուն կրնաք ապահով ըլլալ.

«Կը խնդրեմ բարեկամ, այն Ռուբէն անուն երիտասարդը գտնելով՝ Մարսիլիոն ամուսնանալը համոզէք. ինչպէս որ գիտէք՝ այս գործին մէջ մեծամեծ շահեր ունինք, և կարելի եղածին չափ շուտ պէտք է ընէք. վասն զի կը տեսնեմ որ պէյն իմ վրաս կասկածել սկսաւ և կամաց կամաց իմ քովս ունեցած տակները կը պահանջէ. իսկ Մինրդատին անհետանալուն մարդու կասկած չտալու համար, քանի մ՚օրէն պիտի տեղեկանք զՄինրդատ որ նամակ մը գրէ առ Սօֆեան պէյ, մէջը բացատրելով որ վեց ամիս Րուաճուգ մնալ հարկադրուեր է, տիպողական քանի մը գործելու պատճառաւ.

«վերջապէս դարձեալ կաղաչեմ որ Ռուբէնն անհրաժեշտ գտնելով՝ Մարսիլիին հետ ամուսնացնելու չանքը չմոռնաք սիրելիս»:

ՊԵՏՐՈՍ ՆԱՂԱՇՕՖ

— Գաֆքալա քու վրադ յարձակելով՝ կապեր են զքեզ. և դու մեզի ամենեւին չես պատմեր, բայց վերջը ինչպէս ազատեցար, գոնէ զայն պատմէ ինձ, ո՛չեց Հեղինէ զարմացմամբ՝ նամակը լմնցընելէն անմիջապէս ետքը.

— Չուզեցի որ տարաձայնութիւն ըլլայ. իսկ ազատութեանս մասին կեանքս ձեր հօր չնորհապարտ եմ, քանզի թշնամիներս

ղիս անօթի պահելով՝ պիտի սպաննէին, բաւ ժպտելով Մի-
հըրդատ։

— Ծառաս իմ, ինչ տօնական ոճիր. բայց հայրս ինչպէս
և ուսկից եղեր է որ ձեր բանտարկութիւնն իմացեր է։

— Թշնամիներուս հետ միացած կեղծելով, անոնց ամեն
մեքենայութիւնները տեղեկացած, իմացեր է. ուստի նոյն գի-
շերն որ ղիս այն անիծեալ տունը տարին, անոնցմէ առաջ ե-
կեր հոն պահուեր է, որն որ յարմար ժամանակին ինձ օդնու-
թեան հասնելով ազատեց։

— Ո՛հ, միայն նկարագրութիւնդ ղիս կը տարտափեցնէ. ա՜հ,
Միհրդատ, մեր թշնամիները ամենեւին խիղճ չունին, ա՜հ,
հեռացիր քիչ մ՚առեն պօլիսէն կը խնդրեմ։

— Բայց չես մտածեր որ այն առեն դարձեալ դու մինակ
պիտի մնաս։

— Ո՛հ, այո՛ Միհրդատ, քեզմէ բաժանուելն ինծի մեծ ցաւ
է, բայց և. այնպէս բացակայութիւնդ ալ անհրաժեշտ է, քան-
զի մեր անողոք թշնամիներն անձանձիր դործելէ չեն դա-
դիր և չպիտի. . .

— Ո՛չ, ո՛չ, սիրելիս, հազար անգամ կընտրեմ մեռնիլ քան
թէ զքեզ մինակ թողուլ, և ինչ հարկ կայ պօլսէն հեռանալ,
քանի որ այս նամակներն իմ ձեռքս են, աղէկ որ երէկ դի-
շեր պարահանդէս դայի, և պիտի տեսնաս որ այն քու ան-
ձանձիր կոչած եղեռնադործներդ ինչպէս կայս պիտի տան
մեր առջեւէն, բաւ և յարեց թէ՝ տեսնենք այս նամակին
մէջ ինչ կայ։

«Սիրելի եղբօրդիս

«Այս առաւս մարդուն մէկը որ թէօխար կը կոչուի՝ հե-
տեւեալ ամենակարեւոր լուրը հաղորդեց ինձ՝ որն որ ձեր
ալ դիտնալը պէտք է, քանդի սիւլթէն տեղեկութիւն ուն-
նալով անոնց համեմատ կը վարուի։

«Երէկ դիշեր Միհրդատը բռնել տալով՝ ատն մը մատանին
մէջ վաճառել տուի, ուստի ալ անոր անունն անդամ պիտի մո-
ցուի։ Այս թէօխար բաւած մարդս պետրոս պէյլին հետ առ-

տուան դէմ նոյն տունէն դուրս ելած ատենը, վողոյին ծայրը կին մը կեցնէ զիմացնին՝ որ. կը պնդէ եղեր թէ Նազարօֆին մայրն է. զիշերուան այն ժամուն այս կնկանը հոն գանուիլը զիս կասկածի ենթարկեց. ինչ որ ալ ըլլի չկրցայ պատճառն իմանալ, թէպէտ նոյն ժամուն պետրոս պատրաստուեր էր մօրը հետ զիրկընդխառնութիւն ընել, բայց թէօխար մէկդի առնելով զանի և անոր դաշոյնի հարուածէ մը տալով առեր քալեր են. Ստոյգ աղբիւրէ իմացայ որ այդ կնկանը անունը Լիուլէ եղեր, բայց Պօլսոյ մէջ Ռօզա—Տանտան կը կոչուի և Սօֆեան պէյին տունը կը բնակի եղեր. ճշմարիտ այս լուրը ինձի ահ և երկիւղ կը պատճառէ, վանդի պէյ զանի ինչ պատճառաւ իր քովը կը պահէ՝ հարկաւ Նազարօֆ գիտէ և պէտք է այս դաղտնիքը իմանալ. թէպէտև կուզէի անձամբ տեսնուիլ քեզի հետ, բայց ստիպողական պատճառաւ մը հարկադրեցայ նամակ գրել. կը յուսամ թէ քիչէն շատ կը հասկնաք. դարձեալ կըսեմ որ վերոյիշեալ այն կէտը միտքէդ չելլայ, առաջին տեսութեանդ աշխատէ իմանալ այս գաղտնիքը և վաղը ինծի իմացուր, չիտակն ըսելով ես կասկածել սկսայ Նազարօֆէն, տեսնենք վերջն ի՛նչ պիտի ըլլայ։»

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՐՊԻՆՏ

— Այս նամակը դեղեցիկ միջոց մ'է զանոնք պատժելու, հիմայ ատոնց ամենն ալ ոստիկանութեան պիտի յանձնեմ. բայց ոչ, պէտք է քիչ մը ժամանակ համբերել և իմանալ թէ՝ ով է այն Ռուբէնն որ Մաքրուհիին հետ ամուսնացնել կուզեն. վասն զի անպատճառ այս ամուսնութեան ներքեւ գաղտնիք մը թաղուած կայ, որ այնչափ մէկզմէկ անցած՝ կուզեն ժամ յառաջ՝ի կատար հանել։

— Բայց այդ Մաքրուհի ըսածդ ովլ է, հարցուց Հեղինէ։

— Ես որ բանտարկուեցայ այն տանը մէջ՝ կին մը կը բնակէր Մաքրուհի անուամբ՝ որ Նազարօֆին պատկերաւն է, և հայրդ շատ ստիպեց որ մեղի հետ գայ. բայց խեղճ կինը կարծես թիւղուած այն չարագործ պետրոսին խօսքերէն՝ չուզեց

բաժնուիլ այս տունէն, որ օր մը իւր դադարը պիտի ելնէ, պատասխանեց Մինրդատ։

— Ըսել է որ իւր կինն ուրիշի մը հետ ամուսնացնել կուզէ։

— Այո, անոնց համար այսպիսի գործեր տեսակ մը առաքինութիւն գործել է, և . . .։

— Սիրելիս, կարծեմ դպրոցիս բանալիները ձեր քովն է, կաղաչեմ որ այս նամակները անոր մէջը դնէք. բայց զգուշացէք որ մէկու մը ձեռք չանցնի, վասն զի խիստ պիտանի թղթեր են ատոնք, ըսելով նամակները ծրարեց և Տիկին Լիուլ տուաւ, որ Հեղինէի խօսած ատեն սենեակէն ներս մտեր էր։

— Պարոն Մինրդատ, ձեր դպրոցը ինձմէ ուրիշ ով պիտի յանդգնի խառնել, ըսաւ Տիկին Լիուլ և նամակները առնելով սենեակէն դուրս ելաւ։

Հոն քիչ մ'ատեն Մինրդատ և Հեղինէ խօսակցելէն վերջը մէկզմէկ ողջունելով, իւրաքանչիւր ոք իրենց անկողնոյ սենեակին քաշուեցան, և ըռութիւնը սկսաւ թագաւորել տանը մէջ։ Հեղինէ իր սենեակը քաշուելուն պէս սկսաւ Մինրդատի կեանքը հանար աղօթել, խեղճը երբ կը յիշէր անոր բանտարկութիւնը՝ տակաւին կ'սկըսէր դողալ, և աղօթքին մէջ, ով Տէր իմ Աստուած, աւելի աղէկ չէր ըլլար, որ հօրս գործած բնակարանին մէջ կենալով հանդիստ կեանք վարէի, քան թէ այսպիսի փառաւոր տան մը մէջ կենացս օրերը թշուառութեամբ անցունէի ըսելով, դէմքը երկու ձեռքին մէջ առած երեսի վրայ գալով սկսաւ լալ, բայց քունը յաղթելով անկողնոյն վրայ ծռաց։

ԱՆԻՐԱՒԸ ՎԱՏՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԳՈՐԾԷ

1859 տարւոյն Սեպտեմբեր 4 գիշերը ժամը 6ին միջոցները, Մուսալլայի մօտ անել փողոցի մը մէջ մեծ տան մը գետնայարկին վրայ գտնուած փողոցը նայող սենեակներէն մէկուն մէջ ճրագի մը լոյսը կը տեսնուէր, որն որ թէ պատուհաններուն փոքրութենէն, թէ ապակիներուն անմաքրութենէն և թէ վարագոյրներուն մեծագոյն կտաւէն դրեթէ աննշմարելի էր այն ճրագին լոյսը։ Բայց հետաքրքիր անցորդին ալ աչքէն չէր վրիպեր, մանաւանդ այս տանը մէջ բնակող անձին ինչ մարդ ըլլալը հոն յաճախողներէն յայտնի էր։ Ամրդէն ցորեկը ամենեւին ոչ դուրս կելնէր և ոչ ալ հիւր կընդունէր, բոլոր եկողները կէս գիշերը մէկ երկու ժամ անցած կուգային, սեւ վերարկուներու մէջ փաթաթուած։ Ամէս տունէն դրեթէ հրահանգ կերթար գողերուն, քսակահատներուն, մարդասպաններուն և մարդադաւներուն, մէկ խօսքով այս տունը գանազան որջ մ'էր, ուր առանց երկիւղի ամեն տեսակ ոճիր կըրնար 'ի գործ դրուիլ։

Դառնանք մեր պատմութեանը։ Ամէս աղօտ լոյսը տեսնուած սենեակին մէջ, դրասեղանի մը առջեւ մէկը նստեր չարունակ գրելու զբաղած էր, և կերեւէր որ այս մարդը իւր գրածին չարադրութեանը չէր հաւներ, վանդի կիսկատար գրուածներ դրասեղանին վրայ դիզուած կը կենար, նոյնպէս այս անգամ ալ դարձեալ կիսկատար գրուած թուղթ մը մէկդի նետելով, ուրիշ մաքուր թուղթ մ'առաւ և սկսաւ ուշադրութեամբ գրել։

Դառնանք մեր պատմութեանը։ Ամէս աղօտ լոյսը տեսնուած սենեակին մէջ, դրասեղանի մը առջեւ մէկը նստեր չարունակ գրելու զբաղած էր, և կերեւէր որ այս մարդը իւր գրածին չարադրութեանը չէր հաւներ, վանդի կիսկատար գրուածներ դրասեղանին վրայ դիզուած կը կենար, նոյնպէս այս անգամ ալ դարձեալ կիսկատար գրուած թուղթ մը մէկդի նետելով, ուրիշ մաքուր թուղթ մ'առաւ և սկսաւ ուշադրութեամբ գրել։

Ճիշդ այս միջոցին էր որ սպակւոյ մը մեղմ բաղխիւնը լսուեցաւ, դրադիրը գլուխը դարձուց ձայնին, և երբ երկրորդը լսեց, անմիջապէս գրիչը մէկ կողմ նետեց, երկու քայլով պատուհանին մօտեցաւ և սկսաւ վարագուրին բաց կողմէն փողոցը դիտել, երբոր նշան մ'ալ ընդունեց, այն է պատուհանին շրջանակը ըղունքով քերթել «բարեւսամ է» մրմնջեց դրադիրը և սենեակէն դուրս ելնելով տանը դուռը բացաւ, որ սեւ վե-

բարկուոյ մը պըլլուած բարձրահասակ մարդ մը դռնէն ներս մտնելով, դուռն ալ անմիջապէս գոցուեցաւ։ Ո՛վ էր գրադիչը, Մ. Տէրպէնտ, և ոմէ պիտի ըլլար եկողը, հարկաւ իւր արբանեակներէն մէկը։

— Ի՞նչ ըրիր Սպիրօ, հարցուց խեղդուկ ձայնով։

— Ամէնայն ինչ կատարեալ է, պատասխանեց Սպիրօ։

— Օրհնեալ ե Աստուած, գոչեց Մարտիրոս, ուրեմն ներս եկուր ուրնդի պատմէ մանրամասնաբար ըսելով՝ ձեռքէն ըրածնոյ և մեկուսի սենեակը մտան։

— Պատմէ հիմայ տեսնեմ, ինչպէս գործեցիր, բաւ Մարտիրոս, դուրը գոցելէ և պարզնակը լաւ մը պնդելէ ետքը։

— Հարցերդ ըսաւ շատ ըլլալուն համար, որ մէկէն ըսկսիլս չեմ գիտեր։

— Նախ կուզեմ իմանալ թէ՝ նաւամատոյց կարապետան ինչ ըրիր, հարցուց Մարտիրոս անհամբերութեամբ։

— Դաշոյնիս երեք հարուածովը անոր գործը լմնցուցի, այդ մասին անհոգ եղիր։ ալ անկէ վախնալու տեղ չմնաց։

— եւ Մինրդատը։

— Ցօթին չէ կրցած գտնել զայն, քանզի չեմ գիտեր ինչ պատճառաւ այս գիշեր ժամ երեքին միջոցները, ոստիկանութեան կողմէն տունը կոխեր և Մինրդատը բռներ տարեր են։

— Բայց ոնր։

— Ոստիկանութիւնը մարդը որ կը տանի, հարկաւ բանտ։

— Ի՞նչ կըսես, այդ անկարելի է, բաւ տատամսելով Մարտիրոս, և քիչ մը մտածելէ վերջը՝ ինչ պատճառաւ ըլլալը չէ կրցեր իմանալ, հարցուց։

— Ամենեւին տեղեկութիւն մը չէ կրցեր առնել. սպասաւորներէն և ոչ մէկը տեղեկացած են այս գաղտնեացը և տանը դրան առջեւ ոստիկանութեան զինուորներ անդուլ կը հսկեն եղեր, որով արդիլուեր է թէ՛ ներս և թէ դուրս մարդ երթալը։

— Ա՛յ չար սատանայ, այդ քու Ցօդիդ անպիտան մէկն է եղեր չըսե՞ս. այս գործին մէջ թէօխար պէտք էր ըլլար, այն արիւնի ալ ո՞ր կորսուեր է։

— Օհօ, ուրեմն դուք չէք գիտեր։

— Ի՞նչ բան։

— Թէօխար վեց ամիս է բանտն է, և այս օր ալ դվնասուելուն վճիռն եկաւ։

— Ի՞նչ կըսես, բայց պատճառը։

— Պատճառը, ասկէ տարի մը առաջ գատը դիւղ Մինդրըդատը տան մը մառանին մէջ բանտարկեընիս է, որն որ անօթութենէ պիտի մեռցնէինք։

— Գիտեմ։

— Ինչպէս գիտես։

— Իմացած եմ։

— Մոխիկ ըրէ. նոյն դիշերը Թէօխար և դիս նոյն տանը մէջ ձգեցով, ինքը պարոնի մը հետ դուրս եկաւ։ Թէօխար կինն մը ունի եղեր Ռօզ-Տանտան անուամբ, ինչ կըսես զուարճալի անուն մը չէ։

— Շարունակէ։

— Ռօզ-Տանտան ցորեկուընէ նոյն տանը տիրոջմէն իմանալով որ դիշերը ժամը եօթնին ատենները Թէօխար հոն պիտի գայ, փողոցին մէջ սպասեր է. բարեբաղդաբար տունն եկած ատեննիս չէ տեսեր. վասն զի հարկաւ Մինդրդատը նոյն վիճակին մէջ պիտի տեսնար, այն ատեն ալ ամենուս համար մնաս բարով։

— Վերջը։

— Վերջը, Թէօխար նոյն պարոնին հետ փողոցին մէջ դըտնեաւ ազբիւրին աւջեւէն անցած միջոցին, կինը զաւակս, զաւակս գոչելով, Թէօխարին ընկերոջը դիրկը կնայ, և զարմանալին այն է որ պարոնը կամ Թէ նոյն կնկանը զաւակս գոչածը Թէօխարին որդին է եղեր։

— Կը զաւանցնե՞ս, ինչ կըսես, պետրոս Նաղարօֆ անոր որդին։

— Ընաւ՛նը չէի գիտեր, բայց այն կնկանը զաւակն է եղեր. կնիկը իր զաւակը գտած միջոցին՝ խուճապ մը ստիկանութեան դիշերապահ պինտուներ վրայ կը հասնին, Թէօխար տեսնելով

որ այս կնոջ ձեռքէն ազատելիք չունի, կնկանը կուշտին դա-
ջոյնի հարուած մը կուտայ և կինը առանց ճիչ մը հանելու գե-
տինը կը գլտորի։ Ուստի Թէօխար այս առիթը ձեռքէ հանել
չուզելով ընկերոջը հետ աներեւոյթ կըլլան. զինուորները կա-
պան և կինը վերցնելով կը տանին պահակատունը. երկրորդ
օրը կինը հարցափորձելով ամեն բանի կը տեղականան և կար-
ւին Թէօխարը վնասուելը. Ասկէ գրեթէ վեց ամիս առաջ բըռ-
նուելով խիստ բանտարկութեան մը տակ գրին. ետքը նշան-
ակի գողերուն գլխաւորն ըլլալն ատուգուելով իմաց դատա-
պարտուեցաւ։

— Ափսոս, ըսաւ Մարտիրոս, եթէ իմացած ըլլայի, ես
կազատէի զանի։

— Արդարև ես ալ շատ ցաւեցայ, մանաւանդ թէ զմեզ
չէր մատնած։

— Բայց ինչ որ է, հիմայ քեզի նամակ մը պիտի տամ, որ
Ոստիկանութեան պաշտօնէին տանիս, ըսաւ Մարտիրոս։

— Ի՞նչ ըսիր, ո՛հ, խելքդ սիրեմ, աւելի աղէկ չէ՞ որ ը-
սես, Սպիրօ, կախաղանին չուանը ձեռքդով վիզդ անցուր։

— Բայց դուն առանց տեսնուելու պիտի յանձնես։

— Անկարելի է ինձի համար, սակայն եթէ կը հաճիք Հայր
Դանիէլին ձեռքով կրնամ տեղը հասցնել այդ նամակը։

— Հոգ չէ, որու ձեռքով որ ըլլայ թող ըլլայ, բաւական է
որ նամակս իւր տեղը հասնի։

— Եթէ այդպէս է, դրէ տուր։

— Շատ աղէկ ըսելով, գնաց գրասեղանին առջեւի աթո-
ռը նստաւ և սկսաւ դրել այսպէս։

«Նորին Բարձրութեան անձնուէր ծառան տոսկալի գաղտ-
նիք մը կը յայտնէ։

«Մեր բարերարին դէմ դաւաճանութիւն մը կայ, որուն
անդամները... անձինքները են, և առնոյ պարտադրութիւնը ու-
րացող մ'է, որուն անունը Սօֆեան պէյ է. յարձակումը վաղը

կէս օրին պիտի ըլլայ, դաւակիցներուն կեդրոնը Ս... հրապարակին է»։

Հաւատքն ու անյուսութիւնը

Նամակը ծալլելով պահարանին մէջ դրաւ, կնքեց և յետոյ Սպիրոյին դառնալով,

— Ա՛ռ այս նամակը և անպատճառ քսած տեղս յանձնէ, վանդի մեր ամենուն բախտը այս նամակէն կախեալ է։

— Շատ աղէկ, ուրեմն ես այս գիշեր իւր տեղը կը հասցընեմ, ուրիշ հրաման մը ունի՞ք, հարցուց Սպիրօ ոտքի ելլելով։

— Կեցի՛ր, մնաքս ուրիշ խորհուրդ մ'եկաւ, այո՛, պէտք չէ որ այս նամակը Յասիկանութեան յանձնուի։

— Հապա ո՞ւր, հարցուց Սպիրօ չունչ առնելով, վանդի Մարտիրոսի առաջարկութիւնը խիստ ծանր էր իրեն համար. կամաւ ինքզինք ոստիկանութեան պիտի մատնէր, քանդի արդէն ատոնք ալ կասկածելի էին։

— Այս նամակը գլուխը գիւղ... իշխանին տունը տարուտի կը խնդրեմ որ դուք երթաք և անձամբ իրեն յանձնէք։

— Անկարելի է, ինչու որ արդէն ես շատերէն կասկածելի եմ, ինչպէս որ ըսի՝ անմիջապէս ձիս պիտի ճանչնան և ասոր հետեւութիւնները ալ կրնաք...

— Այդ կողմէն ամենեւին մի՛ վախնար, վանդի... Իշխանը Սօֆեան պէյի դէմ սաստիկ ատելութիւն մ'ունի և թերեւս վարձատրութիւն մ'ալ կընդունիս։

— Այո՛, բանտ և անկէ՛ ի կախաղան, ո՛չ, ո՛չ, ես դեռ ապրելու փափաք ունիմ, այս յանձնարարութիւնդ ուրիշի մը ըրէ ըսելով, ձեռքի թուղթը դրասեղանին վրայ դրաւ։

— Ի՞նչ կընես Սպիրօ, դոչեց Մարտիրոս, իմ ամեն ակընկալութիւններս ի դերեւ պիտի հանես, ճշմարիտ կըսեմ որ դուն տղայ ես, միթէ չես մտածեր որ ես չէ թէ քու բանտարկուիդ՝ այլ գլխով ճանչնալին անգամ չեմ ուզեր, ձիս այնչափ անխելք կը կարծես, թէ որ նաւավարին դործին նկատ-

ամէն քէզի հարցուփորձ ընեն՝ հարկաւ դիս ալ պիտի մատնես, վերջը ինչ կըլլանք, անշուշտ պիտի չանաս աղատել զքեզ, և կարծեմ դուն իմ ինչ բաներու կարող ըլլալս չես գիտեր, բաւ ծանրութեամբ։

— Բայց ստակ չունիմ, յարեց մարդասպանը աներեւոյթ վախ մը զգալով Տէրպէնտէն, որ խօսած միջոցին տոկալէ կերպարանք մ'առած էր. ուստի մեքենաբար նամակը դրասեղանին վրայէն առաւ և սպասեց թէ ինչ պատասխան պիտի տայ. Մ. Տէրպէնտ առանց բառ մ'արտասանելու դրպանէն տասը քսաննոց թղթադրամ հանելով Սպիրոյին տուաւ։

Սպիրօ սեւնեակէն դուրս ելաւ։

— Կեցիր, գոչեց Մարտիրոս, թուղթը յանձնելէդ վերջը կուզեմ որ անմիջապէս հոս գաս և ինծի լմացնես թէ գործը ինչ կերպարանք առաւ։

— Շատ աղէկ, պատասխանեց Սպիրօ, և տանը դուռը գոցելէն և աներեւոյթ ըլլալը մէկ եղաւ։

— Էհ, գործը կարգին է, մրմնջեց Մարտիրոս, և տանը դուռը զգուշութեամբ գոցեց ու սեւնեակը վերադառնալով սկսաւ ինքնիրեն խօսիլ այսպէս։

— Էյ, հիմայ գործելու կարգն եկաւ, պէտք է աշխատիլ բայց ոչ թէ ուրիշի համար՝ այլ իմ ապագաս ապահովելու համար, ալ վասիլ չկայ, եթէ Գրիգորն ալ Ալիֆէին հետ սպանուի՝ այն ատեն ամեն հարստութիւն մեր ձեռքն է. այսինքն Մարտիրոս Տէրպէնտին. խեղճ եղբայրս ալ, միամտաբար կը կարծէ որ ես իրեն համար կաշխատիմ, աւանակ, ծն, քեզ տեսնեմ Մարտիրոս, այսչափ հոգնութեան վրայ քթախոտ մը քաշէ ըսելով, դրպանէն քթախոտին տուփը հանեց և ձեռքին երկու անգամ զարկաւ, ինչպէս որ սովորութիւն է ընդհանրապէս քթախոտ գործածողներուն մէջ. և երբ կը պատրաստուէր տուփը բանալ, յանկարծ տանը դուռը բախեցին. Տէրպէնտ սկսաւ դողալ, սիրտը բաբախել, սկսաւ ըսել ինքնիրեն թէ ով կրնայ ըլլալ որ այս ատեն առանց բարեւկամական նշան մը ցոյց տալու իմ տունս գայ. վան

զի այս տունը յաճախող բարեկամները՝ երկու անդամ պատահաննեըուն ապակին մեղմովին կը բաղխէին, և մէկ անդամ ալ ջրջանակը ըղունքով կը քերթէին. բայց այս անդամ առանց այսպիսի նշանի մը դրան բաղխումը զինքը շուարեցուցած էր. Ուստի ինքզինքը քաջալերելով պատուհանը կուզէր բանալ. այս միջոցին դարձեալ դուռը բաղխեցին: Անմիջապէս բաղմոցէն վար իջաւ և գրասեղանին մօտենալով վրայի գտնուած ցուցանակները թղթերն ու նամակներն ամբողջ ժողվեց, գաղտնի գզրոց մը բացաւ և անոր մէջ զետեղելով գոցեց ու աճապարանօք սենեակէն դուրս ելաւ դուռը բանալու:

Եկողը Պետրոս Նաղարօֆն էր:

— Այս ատեն ինչ հով փչեց, Պէյ, հարցուց Մարտիրոս:

— կը յուսամ որ ներողամիտ պիտի ըլաք, պատասխանեց Նաղարօֆ, զձեզ անհանգիստ ընելուս, վասնզի այս ժամանակ ոչ ոք հիւրընկալութիւն կընէ, սակայն ամենակարեւոր գործի մը համար եկայ որն որ խիստ ստիպողական է:

— Հոգ չէ Պէյ, կը տեսնեմ որ դուք ալ Տէրպէնտը լաւ ճանչցած ըլլալու չէք, մեր մէջը պէտք չէ որ այսպէս խօսքեր ըլլայ, և ինչո՞ւ ոտքի վրայ կեցեր էք՝ հրամմեցէք նստինք, վասնզի հոգնած կերեւաք, ամոռ առէք, նստինք և ընտանեբար խօսակցինք:

— Մեծապէս շնորհակալ եմ ձեր բարեսրտութենէն, զի՛ջերուան այս ժամուն եկող հիւր մը՝ որ չիտակն ըսելով անքաղաքավարութիւն է, այս աստիճան յարդելնիդ՝ ձեր առաքինութեան յանչափս ըլլալը կը յայտնէք, ըսելով՝ ամոռի մը վրայ նստեցաւ գրպանէն գլանիկ մը հանելով վառեց ճրագէն ու սկսաւ խօսիլ:

— Ասկէ գրեթէ վեց օրը ամիս առաջ Ղալաթիա զձեզ կողոպտեր էին:

— Այ՛, այնպիսի բան մը պատահեցաւ, ըսաւ Մարտիրոս, արտին յուզմունքը յայտնել չուզելով, սակայն ոչինչ բան մ'էր, վրաս պտնուածը, խիստ ոչինչ:

— Այ՛, միանգամայն նամակներ ալ կան եղեր ձեր վրայ՝

անոնք ալ աւազակաց ձեռքն անցեր են, որոնք օրհորդին պա-
տուոյն կը վերաբերի։

— Ո՛ւսկից իմացար, հարցուց Մարտիրոս զարմացմամբ։

— Այս եղելութիւնը օրհորդ Ամել լնծի պատմեր էր, ես
ալ այն օրուընէ սկսայ զձեզ կողոպտող աւազակները վնասուե-
ր այդ նամակները ձեռք ձգեմ՝ ինչ գնով ալ որ ըլլայ։

— Յաջողեցա՞ր ուրեմն։

— Դժբաղդաբար ոչ, սակայն իմացայ որ պարահանդէսի մը
մէջ զձեզ կողոպտողին մայրը Մինրդատին կը հանդիպի և որով-
հետեւ պարահանդէս գացողները դիմակաւորեալ են՝ կինը
ձեզ կարծելով նամակները Մինրդատին կը յանձնէ, վո-
խարէն իւր որդւոյն ազատութիւնը պահանջելով։

— Ա՛հ, կորսուեցանք, գոչեց Մարտիրոս, երկու ձեռքը
գլխուն զարնելով։

— կեցիր, մ՚աճապարեր, ըսաւ նազարօֆ Տէրպէնտին
ձեռքէն բռնելով, ես որ լսեցի այս եղելութիւնը նոյն գիշեր
Մինրդատը բանտ գնել տուի։

— կեցցե՛ս, գոչեց Տէրպէնտ հանգիստ շունչ մ՚առնելով,
կեցցե՛ս. բայց ի՞նչ միջոցաւ։

— Խիստ ամենապարզ միջոցաւ։

— ի՞նչպէս։

— Որովհետեւ գիտէի թէ այս գիշեր Սօֆեան պէյ պիտի
մատնուի, նամակ մը գրեցի Յատիկանութեան, ըսելով թուղթ
մը հանեց գրպանէն և Մարտիրոսին ներկայացուց։

«վսեմ. Տէր.

«վաղը կէս օրին դատաստութիւն մը պիտի ըլլայ՝ որն որ
ուրիշ նամակաւ մը կրնամ ընդարձակ տեղեկութիւն տալ ձեր
վսեմութեան, սակայն հիմակու հիմայ անհրաժեշտ պէտք է
որ Մինրդատ Ալիխար անուն անձը որ... իշխանին սեղանա-
ւորն է՝ բռնուի, վասնզի այս անձը դատաստան գլխաւորին
օգնականն ըլլալով, կրնայ իմաց տալ անոնց և դատաճանները
անպատուհաս մնան»։

Ձեր անյնուոէը

և հաստատութիւն ձատան

Նամակն առաւ և աճապարանօք ճրագին առջեւ դնաց ու հոն սկսաւ կարդալ։

— Է, այս նամակը ի՞նչ վախճան ունեցաւ, հարցուց Մարտիրոս։

— Վախճանը, Միհրդատ բանտարկուեցաւ, պատասխանեց Նազարօֆ։

— Բայց նամակները։

— Նամակները անշուշտ իւր քովն է, բայց ես մտածելով որ ձեր Սօֆեան պէտի ըրած մատնութիւնը, Ոստիկանութեան իբր վատ թշնամութիւն մը ցուցնելու համար, կարելի է Միհրդատ այն նամակները Ոստիկանութեան կը յանձնէ, ուստի տունը կոխող հարիւրապետին պատուիրեցի որ Միհրդատը բռնելու ատեննին թոյլտուութիւն չընէ, տունէն բան մ'առնելու, ըսել է որ հիմայ այն նամակները աւուր մնացած են։

— Կեանքս չնորհեցիր, պէյ, հիմայ քիչ մը շունչ կառնեմ, ըսաւ Տէրպէնտ ուրախութեամբ։

— Բայց ի՞նչ կը պարունակէին անոնք՝ որ այսչափ ձեզ զբօսութիւն կը պատճառէ։

— Ինչ կը պարունակէ... ամեն բան նախ ձեր այն նամակը, զոր Միհրդատ փաթքալայէն տանը մատանը փոխադրելը կիմացնէր, երկրորդ իմ օրիորդ Աթէլի գրած նամակս, որ մեր գործերուն խոչընդոտ եղող աղջիկ մը թունաւորելու համար գրուած էր, վերջապէս որ մէկն ըսեմ, մէկ խօսքով մեր կեանքն ու մահը այն նամակներէն կախեալ է։

— Ըսել է անպատճառ այդ նամակները մեր ձեռքն անցնել պէտք ենք։

— Եւ որչափ կարելի է շուտ կերպով։

— Միաքս բան մը կուգայ։

— Ի՞նչ, հարցուց Մարտիրոս աչխուժով։

— Միհրդատին տունը կին մը կայ, որ միշտ կը պնդէ թէ իմ մայրս է։

— Սղէկ։

— Այն գիշերը, զոր Միհրդատ պարահանդէսին մէջ ձեռք

անցուդարձը է նամակներուը, այդ կինն ալ հոն գտնուելովը անոնց ի՞նչ պարտականելուն հարկաւ վերահասու եղած է, վասն անմիջապէս կերթամ այն կնկանը և իւր որդին ըլլալս կիմացնեմ և կը խնդրեմ որ կամ այն նամակներուն մէջի պարտականութիւնը և կամ անոնց ո՛ւր ըլլալը եթէ ինք գիտէ, իրմէ կատնեմ։

— Օքսանչելի խորհուրդ մը յղացար, ըսաւ Մարտիրոս, համբուրելով զնազարօֆ։

Ձիշդ այս միջոցին էր պատուհանին ապակին մեղմովին բախուիլը լսուիլը լսնացուեցաւ քիչ մ՚ետքը երկրորդ մ՚ալ։

— Բարեկամ է, ըսաւ Տէրպէնտ և կարծեմ որ Սպիրօն է, յաւելցուց, վասն զի նազարօֆ չվոխած էր, ով պիտի ըլլայ այս ատեն հոս եկողն ըսելով։

— Ի՞նչ լուր ունիս Սպիրօ, հարցուց Տէրպէնտ դուռը բանալով։

— Ողէկ գուշակեր էիր, վասն զի կարծես նամակդ դիւթեալ էր, անմիջապէս իշխանին ապարանքը տակն ու վրայ եղաւ և իշխանը նոյն ժամուն իւր սպասաւորներէն երկու հոգի Բերայի ոստիկանութեան կայանը խաւրեց որ Ս... պէյը ձերբակալեն։

— Օ՛հ, օրհնեալ է Աստուած, ալ հիմայ կրնամ հանգիստ ննջել, պետրոսիկ պէյ ձեզի հոս անկողին մը պատրաստել տամ։

— կաղաչեմ սիրելիս, շեմ ուզեր որ իմ այս տանը մէջ գըտնուելս մարդ իմանայ։

— Մ՚ետքդ կը հասկնամ, սակայն անհոգ եղիք դուք այդ կողմէն ըսելով՝ դարձաւ Սպիրոյին, դու գնա և վաղը երեկոյ դարձեալ հոս գտնուէ՝ կիմանամ։

— Շատ աղէկ, ուրեմն հիմակու հիմայ ճնաք բարով, ըսելով գնաց։

— Անկողին պատրաստէ, հրամայեց որ նոյն միջոցին սեննեկին զանգակին ձայնը տարուած կին մը ներս կանչեր էր, և դուք պէյ հրամայեցէք վեր երթանք որ հանգստանաք, և երկուքը միասին տանը վերի յարկն ելան։

ԲՈՒԻՆ ՁԱՅՆԸ

Հաղիւ արշալոյսը սխուր քօղն մերկացեր և նաղելով դուրս կելլեր առագաստէն իր լուսափուռ դէմքը երկրագնդին մէջ պարունակեալ արարածոց ցոյց տալու, և հաղիւ երկնքին կանդեղները սկսեր էին մարիլ, Պօլսոյ կողմը օդին մէջ բուռ մը կը տեսնուէր, որ սաւառնելով կը շրջէր։ Այս բուն Ս... հրապարակին վրայ երեք անգամ շրջան ընելէն վերջը եռայարկ տախտակաշէն տան մը բարձր ծխնելոյղին վրայ իջաւ, և հոն քանի մը վայրկեան կեցնելէն ետքը սկսաւ ողբալ իւր սովորական եղանակաւը ու՜ւ ու՜ւ ու՜ւ։

Այս գուժաբեր ձայնը չանթահար ըրաւ, ոյն տանը մէջ օրօրուան տեղն ունեցեալիք ապստամբութեան վրայ խորհողները. քիչ մը ատեն խորին լռութիւն տիրեց ժողովականաց վրայ, թէպէտև ժողովին նախագահը այսպիսի առաստղեբանութիւններու հաւատ ընծայողներէն չէր, սակայն կան այնպիսի վայրկեաններ որ մարդ ինքզինքը բոլորովին կը կորանցնէ. նախնիք թէև միամտաբար խօսած են շատ առաստղները, բայց անգամ մը եթէ պատահի՝ալ անկէ ետքը գործը իրական կերպարանք մը կառնու ու անկարելի կըլլայ մոռնալը։ Խօսքս այժմեան երիտասարդութիւնը պարսաւել չէ, այլ երբեմն նախնեաց խօսքերը յարդելու նպատակաւ, վասնզի անոնց դաստիարակութիւնը առած ենք։ Դառնանք մեր պատմութեանը։

Մինչդեռ բուին ձայնը ժողովականաց վրայ մեծ ազդեցութիւն ըրած, իւրաքանչիւր ոք ալի՛ւերան միացեր էին, մէկ մ՚ալ բարձրահասակ և ծալկաւէտ դէմքով անձ մը ոտքի ելլելով ըսաւ։ Ցեարք իմ, ինչո՞ւ չէք շարունակեր խօսքերնիդ, կարծեմ թռչնոյն գուժը ուժգնագի ըրաւ ձեզ, մանաւանդ դուք, սէր իմ նախագահ, դուք որ մեզի քաջալերը և խրատ խոյս կը կարդայիք, և ինքզինքնիդ այն աստիճան անվճռեր կը ցուցնէիք՝ որ մենք տկարքս սիրտ առնելով՝ ձեր յորդորանք

ըէն այսպիսի գործի մը ձեռնամուխ եղանք, բայց այսօր փո-
խանակ ձեր քաջալերիչ խօսքերէն սիրտ առնելու, դուք ծէր
իմ գլուխ մեր օժանդակութեանը կը կարօտիք, չէ՞ք գիտեր որ
այնչափ մարդիկ կամ մեր պատճառաւ պիտի մեռնին և կամ
չաղթանակելով իւրաքանչիւրն իրեն ապագան պիտի բարու-
քէ, և որովհետև այս անխիժեալ թուչունը մեզի խմացուց գոր-
ծին անյաջողութիւնը, ուստի ի՞նչ ընել պէտք է, եթէ յար-
ձակիմք՝ պիտի մատնուիմք և եթէ չըյարձակիմք պիտի կըր-
նա՞նք անձերնիս և միանդամայն մեզ ընկերակցողներն ապատել,
հարկաւ ոչ, ուստի ըստ ինձ աւելի աղէկ է յարձակիլ, եթէ
յաջողինք փառք, իսկ եթէ չըյաջողինք՝ մահ. ատկայն քա-
ջութեամբ մահուան պոհ ըլլալն ալ դարձեալ փառք է, ըսել
է թէ յաղթեինք և թէ յաղթուինք փառք կայ մեզ. օն ուրեմն
յարձակինք և գործը ցերեկուան չըթողունք, օն դագաղին
առաջինը թող ելլայ, գոչեց.

— Այո՛ յարձակինք, առաջին թագաղը թող ելնէ, գոչե-
ցին ժողովականք միաբերան և իւրաքանչիւրք ալ պիրար համբու-
րելով՝ ական եռեւէ եռեւ տանը ատղուղքէն վար իջնալ.

ԴԱՒԸ ԴԱՒԱԴԻՐՆԵՐԸ ԿԼԼԵՑ

Ս... հրապարակին չրջակայքը, անել փողոցներու մէջ մերթ
ընդ մերթ տուներն կերեւային և անմիջապէս մթութեան և
կամ պուտատաւոր փողոցներուն մէջ անհետ կ'ըլլային. մէկ
մ'ալ հրապարակին մէկ անկիւնէն դագաղ մը բերելնին տես-
նուեցաւ, այս միջոցին հրապարակին վրայ նայող տուներէն
մէկուն դուռը բացուելով երկու հոգի դուրս ելան, դագա-
ղակիրք հրապարակին մէջ տեղը գտնուած չէնքէն ներս մտան.

— Մէկ, ըսաւ տունէն դուրս ելնողներէն առաջինը.

— Կանուխ պատրաստուիլ սկսան, յարեց երկրորդը։

Մէկ կողմէն հրապարակը կը լեցուէր և բազմութիւնը դէպի շէնք կը յառաջանար։

— Նշանաբանին ի՞նչ է, հարցուց առաջինը, որ հրամայական կերպով կը խօսէր չարունակ երկրորդին հետ։

— Արեգակ, պատասխանեց երկրորդը։

— Ֆէյզի հարիւրապետին ըսէ այս նշանաբանը, որ երթայ հրապարակին վրայ գտնուած շէնքին մէջի անցքերը դիտէ։

— Շատ աղէկ տէր իմ, ըսելով հեռացաւ երկրորդը։

— Ատուած լուսաւորէ հոգին, մրմնջեց առաջինը որն որ այս միջոցին դագաղ մ՚ալ կանցընէին, և այս առաջին կոչած անծանօթներս գրպանէն թաշկինակը հանած միջոցին իւր զինուորական հպարտութիւն տակէն երեւաց։

— Ի՞նչ ըրիր, Ֆէյզիին իմնայուցիր հարցուց զինուորականը երկրորդին, որ այն ատեն քովը եկած էր։

— Այո՛, պատասխանեց, և աչքովը տես դռնէն ներս մտնող վաթսունցաւորը այն է, ըսաւ։

— Հին աղուէս, ես անգամ չճանչցայ զինքը։

— Այո՛ շատ վարպետորդի է, բայց ապաբաղդաբար չարունակ դինով է։

— Արդարեւ այնպէս, բայց բնականաբար այսպիսի յաջողակ անձինք մէկ մէկ պակսութիւն կունենան։

Քանի վարկեանի չափ առանց խօսակցութեան այս երկու անծանօթներն անկիւն մը քաշուած կենալով բազմութիւնը կը դիտէին, որոնք հրապարակին վրայ գտնուած շէնքը կը դիմէին, նոյն միջոցին շէնքը գացող կարդացողը իրենց քովէն մօտեցաւ։

— Ի՞նչ լուր Ֆէյզի, հարցուց առաջինը։

— Վսեմափայլ տէր, պատասխանեց, շէնքին մէջ գտնուած բազմութիւնը շատ և միանդամայն զինեալ են անհամբեր կ՚ըսպասեն Ս... պէյին գալստեանը։

— Շատ աղէկ, պատասխանեց. և երկրորդին դառնալով Հ... պէյին յարձակման նշանը տուր, հրամայեց։

— Գլխուս վրայ ծէր իմ, ըսելով հեռացաւ երկրորդը. և քիչ մը վերջը փողի մը ձայն լսուեցաւ։

Ա՛յս ձայնը ամիջապէս փողոցներէն անհամար զինուոր դուրս թափեց որոնք դէպի Ս... հրապարակը յառաջանալով հոն գանուած չէնքը շրջապատեցին։

— Վայ մեզ, դոչեց դռնապանը, մատնուեցանք։

Նոյն միջոցին դրան մէջ սուիններն սկսան փայլիլ, չէնքին մէջ գանուողները յուսահատ կը մրմնջէին, այս մռունջը կը-կնիթ կարուտադրէր. և կսկիծը սպառնալիք, բայց անզօր։

— Անձնատուր եղիք դոչեց որոտալի ձայն մը որ դուրսը տեսած անծանօթներնուս առաջինն էր։

Մռունջները աղաղակի փոխուեցան սակայն անօգուտ. վասն զի անծանօթ զինուորականն առաջ քշեց զինուորները դաւաճանները նեղը մնային, թէև ոմանք ոգի՛ ի ձեռին յամառութեամբ դէմ դնել կուզէին, բայց իրենց թուոյն խիստ նուաղութիւնը տեսնելով անձնատուր եղան։

Անմիջապէս զինուորականք դաւաճաններուն չէնքերը ժողուեցին, և երեք ժամու մէջ հազար երեք հարիւր հոգի զոյգ զոյգ կապելով ծովեզերեայ տեղ մը փոխադրուեցան և քանի մ՚ օրէն եռաքը ուրիշ ձմերանոց մը, որով Տէրութեան պաշտօնէից աչալուրջ հսկողութեամբը յայտնուեցաւ այս սոսկալի գաղտնիքը՝ որուն համար ամենքս յալ երախտապարտ ենք Օսմանեան ամենահզօր դահուն։

ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Ան օրն որ դատաստրութիւնն երեւան ելեր էր, իրիկուան դէմ ժամը գրեթէ տասն և մէկը անցած մէջոյնեերը Բերա թաքսիմին առջեւէն նըշնջեցեալ մը կանցնէր, որուն առջեւէն քահանայ մը կերթար, հանդէսը խիստ անշուք կերպով էր, դագաղին վրան ցնցոտի և գրեթէ դոյնը բոլորուլին կորնցուցած սեւ ծածկոց մը ձգած էին. ետեւէն քանի մը ձկնորսի հագուստով մարդիկ ուղեկցելով. աստղ ետեւէն սեւ շրջազգեստով լաչակաւոր կին մը կերթար որ թաշկինակովը շարունակ աչերը կը սրբէր, ննջեցեալին առաջնորդող քահանային քայլերուն հասնելու համար ստիպուած էր վազել այս խեղճ կինը, աստկաշունչ հոգին քարայատակներուն վրայի ցեխերը չորցուցեր էին. քանի մը վայրկեանէն գերեզմանատան դրան առջեւ հասան բայց դուռը գոց էր։

— Սա դուռը զարկէ՛ք, ըսաւ քահանան, վասն զի ձեռքիս լաչը չեմ կրնար լծուլ։

Դրանը վրան բաղխելի չգտնուելուն համար, ձկնորսներէն մէկը քար մը առնելով սկսաւ ուժգնութեամբ զարնել գերեզմանատան դուռը, բայց ՚ի զուր վասն զի անպատասխանի մնաց։

— Սա դիմացի դիւանատունը նայեցէ՛ք, հոն ըլլալու է դըռնապանը, ըսաւ քահանան։

Չորս դատաստանականները հոգնած ըլլալուն դատաղը գետին դրին, մէջերնուն ամենէն երիտասարդը դիւանատունը երթալով դռնապանը բերաւ. այս մարդը իւր ծերութեամբը հանդերձ երեք պաշտօն կը վարէր, դռնապան, մեռելաթաղ և միանգամայն ժամակոչ էր։

— Ծօ՛, ո՞ւր ես անպիտան, հարցուց քահանան։

— Ծառայ եմ Տէր պապա, շատ ուշ մնացեր է՛ք, այս առեն մեռել կը բերե՞ն ըսելով ծոյլն ահագին բանալի մը հանեց և գերեզմանատան դուռը բացաւ, և որովհետեւ դագաղը ներս

մայնելու համար պէտք է դրան մէւս փեղկն ալ բանալ. ուս-տի երէք չորս հոգի մէկ քառորդի չափ աշխատեցան և հազիւ հազ կրցան դադարը դռնէն ներս մոցնել՝ դրան ձիններուն այն աստիճան ժանգոտած էին՝ որ վոխանակ դուռը ձըխ-նիներուն վրայ դառնալու՝ ձիններուն դարձան դրանը վրայ, այսինքն երկաթները կոտրտեցան.

— Օ՛ն, չուտ ըրէ վոս մը բարէ, ըսաւ քահանան դռնապա-նին, վանդի աաեղը ուշ է.

— Տէր հայր, դուք կարդը կատարեցէք, վատք ՚ի բար-ձունքդ, դարձ անձնիմդ և հայր մերդ ըսէ եւ գնա ես վաղը գայն կը թաղեմ, վանդի այս ցուրտուն վոս բարեը կըլլուե-լու բան չէ, ըսաւ դռնապանը.

— Է՛հ, այդ ալ կըլլայ, ըսաւ քահանան և սկսաւ պօռալ որ-չափ որ ձայնը կրնէր. բայց բարեբաղդաբար լաչակաւոր կինը հետուն ծառի մը տակ կեցած ըլլալուն, այս խօսակցութիւննե-րը չլսեց.

Մէկ մ՚ալ քահանային ձայնը կարծես մարեցաւ և միայն շրթանցը երերալը կը տեսնուէր, հոգւոյ հանդուցեալըը և օրհնեալ տէր մերը լսուեցաւ. Տէր հայրը արարողութիւններէն շատերը կըլլեց, բայց ուշադրութիւն ընող չեղաւ. քիչ մը ետ-քը Աստուած ձեզի շատ օրեր տայ, ապրիք ձեռք զաւկներս ըսելով մօրուքը շոյեց, շուրջառը հանեց, և սկսաւ դէպի մե-ռելաթաղին սեննեակը յառաջանալ. Դագաղակիրք ալ հետե-ւեցան քահանային, և մինչդեռ դռնապանն ալ անոնց պիտի հետեւէր՝ լաչակաւոր կինը յանկարծ մեռելաթաղին մօտենա-լով՝ դողդոջուն ձայնիւ անոր հարցուց.

— Բարեկամ, այս դագաղը դիշերը հո՞ պիտի ձգես.

— Հապա ի՞նչ պիտի ընեմ, աղէկ որ հանգիստ եր աչքս, օ՛ն քեզ տեսնեմ, դու ալ գերեզմանէն դուրս հա՛.

— կաղաչեմ, մարիկ ըրէ սիրելի եղբայր.

— Գիշերատեն գերեզմանատան՛ մէջ մարդ պատկել չըլ-լար, կը հասկնաս ի՞նչ կըսեմ, կնիկ, պօռաց դռնապանը.

— Բայց... ո՛վ Աստուած իմ, եղբայր, այս իմ հայրս է

պարոն, ըսաւ կինը հեծկլտալով և դատաւորին վրայ նետուեցաւ։

— Էյ, երկան ըրիր կնիկ, գոչեց դռնապանը, ալ համբերութիւնս կը հատցնես կոր հիմայ, հօրդ ալ պիտի ըսեմ քեզ ալ։ իմ հայրս ալ մեռած է ինչ ընեմ, վաղն առաւօտ եկու կը թաղեմ, հիմայ չըլլար, կը հասկնաս։

— Ո՛հ, գթութիւն պարոն, գթութիւն. ո՛վ հայր իմ զքեզ հողէն ալ պիտի զրկեն, ա՜հ ՚ի սէր Աստուծոյ կաղաչեմ պարոն, դոնէ հօրս դիակը հակելու համար թող որ այս գիշեր հոս կենամ ըսելով դռնապանին ոտքերուն փարեցաւ։

— Առ քեզի փորձանք մ՚ որ երէկ կրնաս նէ պրծիր. չունչդ անորդի՝ թաղէտսին հետը նարտս ճնաց, ես երկու ունէի այն մէկ, չըլլայ որ մռնամ ըսելով՝ ՚ի դեռ չլմնցար....

— Ֆոս մը փորելու համար ինչ կուզես, հարցուց լաչակաւոր կինը դատաւին վրայէն ատին դալով։

— Ես քու ասկէ հեռանալէդ ուրիշ բան մը չեմ ուզեր, պատասխանեց։

— Որչափ ատակ որ կուզես տամ, և երէկ կը հաճիս քեզ ալ կ՚օգնեմ։

— Ատակ տալ, ըսիր, հարցուց տատամսելով դռնապանը, տեսնեն.ք որչափ ատակ ունիս։

— Որչափ կուզես։

— Է՛հ, աճուրդի ելանք, հարիւր ղուրուշ։

— Առ քեզի երկու հարիւր, ըսելով դրպանէն երկու հատ հարիւրնոց թղթադրամ հանեց, և մեռելաթաղին ներկայացուց։

Ալդէն մութը պատած էր տիեղերք, ուստի թղթադրամը ներս տանելու համար, լոյսի մը կարօտութիւն կ՚զդար, աճապարանօք դիմեց իւր խրճիթը, փոքրիկ լապտեր մը բերաւ, և երբ տեսաւ որ թղթերն ատուդիս հարիւրնոց էին, դիս կը զարմացնես տիկին դոչեց, եթէ ատակ ունէիր ինչո՞ւ համար այսչափ անշուք կերպով կատարել տուիր՝ յուղարկաւորութիւնը քանի որ հայրդ կ՚անուանես, հարցուց։

— Սպանուողին համար յուղարկաւորութեան հանդէս չեն կատարեր։

— Ուրեմն սպաննուած մեռաւ։

— Այո՛։

— Շատ աղէկ, լապտերս թող ձնայ հոս՝ երթամ խրճիթէս քահա և բրինչս բերեմ, ըսելով գնաց։

Ընթերցողք հասկցան թէ սոյն ննջեցեալը, նաւավար կարապետն էր՝ Սալիրոյին կրկնակի դաշոյնէն սպաննուած և այն կինը Հեղինէ, իւր ամենասիրելի աղջիկը, որ խմանալով հօրն սպանուիլն յուղարկաւորութեան հանդիսին կատարմանն ուզեր էր ներկայ գտնուիլ։

ԹՇՈՒԱՌԸ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄԷՋ ԱԼ

Հաղիւ դռնապանը քանի մը ՛քայլ յառաջած էր, Հեղինէ շրջազգեստին գրպանէն սրուակ մը հանելով երկու ձեռացը մէջ սեղմեց, և քիչ մ՛ատեն այնպիսի զայն դիտելէ վերջը, երկար հառաչք մ՛արձակեց, ըսելով։ Ինչո՞ւ մահուանէ վախնամ. միթէ խոյս տալ կրնայ հանդստութենէ, միթէ այս աշխարհիս մէջ մարդուս կեանցն ալէկոծութիւններուն հանգիստը մահը չէ. ես որ այսչափ տառապանք կրեցի աշխարհիս մէջ, քանի որ Հայր մը և պաշտպան մ՛ունէի.... Հոս ընդհատեց խօսքը, և քանի մը վայրկեան լռելէն ետքը դարձեալ սկսաւ խօսիլ։ Ալ հայր չունիմ և ոչ ալ պաշտպան, վասն զի անշուշտ եմ որ Մինրդատ ալ սպաննած են այն դաղաններըը. արդէն իմ ամենասիրելի հաւս մատնուէր էր երբ Մինրդատը տուն էն ձերբակալեցին. ո՜հ, ես անտերունչ մնացի այնպիսի ընկերութեան մը մէջ, որ մատնութեան երեւոյթութեան և վատութեան մէջ աւելի ճարպիկ դանուողը դասինեայ պատիւ կընդունի. իսկ

առաքինութեամբ բարեգործութեամբ և վերհանձնութեամբ ապրողին ... ահ, Մինրդատ, Մինրդատ, ազնիւ և վերհանձն սիրտ, այս տառապանաց աշխարհին մէջ ընդունէ իմ վերջին բաբեւս. երանի թէ յաւիտենականութեան մէջ շուտ գտնէինք զիրար, վայ ինձ, ոհ ես եղայ անոր դժբաղդութեանը պատճառ ըսելով ուղղօրէն սկսաւ արտասուել, և երբ կը պատրաստուէր ձեռքի սրուակը բերանը տանել, մէկ մ'ալ դռնապանը բահն ու բրիչը ուսը բարձած, գետնին տակն անցնին ստահակներն ըսելով՝ ուսէն վար նետեց։

Հեղինէ ձայնէն սթափելով անմիջապէս դարձեալ դրպանը դրաւ սրուակը։

— Ամեն առեն իրենց կըսեմ, ծօ տղաք իմ գործիքներուս ձեռք մի զարնէք, բայց անոնք կարծես ընդհակառակը գործիքներս կառնեն և կերթան ջրակիւռներուն տակը փորելու, հոն մեծ մեծ փոսեր կը բանան, որ վազած ջուրերը հաւաքելով ծախեն և օղիի տակ հանեն. այսու ամենայնիւ անոնք ալ չը խնայուիր, վասն զի, այնպիսի դերեզմաններ մ'ունինք, որ ձըմեռն Անդլանդիան ովկիանոսը կը դառնայ, և ամառը Սահարայի անապատը, ասկից՝ի զատ չորս կողմը բաց, անառակներն եթէ դռնէն վռնտես պատէններս կը ցատկեն պատէն վերեւ կ'ելլեն կուգան, չխտակն ըսելով՝ ես ալ վախուս անոնց բան մ'ըսած չունիմ, ինչու որ եթէ քիչ մը խստութեամբ վարուելու ըլլամ, վազը հոս չեմ գաներ ինքզինքս կըսէր, և միանգամայն կը փորէր դերեզմանը. մէկ մ'ալ գլուխը վեր առնելով ծո հիմայ, խաչօն հոս ըլլար կօգնէր ինձ. արդարև մարդս ամեն առեն ընկերի մը կարօտութիւն ունի ըսելով՝ փոսէն դուրս ցատկեց։

— Սհա լմնցաւ, հիմայ կը մնայ դիակը գերեզման իջեցընել. էյ տիկին պիտի օգնեմ ինծի։

— Ի՞նչ բանի։

— Եկու ոտքերէն դուն բռնէ, ես ալ գլխէն գերեզման իջեցնենք սա դիակը. որչափ խիստ էր այս հրամանը Հեղինէին համար, բայց նուէրական պարտք մ'որ պէտք էր կատարել,

ուսոի դողդոջիւն քայլերուվ դիակին մօտեցաւ, բռնեց ոտքե-
րէն. արդէն դռնապանը բռնած էր գլխի կողմէն, վերցու,
հրամայեց. Հեղինէ թէպէտեւ բռնած էր հօրը սառնացեալ ոտ-
քերը, քաջութեամբ վերցուց և երկու քայլ դէպի դերեզման
մօտեցաւ. սարսուռ մ'ղդաց և պիտի նուաղէր, թողուց ոտ-
քերն և դիակը մեռելամիտին ձեռքէն սահելով՝ ինկաւ փոսին
մէջ երեսն 'ի վայր:

— Ա.րդէն ըլլալիքն ալ այս էր, ըսաւ ժամակոչը և սկսաւ
հող նետել վրան. դիակին վրայ ինկող հողի կոյտերուն ձայ-
ները մէկ մէկ սրի հարուածներ էին Հեղինէին սրտին, քիչ մը
վերջը փոսը գոյուեր էր:

— Բարեկամ, կը խնդրեմ որ այս գիշեր ղիս հոս մինակ
թողուս, ըսաւ Հեղինէ աղաչանօք:

— Ա.ղէկ, բայց ցրտէն պիտի սառիս և ես պիտի ստիպուիմ
վաղն առաւօտ փոս մ'ալ քեզի համար բանալ, ըսաւ դռնա-
պանը կոպտութեամբ ժպտելով:

Հեղինէի ճակտէն սեաւ ամպ մ'անցաւ կարծես:

— Հոգ չէ ես չեմ մեիր. առ այս հարիւրնոց թուղթը և
դնա բարեկամներուդ հետ օղի, լամէ յարեց Հեղինէ:

— Թող այնպէս ըլլայ, ըսաւ ստակն առնելով, եթէ գիշե-
րուն երթալու առեն քնացած ըլլամ, պատուհանիս ապակւոյն
զարկ, ես անմիջապէս կ'արթննամ. չատ աղէկ, ահա ես կ'եր-
թամ դուռ հանգիստ ըրէ, Աստուած համբերութիւն տայ ըսե-
լով հեռացաւ անկէ:

— Աստուած համբերութիւն տայ կրկնեց Հեղինէ, վշտաց-
եալ սրտի համար. այո՛, բայց կեանքէն ձանձրացողի համար, ո՜ն
սոսկալի է այդ համբերութիւնը... ո՜ն հայր իմ. ո՛րչափ վիշտ
կրեցիր ինձ համար, մաքառեցար դժբաղդութեան դէմ, և ա-
ռանց անոր յաղթելու, ամեն տառապանաց համբերեցիր, և այս-
չափ տառապանքներու համբերելէդ վերջը ի՞նչ գտար... փոս
մը... ահա ամեն բան լմնցաւ... ա՜ն ո՛րչափ պարզ է մարդկանց
վերջաւորութիւնը... հը՛, զարմանալի՛... այսչափ թշուառու-
թիւններովը դարձեալ սիրելի է մարդկանց այս աշխարհ...

Ամեն մարդ ոչնչութիւն անունը կուտայ աշխարհիս, բայց կարծես ուրիշ մը չողոքորթելու համար է որ կը գործածեն այս բառը. մի՛ դիտէ թերեւս Սողոմոն ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է գոչած ժամանակ, Սարա թագուհւոյն մեծախառն ընդունելութեան պատրաստութիւնները կը տեսնէր... և վերջապէս ի՞նչ է աշխարհ և ի՞նչ է մարդս, անհունութեան մէջ ոչինչ, ըսելով հօրը ոտքերուն կողմը ծնկան վրայ եկաւ և սկսաւ աղօթել այսպէս "Ո՛վ Տէր, դու որ յաւիտենականութիւն խոստացար մարդուս, ընդունէ թշուառս ալ, որ որքէ և անտէրունչ մնացած է այս աշխարհի մէջ, փրկէ նաեւ Մինդատիս հոգին երթէ մեղայ մէջ գանուի. ո՜հ, Տէր իմ Աստուած, արդեօք անձնասպանութեանս պիտի ներուի՞" ըսելով սկսաւ արտասուել:

Գիշերուան վեցերորդ ժամուն մօտեցեր էր, հիւսիսային հողմն սկսեր էր ղայրանալ, լուսինն անգամ իւր դէմքը ծածկած էր այդ անմեղ ոգւոյն զենմանը համար. գերեզմանատան ծառոց տերեւազուրկ ոստերն իրար կը զարնուէր, սաստկաշունչ հողմոց մռնչումն և ոստերուն միմեանց բաղխումը մեծ հրդեհի մը ճարճատման ձայները կը հանէր:

Հեղինէ ոտքի ելած էր, շուարած աչերը ժուռ ածեց բոլորտիքը. և սարսռաց... հառաչանք մ'ելաւ կոկորդէն և արուակը դրպանէն հանելով ձեռացը մէջ բռնեց. խոր մտածութեան մէջ ընկղմած կերեւէր աչերը արուակին վրայ յարած ... այո՛ մրմնջեց, պէտք է որ մեռնիմ. սակայն եթէ դերեզմանին մէջ ալ հանգստութիւն չկայ... ա՜հ ո՛չ, ո՛չ, Աստուած դթած է, չուզեր որ արարած ք յաւիտեան տառապին, և ինչո՞ւ տառապեցնէ, միթէ մարդս ստեղծուելէն առաջ չարութիւն մը գործա՞ծ է, նոյն ինքն Աստուած իւր անստուգ բերնոլը բարի՛ք գործողին երջանկութիւն և երանութիւն չը խոստացաւ յաւիտենականութեան մէջ:

Սակայն մարդիկ վոխանակ յաւիտենականութեան սպասելու, աշխարհիս մէջ անուն մը յօրինած են ինքզինքնին թշուառացնելու համար, այն է երջանկութիւնը: բայց միայն այս բա-

ուին անուանը կայ իսկ ինքը ոչ... և միթէ հարստութեան, փառքի, անուան դեղեցկութեան, զեղխութեան մէջ է այս երջանկութիւն բառը, վերջապէս ամեն անոնք, որ մարդոց ա-կանջին քաղցրալուր անուններ ունին, միթէ բոլորն ալ անցա-ւոր չե՞ն... ուրեմն քանի որ պատրանաց աշխարհի մէջ կապ-րինք և քանի որ մարդոց համար տեւական բան մը չկայ, երջանկութիւն ըսածնին նոյն ինքն թշուառութիւնն է... չկայ այնպիսի այլանդակ բան մը որ մարդիկ մտածած չըլլան, նոյն ինքն մեծ հանճարի տէր կարծուածները, բայց բարեբաղդա-բար այս անձանց ցանկը խիստ պզտիկ է։

Վերջապէս քանի որ աշխարհիս մէջ ամեն բան ընդունայն է, և անհաստատ վիճակի մը մէջ կը գտնուի, նոյն իսկ աշ-խարհքս որ անցաւոր և առժամանակեայ տեւողութիւն մ'ու-նի և դէպ'ի յաւիտենականութիւն կարճ ու անխոտոր ուղի մ'է, ինչ հարկ կայ նոյն ճամբուն վրայ դեգերիլ, քանի որ ուշ կամ կանուխ հանգստութեան մը կարօտութիւնը կ'զգայ մարդս, ինչպէս ալեկոծեալ նաւը նաւահանգստի մը. ուստի ես որ քա-ղ իսկ խելամուտ եղած եմ թէ յաւիտենականութիւն մը կայ, թէ հոն հայրս պիտի տեսնեմ և թէ Միհրդատէս անբաժանելի կեր-պով պիտի ժիանամ, ահաւասիկ յօժար կամօք պիտի դիմեմ մահուան դէրկը, ըսելով ձեռքի սրուակը բերնին մօտեցուց և առանց վարանելու մէջի գտնուած հիւթը 'ի մի ումպ խմելէ ետքը, հօրը դերեզմանին քով նստելով ձեռն 'ի ծնօտ սկսաւ արտասուել։

Հետեւեալ առաւօտ տարօրէն մարդ մը բերայի դերեզմա-նատան դուռը կը բախէր։ Այս անձը մեր վաղեմի ճանչցած Արիֆէին հետ փարիզ գացող Մարդար ծառան էր, որ Մի-հրդատ քովը էր առած հաւատարմութեանը համար, և ո-րովհետեւ Հեղինէ առջի իրիկունէ տունէն անյայտ ըլլալուն՝ սպասաւորները տակն ու վրայ եղած, կուզէին դուրսը փնտռել գանի, բայց նոյն գիշերը ինչպէս որ ըսինք, ոստիկանութիւնը տունը պաշարելով դուրս մարդ ելնելը արգիլեր էր, ուստի ա-ռաւօտուն Մարդար յարմար առեն գտնելով ինքզինք տունէն

դուրս նետեր եկեղեցի գացեր էր, և հոն իմանալով որ կարապետ Բերայի գերեզմանատունը թաղուեր է, առանց վայրկեան մը կորանցնելու ուղղակի դիմեր էր հոն. և որովհետեւ տակաւին լոյսը ծագած չէր, հետեւաբար դուռն ալ գոց ըլլալուն սկսեր էր բաղխել։

— Ո՞վ է այն, կը պօռար դռնապանը ներսէն խեղդուկ ձայնով մը։

— Բաց, բաց, բարեկամ, հարցում մ'ունիմ քեզ, պատասխանեց դուրսէն Մարգար։

— Այս ցրտան հարցո՞ւմ կըլլայ, ըսաւ խեղդուելու չափ հաղալով, որն որ դիշերուան խանձ օդին ազդեցութենէն ըլլալը կը յայտնէր. տարօրինակ բան, մտմտաց, դրան փեղկը կէս մը բանալով։

— Էյ, բարեկամ, առանկ բան մը ոտիկանութիւնն անգամ չընէր։

— Քեզի բան մը պիտի հարցնեմ։

— Ի՞նչ պիտի հարցնես հարցուր, բայց նախ ներս եկուր, վանդիր այս ցրտան հոս չը խօսուիր։

Մարգար դրան քովի խրճիթը մտաւ և անհամբերութեամբ դռնապանին գալուեանը կըսպասէր։

— Հիմայ տեսանենք ի՞նչ է հարցունելիքդ, ըսաւ դռնապանը խրճիթէն ներս մտնելով։

— Երէկ իրիկուան դէմ հոս ննջեցեալ մը բերի՞ն։

— Այո, բայց այն մարդը ձկնորս էր ի՞նչ էր, դաշոյնով բռնաւեր է ըսին, եւ ոեւէն ալ սեւագործ կին մը կար որ շատ առատաձեռն էր, Աստուած պակաս չընէ առանկ կիներըը, չնորհակալ եմ քանի մը հարիւր ղուրուշն առի չի...

— Ո՞ր է այդ կինը, հարցուց Մարգար անհամբերութեամբ։

— Գիշերը հոս կենալու համար լինի երկու հարիւրնոց թղթադրամ տուաւ, սակայն չեմ գիտեր որ հիմայ հո՞ն է թէ գնաց. և այն մեռնողին համար կըսէր որ իմ հայրս է։

— Այո՛, նոյն ինքն է, ուրեմն ո՛ր կողմն է այդ գերեզմանը։

— Ճամբուն վրայ... բանաստեղծին քովի գերեզմանը...

Մարգար խօսքը վերջանալուն չըսպասելով՝ անմիջապէս ինքզինքը խրճիթէն դուրս նետեց և. ճամբուն վրայ գտնուած գերեզմաններըը դիտելով կը յառաջանար. երբ այսպէս հետաքրքրութեամբ կերթար, մէկ մ'ալ աչքին նոր բացուած գերեզմանի մը վրայ սեւ լաթերով մէկը նշմարեց՝ որուն սեւ ըզգեստին ծայրերը հողէն կը տատանէր. յուսոյ աղօտ նշոյլ մը փայլեց աչքերէն և դէպի այն ուղղեց քայլերը, մօտեցաւ գերեզմանին. վերջապէս... բայց ի՞նչ, խնդութիւն և տսկում. Հեղինէի դէմքը դալկացած, մազերը ցցուած, ըղունքները սեւ գոյն մը զգեցած, մարմնոյն բոլոր ջիղերը կաշկանդուած, բերանը կիսով չափ բաց մնացած երկու շար ճերմակ ակռաները կերեւէր կարծես աշխարհիս մէջ երջանկութիւն փնտռոտներուն վրայ կը խնդար. չրջապզեստին կուրծքի կոճակները ամբողջ բզքտուած ըլլալուն՝ նշան էր թէ ճգնաժամուն զգացած սրտին ցաւէն մատներովը եղած էր։

Մարգար երկու ձեռքերը գլխուն զարնելով քանի մը վայրկեան արձանացեալ մնաց։

— Ի՞նչ կայ, հարցուց գռնապանը, որ նոյն միջոցին հոն եկեր և Մարգարին այս կացութիւնը տեսեր էր։

— Ափսո՛ս, ամեն բան լմնցեր է, շատ ուշ հասայ, գոչեց գռնապանին ձայնէն սթափելով, և սկսաւ արտասուել։

— Ըրդէն այս կնոջ երէկ իրիկուն ըսի որ եթէ այս գիշեր հոս ձնալու ըլլաս պիտի սառիս, կարծես մարգարէացեր եմ. հազար ափսոս, ո՛րչափ առաստաձեռն կին մ'էր՝ գերեզման փորելու համար երկու հարիւրնոց թղթադրամ և օղի խմելու համար հարիւրնոց թղթադրամ մ'ալ տուաւ, մեղք, եղեւ, կարծես Աստուած կը նախանձի բարեսիրտներուն այս աշխարհիս մէջ ձնալ և իրեն կառնէ. մեղայ, մեղայ, առտուընգոլ մեղք կը մտնամ. բայց ի՞նչպէս ալ խօսքերս ելաւ կարծես...։

— Գնա քահանայ մը կանչէ, ըսաւ Մարգար որ վերջին յարոդութիւնները կատարէ։

Մեռելաթաղը անմիջապէս ճամբայ ելաւ քահանայ կանչելու։

Մարդար առանձին ուզեց չակել Հեղինէի դիակը. երբ ձեռները կուրծքին վրայ դնել կաշխատեր, տեսաւ որ ալ ձեռքին մէջ սեղմած նամակ մը կար. Մարգար ծունկի վրայ պառկած յարգանօք համբուրեց այն ձեռքը որ իրեն համար նուիրական էր, քան որում բազմից առաւ նուէր ընդունած էր. այն ձեռքը՝ որ թշուառները կաւելուէր և տրամեալները կը մխիթարէր. այն ձեռքը՝ որ վերջին անգամ իրեն աւանդ մը կը յանձնէր, աւանդ մը՝ որ երկու կողմէն ալ նուիրական և երկրդի մը մխիթարական պիտի ըլլար. Մեղմովին նամակը դի- ակին մատներուն մէջէն առնելով կարդաց՝ որուն հասցէն «Ս. ՊՈ. Մինդատ Ալրունա» գրուած էր՝ գրպանը դրաւ։

Երկու ժամ վերջը Հեղինէի մարմինը իւր հօրը գերեզման- նին քով թաղուեցաւ։

ՆՈՐ ԴԱՒ ՄԸ

Սաթինիկ որ հօրը խեղդամահ ըլլալէն մէկ երկու ամիս ա- ռաջ Պօլիս վերադարձած էր, և այս անգ.քերը անցնելէն չորս ամիս ետքը Հիսար-տիպիի կողմերը տուն մը վարձելով հոն կը նստէր և Մինդատը ազատելու համար ամեն չանք՝ ի գործ դնելէ չէր զլանար։ Նաւավար կարապետը սպաննողները ե- կար ատեն վնտռտուքը և ձեռք չինալով գրեթէ մոռցուեր էր. Պըչագճի և Այնէկէօզ Սօֆեան պէյի հետ բռնուելով սպանը- ւեր էին։

Մարտիրոս Տէրպէնտի համար միայն բան մը կը պակսէր, Գրիգորը Սաթինիկին հետ ամուսնացնել, և որ ակսեր էր ա- ռանց գործին կարգադրութեանը զբաղիլ. սակայն ինչպէս որ դիտենք գժբաղդաբար Գրիգոր՝ օրիորդ Աննիկը կը սիրէր և

այս ալ Մարտիրոսէն ծածուկ չէր. ուստի կը մտածէր որ օրի-որդ Անդիկը ուրիշի մը հետ ամուսնանայ:

Սոյն ատեն մէջ օր մը հազիւ ժամուն հինգերորդը կար, Եէնի գափուի նաւամատոյցին վրայ գտնուած արճարաններէն մէկուն մէջ Տէրպէնտ անծանօթի մը հետ անկիւն մը քաշուած՝ անլսելի ձայնիւ կը խօսակցէին. սակայն դիմացինին ձեւերէն կը հասկցուէր որ խօսքերնին ծանր նիւթի մը վրայ էր: Այս-պէս մէկ երկու ժամ առանձին խօսակցելէնետքը Տէրպէնտ ոտքի ելլելով ըսաւ:

— Մնա դէր ինձ սիրելի պարոնիկս (այս այն պարոնն է որ Հիւնքեար-սուլի պ. թաղէոս անունը տուինք) ահա իմ վերջնական խօսքս, կամ այս շաբթու կամ եկող շաբթու և կամ բնաւ երբէք:

— Բայց Տէր իմ, մեծապատիւ բարերար, ձեր պատուական ականջը թող բարեհաճի քիչ մ'իմ խօսքերուս ուշ դնել. նախ և առաջ հարսանեաց հանդիսին համար ատակ չունենալէս զատ, ատորպրուճիւն մ'ալ տուած եմ վաղուան համար վճարելի որն որ հարսանեաց հանդիսին նոյն և նման վիճակին ունի կարծեմ:

— Այդ ուրիշ խօսք, ուրեմն ինչո՞ւ երեք ժամէ ի վեր կը յոռնեցնես և աղատօրէն չես խօսիր, ո՛րչափ ատակի կարօտութիւն ունիս:

— Գոնէ տասն հազար ղուրուշի չափ...:

— Եթէ միայն այդ է բան մ' ըսել չէ. վաղը շուկան եղբօրս սեղնեակն եկուր, ուր անմիջապէս պիտի ընդունիս այդ փոքրիկ դումարը:

— Ա՛հ Տէր իմ, ինչ մեծ բարերարութիւն է որ կընէք ինձ, ա՛հ, ամենասիրելի բարեկամ, այդ ինչ մեծ պատիւ է որ ես կ'արժանանամ, չիտակը խօսելով ինչ կերպով չնորհակալութիւն յայտնելս չեմ գիտեր, շփոթեցայ. սա չափ միայն կըսեմ որ այդ ատակը, երբ, ո՛ր ատեն, ո՛ր ժամանակ ուզելու ըլլաք, պիտի հատուցանեմ կրկնապատիկ շահովը:

— Վերջապէս, ըսել է գործը լմնցաւ այս կէտակի կրնաք պատկուիլ այնպէս չէ՞, հարցուց Տէրպէնտ:

— Այ՛, այս ինչ ըսել է, որոշեցինք և վճռեցինք. ալ անդառնալի է խօսքս խօսք է, բառ պռնէօռ ծնգէռ քառ պռնէօռ։

— Շատ աղէկ, հիմայ ես կերթամ ազգկան հօրը հետ կը խօսիմ, թէպէտեւ հաւանութիւնն առած եմ, բայց այս կէրակէր հարսանիք ղլլալն իմացուցած չեմ։

— Շատ աղէկ ուրեմն գայէք իմացուցէք առվետառ Մօնշէռ։

— Մնաս բարով իմ սիրելիս պարոն Թադէոսս։

— Երթաս բարով իմ ամենասիրելի հայրս ըսելով՝ զատուեցան իրարմէ։

ԲԱՐԻ ՍԻՐՏ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԵՂԵՐ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ

Տէրպէնտ Թադէոսէն զատուելով՝ ճամբան ինքնիրէն այսպէս կը խօսէր։ Հիմայ գործը կը մնայ երկրորդը համոզել, թէպէտեւ ատոր ալ դիւրախաբ չէ, բայց կարող եմ ղայն ալ ճըմլելով ըսելով արագ արագ սկսաւ դէպ՚ի Հիսար տիպիի փողոցը յառաջանալ. հազիւ եէնի-գափուի դրանն առջին հասեր էր, տեսաւ որ Գրիգոր Տէրպէնտ երիտասարդի մը հետ տաքութեամբ կը խօսակցէր։

— Օ՛, հօ պարոն Գրիգոր ամենեւին չէի յուսար այս ժամանակ ձեզ հոս գտնալ, ըսաւ Տէրպէնտ։

Գրիգոր պատասխան չտուաւ։

— Պարոն Գրիգոր, կրկնեց Մարտիրոս Տէրպէնտ, կուզեմ ստիպողական գործի մը վրայ ձեզի հետ խօսիլ։

— Ներեցէք հօր եղբայր իմ, պարոնին հետ քիչ մը խօսք ունիմ, վերջն անմիջապէս կուգամ կը գտնամ ձեզ։

— Շատ աղէկ, ահաւասիկ ես յամրաքայլ կը յառաջանամ, ըսելով սկսաւ ծանր ծանր երթալ։

— Ա՛հ բարեկամ, կըսէր Գրիգոր Երիտասարդին, քալ դի՛տենք Աննիկ Թադէոսին հետ պիտի ամուսնանայ։

— Այ՛, դրեթէ ամեն բան լմնցած է և մտերմս պիտի՛ պըսակուին։

— Ա՛հ,, խաբեբայ, ուխտադրուժ, մրմնջեց Գրիգոր ակռաները կրճտեցուց, էյ բարեկամ ճնաս բարով, կրկին տեսութիւն ըսաւ։

— Այ՛, կրկին տեսութիւն, պատասխանեց Երիտասարդը։

Գրիգոր Երիտասարդէն մեկնելէն վերջը շտապաւ ուղղեց քայլերը Մարտիրոսի գացած կողմը, Մարտիրոս պարսպին տակ կամարաձեւ խոռոչի մը մէջ Գրիգորի կ'սպասէր, և երբ մօտեցաւ ձեռքէն բռնելով "ինչ ունիս զաւակս կը հարցնէր, քեզ շփոթած կը տեսնեմ։

— Ոչինչ, պատասխանեց Գրիգոր, մէկէ մը խաբուած ըլլալուս համար է։

— Խաբուած, ճշմարիտ, մարդ է թէ կին է զքեզ խաբողը։

— Ընդհանրապար ուսկից կը խաբուի մարդ, հարկաւ կանցմէ, չեմ գիտեր թէ նէան չ'ստեղծուած խաբէութիւն կայ աշխարհիս մէջ։

— Ջեմ կարծեր որ եղած ըլլայ, բայց պատմէ տեսնենք թէ ի՞նչ խաբէութիւն է այդ։

— Ոչինչ բան մը հօր եղբայր, աղջիկ մը կը սիրէի, որ ինձ խոստացած էր ուրիշի հետ չամուսնանալ, բայց հիմայ իմացայ ր այս կիրակի Թադէոս անուն անճոռնի թեթեւսոլիկ երիտասարդի մը հետ պիտի պսակուի եղեր։

— Խեղճ եղբօրորդիս, ձեր տարիքն եղող երիտասարդները դրեթէ ամենքն ալ այդպիսի մէկ մէկ պատմութիւններ ունին, քալէ որդեակ քալէ, միթէ քեզի համար աղջիկ կը պակսի աշխարհիս վրայ։

— Բայց այսպէս բան կըլլայ հօրեղբայր։

— Հիմայ ես հոս տուն մը պիտի երթամ, ուր հրաշագեղ աղջիկ մը կայ, քեզ անոր ներկայացնեմ, որ քու Միհրդատ բարեկամդ անոր մտերիմ բարեկամն է։

— Մինրդատի բարեկամնե՛ր... երթանք կաղաչեմ, սիրելի հօր եղբայր, կուզեմ տեղեկութիւն մ՚առնել անոր վրայօք, հարկաւ դիտէ անոր ուր ըլլալը այնպէս չէ՞։

— ընդհակառակը խեղճը ինձմէ տեղեկութիւն կ՚ուզեր։

— Ուրեմն դու դիտես Մինրդատին ուր և ի՞նչպէս ըլլալը։

— Այ՛, քանի մը օրէն բանտէն կազատուի և ահա այս բերկրաւիթ լուրը իրեն հաղորդելու համար կերթամ այն տունը։

— Շատ ազէկ միտքին երթանք, ըսելով սկսան յառաջանալ. հինգ վայրկեանի չափ քալելէն վերջը եռայարկ տան մ՚առջեւ բերան, Տերպէնտ սկսաւ դուռը բախել։

Անմիջապէս դուռը բացուելով տարուօք կին մը դէմերնին ելաւ։

Մայր Աննա, օրիորդը հո՞ս է, հարցուց Մարտիրոս։

— Այո պարոն վերն է, պատասխանեց կինը։

— Խօսելիք ունիմ անոր որ եղբօրորդիս՝ իրեն ներկայացնելու հրամայեցեր էի, անմիջապէս վերը օրիորդին լուր մատնանշելէն ետքը։

Մարտիրոս և Գրիգոր սանդուղքէն վեր ելնելով երկրորդ յարկը սենեակ մը մտան, քիչ մը ետքը Սաթինիկ սենեակը մտաւ։

— Օրիորդ, ըսաւ Մարտիրոս ոտքի ելնելով, եղբօրորդիս ձեզ ներկայացնելու պատիւն ունիմ որն որ խիստ եռանդոտ և աշխոյժ պատանի մ՚է։

— Ձեր եղբօրորդին ճանչնալու բաղդը ունենալուս ուրախ եմ, ըսաւ Սաթինիկ, չնորհաւոր կերպիւ բարեւելով Գրիգորը. բայց ինչո՞ւ ոտքի վրայ կ՚ապասէք, կաղաչեմ նստէք, յարեց ինքն ալ աթոռի մը վրայ նստելով։

— Օրիորդ, դիտեմ որ անհամբեր ինձմէ լուր կ՚ապասէք, երբէք ոտիկանութեան պաշտօնէին պալատը դայլ և նորին վսեմութեան քարտուղարը ինձ պատասխանեց թէ՝ կը յուսայ մէկ երկու օրէն Մինրդատի բանտէն ելնելը թէեւ այսչափ առեն հան չէր ճնար՝ սակայն քանի մը արգելքներ ըլլալուն համար այս

մէկ երկու օրը նաեւ բանտին մէջ անցուցնելու ապաքաղքա-
թիւնը պիտի ունենայ։

— Այո՛, գիտեմ այդ արդելքները, ըսաւ Աթինեին։

— Գիտէք և ինչ է եղեր կրնաք ըսել ինձ, ըսաւ Մարուխ-
ըս հետաքրքրութեամբ։

— Ինչո՞ւ չէ, Մինրդատին քոյր քանի մը նամակներ կը գը-
նէ նաւի եղեր, Տէրպէնտի աղջկան ուղղեալ, և սոր համար է
բանտարկութեան դէպքատոր պատճառը. չեմ գիտեր թէ ոսո-
կանութիւնը ինչ նպատակաւ կուզէ քննել և իմանալ այդ նա-
մակները։

Գլուխը շարժանօք Մարտիրոսի երեսը նայեցաւ։

— Այո՛, պատասխանեց Տէրպէնտ առանց չփոթելու, թէ-
պէտեւ գիտեմ որ այդպիսի նամակի մը համար վար դրած են
Մինրդատ, սակայն անոնք գտնելն անկարելի ըլլալը քաջ կե-
րանալով ըլլալուս իսօքն անգամ չէի ըներ և չպիտի ընեմ, մա-
նաւանդ թէ ձեղի հետ այսչափ բարեկամութիւն ունինք և
Մինրդատն ալ ձեր և իմ բարեկամն է։

— Ըսել է ասկէց ետքը նամակներն ալ չպիտի պահանջէք,
ըսաւ աղերսարկու ձայնիւ և յարեց. ա՜հ, երանի թէ առա-
ջուց իմացուցած ըլլայիր ինձ, սակայն բարեբաղդաբար այսօր
Տիկին Լիւսին որդին գալով այս կողմերը վրայ իւր մօրը հետ
խօսեցան և Տիկինը գիտնալով այն նամակներուն ուր ըլլալը,
յանձնեց իւր որդւոյն ձեռքը, զոր հիմայ ոստիկանութեան
ձեռքը հասած է այն նամակները. թէպէտեւ շատ կը վախ-
քէի կարդալ զանոնք՝ սակայն ժամ յառաջ Մինրդատ բանտէն
ազատելու համար առանց հապցէն անգամ կարդալու պար-
նին յանձնեցի։

Մարտիրոս կը զարմանար լսածներուն վրայ և մտովին կը-
սէր թէ աւելի պէշ կերպարանք մ՚առաւ գործը հիմայ, նա-
զարօճի պէս մարդուն ձեռքը հասնիլ ինչ կըլլայ այն նա-
մակները. սակայն միւս կողմէն ալ կուրախանար նամակներուն
Մինրդատին ձեռքէն ելնելը, որովհետեւ այս նամակներն
Մինրդատէն շատ ուրիշ մէկը կարդացած չէր։

— Ի՛նչ կը մտածէք, հարցուց Սաթինիկ։

— Կը մտածեմ թէ Տիկին Լիուլ զաւակ չունէր։

— Այո, երկար ժամանակէ՝ ի վեր կորսնցուցած է եղեր, և երբոր այսօր տեսաւ ինչ ուրախութիւն չեմ կրնար նկարագրել։

— Նոյն ուրախութեանը ես ալ մասնակից եղայ հիմայ, օրիորդ, չէք գիտեր ինչ կ'ըզգամ։

— Ա՛հ, դժբաղդ հայրս որչափ աշխատեցաւ դոնել, ահ որչափ կը ջանար թշուառները մխիթարել, սակայն զինքը և իր տարաբաղդ աղջիկը մխիթարող մը չեղաւ, ըսելով սկսաւ արտասուել...։

— Օրիորդ, հարցուց Դրիգոր, ձեր հօրը ինչ դժբաղդութիւն պատահեցաւ։

— Ա՛հ, պարոն, պատասխանեց հեծկլտանօք. սպաննեցին... և խեղդամահ սպաննեցին...։

— Ներեցէք հարցմանս օրիորդ... ինչ էր պատճառը, սոսկալի բան...։

— Ոստիկանութեան մատնեցին, իբր թէ մեր բարերարին դէմ դաւաճանութիւն նիւթողներուն դլխաւորը, ահ Պարոն, կերդնում որ այսպիսի խորհուրդ մ' անդամ մտքէն չէր անցուներ. ասկէց զատ եղբայր մ' ալ ունէի՝ որ նոյնպէս դաշոյնով սպաննեցին, և ես միայնակ որբ և անտէրունչ մնացի աշխարհի մէջ։

Դրիգորի աչքերն արտասուօք լեցուեցան։

— Ներեցէք Պարոն, վշտերս պատմելով ձեզ տրտմեցուցի, բսաւ Սաթինիկ Դրիգորի արտասուքները տեսնելով. ո՛հ, ո՛րչափ բարեսիրտ էք, տակաւին առաքինութիւն կը գտնուի եղեր աշխարհիս մէջ։

— Օրիորդ, արդարև ողբալի կացութեան մէջ կը գտնուիք. ինչպէս կրնայի առանց արտասուօք լսել այդ անտանելի ցաւերը որ դուք պատմեցիք. ուստի կերդնում որ ասկէց վերջը ամեն չանք՝ ի գործ պիտի դնեմ գէթ ձեր վշտերը դոյզն ինչ սփոփելու, և եթէ կարող ըլլամ պիտի պաշտպանեմ զձեզ,

ուսոի այս օրուընէ կը խնդրեմ որ ներողամիտ ըլլաք համարձակութեանս և երբեմն ձեզ ներկայանալու չնորհքը չզլանաք։

— Պարոն, թէպէտ ուրիշի մը պաշտպանութեան կարօտութիւնը չունիմ, բայց ձեր ազնիւ սիրտը համակրութիւնս գըրաւելուն համար խնդրած արտօնութիւններիդ կը չնորհեմ, երբ որ հաճիք կրնաք տունս գալ միայն թէ տեսակցութիւններս լոկ բարեկամութիւն մը նկատելու պայմանաւ։

— Մեծապէս չնորհակալ եմ օրիորդ՝ որ ձեր համակրութեանը արժանացայ։

Մարտիրոս գոհ սրտով մտիկ կընէր այս խօսքերը, վասնզի իւր բաղձանացը համեմատ Սաթինիկ Դրիւրոլին հետ յարաբերութեան պիտի սկսէր, ուստի ինքն ալ խօսքի խառնուելով ըսաւ։

— Օրիորդ, եղբօրորդիս խիստ շատ զգայուն է, հետեւաբար ներողամտութեանդ ալ արժանի։

— Երիտասարդաց համար ներողամտութիւնը անհրաժեշտ պէտք մ'է, բայց և այնպէս այս պարոնը իւր բարի վարմանցը համար պէտք չունի։

— Շատ ազնիւ էք օրիորդ, ըսաւ, գլխովը խոնարհելով։

— կը կարծէ՞ք որ Մինրդատ վաղը բանտէն ազատի։

— Շատ հաւանական է, օրիորդ։

— Ա՛հ, Աստուած լսէ, արդեօք ինչ տառապանաց մէջ է խեղճը։

— Ան հոգ եղիք օրիորդ, ժամանակը ամեն բան մոռացութեան մէջ կը թաղէ։ Ես հիմա կերթամ գործը լաւ մը կը հասկընամ և յուսով եմ որ իրիկուան ձեզի ուրախարեր լուր մը բերելու բարեբաղդութիւնը կունենամ, ճնաք բարեաւ, ըսելով Մարտիրոս ոտքի ելաւ։

— Երթաք բարեաւ պարոնայք, աչքս ճամբան պիտի ճնայ և անհամբեր պիտի սպասեմ ձեր դալստեանը։

— Սրտերնիդ հանդարտ բռնեցէք մեծ յոյս ունիմ որ վաղը կազատի ըսելով սենեակէն դուրս ելան, և երբ սանդուխքին գլուխն եկան, Տիկին Լուսին յայտնեցէք իմ եղբօրորդուոյս խըն-

դակցութիւնը որն որ որդւոյն գտնելուն համար զգացինք, ըսաւ Մարտիրոս։

— Մեծապէս չնորհակալ եմ, յարեց Սաթինիկ և մինչեւ սանդուղքին գլուխը անոնց հետեւեցաւ, հոն դարձեալ մէկըզմէկ յարգանօք ողջունելով Մարտիրոս և Գրիգոր տունէն մեկնեցան։

— Կաղաչեմ սիրելի հօրեղբայր ինչ նամակի խօսք էր ըրած, հարցուց Գրիգոր, դռնէն քանի մը քայլ հեռանալով։

— Սիրելիս թէեւ այս գաղտնիք մ՚է, սակայն կընամ քեզի համառօտելով պատմել, պատասխանեց, և սկսաւ այսպէս։ Մինրդատ քրոջդ սիրահարած էր, և այս նամակները Ս... պէյ Մինրդատայ ուղղած էր, վասն զի իրեն խորհրդակիցն էր (այս այն Ս... պէյն է՞ որ մեր մեծ բարերարին դէմ դաւադիրներուն գլխաւորն ըլլալը ստուգուելով խեղդամահ եղաւ։

— Այդ գիտեմ, շարունակէ։

— Ահա այն նամակները Մինրդատին քովն էր և նոյն գիշերն որ պիտի ձերբակալուէր, քրոջդ հետ տեսութիւն ընելու գացած էր, այն միջոցին իւր ծառաներէն մէկը գալով Մինրդատայ կիմացնէ որ զինքը պիտի բռնեն, ուստի Մինրդատ նամակները օրիորդ Ատելին կը յանձնէ որ եթէ խուզարկուելու ըլլան վրանին բան մը չգտնուի, և ես այս բանը երբոր իմացայ անմիջապէս օրիորդէն նամակներն առնելով Տիկին Լիուլին խաբեցի որ վերջը մեզի գլուխ մը դաւ չպատճառէ, և հիմայ կը տեսնամ որ նոյն առենի ունեցած կասկածս իրաւացի է եղեր՝ ահաւասիկ նոյն նամակները կը փնտռէ։

— Շատ աղէկ ըրեր էք հօրեղբայրս, սակայն զարմանալի բան. Մինրդատայ քրոջս սիրահարելը ամենեւին չէի դիտեր։

— Ինչ և իցէ, հիմայ անոնք անցան, ինչպէս գաղտնիքօրիորդը։

— Ճշմարիտն ըսելով առաջին անգամն է որ այսպիսի առաքինի օրիորդի մը հետ տեսութիւն ընելու բաղդաւորութիւնն ունեցայ, կատարելապէս դեղեցիկ, բարքն ազնիւ, վերջապէս ամեն բարի յատկութեան տէր։

— Ուրեմն նաեւ անապատելի հարստութիւն մը։

— Հարստութիւն, ա՜հ, այդ անունը երջանկութեան խորհրդանիշն է։

— Ես այդպէս չեմ մտածեր, ոսկեդարն անցաւ, հիմայ աշխարհիս իշխողն ոսկին է։

— Հօրեղբայր իմ, կարծեմ օրհուդ Աթինիկ ուխտադրուժ Աննիկը մոռցնել պիտի տայ ինձ։

— Զգէ Աստուածդ կը սիրես այս աղջկան միայն անունը տան Աննիկ կարժէ, բաղդաւոր սատանայ, որչափ ալ ջուտով գրաւեցիր քեզի։

— Արդարև հօրեղբայր, աչքերուն գեղեցկութիւնը աննմանէր։

— Հա՜, հասկցայ, բայց ինչ որ է հիմակու հիմայ զատուինք իրարմէ երեկոյեան տունը կը խօսինք այս նիւթին վրայ, ճնաս բարեաւ, ըսելով, կողմնակի փողոցի մէջ մտնելն ու աներեւութանալն մէկ եղաւ։

— Երթաս բարով, ըսաւ Գրիգոր և ճամբան շարունակելով սկսաւ յառաջանալ, հազիւ երկու վայրկեանի չափ անցած էր Մարտիրոսէն զատուելնին, մէկ մ'ալ նաղարօփը դիմաւորելով օ՛ պէյ ուսկից կուգաք, հարցուց Գրիգոր խնդալով։

— Արդեօք հօրեղբայրնիդ ո՞ւր կրնամ գտնալ, հարցուց առանց Գրիգորի հարցման պատասխանելու։

— Հիմայ միասին էինք և գործի մը պատճառաւ փողոցին գլխէն ինձմէ զատուեցաւ։

— Ուր երթալը գիտէք արդեօք։

— Թէպէտ ուր երթալը չեմ գիտեր, սակայն կարծեմ ատիկանութեան պաշտօնէին դնաց մեր բարեկամներէն մէկուն բանտարկութենէ ազատելու աղաչանքն ընելու։

— Շատ աղէկ, կաղաչեմ ձեզ երթէ տեսնաք զինքը, ինծի համար ըսէք, որ այս գիշեր երկուքը կէսէն մինչեւ երեք զինքը կ'սպասեմ իմ տունս անպատճառ գայ։

— Շատ աղէկ պէյ կը խօսիմ, բայց ինչո՞ւ կաճապարէք կեցէք քիչ մը տեսութիւն ընենք։

— Ներեցէք սիրելիս, հօս մօտը այցելութեան պիտի երթամ կարծեմ ուշ ալ ձնացի։

— Ուրեմն ձեզի տրգելք ըլլալ չեմ ուզեր կրնաք երթալ պէյ, երթաք բարով։

— Մնաք բարով, սիրոյ ողջոյնս տարէք ձեր տղին ընտանեաց։

— Շատ աղէկ։

— Նաեւ ինձ ամենասիրելի, Տօրիդրայրնուդ ը։ Մարտիրոս Ցէրպէնտին, և չմոռնաք ըսել որ անպատճառ գինքը կրնամ պատճառ այս գիշեր։

— Ա՛, անոթ եղիք սիրելիս, ըսելով հեռացան իրարմէ։

ՍԻՐԱՀԱՐԻՆ ԿԱՍԿԱԾԸ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ ԵՐԲ ՍԻՐՈՒՀԻՆ ԶԸ ՏԵՍՆԵՐ

Գրիդոր Նազարօֆէն պատուելով Հայոց Պատրիարքարանի առջեւէն դէպի Մուսալայի կողմը յառաջացաւ, և հոն ճամբուն վրայ չեմ յիշեր ինչ գոյնով տան մը առջեւէն անցած ժամին ուշադրութեամբ պատուհանները դիտելէ վերջը հառաչանք մը հանեց սրտէն, հառաչանք մը որ սրտին գաղտնիքները կարտայայտէր, հառաչանք մը որ արդի երիտասարդայ բառարաններու մէջ լաւ ծանօթութիւն տրուած է. ընթերցողք հարկաւ հասկցան որ՝ այս տունը օրիորդ Ծննիկին տունն էր. և վոխանակ Ծննիկը պատուհանը տեսնելու, երկու հատատաղուկ կիներ պատուհաններուն ապակիները մաքրելին կը տեսնէր, վարագոյրները հանուած էր, անշուշտ լուացուելու համար, դուռը բաց էր հայ բեռնակիր մը տանը բակը կը սրբէր. ուրիշ մ'ալ դրան պղնձեայ ճարմանդները կաւիճով փայլեցնել կը ջանար. վերջապէս տանը շէնն անգամ աւազով շրուած էր, թէպետեւ այս կողմի տուները այսպիսի աւլել, սրբել, շինել, մաքրել կըլլան բայց ընդհանրապէս մեծ պահքի առջի շաբթուն և վերջի աւագ շաբթու մէջ բայց տանն իրարանցումը կանանչ դուրս ըլլալուն, անշուշտ Հայ անոյշդ մը պիտի ըսէր, թէ այս

տունը հարուստներէ կայ, վասն զի Զատիկը շատոնց անցած էր։

Գլիդդոր անցաւ այս տանն առջեւէն պատուհանները դիտեց մի առ մի, բայց օրիորդ Ընիկը չտեսաւ. կասկածը իրականի կերպարանք մ'առաւ. և երբ սոյն պատրաստութիւնները կը տեսնէր այո՛ արդարեւ ճշմարիտ է եղեր Ընիկին ամուսնութիւնը մտնչեց, էհ ալ պատուհանն անգամ չնստիր և ինչու նստի, մինչ ինուածն ամուսին մը չէր, պատ, ալ ինչ բանի երթայ պատուհան, կրտէր մտովի, երթամ տուն իմ պատուհանս նրստիմ թերեւս սխալած ըլլամ, ըսելով քանի մը քայլ անդին կրեննց տան դուռը բաղխեց, չքեղ տուն մ'էր այս, ուրն որ անմիջապէս բացուելով Գլիդդոր ներս մտաւ։

Ալդէն Մարտիրոս Տէրպէնտ, օրիորդ Ընիկին հօրը Պ. Բարսեղին լսածները էր, որ անպատճառ նոյն չաբթուն հարսնիքը պիտի կատարուի, ուստի երբ այն պատրաստութիւնները կըլլային, օրիորդ Ընիկ սենեակ մը քաշուած չարունակ կուլար իւր դժբաղդութեանը վրայ, որուն հետեւ Պ. Բարսեղ չաբաթ մ'առաջ աղջիկը իւր սենեակը կանչելով ըսեր էր թէ, պէտք է պատրաստուի իւր ընտրած գեղեցիկ և միանդամայն գործունեայ երիտասարդի մը հետ ամուսնանալ, առանց աղջկանը հաճութիւնն առնելու։

Բայց Գիլդդոր մէջ տկարութիւն է կը հարցուի օրիորդի մը թէ այս ինչ երիտասարդը իրեն վեհայ ընտրած է. կուզէ՞ ինք, ծ. այդ ալ հարցուներլու բան է, Հայր մը աղջկանը վեհայ մը կը դտնէ և աղջիկը պէտք է կուրաբար հնազանդի, առանց գիտնալու թէ իրեն ամուսինն ըլլալու անձը ինչ բնաւորութեան տէր է. վասն զի աղջիկ մը աւելի մազերը կը շատցնէ քան թէ խելքը. աղջիկ մը ինք իր անձին չկրնար խշխել և պէտք է որ ծնողացը խօսքերն իբր պատգամ ընդունի, և անոնց ընտրած վեհին ինքն ալ հաճութիւն տայ, բայց վերջը դժբաղդ պիտի ըլլայ եղեր, հոդ չէ. բաւական է որ հօրը ընտրածն է, սակայն մօտ տարիներս բարեբաղդաբար այս կոյրզկուրայն հնազանդութիւնը չնորհիւ ուսման և լուսաւորութեան թէեւ աղջիկները մաղերնին շատցունելնուն չափ խելքերնին չշատցուցին բայց և

այնպէս զգալի տարբերութիւն մ'ալ ունեցաւ, թէ և չեմ ըսեր որ օրիորդ բոլորովին ազատ են իրենց ծնողաց աղդեցութենէն, սակայն աւելն բան սահման մ'ունի և այս սահմանը յարգել տալու համար պէտք է ծնողք իրենց որդւոցը լաւ դաստիարակութիւն տան, որով տղայք, թէ արու և թէ էգ իրենց առ ծնողս պարտաւորութիւնները ճանչնան միայն։

Գառնանք մեր պատմութեան։ Ննիկ թէպէտև հօրը աղաչարկութիւնը չրելու համար քանի մը դիտողութիւններ ըրեր էր, սակայն հայրը խստութեամբ պատասխանելով, ըսած էր թէ ինքն իրեն չափ խելք չունի՞ միթէ ինքը չէր մտածեր այսպիսի ամենափափուկ խնդրոյ մը վրայ, ուստի ալ արտասուելէ զատ ուրիշ խօսք մը չէր եղնար, վասն զի հայրը յարմար դատած էր և անհրաժեշտ պէտք էր Ննիկ պատակուելու պատրաստութիւն տեսնէր, բոլորովին իրեն անծանօթ անձի մը հետ։

Օրիորդ Ննիկ իւր բարերարուս հօրը հրամանը ստանալէ վերջը, սենեակը քաշուած չարունակ կարտասուէր, թէպէտև օրիորդ Սօֆի զայն մխիթարելու համար ամեն ջանք 'ի գործ կը դնէր։

— Ո՞ հ չես գիտեր Սօֆի, կըսէր Ննիկ։

— Սիրելի քոյր իմ, ինքզինքդ ատուծոյ յանձնէ ի՞նչ պիտի ընես, վերջապէս հայրդ է։

— Ո՛հ Սօֆի։ ուր էր թէ աշխարհք եկած չըլլայի, այո հայրս է, ծնողքս է, բայց ինձ թշուառ ընելու համար աշխարհք բերած են, ինձ հետ այսչափ անգթաբար վարուելու ի՞նչ իրաւունք ունին։ ահ դոնէ միայն ինձ այս հասակը բերելնուն, քաշած նեղութիւններնին յիշելու ըլլան, հիմայ մէկ խօսքով մահուանս վճիռը չէին կարող տալ, ահ Գրիգոր, արդեօք այս դժբաղդ լուրն առնելու ըլլաս որչափ պիտի ատես զիս։

— Ինձ նայէ քոյր իմ միտքս բան մը եկաւ, հաւատալի եմ որ այս միջոցով սոյն դժբաղդութեան դարման մը կը գտնանք։

— Ո՛հ Սօֆի, ամեն բան լմնցած է, դու դեռ դարման կը տեսնես։

— Պ. Գրիգորին նամակ մը ամեն բան իմացուր. որն որ

ընտանեսէն պէտ անշուշտ զբեղ ամուսնութեան պիտի խնդրէ Հօլմէզ . այն ալ կարծեմ առելի Գրիգորին պիտի տայ քեզ կնութեան քան թէ Մատուրեանին , վասն զի Հայրդ արդէն Գրիգորիկին հարուստ և ինչ ատիճան գործունեայ ըլլալը լաւ գիտէ , ուստի ալ այս բանին վրայ մտածելը խենդութիւն է ծն ուրեմն նամակ մը գրէ սիրելիս , ըսաւ Սօֆի ։

— Ա՛հ սիրելի բարեկամս , ես Հօրս ինչ ատիճան անտրտքելի յամառ ըլլալն աղէկ գիտեմ , իւր մտքին դրածը թէ աղէկ և թէ դէշ պիտի կատարէ , բայց և այնպէս թերեւս . . . այս անգամ կրնանք յաջողիլ . փորձենք . բայց աղէկ մ'իտքս եկաւ , ա՛ռ քեզի ամենամեծ խոչնդոտ մ'ալ ։

— ի՞նչ է քոյր իմ , հարցուց օրիորդ Սօֆի ։

— Նամակը ո՞վ պիտի տանի ։

— Ա՛հ , ես կը տանիմ , կարծեցի թէ ուրիշ բան մ'է . գոնէ այդ ատրտիկ ծառայութիւնն ալ ես ըրած ըլլամ քու երջանկութեանդ համար ։

— Աղնիւ քոյրս , որչափ բարեսիրտ ես ըսելով , ձեռքերը երկնցուց Սօֆիին ուսերուն վրայ և սկսաւ համբուրելով արտասուել ։

— Բայց ի՞նչու համար կուլաք ։

— Վասն զի , դուք բարեկամութեան չափն անցուցիք թէպէտև շատ ժամանակ կը մտածէի Գրիգորիկին նամակ մը գրելը , երբ նամակը խաւելուն արդելքը միտքս կուգար . . . . քանի անգամ նամակներ գրեցի և պատռեցի , ալ բոլորովին յուսահատելով կըսկսէի արտասուել դժբաղդութեանս վրայ , սակայն այս անգամ երջանիկ և բաղդաւոր եմ , գոհութիւն Աստուծոյ ։ Ա՛հ սիրելի Սօֆիս , չես դիտեր թէ ինչ կըզգայ մարդ , երբ յուսահատութեան վերջին կէտին յուսոյ հրեշտակը կուգայ քովը և կըսէ , ալ անհոգ եղիր . . . ։

— Բայց սիրելի քոյր իմ , շուտ ըրէ նամակը պատրաստէ որ տանիմ ։

— Հիմայ կը գրեմ , Սօֆի , ըսաւ և դրասեղանին մօտենալով սկսաւ գրել այսպէս ։

«Սիրելիս.

«Պատրաստուէ այնպիսի լուր մ'առնել, որ ինձ համար կենաց և մահու խնդիր մ'է.

Այսօր Հայրս իմացուց ինձ որ այս կիւրակէ Մասուրեան թաղէոսին հետ պիտի ամուսնայնէ, ան Գրիգորիկ չես գիտեր թէ այս սաստիկ և միանգամայն անդառնալի պատգամը ինչ յուսահատութեան մէջ ձգեց զիս, ուստի այժմ բոլոր յոյս դու ես և գիտեմ որ դու ինձ այս վիճակին մէջ չթողլով պիտի մըտածես ճարը մտածել։

Հոգիս, ինչ որ կուզես ըրէ զիս այս բարբարոսին ձեռքէն ազատելու համար, Հայրս սպառնացաւ ինձ՝ թէ մինչեւ մահուան վերջին րոպէն պիտի աչխատի կնութեան տալ Մասուրեանին»։

Աննիկ

«Ց. Գ. Սէր իմ Գրիգորիկ չանա զիս ազատել, վասն զի իմ բոլոր յոյս, միխիթարութիւնս և ապագաս դու ես. եթէ քիչ մը չարժելու ըլլաս երջանիկ եմ և եթէ անփոյթ կենաս, ջոր չեմ յուսար, գիտցած եղիր որ գերեզմանս դու քու ձեռքդ բացած պիտի ըլլաս.

Նամակիս պատասխանը ձեր կարապետ ծառային հետ օրիորդ Սոֆիին տունը խաւրէ, անկէ ես կրնամ ընդունիլ.

Նոյն

— Գրեցիր, հարցուց Սոֆի.

— Այո՛, պատասխանեց Աննիկ և նամակը կնքեց և Սոֆիին տուաւ, ըսելով, ա՛ռ հոգիս կաղաչեմ որչափ որ կրնաս շուտով հասցունել չանա.

— Ա՛հ օրիորդ, կը կարծես որ, ըսաւ և Աննիկին ճիտը պըլլուելով սկսաւ համբուրել զայն, յորդ արտասուօք Աննիկի այտերը թրջելով.

—Աղնիւ բարեկամուհիս թէ և վստահ եմ քու բարեսրտութեանդ վրայ, սակայն սէրը, ան սէրը չեմ գիտեր օրհնեմ թէ անիծեմ, չես գիտեր ինչ կընէ մարդս, երբեմն երեւակայութեանդ կը սլանամբարձրէն կերթամգրիգորիկիս. քովը կտեսնեմ

ինքը, կուզեմ փարիլ կուզեմ գգուել համբուրել և յայտնել իմ վշտերս բայց աւազ պատկառանքէս և ամօթէս յետս յետս ընկրկելով կը գլտորիմ կեցնամ և ինքզինքս դարձեալ իմ սենեկիս մէջ կը գտնեմ... ապուշ մ'եմ ներէ խօսքերուս կաղաչեմ. ըսելով սկսաւ համբուրել,

— Էյ սիրելիս, ես երթամ, դու անհոգ եղիր ըսելով սեւ շալմը գլուխն առած տանը սանդուղքէն իջնելով դուռնէն դուրս ելաւ։

Ա.յս միջոցին Տէրպէնտ Մարտիրոս կանցնէր փողոցէն և իւր եղբօրը տունը կերթար, հոս քիչ մը Սօֆի կանկ առաւ, և երբ տեսաւ որ Մարտիրոս Տէրպէնտի տանը դուռը կը բաղխէր ուրախութեամբ գնաց որ թերթուս ծառաներէն մէկուն հանդիպելով նամակը յանձնէ, թէպէտև Սօֆի Տէրպէնտը չէր ճանչնար, սակայն Տէրպէնտ դռնէն ներս չմտնելով հոն սկսաւ տնտրնալ, և օրիորդը դիտել. Սօֆի երեք անգամ փողոցին երկայնքը ճեմելով մօտեցաւ Մարտիրոսին. արդեօք Պարոն Գրիգորը հո՞ս է հարցուց։

— Այո՛ օրիորդ հոս է։

— կաղաչեմ իմացուցէք, որ զինքը տեսնել կուզեմ։

— Այդ անկարելի է օրիորդ, վասն զի հիմայ քնացած է ինք և պատուիրեց ինձ որ տասն և մէկէն առաջ չարթնցնեմ։

— Ուրեմն կաղաչեմ երբ արթննալու ըլլայ այս նամակը իրեն յանձնէք։

— Շատ աղէկ օրիորդ, վերջը պատասխանն առնելու դո՞ւք պիտի գաք։

— Ոչ, մէջը գրուած է պատասխանը որու երթալը։

— Ուրեմն աւելի աղէկ։

— Սակայն կաղաչեմ որ իրեն յանձնէք։

— Վատահ եղիք օրիորդ որ արթննալուն անմիջապէս իրեն պիտի յանձնեմ։

— Մեծապէս չնորհակալ կըլլամ Պարոն, ճնաք բարեաւ։

— Երթաք բարեաւ օրիորդ, պատասխանեց Մարտիրոս Տէրպէնտ. օրիորդ Սօֆի մեկնեցաւ և իր տանը ճամբան բռնեց։

Մարաիրոս դուռը պոկելով անմիջապէս, իր սենեակը քաշուեցաւ, նամակին կնիքը քակեց և սկսաւ կարդալ՝ ծ, շատ աղէկ այս նամակը իմդործիս լաւ նպաստեց, մրմնջեց, ծն Տէրպէնտ Մարտիրոս արքունն ես եղեր, պարծ տես։

ՀԱՅՐ ՒԻ ԱՂՋԻԿ

Նոյն օրը Աննիկին հայրը պ. Բարսեղ դեռ նոր եկեր էր չուկայէն, ծառան ծխափայտ մը բերելով, նամակ մ'ալ ներկայացուց, որն որ պ. Տէրպէնտին տունէն եկած էր։

—Գնա՛ օդիս բեր, ըսաւ պ. Բարսեղ։

—Շատ աղէկ Տէր իմ, յարեց ծառան։

Պ. Բարսեղ պահարանին կնիքը խզեց և տեսաւ որ երկու նամակ էր, և որովհետեւ առաջինին հասցէն իր անունն էր սկսաւ կարդալ, որուն պարունակութիւնն էր։

« Պարոն։

« Ձեր աղջկան բերնով այսպիսի անամօթ նամակ մը խաբեբայի, մեր զաւակը գլխէ հանելու միջոց մ'է. այս բանը ձեզմէ չէր յուսացուեր։

« Պարոն, իմ զաւակս ձեր կարծած երիտասարդներէն չէ որ այսպիսի հրապուրիչ ճամբաներով մոլորի, իւր ինչ ասելիքն հոս և առաքինի ըլլալը կրնաք մակաբերել, երբ այս նամակը առնելուն անմիջապէս ինձ կը յանձնէ, աղաչելով նաեւ՝ որ արժանաւոր պատասխանը չղլանամ իւր կողմէն ձեզ տալու, ուստի կը խնդրեմ որ սոյն նամակս աղէկ պահէք. որով ձեզի յիշեմ պիտի ամեն անգամ, թէ ամեն թուղթով միսը չ'ուտուիր. նա մանաւանդ ինչ աստիճանի ընտանիք մ' ըլլալնիդ ձեր այդ նա մակովը յայտնեցիք »։

Մ. ՏԷՐՊԷՆՏ

Պ. Բարսեղ քանի կը կարդար նամակը ճակտին երակները

կուռենային և երբոր ընթերցումը վերջացուց բարկութիւնը կատաղութեան փոխուեցաւ և քիչ մը ինքնիրեն խօսելէն ետքը «Միհրան» գոչեց։

—Հրամմէ տէր, ըսելով սպասաւորը ձեռքը բլադի մը մէջ շիշ մը օղի և քիչ մ՚ալ պանիր, ապուխտ, և շերտ մ՚ալ հաց սեղանակը մտաւ։

—Սօֆին ինձ կանչէ։

—Շատ աղէկ տէր իմ, ըսելով սպասաւորը դուրս ելաւ, պ. Բարսեղ օղին ջուրի գաւաթի մը մէջ մինչեւ բերանը լեցընելով հատ մը տնկեց. «այս սատանորդին զիս սպաննել կուզէ, այս ի՞նչ անպատուութիւն է ո՛վ Աստուած» ըսելով, հատ մ՚ալ լեցուց և տնկեց, որով աչքերը կարծես թէ արեան ներկուեցաւ. այս միջոցին Սօֆի սեղանակը մտած էր։

—Հիմայ անմիջապէս տուեր դուրս ել կիմանաս, գոչեց ահռելի դէմքով առանց Սօֆիին լսօք մ՚արտասանել տալու։

—Բայց ի՞նչ պիտի ըլլայ յանցանքս արդեօք տէր իմ. թէ պէտեւ ձեր հրամանին համեմատ հիմայ կերթամ, բայց կուզեմ հասկնալ յանցանքս։

—Դեռ կը համարձակի՛ս դէմս խօսիլ, ըսելով ծխաթոյտովը այնպիսի հարուած մը տուաւ Սօֆիի գլխուն, որ խեղճ աղջիկը մազ մնաց պիտի նուաղէր։ Միհրան, գոչեց դարձեալ։

—Հրամմէ տէր։

—Սա անպիտանը հիմայ տուներս վռնտեցէք։ Սօֆի դուրս ելաւ, քիչ մ՚ետքը սպասաւորն ալ սեղանակէն մեկնած էր։

—Միհրան։

—Տէր իմ։

—Ընիկը հոս կանչէ, անպիտաններըը զիս մեռցնել կուզեն, այս կըլլուելու բան չէ, ես ասոնց պէտք է սորվեցունեմ թէ ես ի՞նչ աստիճանի պատուոյս նախանձախնդիր եմ, կըսէր ինքնիրեն։

—Միհրան, ո՞ր է Ընիկը։

—Եկաւ տէր, այս միջոցին Ընիկ գողգողջուն քայլերով իւր հօրը սեղանակը մտած էր. պ. Բարսեղ սեղանակին երկայ-

նուիրեանը կը ճեմէր. չմոռնանք ըսել որ Ծառան օդին շիշը երրորդ անգամ լեցուցած էր, Բարսեղ օդին մօտենալով գաւաթ մ'ալ գլորեց, Ննիկ գուշակելով որ ատոնց հետեւութիւնը բօթ պիտի բլլի, սկսաւ բոլոր ուրբաները օգնութեան կանչել.

— Հոս եկու աներես աղջիկ, ըսաւ Բարսեղ աթոռի մը վրայ նստելով։

Ննիկ քայլ մ'ալ յառաջացաւ։

— Դու ամենաւին չես մտածեր թէ ես ինչ բաներու կապրիլ եմ, ինչու համար դու իմ հրամանս ոտնակոխ ընելու կաշխատիս, չես յիշեր որ ես քու հայրդ եմ ինչու անգամ քեզ մեռցնելու ալ ըլլամ մարդ չկրնար խաւնուիլ։

— Հայր իմ ես քու հրամանդ միշտ կը յարգեմ։

— Անգամ այս նամակը ինչ է, դուշելով աղջկանը ըսաւ, Ննիկ իւր գրած նամակը տեսնելուն կասկած դոյն մը պզտիցաւ և սկսաւ դողդղալ, ահաւասիկ քու միակ պաշտպանդ որ գրած խայտառակ նամակդ ինձ վերադարձնելով պատուոյս ալ կը դպի ինչ աստիճանի մարդ ըլլալս երեսիս կը զարնէ. տեսանենք հիմայ որ պաշտպանդ գքեզ իմ ձեռքէս պիտի ազատէ ըսելով, այնպիսի ապտակ մը զարկաւ որ թշուառ աղջիկը գետինը չրջուեցաւ, իսկ անգութ և անողոք հայրը ինքզինքը չկրնալ զսպելով աղջկան վրան վազեց և սկսաւ չորիւ նման կից հարկանել։

— Մօրս հոգւոյն համար ըլլայ կազատեմ, խնայէ ինձ, կազաղակէր։

— Երանի թէ դու ալ անոր պէս սատկէիր, ըսելով գնաց աթոռի մը վրայ նստաւ, շուտ ուտքի ելլ, հիմայ տեսար որ քու պաշտպանդ, հայրդ մայրդ ապաննիչդ ազատիչդ ես եմ, ուր է պաշտպան գոչած անձդ թող գայ գքեզ ազատէ իմ ձեռքէս։

— Իմ պաշտպանս միայն Աստուած է, ըսաւ։

— Աստուած ձեր պաշտպանութիւնը մեզ յանձնած է, դուք ով էք ըսելով ապտակ մ'ալ ինչաւ ձախ ծնօտին որ քիթէն

բերնէն սկսաւ արիւն պոռտկալ. կատաղի հայրը վախնալով որ աղջիկը կը հիւանդանայ և այն պատճառաւ հարսանիքը քանի մը շաբաթ ետ կը ձնայ, Մինրան, դուչեց, ապաստարը ներս մտաւ, չուտով սա անիծեալն իր սենեակը տարէք հրամայեց. Մինրան խեղճ աղջիկը թիկնաթոռի մը վրան դնելով իւր սենեակը փոխադրեց.

Երկու ժամէն վերջը Աննիկի խելքը գլուխն եկած մոմ վառելն անգամ մոքէն չէր անցներ, կողբար Գրիգորի անհաւատարմութեանը, և կարուտաւէր առանձնութեանը համար վան ղի օրիորդ Սօֆի նոյն դիշերը տունէն մեկներ էր.

ՀԱՐՍԱՆԻՔ

Առջի պսակին շաբաթ օրը Պ. Թադէոս Մատուրեան Պ. Բարսեղի աղջկանը օրիորդ Աննիկի հետ կամուռնանար, ինչպէս Պետրոս Նազարօֆ ալ Տէրպէնտի աղջկանը օրիորդ Ատէլի հետ, առանց իւր օրինաւոր ամուսնոյն հաճութեամբը. վան ղի այս ամուսնութիւնը դաղտնի կերպով պիտի կատարուէր պանդուխտ Թերեւս Պօլսեցի Գահանայի մը ձեռամբ որն որ յետոյ Համանեան ոսկի վարձք պիտի ընդունէր, վերջապէս բաղդը ամեն կերպով Նազարօֆի կը նպաստէր և ինքն ուրախութեամբ կը պանծար իւր գերադոյն հանճարին վրայ. նոյն օրուան երրորդ ժամուն անկողնէն հազիւ ելած իւր զարդանաց սենեակն անցեր էր, Մարտիրոս Տէրպէնտ Նազարօֆին տունն եկաւ. նոյն միջոցին Պետրոսիկ Պէյ կածկլուէր, ուսոի Տէրպէնտ առանց սենեկին դուռը բաղխելու ներս մտաւ.

— Բարի եկաք սիրելի բարեկամս, ըսելով Նազարօֆ ձեռքն անոր երկնցուց, սակայն անքաղաքավարութեամբ սենեակը մտնելուն բարկութեան նշաններն ալ դէմքէն կըրնար նշմարուէր.

— Նոր վեճաններու սովորական յուզմունքը ձեր վրայ ալ կը տեսնամ, ըսաւ Մարտիրոս ժպտելով, և թիկնաթոռի մը վրան նստաւ։

— Այո իրաւունք ունիք, ըսաւ Նազարօֆ ցած ձայնով և յաւելցուց որ թէպէտեւ այս երկրորդ անգամն է, սակայն ինչ օգուտ ընկերութեան մէջ երբեմն կը պատահի այսպիսի դէպքեր։

— Ուրիշ նիւթի մը վրայ կրնա՞նք խօսիլ, հարցուց Մարտիրոս։

— Ըզատ է՛ք, կրնաք խօսիլ, յարեց Նազարօֆ։

— Երեք օրէն Միհրդատ բանտէն կազատի։

— Ուրախ եմ։

— Սակայն վրէժխնդրութեան պիտի դիմէ։

— Չեմ յուսար, սակայն ուրիշ խնդիր մը կայ որ դիս մտատանջութեան մէջ ձգած է։

— Ի՞նչ խնդիր է այդ։

— Թէ Սօֆեան պէյ իր հարստութիւնը ո՞ւր պահած է։

— Օ՛, ատիկայ իր աղջիկը գիտէ հարկաւ։

— Ո՛չ, այդ բանը միայն Միհրդատ կրնար գիտնալ, սակայն այն ալ ինչպէս որ գիտէք բանտարկուելուն համար չկրցաւ իմանալ։

— Ուրեմն ըսել է ձեր կարծիքը այն է որ Սօֆեան պէյ իր հարստութիւնը տեղ մը թաղած է։

— Ոչ թէ կը կարծեմ, այլ կը հաւատամ վասն զի ես ստիկանութեան դուռը իմացայ որ Սօֆեան պէյ իր մահուան վճիռն ընդունելէ ետքը քահանայ մը ուղեր և հոն խոստովաներ Աբբայ մը գտնուելով անոր խոստովաներ է, ես թէպէտ շատ փնտռեցի այն Աբբան բայց չկրցայ գտայ, ափսո՜ս։

— Ուստի ըսել կուզէք որ Աբբային ըսած է իր հարստութեան կեդրոնը, բայց ես ընդհակառակը կը պնդեմ թէ Սօֆեան պէյ ամեն ատեն ինքզինք վտանգի մէջ ըլլալը գիտեր հետեւաբար աւելի իր Սաթինիկին յայտնած է քան թէ Աբբային։

— Ա՛յո, իրաւունք կուտայի այս խօսքերուդ սակայն յանկարծակիի եկաւ և աղջկանը բան մը չըկրնալ ըսելուն քահանային յայտնեց։

— Ուսոի ինչո՞ր ալ ըլլայ մեզ չահ մը չեղլար ասկէ, այնպէս չէ՞։

— Ընդ հակառակն եթէ Աբբան ձեռք անցուներնք մեծամեծ չահեր ունինք։

— կարելի է, բայց մենք մեր դործին դառնանք, իմ այսօրուան գալուս դլխաւոր պատճառը խոստմունքնիդ յիշեցնել։

— Ի՞նչ խոստմունքս է այն։

— Զարմանալի բան միտքերնուդ եկնելը. օրիորդ Ճոել պատիւն արատող քանի մը նամակները մեզ դարձուներլ, որուն փոխարէն դուք մենէ կնութեան խնդրեցիք զայն. ուստի մենք որ խօսքերնիս կատարեցինք, ուրեմն դուք ալ ձեր խոստմունքը պատուեցէք։

— Ես հաստատ եմ խոստմանս վրայ, բայց տակաւին ամեն բան կատարելութեան չէ հասած։

— Ի՞նչպէս Պարոն, ուրիշ ի՞նչ ցնաց, մինթէ վաղը հարսանեաց հանդէսը չպիտի՞ կատարուի։

— Ներեցէք սիրելիս, ձեր խօսքերուն հաւատ չընծայելուս համար չէ . . . վերջապէս դեռ չամուսնացանք։

— Ըսել կուզէք թէ վաղն ալ սպասենք, ինչ որ է, աղէկ միտքս եկաւ, կնքահայր գտար։

— Ա՛յո։

— Ո՞վ։

— Ապուշին մէկը միտքը դրած է որ ինձմէ ստակ պիտի չահի և այսպիսի դործով աչքս մանալ կուզէ։

— Շատ աղէկ Մաքրուհիին դործն ի՞նչ ըրիք։

— Ա՛, անկարելի է պայն ստակով համոզելն և կարծեմ դլուխնուս մեծ փորձանք մը պիտի բանայ։

— Ի՞նչ փորձանք կրնայ բանալ, որու պիտի բողոքէ թէ երիկս ուրիշ կնկան մը հետ ամուսնացաւ, այնատեն մենք ալ անոր վրայ անհերքելի ապացոյցներ կը դիղենք և վերջապէս ամսականով մը գոհ կ'ընենք այդ կոլմէն անհոդ եղիր։

— Ըրդէն այդ կողմէն ամենեւին երկիւղ մը չունիմ, հիմայ ինձ կը ճնայ աներոյմէս հրաման առնել իւր տունը գալու համար։

— Այդ հրամանն արդէն բերած եմ, և եթէ կուզէք կըրնանք ճամբայ ելնել։

— Ամենայն սիրով, ըսելով գանգակը քաշեց և անմիջապէս ծառայ մը ներս մտաւ։

— Ի՞նչ կը հրամայէք Տէր իմ։

— կառքը պատրաստեցէք։

— Շատ աղէկ Տէր իմ։

— Դու, Գրիգոր և ուրիշ երկու հոգի պատրաստ գտնուեցէք, ծառան, չատ աղէկ տէր իմ ըսելով դուրս ելաւ. և Նազարօֆ Տէրպէնտի դառնալով, ահաւասիկ մենք պատրաստուեցանք, հաճեցէք ուղեւկցիլ։

—Ամենայն սիրով, ըսաւ և դուրս ելան, տանը դրան առջին փառաւոր կառք մը կսպասէր. երկու աշխոյժ ճերմակ ձիեր լծուած, կառքին առջեւէն երկու այրուձի պատրաստ կանգնած էին և երկուքն ալ ետեւէն ձիերուն սանձերը ձեռքերնին անցուցած կը սպասէին Նազարօֆին կառքը նստելուն. երկու Պարոններ կառքին առջին հանդիպնուն պէսպիսի Տէրպէնտի դառնալու որ նախ կառքն ելնէ, յետոյ ինքն ալ ելնելով կառավարը դուռը գոցեց և իւր տեղը ելաւ, նոյնպէս և ետեւէն գացող սպասաւորներն իրենց ձիերը հեծնալով սկսան արարշաւ երթալ, և երբ Մուսալլա ըսուած փողոցէն կանցնէին Պ. Բարսեղին տանը դուռը բաց, թաղին պահնակն ու քանի մը ըրհանակիրներ կեցած մեծաձայն կընէին, տան ժէջ իրարանցում մը կը նշմարուէր, Մարտիրոս, ահա հոս ալ հարսանիք մ'ըլլալու է ըսաւ։

— Արդեօք որմէն է այս տունը, հարցուց Նազարօֆ։

— Պ. Բարսեղին, որն որ իւր աղջիկը Մասուրեան Պ. Թադէոսին կուտայ։

—Ես կը ճանչնամ այդ Մասուրեանը, բայց անկուտէ պարոնին ժէկն է ինչպէս կամուռանանայ։

— Է՞հ, այդ ալ մենք պիտի մտածենք, ըսաւ Տէրպէնտ, ու-
սը թռթռուելով։ Այս միջոցին կառքը Տէրպէնտի դրան առջին
հասաւ, նախ Մարտիրոս և յետոյ Նազարօֆ կառքէն իջնե-
լով տանը դռնէն ներս մտան, ուր անմիջապէս դիմաւորուելով
չքեղ զարդարուած սենեակ մ՚ առաջնորդեցին, հոն սովորական
պատուոյ ցոյցերէ վերջը ծանրապին անօթներով անուշ և սուրճ
բերին. ապասաւորն ակամայ նախ պահկիչ փահանային ներկա-
յացուց անունը, վասն զի հազուստներուն աղտեղութիւնն և մի-
անգամայն անկրթութիւնը կը զզուեցնէր զմարդ. ցետոյ Պ.
Մարտիրոսին ներկայացուց բայց նա կնքահօր մօտեցնելով կա-
զաչեմ նախ հրամանքնիդ հրամայեցէք, կըսէր. վերջապէս ըստ
կանոնի այս արարողութիւնն ալ լմնցաւ, ուստի երկու Տէր-
պէնտի մէջ անձայն խօսակցութիւն մ՚ըլլալէ վերջը, Տէր հայր
հրամայեցէք որ հարսը բերեն, ըսաւ Մարտիրոս։

— Շատ աղէկ կըլլայ, պատասխանեց, և երկու ապասաւոր
անմիջապէս դուրս ելան հարսը բերելու։

— Բայց ուր է Պ. Մակար հոս չեմ առներ, հարցուց Նա-
զարօֆ։

— Այո՛ Սէլանիկ գնայ գործով, կը ցաւիմ որ դժբաղդաբար
այս հանդիսին ներկայ չ՚պիտի կրնայ գտնուիլ, պատասխանեց։
Այս միջոցին օրիորդ Աստղ Գրիգորի թեւը մտած սրահը մտան,
Տէր հայր կարծեմ ուրիշ պակասութիւն մը չունինք, ըսաւ
Մարտիրոս Տէրպէնտ, կրնանք պահկի արարողութիւնը կատա-
րել։ Փահանան Մարտիրոսին ականջն ի՛ւ վար քանի մը խօսք
մռմռաց։

— Վնաս չունի, պատասխանեց Մարտիրոս բարձր ձայնիւ,
փայտէ խաչը աւելի աղէկ է, ճշմարիտ խաչը փայտէ էր, բայց
շուրջառին գալով կարծեմ ցփահին ալ անոր գործը կը լմնցունէ,
ըսելով ապասաւորին մէկուն, Գրիգոր վերէն մեծ ցփոխ մը բեր
հրամայեց որն որ անմիջապէս ապասաւորը բերաւ և Տէրտէրը
վրան առնելով պահկին սուրբ խորհուրդը հանդարտ խղճիւ
կատարեց, քիչ մ՚ետքը Մարտիրոս այն ցանկալի, այսինքն՝ լ-
րեն համար մահու և կենաց նամակները ձեռքն անցունելուն

համար կը սքանչանար իր խորագիտութեանը վրայ։

Հիմայ անցնինք երկրորդ հարցականին պատմութեանը։ Մասուրեան Թադէոս նաւը քարու նետելուն՝ նոյն օրուան ժամը եօթնու կէսին փուռ քարու բերած էին աղջկան կողմէն դացող հրաւիրականները, և որովհետեւ գինքը ճանչցող բարեկամները լաւ տեղեակ էին անկուտի ըլլալուն, շատերը կըսէին համայն մէկ ալ ուրիշ պատճառ մ՚ըլլալու է այս գործին մէջ, ըսել կուզեմ թէ Մասուրեանին կողմէն և ոչ մէկը եկած էր, բայց՝ ի պ. Նիկողոս յորջորջեալ անձէ մը, այսալ ուրիշ նպատակաւ։

Փեսան հարիւ գռնէն ներս մտած էր խումբ մ՚երիտասարդներ գինքը դիմաւորելին, բակին վրայ նայող պատուհաններուն ամէնքն ալ. գրեթէ օրիորդք գրաւած էին, փեսան տեսնելու նպատակաւ, հոս սովորական քաղաքավարութիւնները լմննալէն ետքը կարգաւ վեր ելլելով, որոնց կառաջնորդէր ծերունի մը, ընդունելութեան սրահը մտան, հոն բարեզ սեղանին բարձր անկիւններէն մին գրաւած ծխափայտը ի ձեռին նստած էր դաժան կերպիւ. երբոր պ. Մասուրեան ներս մտաւ, բարեզ ոտքի ելլելով քանի մը քայլ յառաջացաւ. Թադէոս անմիջապէս պնդց անոր ձեռքը համբուրեց և նա ալ փոխադարձ իր վեհին ճակտէն։

Փեսան տեսնող աղջիկներն ամէնքն ալ զատ զատ իրենց քմացը համեմատ դիտողութիւն ըրին, այսու ամենայնիւ բոլորն ալ Թադաւարին, (Հայոց մէջ սովորութիւն կայ որ վեհին, Թագաւոր և հարսին Թագուհի անունը կուտան բայց հիմայ Թէպէտև Պօլսոյ մէջ վերցած է բայց Ասիոյ մէջ կը շարունակուի այս սովորութիւնը) վայելուչ վեհապ մ՚ըլլալուն միաբանեցան։

Երիտասարդ մ՚իր քովի երիտասարդին կըսէր, որ աչքով խոյժ եռանդոտ մէկն էր և ի վաղուց անտի պ. Թադէոսը կը ճանչնար իբր պատուոյ նախաձեռնդիր երիտասարդ մ՚էր։

—կը փափաքէի դիտնալ թէ ինչ միջոցաւ իր պատուոյն նախաձեռնդիր ըլլալու կերպը ձեռք անցուցեր է, կըսէր ուրիշ հեգնական ժպիտով մը,

— Այդ ալ չ'գիտնալու բա՞ն է, յոռի ընկերութենէդ որչափ որ կրնաս հեռացիր, խոստմունքդ պահէ. եթէ մէկէ մը վախ ստակ առնես, չանք ըրէ որ ճիշդ պայմանաժամին հատուցանես և ամենէն աւելի այս կէտը նկատէ.

— Պահ, մրմնջեց երկրորդը, այդ խօսքերը վաշխառուի ո՞չինչ և բծուն վայրահաչութիւններն են, Պարոն որ օրէնքը կըստիպէ զիս թէ դրպանս մէկ ստակ չունեցած ժամուս հազարաւոր ոսկիներ ունեցող մէկու մը երկու ոսկի պարտքս հատուցանեմ, բայց ինչու հարսը չեն բերեր, վերջապէս օրիորդ Աննիկ տիկին Մասուրեան եղաւ հէ՛...

— Նղովից արմատ, գեղեցիկ աղջիկ և շատ մ'ալ ոսկի աչ, բաղդ, բաղդ ես քեզի ինչ ըրի։ Հրաւիրեալը այսպէս խօսակցութենէն զբաղած ժամուն, օրիորդ Աննիկ իւր սենեակը առկայ հարսանեկան զարդերով գեղեցկանալու ստիպուած էր երկու հօրաքերց միջոցաւ, խեղճը կարտասուէր և այս դառն ժամուն ստիպեալ էր անհամ պատմութիւններու ալ ունկնդիր ըլլալ։

— Խեղճ, կըսէր մեծ հօրաքոյրը, թէեւ հարս եղած առենս ես ալ կուլայի և աշխարհ ինձ համար մութ էր, և կարծես թէ զիս մեռցնել ալիւր տանէին, բայց վերջը ինձ համար միջնորդներն օրհնեցի։

— Նայիմ որ վաղը երկանդ քիթէն չզատուիս կըսէր երկրորդը, տըղայ մարդ արէ հոս լալու ինչ կայ, կեցի՝ սա վարդը քօղքիդ վրան անցուանեմ։

Այս խօսքերն ու զարդարանքներն ինչ աստիճան մեծ տանջանք էին Աննիկին, ոչ ոք կը հարցնէր թէ ինչ դալարիարուն իրեն համուհին և յաւիտեան անբաժանելի ընկերին նկատմամբ, պօլսոյ մէջ երիտասարդք և երիտասարդուհիք պէտք են իրենց ծնողաց կամքին համեմատ զգացումներ ունենան ապա թէ ոչ թշուառ կըլլան. ուրեմն կեցցէ Պօլիս ուր սրտերն և իր զգացումները կարգի կանոնի տակ դրուած են։

Աննին թագաւորը խումբ մը երիտասարդներէ շրջապատեալ, խմելու զբաղած էին։

— կենդանի է տէր, գոչեց երիտասարդ մը որ իւր պղտիկ գլխուն վրայ քիթը բաւական սեղ գրաւած էր, կիսրոսին պինն բոլոր գինիները կը գերազանցէ և ապագայ ահաւասիկ գաւաթս։

— Ցակինթոսգոյն, մրմնջեց անգիէն ծերուկ մը։

— Պ. Բարսեղ ահա քեզի արժանաւոր երկրորդ զաւակ մը կրկնեց Թագաւորին ձեռքէն բռնելով, ուրիշ տարօրինակ մարդմը։

— Ի՞նչ ըսել կուզէք ըսաւ Մատուրեան գինիէն զուարթացած, հայրս, եղբայրս, ծնողքս է, և Պ. Բարսեղի ձեռքը քաշեց որ համբուրէ։

— Ի՞նչ կընես տղաս, ըսելով Բարսեղ ետ կը քաշուէր, բայց բազմականաց ստիպմամբը Պ. Մատուրեան իւր Ընտրօղը ձեռքը համբուրելու բազդին արժանացաւ, որչափ ուրախ էր Պ. Բարսեղ աղջկանը կամաց յաղթանակելուն վրայ։

— Պ. Կնքահայր, գոչեց երիտասարդներէն մին, ես բոլոր հանգիսականաց կողմէն կը խնդրեմ որ Թագուհին 'ի տես ելնէ։

— Ի տես, 'ի տես, գոչեցին հանդիսականք միաբերան։

Կնքահայրը Թէպէտեւ ծանրաշարժ մէկն էր տեսնալով որ այս խնդիրը անկատար Թողուլն անկարելի է, Ընտիկին սենեակն անցնելով տեսաւ որ հարսն անկիւնը քաշուած կարտասուէր. «Այդ ինչ է աղջիկս ինչու կուլաս, հարցուց»։

— Ոչինչ, դժբազդութիւնս, պատասխանեց։

— Զքեզ երջանիկ կարծած ժամանակս դժբազդ եմ կըսես, տղայ մի ըլլար եկու ներսի սրահը անցնինք հանդիսականք կը ցանկան քեզ տեսնել, մէկդի ըրէ հետաքրքիր մտքէդ այդ դժբազդութիւն բառին զօրութիւնը, ել քեզ տեսնեմ, ըսելով ձեռքէն բռնեց և հանդիսականաց սենեակը տարաւ. Հոն Թագուհին քանի մը խորշոմեալ ձեռքեր համբուրելէ վերջը բազմելուն վրայ ելնելով անկիւնը քաշուեցաւ։

Քիչ մը վերջը Թագաւորը քանի մը երիտասարդներու հետ նոյն սրահը մտան. սակայն դժբազդաբար գինով բլալուն հատատապէս չէր կրնար կենալ, բայց և այնպէս Թագաւոր Թա-

գումի ատեան գալով, ֆահանայք ամուսնութեան խորհուրդը կատարեցին, և այս տարօրինակ հարանիքն ալ այսպէս կատարեցաւ։

Ընթերցողաց հետաքրքրութիւնը յագեցնելու համար կը յաւելումք որ այն հարսանիքէն երկու ամիս վերջն Անիկ մեռած էր։

ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ ԱԲԲԱՆ

Բերայ Թէվիէ պաշի ըսուած թաղը խարխուլ պղտի տան մը մէջ Իտալացի ֆահանայ մը սենեակ մը վարձած էր, Այս ֆահանային պաշտօնը բանտարկեալոց հոգեւոր պիտոյքը հոգալ էր, խեղճը լիուլի խնայողութեամբ կապրէր, գիշեր մը ժամը երկուքը անցած էր իր սենեակը քաշուելով վիայտեայ սեղանի մը առջեւ նստած ուշադրութեամբ հնութենէ տարտղնած թղթերու ծրար մը մէկզմէկէ կը զատէր, ասոնց մէջէն քառակուսի ծալքով թուղթ մի առնելով մէկ կողմ դրաւ, որուն վրայ գաղիերէն մէկ քանի տող գրութիւն կար, և սոյն գրութեան քով գաղիոյ լումայանոցի կնիքը կերեւէր. Աբբան միւս թղթերուն ամենքն ալ ժողվեց ու գաղտնի դարանի մը մէջ պահեց, և դարձեալ աթոռին վրան նստելով, էհ հիմայ պէտք է լաւ մը մտածել, ըսաւ, տեսնեմ Մակարէն բան մը կրնանք բերընել, թէպետեւ Սամուէլին կտակին մէջ, բանտարկեալ Ս. Պէլինկանձին նկատմամբ բան մը նշանակուած չէ. ահ, սա անիծեալ պրութիւնը չըլլար ես Մակարին բան մը չէի յայտներ... հը՛ ինչ տարօրինակ պատուէր «Մակար պէտք է անձամբ լուայանոցը ներկայանայ ուրիշ որևէ մէկու մը ստակ չյանձնուիր» ան ազահութիւն ազահութիւն բանտարկեալոյն հարստութիւնը քեզ չըաւեր անխելք ֆահանայ... բայց... եթէ այն բանտարկեալը գիս խաբեց, որ այս կտակը տերոջը յանձնեմ... և ինչ հարկ

կար այնպիսի անբաւ հարստութիւն մը գտած գիւղ այդիի մը մէջ թաղել, քանի որ լումայանոցներն ապահովութիւն կայ... սակայն լումայանոցներուն ընկալագրերը հարկաւ իւր քովը պիտի ըլլար, ուստի ըսել է հարստութիւնը թաղելը սուտ չէ... ուստի չանանք հիմայ կտակին կնիքը քակել Մակար հոս չեղած, ըսելով զմելիի նման սրաճայր գործիք մը հանեց և վարպետութեամբ կնքոյն շուրջը գծելով՝ ամբողջ կնիքը հանեց և առանց բանալու գղրոցին մէջ դրաւ, յետոյ սենեակին դուռը բանալով, տիկին Օրսօլա դուրս եկաւ:

— Հրամմէ վերապատուելի Հայր ըսելով հարիւրհատուն և եօթը տարեկան կին մը տեսանուելու դրանն առջին, տանը վարձակալն էր այս կինը:

— Դժբաղդի մը համար պիտի աղօթեմ, եթէ մէկը հարցնելու ըլայ զիս մինչեւ մէկ ժամ, դեռ չեկաւ պատասխանէ:

— Շատ աղէկ վերապատուելի Հայր, ձեր աղօթիւքը երէկ ձեր սենեակին քովի պզտիկ սենեակին ալ վարձու տուի բարեպաշտ ծերունիի մը որ կանխիկ վճարեց վեց ամսեայ:

— Բարեբանեմք զՅաստուած տիկին, որ իւր անհուն բարութեամբը դժեզ վարձատրեց գիշեր բարի:

— Օրհեալ է Աստուած գոհութիւն և փառաբանութիւն իւր միածին որդւոյն, ըսաւ կինը զայն բարեւելով:

Աբբան դրան նիգը լաւ մը պնդելէ վերջը, անմիջապէս կըտակը հանելով սկսաւ կարդալ:

1816 յուլիս 13 փարիզ,

«Ալպանիոյ մէջ Իշխանի մօտերը կը ճանապարհորդէի, և երբ ժայռոտ լեռան մը գագաթն էի, սոսկալի փոթորիկ մը եղաւ սկսաւ սաստիկ ձիւն գալ, ճանբաս կորսնայ, գիւրաը սաստիկ էր, քուն մը տիրեց վրաս պիտի սառէի, նոյն միջոցին Աստուած կարծես հրեշտակ մը խաւրեց ինձ այցելու, որուն բարիքը սրտիս մէջ դրոշմուած է, ինքն Սոթանքօ պարէկը կը կոչուի, ուստի ես իբր նշան երախտապիտութեան իմ բոլոր հարստութիւնս յօժար կամք ժառնելէս վերջը իրեն կը թողում, և եթէ Սոթանքօ պարէկ ինքը մեռած ըլլայ, իւր ժառանգնե-

րուն բաժնուի, միայն թէ ժառանգորդը նոյն դերդաստանէն ըլլալին գոչինայէն վաւերացեալ թղթերը ներկայացնեն դրամատան, և քանի հոգի որ ներկայանայ լումայանոց, պէտք է որ իրենցմէ գոնէ ժառանգ չըլլալուն վաւերացեալ թղթով վստահացնէ լումայանոցը, հոն ձգած ստակս երկու հարիւր հազար լուի ասկի է։

Այս ստակը մեռնելէս վերջը ես յօժար կամօք իրենց նուիրեցի, և այս կտակագրին հակառակ ոչ ոք կարողանայ գործել։

ԿՈՄՍ ՊՕՌՏՈՅԻ

Այս կտակը նոյն ինքը կոմսը յօրինեց և իւր յօժարութեամբը հաստատեցինը Սթանքօ Պարէի նուիրած ըլլալուն կը վկայեմք։

Լոմպարդոյէ
ընդհանուր պանքէն
Հ. Պ Զ.

Լոմպարդոյէ
առաջին թղթատարը
Ա. Պ Հ.

կտակին մէջ ներփակեալ թուղթ մ'ալ կար որ Մակարին ծննդեանը կը վերաբերէր։ Անոնց մէջ բանտարկեալին գանձին վերաբերեալ բան մը չկայր, ըսաւ. այս միջոցին էր տանը դուռը բացուիլը, Աբբան անմիջապէս քովնտի պատուհանէն աչքը բակին մէջ յարեց բայց ներս մտնողը անկարելի եղաւ տեսնել։ Աբբային եկողը անմիջապէս սենեակը մտնելով դուռը դոցեց։ Դարձեալ դուռը բացին, եկողը Մակարն էր. վերապատուելի Աբբան հոն է, հարցուց։

— Այո բայց ժամէ մը վերջը....

— Հրամայեցէք պարոն սենեակս, ըսաւ Քահանան իւր սենեկին դուռը բանալով։

— Շնորհակալ եմ տուրբ հայր, ըսելով Մակար Քահանային սենեակն ելաւ փոքրիկ ամպուղէ մը անցնելով, և դուռը դոցեցին։

Անոր քովի նոր վարձուած սենեկին դուռը բացուելով Մարտիրոս Տէրպէնտ դրան չեմին վրայ տեսնուեցաւ, Մակար եկաւ, մրմնջեց ինքնիրեն... սիկին Օրսօլայ։

— Ի՞նչ կը հրամայէք տէր իմ։

— Կէս գիշերուան ճաշ պատրաստէիր ինձ։

— Շատ ապէկ։

— Հիմայ մեր Պարոնը մտիկ ընեենք, ըսելով Մարտիրոս իւր աեննեակը մտաւ և դուռը լաւ մը գոցեց։

ՍԱՄՍԱԹԻՈՅ ՀՐԴԵՀԸ

Մակար և Աբրան ինչ խօսելոյն չեն՛ք գիտեր, միայն հետեւեալ օրը իմացանք որ Մակար հօրը տունէն մեկներ էր և Մարտիրոս ալ անոր կողմը բռնելով, Սամաթիոյ մէջ ունեցած տունը հրաւիրեր և Մակար ալ սիրով ընդուներ էր միամտաբար։

Գիշերուան ժամը մէկը հարիւ կար, Սամաթիոյ պարտէզին դուռը դեռ չէր գոցուած. դեռ գիւնեւանոյ մէջ բաղմութիւնը կը վխտար, այս միջոցին բարձրահասակ և խոժոռադէմ՛ անձ մը աճապարանօք պարտէզին դռնէն անցնելով հայոց փողոցը սկսաւ յառաջանալ յամրաքայլ. այս մարդը մեր ճանչցած Սպիրօն էր այն վաղեմի եղեռնագործը, սակայն բոլորովին կերպարանափոխ եղած. ախուր և տվայտլուկ հայեցուածք մը կը ձգէր չորս կողմը մէկը վնասելու պէս բաւական յառաջացած նեղ փողոցի մը մէջ կը գտնուէր, հոս սկսաւ քայլերը աւելի յամրացնել և տուներուն պատուհաննները մի՛ առ մի քննելէն վերջը ցած տան մը առջեւ կեցաւ «կարծեմ այս ըլլալու է վանդիկ Տէրպէնտին լսածին պէս մէջ տեղն պատուհանէն դուրս ճերմակ լաթ մը կախուած է, սակայն տակաւին երկու ժամ կայ, բաւ ժամացոյցը նայելով, ու հոն կանգ առաւ. հառաչանք մը հանեց սրտէն, ահ անիծեալ օր, նզովեալ ժամ, ինչպէս եղաւ որ այս վատաբարոյ անձը ինձ հանդիպեցաւ, ահ, Մարտիրոս պիտ կը տոկացնեա արիւն միշտ արիւն... և ոճիրը կարծես բարեգործութիւն մը ընելու չափ շուտով և յօժարութեամբ կը կատարէ... և ես անոր կամացը կոյր կուրայն զգոյնք մ՛եմ, ահ

արդեօք կրնամ վախնալ այս մարդուն ձեռքէն... բայց կը զա-
ւանեմ ինչ կընեմ, միթէ երէկ չըսաւ որ ինձ ատիկանու-
թեան կը մատնէ, եթէ իւր կամակատարը չընէմ, այ ինչ ա-
տիճան վատութիւն անոր թելադրութեամբը խեղճ նաւավարն
սպաննեցի. այո, բայց և այնպէս ան ալ ինձ մատնելը բանտար-
կելով անօթի մեռցնել կուզէր, բայց բարեբաղդաբար ինձ-
կէօղլի և Պըչաքճիի օդնութեամբ կրցայ ազատիլ. այն խեղճ
բարեկամներս որոնք յաւալի մահուամբ ընդհատեցին իրենց
կենաց ճամբան... տեսակ մը քաւութիւն որ մարդիկ յօրի-
նած են... բայց ինչ ընելու եկայ հոս... մարդ մը սպաննել
որ չեմ ճանչնար. տուն մը բռնկցուցնել, սպանութիւնը ան-
տեսնելու համար, սակայն նոյն տանը պատճառաւ արդեօք
որչափ տուներ հրոյ ճարակ պիտի ըլլան, որչափ ընտանեաց
աղքատութեանը պատճառ պիտի ըլլամ, քանի քանի բերաններ
անէծք պիտի կարդան իմ գլխուս, այն ատենք ամենն ընդու-
նելի է... մեղմ կերպով կը հրամայէ մարդասպանութեան,
որուհաձայն կը գոչէ ատիկանութիւն... այն, ատիկանու-
թիւն... խեղդամահ մեռնիլ. ահա այս է ինձ սասկացնողը...
որչափ չնորհալի երիտասարդ մ'էր այն որ պաղարեամբ հրամա-
յեց ինձ, Սպիրօ այս երիտասարդը պէտք է մեռնի... մեռ-
նի... ոչ ոչ չպիտի մեռնի այն»:

Այս միջոցին ոտքի մը ձայն առնելով, մէկը կուգայ, բաւ
ինքնիրեն, մէկ կողմ քաշուիմ, անցորդը Սպիրոյին կեցած
տեղէն անյնելով Սպիրոյին մտնելու տանը դուռը երբ պիտի
բացէր, անմիջապէս Սպիրօ մօտենալով, Փարոն գոչեց.

— Ով էք դուք, հարցուց անցորդը:

— Ներեցէք Պ. դուք էք արդեօք Մակար Տէրպէնտ:

— Այո, ինչու համար հարցուցիք:

— Հօրեղբայրնիդ Պ. Մարտիրոս ինձ պատուիրեց, ձեզի
իմացնել որ թէպէտեւ զձեզ իւր տունը հրաւիրեր է բայց
պատճառաւ մը չեմ գիտեր Սրբոյին տունը գնաց, և այս գի-
շեր ժամը երեքին անպատճառ պէտք է որ դուք ալ հոն
գտնուիք:

— Պատճառը ձեղ չըսաւ, հարցուց զարմանալով, արդեօք ինչ նոր բան պատահեցաւ, կըսէր մտովի։

— Ո՛չ տէր իմ, միայն պատուիրեց որ լսիստ կարեւոր է ձեր հետ դանուիլը։

— Արդեօք այս կողմերը ձի կը դանաւ։

— Այո, պարսկին դրանը քով, բայց աճապարեցէք որ դուռը բաց գտնաք ապա թէ ոչ...

— Ուրեմն ինձ բարեաւ, ըսելով՝ Մակար հեռացաւ, Սալիրօ աչքը վրայէն չվաւեց մինչեւ որ անյայտ եղաւ Մակար։ ՀՀ, մրմնջեց Սալիրօ, հիմայ յուսացածէս աւելի յաջող կերպա՛ րանք մ՚առաւ գործը, և այժմ ապահովութիւնն անհետ ընելու համար, ուրիշին համար լարած որոգայթին մէջ ինքը ձգեմ։ որով բարեգործութիւն մ՚ալ գործած ըլլամ և ես ալ խեղդա՛ ման ըլլալէ կազատիմ, նոյն ժամուն փողոցը ամենեւին ձայն չկար միայն հոլմին սահուքենէն պատուհաններուն ապակ՛ եաց ձայները կը լսուէին, քառորդ ժամ անցաւ մէկ մ՚ալ փո՛ ղոցին գլուխէն մարդու մը ստուերն երեւցաւ, ան է կարծեմ, ըսաւ Սալիրօ և դէպ՚ի եկողն յառաջացաւ. քիչ մ՚ետքը գիրա՛ ճանչցան, Մարաիրոս Տէրպէնան էր եկողը։ Սալիրօ, Մակարն եկաւ, հարցուց։

— Ո՛չ Պարոն դեռ մարդ չեկաւ։

— Ո՞րչափ վախտ մէջ էի որ ուշ հնացած եմ, ըսելով տա՛ նը դուռը բանալով բացաւ, ներս մտան ու դուռը դոցելին, և՚ի միտին սանդուղքէն վեր ելլելով սենեակ մը մտան։ Այս սենեակին պատուհանները տանը պարտեզին վրայ կը նայէին, պատին մօտ երկայն բազմաթոռ մը դրուած էր, քովերն երկու թիկնաթոռ և անոնց քովը ալ աթոռակներ շարուած, կապոյտ հատ կտաւէ մեծ վարագոյրներ պատուհանները դրեթէ բո՛ լորովին գոցած էին, պատէն վար բնաղինեակ մեծ կմախքի մը նկարը կախուած էր որ վարագոյրներուն թուխ ստուերին մէջ սենեակ մռնոզին սարսափ կազդէր։ Սալիրօ սենեակէն ներս մտնելուն պէս, անմոռանալի վախ մը զգալով յառաջ վարած քայլը ետ առաւ, բայց մէկէն ինքզինքին քաջալեր կարդալով

ներս մտաւ, այս վարանումը Մարտիրոս չուտով նշմարեց և ձեռքը Սալիրօին ուսին դնելով, է՛ բարեկամ քանի որ ժամանակ ունինք պէտք է մտածել մեր բռնելիք ընթացքին վրայ, բայց ես գործ ունիմ, ինչ ունիս, միթէ կը վախնաս,

— վախնալու ինչ հարկ կայ, միայն՝ սա կը մտածեմ որ եթէ բռնուինք ինչ պիտի պատասխանեմ դատաւորներու հարցմանց որ օձիքս ազատելու կարող ըլլամ,

— Պահ. այդ ալ մտածելո՞ւ բան է, հազար անգամ քսի քեզի, որ բան մը չպիտի դնաս, և աղէկ դիտցի որ ոտանաւորութեան ձեռքէն դիւրաւ ազատելու միակ միջոց չհօսիլն է, վերջապէս, չեմ ուզեր որ խօսիս կամքս այս է, այսպէս կուզեմ, ըսաւ ձեռքն անոր երկնցնելով։

Սալիրօ գլուխը խոնարհեցուց։

— Ան գործը լմնցուննելէդ վերջը գքեզ Պետրոս պէտին քով պիտի դնեմ որ քիչ ժամանակէն մեծ հարստութեան տէր պիտի ըլլաս եթէ ինքզինքդ սիրելի ընես։

— Ի՞նչպէս մարդ է այդ Պետրոս պէյ ըսածդ։

— Անցեալ օր քեղ երիտասարդ մը ցոյց տուի։

— Ան որ դէմքին վրայ սպի մը ունէր։

— Այ՛, այն գիտե՞ս որչափ հարուստ է։

— Հարուստ է, գոչեց, հարուստ է՛ պետիկը հարուստ։

— Դու կը ճանչնա՞ս զայն։

— Ի՞նչպէս չպիտի ճանչնամ մեր ընկերներէն որու որ հարցընես իրենց հօրն ու մօրը պէս կը ճանչնան գող պետիկը։

— Ի՞նչ կըսես ծո խեղդեցա՛ր դու, մէկուն նմանցուցած ըլլաս ես։

— Թէպետեւ երկու տարիի չափ գինքը տեսած չունէի բայց անցեալ օր տեսնելուս պէս ճանչցայ, վասն զի մանկութենէն մեր մէջ մեծցած է և ձեզ կը հաւաստեմ թէ անոր պէս քաղաքատ մէկ մ՚ալ չես կրնար գտնալ. Սարսափ օդու թէօխարի պէս մարդը խաբեր, և ինքզինքը հարուստ մէկը ձեւացուցեր էր, գուք ո՞ր կը ճնաք, այսու ամենայնիւ մենք ալ

իրեն բաւական օժանդակեցինք փաքքալայի հրաւանդանը դիւրաւ տեսանելնուս։

Մարտիրոս քար կտրած մնայեր էր, կը մտածէր որ օր մը այս գոլ պեռիկը կրնար իւր գաղտնիքը երեւան հանել ատակ առնելու նկատմամբ, ուստի խորհեցաւ զայն ալ վոխադրել ’ի հանգիստ, բայց Սպիրօ անոր հակառակ կը մտածէր, վասն զի ալ անկէ վերջը պեռիկը իրեն համար անսպառելի գանձ մ’էր վախցնելով ատակ քաշելու համար։

— Ինձ մսիկ ըրէ, ըսաւ Մարտիրոս, քիչ մ’առաջ ըսի որ գքեզ անոր քով ծառայութեան պիտի դնեմ ինչու համար ըլլալը գիտես։

— Չեմ գիտեր։

— Զայն թունաւորելու է։

— Անիկայ սպաննել Աստուած խելք տայ։

— Այ՛, զայն սպաննելու է բայց թոյնով, ինչ միթէ կը տարակուսիս, հարցուց Սպիրօին վարանումը տեսնելով։

— Միթէ խենդ կը կարծես զիս որ այնպիսի լաւ վճարող մը սպաննեմ, քանդի ան ըլլալը մէկու մը չհայտնելուս համար շարունակ ինձ ատակ պիտի տայ։

— Հէ՛, հէ՛, Սպիրօ բարեկամ աղէկ մտածէ խօսքերդ, միտքդ բեր... Ցօթին ալ քեզի նման յամառ էր։

— Այ՛, ատիկանութեան մատնեցիր զայն և խելքդամահ ըրիր։

— Եւ ես կերդնում որ եթէ հրամաններս չկատարուին գքեզ ալ անոր բաղդակից պիտի ընեմ։

—Ո՛չ, ոչ, կարծեմ չպիտի կարենաս ընել, ըսելով զարմանալի արագութեամբ երկար դաշոյն մը հանելով անմիջապէս Տէրպէնտի ձախ կուշտը մխեց... Մարտիրոս օրհասական վախի մը ձայն հանեց, Սպիրօ ձախ ձեռքով բերանը գոցելով ամէն երկրորդ հարուած մ’ալ տալ յաջողեցաւ, Մարտիրոս նուաղեալ գետին գլորեցաւ խորտալով, Սպիրօ ճրագն անցուց և այս անգքերը ատկալի մթութեան մէջ թաղուեցաւ, ախուր լռութիւն մը կը տիրէր սենեակին մէջ, սեղանին վրայ լուցկիք

դրաւած էր, մարդասպանը զանոնք առաւ և պատուհաններուն վարագոյրները լաւ մը դիտելով ուշադրութեամբ միտ դրաւ... և երբ իմացաւ որ ձայն չկար, գզրոց մը բացաւ Մարտիրոսին պատրաստած իւղոտ կտաւներու խուրձ մը դուրս քաշելով, սենեակին մէկ անկիւնը դիզեց և դանակաւ մը գետնի փախ-աթը կտրելով կտաւի խուրձին վրայ յաւելցուց, և այս գործո-ղութիւնները այնպիսի արագութեամբ կատարեց որ հազիւ քանի մը վայրկեան տեւեց, յետոյ լուցկիքը մօտեցնելով ոյն դիւրավառ նիւթոյ փոքրիկ բոց մը աւելի մուխով ոլորապտ-տոյտ շրջան մ'ընելով անցաւ, Սպիրօ երկրորդ անգամ լուցկիքը վառեց և մօտեցուց իւղոտ լաթերուն, այս անգամ բռնկեցաւ, սենեակին մէջ քարշ հոտ մը բուրեց, կրակին բոցը Սպիրօյին երեսը լուսաւորեց, այս միջոցին սոսկալի էր Սպիրօ, դէմքը դունատ, մազերը ցցուած, ճակտէն վար առատօրէն քրտինք կը հոսէր, կուրծքը կը բարախէր, մարմնովին սարսուռ մը կըզգար, այսպէս մէկ երկու վայրկեան դեռատարած կրակը դիտելէ վերջը հաւաստի ըլլալով որ ալ չպիտի մարի, սենեա-կէն դուրս ելաւ դուռը կղպեց և բանալին առնելով առանց վարանելու տանը դռնէն դուրս ելաւ գնաց, և տասը վար-կեան վերջը ամեն կողմ կրակ, կրակ արձագանք կուտար։

Օրդէն ջրհաններ հասած էր տան առջեւ, դուռը կը բաղ-խէին բացող չկար, վերջապէս դռները խորտակեցին և ջըր-հանկիրք ներս մտան, անոնց մէջէն մէկը կը գոչէր Օրթիէն ձո՛, կրակը սա սենեակն է, միւս մը ձօ՛ կարօ կոտրէ դուռը ներս մանենք, դուռը կոտրեցին և բոցը մուխին հետ մէկ տեղ տանը ապակիները կոտրելով դուրս ելան ահագին գոռումով մը և այս միջոցին մարդ մը տեսան սենեակին մէջ՝ որ կը տապլտակէր և ազաւաղելու հանելու համար շատ ուշ էր։

ՍԻՐՈՑ ՁԱՅՆ ՄԸ ՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԷՆ ԿԸ ԼՍՈՒԻ

Տէրպէնտ Մարտիրոսին հրոյ ճարակ եղած գիշերուան հե-
տեւեալ օրը Միհրդատ բանտէն ազատեր և Մարգար ծառա-
յէն լսելով հեղինէին և կարապետին դժնդակ մահուան դոյժը,
զինքը՝ սիրտ չատ վշտացուցած էին, ուստի իւր արտասուքները
հեղլու համար մտածեց հեղինէին գերեզմանն երթալ, և որով-
հետեւ առանձին ըլլալ կուզէր, որպեց որ գիշեր երթայ, Մի-
հրդատ մեքսամաղձ տխրութեան մէջ ըլլալուն Սաթինիկ մեծաւ
արտայուզութեամբ կը հակէր զայն միշտ անոր ընթացից հետե-
ւելով, բանտէն ելած օրը մէկզմէկու հետ տեսութիւն ընելով
իւր բանտարկութեան միջոցին տեղի ունեցած անցքերուն քո-
ղերն ալ տեղեկացեր էր Միհրդատ։

Նոյն գիշերուան եօթերորդ ժամն հազիւ էր Բերայի գերեզ-
մանատան ծառուղիներուն մէջ սեւ վերարկուոյ փաթթուած
մէկը աստանդական կը շրջէր, ուրիշ ատեր մ'ալ անոր քայ-
լերուն կը հետեւէր, վերարկուով մարդը տարտամ քայլերով
գլուխը կախած այն տխուր ամայութեան մէջ բան մը կը փըն-
տռէր, րոլոր բնութեան վրայ կարծես թէ հանդարտութեան
հաստ վարագոյրը իջեր էր, հսկայացեալ շազանակենիներուն
և թթիներուն շուքը, այս մթութեան մէջ երեսնոց աւելի սեւ
գոյն մը սեփհականած ըլլալնուն, շուքերուն գրաւուած տե-
ղերը որշ կերպով կը զանազանուէր, խառն ի խուռն չիրիմ-
ներուն մարմարիոնները՝ անցեալին կենդանի յիշատակարան-
ները կը ներկայացնէին մահկանացուաց աչքին, հոս մարդոց
հնարած քաղցր անուննեը այս դամբաններուն մէջ ամփոփ-
ուած էր, այսինքն յոյսը, երջանկութիւնը, սէրը, հարստու-
թիւնը, գեղեցկութիւնը, վերջապէս մարդոց ամեն ցանկացած-
ները, այն անապրոյն մահը, այս չիրիմներուն մէջ ժպտելով,

անոնց ամենուն տեղ . . . Թշուառութիւն . . . միայն դրած էր։

Նոր գոյուած դերեզմանի մը հողակոյտին վրայ, թաւամեալ ծաղիկ սրսկիներ կը կենային, անշուշտ հաւատարիմ ձեռքի դրաւական վերջին ընծաներն էին ասոնք, սեւ վերարկուով մարդը երբ այս դերեզմանին մօտեցաւ, կանգ առաւ հոն, և քիչ մը վերջը ծնրադրեց դերեզմանին ոտքը ու սկսաւ արտասուել։ Դժբաղդը գիշերուան այն ժամուն բոլոր աշխարհի ալեկոծութիւններն ալ կրելով սրտին վրայ, աչքերէն հորդահոս բղխեցաւ արտասուքները, իր սիրելւոյն դերեզմանին նուիրելու եկած էր, ո՞վ էր այս որ տխրութիւնն և միայնութիւնը թաղուած վայրին մէջ՝ յանդգներ էր ներս մտնել, և մահուան վերմակը վերցնելով իր սիրելւոյն հետ մի անգամ եւս տեսնուիլ կը փափաքէր, կը յուսար, հրաշքի անգամ... խեղճ մահկանացու։

— Բարեկամ, ալ կը բաւէ եղածանք, ըսաւ. նոյն միջոցին, այն ատուերը որ ամենուին դադուած չէր արտասուող մարդուն քայլերէն՝ դերեզմանին մօտ գանուող ծառի մը ետեւէն ելնելով, ծպտեալ մարդուն քովը մօտեցաւ։

— Ո՞վ է այն, հարցուց արտասուողը գլուխը վեր առնելով։

— Ես եմ, քոյրդ Սաթինիկը, Միհրդատ եղբայրս, ալ կը բաւէ բաւական արտասուեցիր։

— Թող դիս Սաթինիկ միայնութեան պէտքը կըզգամ։

— Ա՛հ եթէ ինքզինքդ չես մեղքնար, գոնէ մտածէ որ անպաշտպան քոյր մ՚ունիս, այո՛ ապրէ ինձ համար։

— Ես ոչինչ ունիմ աշխարհի վրայ, և այսուհետեւ ինձ համար աշխարհ ալ չ՚կայ, ա՛հ չեղինէ, չքնաղդ իմ չեղինէ, անագորոյն և վատ մարդկանց անմեղ զոհը, ա՛հ դերեզմանիդ մէջ հողակոյտը քիչ առաջն իր մակերեսոյթին հաւասարելով, շերմիդ յիշատակն անգամ պիտի անհետացնէ, ա՛հ, դու էիր իմ երանութիւնս և հիմայ քու դերեզմանդ թաղուիլ և մոռնալ կըստիպեն զիս, ա՛հ այս սեւ հողը, զոր դու վրադ կը կրես ինչու արդեօք իւր յուրտը սրտիս աղդելով չաւեցներ զայն. ա՛հ ես ալ կուզեմ մեռնիլ՝ կուզեմ ընկերանալ քեզ... բայց ինչ

կըսեմ, մահուանէ վերջն ամեն բան կը վերջանայ, ան այն պէս յոյսը այն դիւական զգայմունքը գերեզմանին դրանն ալ մօտեցեր և ամենուն կարծել կուտայ որ մահուանէն ետքն ալ տեսանելիք ունի, Հեղինէ սէր իմ Հեղինէ, ես մեռնիլ կուզեմ ոչ թէ քեզ դարձեալ տեսնելու յոյսով. ա՛հ քանի որ դու չի՛կաս ինձ համար աշխարհի վրայ, ես ալ չեմ ուզեր ապրիլ, ըսելով գլուխն երկու ձեռացդ մէջ առնելով սկսաւ լալ, քիչ մ՚ետեն լռութիւն տիրեց, յետոյ գլուխը դարձնելով, Սաթինիկ կը տեսնէ այս դամբանը, իմ սիրելւոյս մարմինը՝ այս չիրմին մէջ ամփոփուած է ան, կորուսի զայն և ալ չեմ կրնար ստանալ... տե՛ս Հեղինէ մեռաւ և ամբողջ բնութիւնն ալ՚ի միասին հոս իւր գերեզմանին վոսին մէջ թաղուեցաւ բոլոր աշխարհ... տե՛ս ո՞ւր է արեւը, ո՞ւր է լուսինը ո՞ւր է երկիր,..ա՛հ չկան քանի մի Հեղինէին հետ ամենքն ալ ոչնչացան. իւրն էր այս աշխարհը և հետը տարաւ... բայց ո՛ անխեղճ սիրուհիս ինչու դիս այս ոչնչութեան մէջ առանձին թողուցիր:

— ինձ նայէ եղբայր, ես ալ հայր մը մայր մը եղբայր մը կորսընցուցի, և. ատիպուեցայ՝ օրհնել երկնից կամքը, ըսաւ Սաթինիկ.

— եղբայրդ հայրդ կորանցուցիր այո՛ բայց ոչ սիրուհի մը, ա՛հ Սաթինիկ գիտես ինչ բան է սէրը՝,

— Մինրդա՛ս, Մինրդա՛ս կերդնում հօրս գերեզմանին վրայ որ ես ալ չատ աւեն սիրոյ վրայ ողբացի, քանզի ողբալւոյ էր, գոնէ դու վատահ ես թէ Հեղինէէն սիրուեցար, իսկ ես... սիրելւոյս ուրիշի մը համար արտասուելը տեսայ, և Սաթինիկ այս բառին խոստովանութենէն առաչելով դէմքը երկու ձեռացը մէջ առնելով սկսաւ արտասուիլ:

— Դժբաղդ, դուշեց, մանիկ ըսե՛ Սաթինիկ մենք թշուառ ըլլալու համար ծնանք և ճակատագրին ուզածէն ալ աւելի դժբաղդ եղանք. ուստի քոյր իմ ալ այսուհետեւ մեզ համար ապրելը անկարելի է... սակայն դու ինչ պիտի ըլլաս, հարցուց Մինրդա՛ս Սաթինիկին խօսքերէն գդացուելով:

— ես ալ պիտի մեռնիմ, պատասխանեց պաղ արեամբ:

— Ո՛հ, չէ, չէ Սաթինիկ դու ապրէ՛ և պէտք է որ ապրիս վասն զի հօրդ տուները քեզ կը պաշտպանէ և դու այդ ալ երբեմն մեր գերեզմաններուն, որ գոնէ մեր շիրիմները մեր անուանը հետ չանհետանայ։

— Միհրդատ, այս դժբաղդութեան մէջ դիս մխիթարել պիտի ըսես... ահ ողորմելի կին մ'եմ ես, կատչեմ լռեցէք ինձ...։

— Սաթինիկ, ինձ մի մեռնիր ըսելը, չե՞ս գիտեր իմ բարբարոսութիւնէ է, ահ ոչնչութեան մէջ միայնակ ձգել այնպիսի մէկը որ յուսահատութեան անելանելի վիհը գլորած է, բայց և այնպէս՝ ալ պիտի սպասեմ բնական մահուանս եթէ հարկը տարի ալ ապրելու դատապարտուած ըլլամ... եւ ուրեմն քոյր իմ մեր բնակութիւնը երթանք ըսելով Սաթինիկն առաջնորդեց և գերեզմաննոցէն դուրս ելան ու մեր վաղեմի դռնապանը ոսկի մը ընդունեցաւ Միհրդատէն։

Երեք ժամ վերջը, Միհրդատ Բելոյի մեծ փողոցին վրայ ունեցած տանը սրահին մէջ կը շրջէր, ձեռքը նամակ մը բռնած որն որ արտասուքի կաթիլներէ անընթեռնլի եղած էր. այսուամենայնիւ Միհրդատ զայն կարող էր կարդալ, ինչպէս որ այս անգամ ալ նամակը բանալով հետեւեալները կարդաց։

ՀՈԳԻՈՑՍ ՀԱՏՈՐԸ

"Այս նամակը չէ թէ գրչով, այլ գրեթէ սրտիս լեզուովը "գրեցի, և այս ժամուս՝ ալ մխիթարութեան պէտք չեմ զգար "բայց միայն արտասուելու, Հայրս իւր թշնամիներէն սպան- "նուեցաւ, և ես անպաշտպան մնացի, անպաշտպան կրնամ "վաղն զի քեզ պատահածն ալ իմացայ։

"Ա՛հ դժբաղդ Միհրդատ, դու վատ չես, մ'ընկրկիր թըշ- "նամեացդ առջեւ, մահուան դիմէ, անոնք զքեզ սպաննելէ ա- "ռաջ, կորզած կըլլաս այն հաճոյքը անոնց սրտէն, որ քեզ ի- "րենց ձեռօք սպաննելով պիտի վայելէին։

"Սիրուն Միհրդատ, եթէ մահուանս ժամուն զքեզ չմտածէի, "շատ դժուար պիտի ըլլար ինձ համար մեռնիլը. դու ալ քու "ճքնաժամիդ սիրոյդ դիմէ, այն երկնային սիրոյդ, որ անշուշտ

“քու աղնիւ սրտիդ մէջ ունիս . աւելորդ է բացատրել որ վերջ-
“ին ժամուս որչափ արտասուեցի քեզի համար , եղաւ վայրկեան
“մը որ Հօրս մահն անգամ մոռցայ . . . ան , ներէ Միհրդատ այս
“իմ սրտիս խոստովանութեանը , քանզի մարդ մահուան դէմ մի-
“այն կրնդայ իւր սրտին սէրը . և դու ինձ համար մ’արտասուեր .
“ես զքեզ երանութեան մէջ պիտի ապատեմ . հան ան չ թշնամու-
“թիւն կայ ո՛չ նախանձ , այլ անանց տեղ երջանկութիւն մը որ
“աշխարհի մէջ ’ի զուր փնտռեցինք պատիր յոյսերով , եթէ
“դիտնայիր թէ որչափ տադնապեցայ նոյն դիշերը որ , քեզ բանտ
“տարին . ուր որ դիմեցի կարելի չեղաւ քու դժբաղդութեանդ
“մասնակցիլ . . . տոկալի են մարդիկ , աղատութիւն չէր խընդ-
“րած այլ իմ սիրելւոյս հետ բանտարկութիւն մը . . . բայց խո-
“րամանկ սրտով հասկցան , որ ինձ համար այն բանտարկութիւնը
“արքայութիւն մ’էր , զլացան այս չնորհքը ինձ , չթողուցին որ
“քու չղթաներդ համբուրէի , չթողուցին որ բանտիդ դուրս
“պատերը սրտիս բոցովը ջերմացնէի , . . . և քու չարչարանացդ
“մասնակցելով որքան երջանիկ պիտի ըլլայի . . . բայց հիմայ . . .
“ո՛հ ափսո՛ս , հեռու քեզմէ . թշուառութեան մէջ անտերունչ
“այն դուրս պաշտպանին պիտի դիմեմ , այն անողոք մահուան ,
“որ վերջապէս աշխարհայիէ մ’աւելի կը լսէ դժբաղդներուն ,
“սիրելիդ իմ Միհրդատ եթէ մահուանէ ազատելով գաս իմ չեր-
“միս կաթիլ մ’արցունք նուիրելու , ան աղօթէ ինձ համար , բայց
“ինդրեմ մ’արտասուեր , քանզի կարելի է չիրմիս մէջ ինձ ազ-
“ղեն այն կաթիլները . և ես այն ատեն պիտի ողբամ ակամայ
“մահուանս վրայ , և ինչ տոկալի մտածութիւն , գերեզմանին
“մէջ ալ թշուառ պիտի ըլլամ .

“Ո՛վ իմ սիրելիս , ընդունէ իմ վերջին ողջոյնս և դիս մտքէդ
“մի՛ հաներ , ես անձկանօք պիտի սպասեմ այն օրուան . . . որ
“զիրար պիտի դանեմք երանութեան մէջ , ճնաս բարեաւ Մի-
“հրդատ , ճնաս բարեաւ , համբերութիւնը չարեաց դրուիչն է .

ՀԵՂԻՆԷ

Այո՛ համբերութիւնը չարեաց դրուիչն է իսկ վրէժխնդրու-
թիւնը վհենաց յապուրդն է , ըսելով , նամակը դոցեց դրպանը

պրաւ . և սկսաւ սենեակին մէջ ժուռ գալ , համբերութիւն կը պահանջէ ինձմէ ո՛հ , ի՞նչ աստիճան խիստ պահանջմունք , մրմնջեց , ահ , ո՛չ . ո՛չ , քանի որ ես ապրիլ որոշեցի և Յաթիւնիկը պաշտպանել , պէտք է վրէժ լուծել . վրէ՛ժ վրէ՛ժ , ըսելով սենեակին մէջ տեղը կանգ առաւ . . . ահ , թշուառականները , գոչեց , դողացէք , վանդի ալ հիմայ կարդը ինձ է . այս մի՜ջոցին երէկ մէկը Միհրդատ տեսնելու ըլլար՝ ամենեւին չէր ճանչնար , վանդի մազերը ցցուեր , դէմքը բոլորովին կերպարանափոխ եղեր , աչքերը կրակ կտրած , սիրտը կը բաբախէր , յետոյ ձեռքերը բայ դէպ՚ի սենեակին դրան դիմեց հոն դարձեալ կեցաւ , և սկսաւ մտածել ձեռքը տապակէզ ճակտին վրայ դնելով , որ առաւօրէն քրտինք կը հոսէր , կուզէր արտասուել բայց չէր կրնար , կուզէր երթալ աթոռին վրան նստիլ . բայց անկարելի էր . . . . դող մ՚եկաւ վրան բոլոր զօրութիւնը սպառեց և մաղ մնաց որ պիտի հինար , բարեբաղդաբար դրանը քովը ըլլալուն անմիջապէս պատին կրթնեցաւ և քառորդ ժամու չափ այնպէս կանգուն մնալէն վերջը , ծանր քայլերով , գնաց իր աթոռին վրայ նստաւ նուաղեալ , գլուխը երկու ձեռաց մէջ առած կը խորհէր ինքնիրեն , վանդի երկու սրբազան պարտաւորութիւնք խիղճը տակն ու վրայ կընէին . մինն էր համբերութիւն , որ հաւատարիմ սիրուհւոյ մը վերջին խօսքն էր , իսկ միւսը վրէժխնդրութիւն որ այնչափ թշուառութիւն կրելէ վերջը կենաց զովարար զեփիւռը չնչելէ աւելի քաղցր էր իրեն համար , մէկ խօսքով մահն ու կեանքը դէմ առ դէմ կը պատերազմէին . այո՛ , թէպէտ պէտք էր համբերել բայց ապրիլն անկարելի էր , ապրիլ պէտք էր , վանդի թշուառի մը պաշտպանութեան հոգն ստանձնած էր , ուրեմն առանց վրէժխնդրութեան ապրիլն ալ անկարելի էր իրեն համար . ուստի՝ որոշեց որ խոհեմաբար վարուի . ոտքի ելաւ և յամրաքայլ դրան զանգակին չուանը քաշեց , որն որ անմիջապէս մաքուր հագուած սպասաւոր մը ներս մտաւ :

— Ցարութիւն , տիկնին Լիւսին ըսէ՝ որ հոս դայ , ըսաւ :

— Շատ աղէկ տէր իմ , ըսելով դուրս ելաւ սպասաւորը :

ֆիչ մը վերջը Տ· Լիուլ սենեակը մտաւ ։

— Ներեցէք տիկին զձեզ ան հանգիստ ընելուս ։

— Հոգ չէ սիրելիս , միթէ դուք ինձ չէք ճանչնար աւելի կը փափաքիմ ձեր տեսութիւնը վայելել՝ քան թէ ամայի սենեակ մէջ իմ դժբաղդութեանս վրայ լալ , այո , կուզեմ ձեզի հետ տեսնուիլ , կուզեմ ձեզ պատահած դժբաղդութիւնները իմանալով՝ իմ թշուառութեանս սփոփանք մը գտնալ ։

— Սփոփանք մը գտնել , Ո՛չ ... այո՞ սփոփանք գտնել · և մխիթարուիլ , մրմնջեց ... տխուր ժպիտ մ՚անցաւ իւր դէմքէն սփոփիլ ... մխիթարուի՛լ ... բայց ինչ և իցէ , ըսելով կարծես քունէ մ՚արթնցած ... Լիուլին դառնալով՝ Տիկին , ձերբակալ ըլլալէս առաջ քանի մը դրութիւններ յանձնելի կը խնդրեմ՛ որ ինձ տաք , վասն զի պէտք ունիմ ։

— Ա՛ ... այն թղթերը մենք ձեր ազատութեանը գործածեցինք ։

— Ի՞նչ ըսիր ։

— Այո՛, այն օրը որ Պետրոսիկս եկաւ , ըսաւ ինձ , որ եթէ այն նամակները չըլլայ չի պիտի կրնան զձեզ ազատել բանտէն և արդէն դուք մէկզմէկ կը ճանչնաք երեր ։

— Ա՛հ · թշուառականները ի՞նչ խարդախութիւն է որ ըրեր են , մռնչեց հազիւ ինքզինքն զսպելով ։

Լիուլ սարսափէն ընկրկելով քիչ մնաց որ պիտի նուաղէր ։

— Ո՞վ է այդ Պետրոսիկ ըսածդ ։

— Ջաւակս որ Պետրոսիկ կըսորվորվուի ։

— Ի՞նչ պէս ճիւաղ է այդ զաւակ ըսած դաղանդ , նկարագրէ ինձ դէմքը թերեւս ճանչնամ ։

— Շնորհալի երիտասարդ մը թուխ դէմքով , կապոյտ աչերով ... ։

— Եւ անունը ։

— Անունը արդէն ըսի , Պետրոսիկ ... ։

— Ա՛հ հազար անէծք , Նազարեան Պետրոսը Ռուսիացի և Պ· Մարտիրոս ըսածնիդ ալ , Մարտիրոս Տէրպէնան է , ահ անիծից ծնունդները պէյլին ; մահուան պատճառն ալ անոնք ե-

ղան ահ . . . նոյն միջոցին Սաթինիկ սրահէն ներս մտնելով ահ տիկին գոչեց պ. Մարտիրոս երէկ գիշերուան Սահաթիոյ հրդեհին մէջ այրեր է :

— Ո՞վ, հարցուց Մխիրդատ :

— պ. Մարտիրոս Տէրպէնտ, լսիստ բարի մարդ մ՚էր որ իւր կեանքը չարունակ բարեգործութեամբ կ՚անցնէր, և զձեզ բանտէն ազատողը նա էր :

— Ա՛հ ճիշդ այն է, արդար Աստուած գտեր է իւր արժանի պատիժը :

— Որո՞ւ համար կը խօսիս, հարցուց Սաթինիկ :

— Այն պ. Մարտիրոս Տէրտէնտ անուամբ ձեզ ծանօթին վրայ է խօսքս, որն որ կըսէք թէ ղիս բանտէն ազատողը այն է, սակայն ես լաւ գիտեմ որ վահռ. իշխանին միջամտութեամբ ըը ազատեցայ, այդ ձեր ըսած Մարտիրոս գաղանը մարդասպան, ոճրագործ, թղթանենդ, գող, աւազակ, ստախօսին մէկն է, ու այն նամակները ձեր ձեռքէն յափշտակելու համար ինչ միջոցներ գործածելնին կրնաք տեսնել, ըսելով Սաթինիկին դարձաւ : կը տեսնէք որ Տ. Լիուլ իր զաւակը գտնելու համար անգիտութեամբ ղիս մատներ է ըսաւ :

— Ի՞նչ միթէ այն նամակները ձեզ կարեւոր էին :

— կարեւո՛ր . . . կը հարցնէ՞ք :

Լիուլ կարտասուէր այս միջոցին :

— Հօրդ և եղբօրդ վրէժը լուծելու միջոց մի միայն այն նամակներն էին, կերեւայ թէ տիկինն իւր կարծեցեալ պետրոսիկ անուան տակ քօղարկեալ զաւակը պատժէ ազատելու համար այն թղթերը յանձնած է :

— Ա՛հ, պ. Մխիրդատ, իմ զաւակս ինչպէս պատժոյ արժանի անձ մը կրնայ ըլլալ մինչդեռ անմեղութիւնը իւր դէմքէն կերայ յայտնուիլ, կըսէր Լիուլ լալով :

— Հաւատացէք ինձ տիկին, որ քու պետրոսիկդ պատճառ եղած է պէյին ձերբակալութեանը որն որ հետեւութիւնն ալ աչքոլնիդ տեսաք և միանգամայն խեղճ կարապետին սպանման, և ինչ հարկ կայ երկար բարակ ճառել, միթէ դուք

չէի՛ք պատմողը որ Պետրոսը Զարըքճի փողոցին մէջ, գիշեր ա֊տեն թէօխարի հետ թաշոյնով մը ղբեղ մահամերձ վիճակի մէջ ձգեցին ու փախան, Տիկին, միթէ դուք չէի՛ք ատոնք պատ֊մողը, միթէ պէտք չէր կասկածիլ և այն գրութիւնները չը յանձնել սոյն անզգամին, Տիկին կը համարձակիմ ըսել, որ դուք ալ հանահատ էք անոնց, և երբ այս վատութիւնը յանձն ա֊ռած էք ամբողջ և նախատինք ձեզ . . .:

Այս վերջին խօսքերուն, Տիկին Լիուլ նուաղեալ աթոռի մը վրայ ինկած էր և Մինրդատ բարկացայտ աչօք դուրս ելաւ սենեակէն, նոյն միջոցին Սաթինիկ Լիուլին քով երթալով ան֊հոգ եղի՛ք Տիկին, կըսէր, մենք գիտենք որ դուք ամենևին չէք գիտեր և տեղեկութիւն ալ չունիք, նոյն դործէն, հարկաւ կը գանուի այն գրութիւնները:

—Ո՛հ . . . Պ. Մինրդատ իրաւունք ուներ, արդարեւ ձեռ֊քէս յափշտակեցին սոյն նամակաները:

— Ի՞նչ կըսես, ըսաւ Սաթինիկ ապշելով, միթէ կրնայ ըլ֊լալ այդպիսի վատութիւն մը:

— Կաղաչեմ, ըսաւ Լիուլ դէմքը երկու ձեռացը մէջ ա֊ռած, թող տուր զիս որ երթամ սենեակս, վասն զի ալ կարո֊ղութիւն չունիմ ապրելու, առանձնութեան կը փափաքիմ, միայնութիւն կուզեմ, ըսելով սենեակէն դուրս ելաւ, նոյն մի֊ջոցին Մինրդատ ներս մտնելով՝ ծոյր իմ պատրաստուէ մեկնիլ վաղը կ. Պոլսէն:

— Ի՞նչ կըսէք:

— Այո՛ մեկնիլ, վասն զի ալ անկարելի է ինձ հոս կեանք վա֊րել. հոս օդ չկայ . . .:

— Ո՞ւր պիտի երթանք սիրելիս:

— Ո՛հ, ուր որ ալ ըլլայ:

— Ուրեմն Տ. Լիուլի ալ իմացնեմ:

— Տ. Լիուլի . . . գրեթէ անոր ձեռքով եղած այս սոսկալի վատութենէն, թէեւ ակամայ, անոր սերունդին անունը ան֊պատճառ չսեպելու համար է մեկնիլս:

— Բայց ինչ եղաւ, ինչ գրութիւններ էր այդ ըսածդ:

ճՀ . . . խօսելու ժամանակ չունիմ, բաւ հասկնալ ձայնիս . և ամուսին մը վրայ քիչ մը նաեղլով, ներեցէք սիրելիս կազաչեմ ժամանակը ուշ է անցի սենեակդ , խօսելու ժամանակ չունիմ, վերջը կը պատմեմ ամեն բան :

Սաթինիկ ալ խօսելու զօրութիւնը բոլորովին կորանցնեւլով գիշեր բարի բաւ և գնաց իւր սենեակը :

Հետեւեալ առաւօտ Միհրդատին կամայը համեմատ , ճամբու պատրաստութիւնները տեսնուեր էին , Սաթինիկ հրաժեշտի ողջոյն տալու համար , Տ· Լիւսին սենեակը գնաց , բայց հոն չգտաւ , բոլոր տունը փնտուեցին չգտնուեցաւ , գիշերանոց մեկներ էր . նոյն օրը Միհրդատ և Սաթինիկ Մարսիլիոյ չոքենաւով ճամբայ ելան , բայց չենք գիտեր ուր երթալնին և մինչեւ այսօր չիմացուեցաւ :

ԱՆՄԵՂՆԵՐՈՒՆ ՎՐԷԺԸ ԱՍՏՈՒԱԾ ԻՆՔՆԻՆ ԿԸ ԼՈՒԾԷ

Այս անցքերը անցնելէն քանի մ'օր վերջը Նազարօֆ իւր տանը մէջ բազմոցին վրայ նստած , ինքնիրեն կը մտածէր որ ալ ինքը անբաւ հարստութեան տէր եղած էր , վասն զի Մարսիլիոս Տէրպէնտ որ իրեն ահ և սարսափ կ'ազդէր միշտ , Սամաթիայ հրդեհը անհետացուցած էր , Մակար Բարխիզ գացած , Միհրդատ Սաթինիկին հետ աներեւոյթացեր կը մնար , հարստութիւն , զօրութիւն , և ամեն ապագայ բաց իրեն համար , նաեւ իշխանին սեղանաւորութիւնն ալ ինքն ստանձնել կը խորհէր , մէկ մ'ալ սենեակին դուռը բացուելով , սպասաւոր մը ներս մտաւ :

— ի՞նչ կայ , հարցուց Նազարօֆ :

— վարը մարդ մ'եկած ձեր վաճառքեան կուզէ ներկայանալ :

— Ի՞նչպէս մարդ է։

— Աղքատ մէկը կերեւայ, ցնցոտի լաթեր հագած է։

— Ճամբեցէք։

— Շատ չանայինք, բայց չուզեր երթալ։

— Վռնտեցէք։

— Անօգուտ է ՏԷր իմ։

— Ի՛նչ ըսել կուզէք, ինչպէս անօգուտ։

— Անօգուտ, վասն զի քարայատակին վրայ նստելով հոս պիտի սպասեմ, կըսէ, և կերպովմը մեզ ալ սաստեց ըսելով թէ պիտի ղրկանք այսպէս վարուելնուս համար, ուստի ստիպուեցանք իմաց տալ Ձեզ։

— Վեր բերէք այդ մարդը, հրամայեց, և ծառան դուրս ելաւ. այս միջոցին ինքնիրեն կը մտածէր թէ ո՞վ պիտի ըլլայ այդ անձը, մէկ մ՚ալ դռնէն ներս մտաւ Սպիրօ։

— Բարի եկաք, ըսաւ Նաղարօֆ, երկիւղը հաղիւ հաղ ըսպելով և անմիջապէս աչք ըրաւ սպասաւորին որ դուրս ելլէ, և երբ վինակ ճնայեին, բարեկամ, ամենևին չէի յուսար ձեր դալուստը, ներեցէք ծառաներուս ձեզի այդ աստիճան վարուելնուն։

— Ընդէն ես ներեցի, ըսաւ Սպիրօ, և յարեց, ես կը յուսայի թէ չ՚պիտի ճանչնաիք զիս, սակայն կը տեսնեմ որ միշտ այն խելացի Պետիկն ես. ըսել կուզեմ որ մեր ընկերութիւնը մտածած չես, և կը յուսամ որ չպիտի մտնաս։

— Բարեկամ, արդէն այն ընկերութիւնը մտածած չեմ և. մանաւանդ ընկերներս, ըսաւ իւր բարկութիւնը զսպելով։

— Կեցցես Պետիկ, կեցցես, էյ, ինչ է նէ հիմայ եը թողուն ք Չ նայինք. Քաղքալայի հրուանդանին մէջ մեզ խաբեցիր, ուստի հիմայ պէտք է որ վճարես, ըսաւ Սպիրօ ուսերը երերցնելով որ քծնելու նշան մ՚է, բայց հոս քերուելու նշան էր։

— Այ՛, ես ալ այդ կը մտածէի թէ իմ ընկերներուս ինչ տամ, և որպէսզի ընկերութեան անդամներէն միայն դուրս ձգայիր, ուստի ամիսը երկու հազար ղուրուշ կը բաւէ քեզ այնպէս չէ՞, և այդ գումարն ալ ինձ համար փոքրիկ բան մ՚է։

ՀԱՅԿ. ԼՈՒՍԱԺՈՂՈՎԻ
ԵՐԿԱՏԵՑ
ԱՍՏԵՂԱՏՈՒՆ

— Միշտ բարի և ազնիւ ես ձօ, պեհիկ, ըսէ այդ հարըս-տուԹիւնը ինչպէս ձեռք ձգեցիր։

— Պէյէ մը, որ հիմայ ճողեցաւ, սակայն մեծ եղբայրս և Թահանայ մը ինձմէ աւելի հարստացան։

— Այդ Թահանայ ըսածդ մեռնէ է։

— Չէ, խեղճ Թահանայ մ'էր որ բանտարկեալները մխիԹարելու համար բանտերը կը պտըտէր, վերջապէս ուտելու հայ չունէր, բայց այսօր անբաւ հարստուԹեան տէր եղաւ և երկնի կառքով կը շրջի։

— Ո՞ւր կը նստի այդ մարդը։

— Գատը-գիւղ...

— Ուրեմն անգամ մը տեսնել պէտք է։

— Ես ալ քեզ կընկերանամ այդ մասին. տունը ամէն տեղը գիտեմ, անպատճառ բան մը կընենք։

— Վատահ եմ, մանաւանդ դուն հիմայ աւելի յառաջ դա-ցած ես արհեստիդ մէջ։

— Ծօ Սպիրօ, դու լինէ վրդ կը ծնաս. ինչու կը շողոքո-րԹես զիս։

— Ի՞նչէ նէ հիմակու հիմայ լինչ պիտի տաս նէ տուր։

— կեցի, Գատը-Գիւղ Ֆէնէր-պաղչէսիի մօտ արճարան մը կայ քովը մշտահոս աղբերակով մը։

— Գիտեմ, գիտեմ, Ս. կարապետ գացողները անոր Հրա-ժեշտի աղբիւր կըսեն. միտքդ կուգայ օր մը կարաւան մը ա-ղէկ նեղը ձգեցինք, սակայն ոտիկաններըը չուտ հասան։

— Սպիրօ դու ալ անցած գացած բաներըը կը յիշես, հիմայ ներկան նայինք, վաղը գիշեր ինչպէս պիտի ընենք. ճիշդ այն աղբիւրին քով գտնուելու է, ժամը տասներկուքին։

— Անհոգ եղիր, ճիշդ տասներկուքին հոն եմ, սակայն վտանգ ես չահաւոր գործ մ'ըլլալուն, պարապ տեղ ժամանակ չանցնինք. գիտես որ անդին է ժամանակը։

— Ես քեզ կապահովցնեմ որ վաղուընէ անդին մէյմէկ իշ-խան պիտի ըլլանք։

— Ի՞նչ կըսես։

— Հինգ կամ վեց միլիօն ոսկւոյ տէր . . .

— Էյ , էյ ցնորական միլիօններու հետեւելով , չօշափելի երկու հազարս չմոռնանք :

— Խարդա՛խ , բաւ Նաղարօֆ ժպիտով մը և երկու հազարնոց թուղթ մը տուաւ Սպիրոյի , վաղ իրիկուն տաներկու-քին չը մոռնաս :

— Այո՛ , վաղը տասնեւմէկէն մինչեւ ժամ մէկ կըսպասեմ Քնաս բարեաւ , ըսելով սենեակէն դուրս ելաւ Սպիրօ :

Երկու օրէն վերջը Սէլամ՝ չէշմէի մօտ Նաղարօֆի և Սպիրոյի ժամադրութեան տեղին երկու դիակները գտնուեցան, մին կոկորդէն և կուշտէն դաշոյնով վիրաւորեալ որ խեղճը դեռ երիտասարդ էր . իսկ միւսը կուրծքէն ատրճանակով վիրաւորեալ , վասն զի ՝դիակները քննած ատենին վեցհարուածեան ատրճանակ մը գտնուած էր , երիտասարդին պետրոսիկ պէյն ըլլալը ճանչցուեցաւ իսկ միւսը գող , աւազակ և եղեռնագործ Սպիրօն ըլլալը ոստիկանութիւնը ատուգեց . ասոնց սպաննիչը ով էր չգտնուեցաւ . Սակայն քանի մ՝ամիս վերջը իմացուեցաւ գիւղացի մը , որ նախ երիտասարդը ատրճանակը պարպեր էր միւսին վրայ , և միւսը թէպետեւ վիրաւորեալ , բայց դաշոյնով մը երիտասարդին վրայ յարձակելով՝ երկու մահացու հարուած տուեր ու հոն երկուքն ալ գետինը բռնուելնին աչքովը տեսեր էր , և երիտասարդը գետինը ինկած ատեն, գոչեր է ահռելի ձայնով մը . Ա՛հ , ԱՆՄԵՂՆԵՐՈՒՆ ԿՐՆԱԾ ԱՍՏՈՒԱԾ ԻՆՔՆԻՆ ԼՈՒԾԵՑ :

ՎԵՐՋ

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

	Երես
Դաւադրութեան կեդրոն	1
Սօֆեան Պէյի դահլիճը	7
Մենամարտութեան գրգիռ	11
Համոզում	16
Երկու ձի որ կարշաւեն	18
Ծանօթութիւնք	23
Բաժանում	26
Երկու եղբարք	34
Հրաժեշտ	38
Ընդհանուր ուրախութիւն	42
Գարապէլային գլխեւտունը	47
Դաւադրութեան մէջ դաւ	62
Ուրուականը	74
Անակնկալելի դէպք մը	87
Ջրհորի մարդը	90
Տիկին-լուս-Աննա	95
Անձկութեան ժամեր	100
Պաղլար Պաշիի սրճարանը	104
Ճգնաւոր	109
Կեղծ հայր մը	113
Խաբկանք	117
Նշանտութեան հանդէս	122
Խարդաւանութեան դէմ խարդախութիւն	126
Բումէլիի պարահանդէսը	128
Հանելուկ մը որ մարդուս ծիծաղը կը չարժէ	134
Յայտնութիւն դաղտնեաց	140
Անիրաւը վատութեամբ կը գործէ	155
Բուլին ձայնը	164
Դաւը դաւադիրները կ'ելլէ	165
Յուղարկաւորութիւն	168

Թշուառը գերեզմանին մէջ ալ թշուառ է 171
Նոր դաւ մը 178
Բարի սիրտ կը գտնուի եղեր աշխարհի վրայ 180
Սիրահարին կասկածը կը հաստատուի երբ սիրուհին չտեսներ . 188
Հայր եւ աղջիկ 194
Հարսանիք 197
Խոստովանահայր Աբբան 205
Սամաթիոյ հրդեհը 208
Սիրոյ ձայն մը որ գերեզմանէն կը լսուի 214
Անմեղներուն վրէժը Աստուած ինքնին կը լուծէ 223

ՆՈՒԷՐ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԷՈՐԳԵԱՆ
ՃԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՃԵՄԱՐԱՆԷՆ
ՄՈՒՐԱՑԱՆ՝ Է Ց
25 Սեպտեմբ. 1899 ամի.

181. bopfen - Lungenen